ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ
ARMECONOMBANK

# ԱՄԵՆԱԳՈՐԾԱԾԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

լրագրողների համար



## Ա

**ագրարային քաղաքականություն, agricultural policy, аграрная политика** - տնտեսական եւ առաջին հերթին ֆինանսական միջոցառումների համակարգ, որի նպատակը գյուղատնտեսությանն օժանդակելն է՝ գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների եկամուտների եւ արտադրանքի գների վրա ազդելու միջոցով:

**ազատ լողացող արժութային կուրսեր, freely floating exchange rates, свободно плавающие валютные курсы -** արժութային կուրսեր, որոնք չեն հաստատագրվում կառավարության կողմից, հետեւաբար, կարող են բարձրանալ կամ իջնել եւ սահմանվում են արտարժույթի նկատմամբ շուկայի պահանջարկով եւ առաջարկով:

**ազատ շուկայական տնտեսություն, free market economy, свободная рыночная экономика -** տնտեսություն, որտեղ պետության միջամտությունը արտադրական ռեսուրսների բաշխման գործընթացին, հասցվում է նվազագույնի:

**ազատ տնտեսական գոտիներ, free economy zone, свободная экономическая зона** - սահմանափակ տարածքներ, որոնցում օտարերկրյա եւ ազգային ձեռնարկությունների համար գործում են հատուկ արտոնյալ պայմաններ: Գոտիները ստեղծվում են արտաքին առեւտրական, ընդհանուր տնտեսական, սոցիալական, տարածաշրջանային եւ գիտատեխնիկական հիմնախնդիրները լուծելու համար: Պայմանականորեն դրանք կարելի է բաժանել՝ ա) ազատ առեւտրական գոտիների, բ) արտահանման արդյունաբերական գոտիներ, գ) բանկային եւ ապահովագրական գոտիներ, դ) տեխնոլոգիական գոտիներ, ե) համալիր գոտիներ (ազատ կամ «բաց» քաղաքներ, հատուկ շրջաններ եւ այլն):

**ազգային արդյունք, national product, национальный продукт -** տվյալ երկրում արտադրված բոլոր ապրանքների եւ մատուցված ծառայությունների ընդհանուր արժեքը դրամական արտահայտությամբ: Զուտ ազգային արդյունքը հավասար է համախառն ազգային արդյունքից հանած ամորտիզացիոն մասհանումները (հիմնական միջոցների մաշվածքի արժեքը):

**ազգային եկամուտ, national income, национальный доход -** ամբողջական եկամուտ, որը ստանում են արտադրության գործոնների՝ աշխատանքի, հողի եւ կապիտալի տերերը: Այլ կերպ ասած որոշակի ժամանակաշրջանում՝ սովորաբար մեկ տարվա ընթացքում, տվյալ երկրում նոր

ստեղծված ամբողջական արդյունքի արժեքն է դրամական արտահայտությամբ: Այն իրենից ներկայացնում է արտադրության բոլոր գործոնների (աշխատանք, հող, կապիտալ, ձեռնարկատիրություն) բերած եկամուտը: Երկրի ազգային եկամուտը հավասար է համախառն ազգային արդյունքին՝ հանած ամորտիզացիոն մասհանումները եւ անուղղակի հարկերը:

**ազդագիր**, **announcement, проспект эмисии, объявление о продаже акций** - թողարկողի եւ նրա արժեթղթերի վերաբերյալ օրենքով եւ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ պարունակող փաստաթուղթ է, որի հիման վրա իրականացվում է արժեթղթերի հրապարակային առաջարկը եւ (կամ) թույլտվությունը մասնակցելու դրանց առեւտրին.

**ածանցյալ արժեթուղթ, derivative instruments, производные инструменты** - ներդրողի իրավունքների կամ պարտավորությունների ժամկետային իրականացման իրավունքը, պարտավորությունը հավաստող արժեթուղթ է (ֆյուչերս, ֆորվարդ, օպցիոն, տոկոսային եւ արժութային սվոպներ եւ այլն):

**ակտիվներ, assets, активы** - տնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գտնվող միջոցներ, որոնց օգտագործումից ձեռնարկությունն ակնկալում է ստանալ տնտեսական օգուտներ: Իրենց բովանդակությամբ լինում են ոչ ընթացիկ եւ ընթացիկ ակտիվներ: Այլ կերպ ասած, ակտիվները ձեռնարկությանը պատկանող բոլոր արժեքներն են՝ դրամական գնահատմամբ արտահայտված:

**ակտիվ-պասիվային հաշիվ, nominal account, активно-пассивный счет** - հաշվապահական հաշվի տեսակ է, որում գրանցումները կատարվում են միաժամանակ եւ դեբետում, եւ կրեդիտում:

**ակցեպտ (հոժարագիր), acceptance, акцепт** - անկանխիկ հաշվարկային գործառնությունների իրականացման ձեւ է, երբ պայմանագրի կողմերը փոխադարձաբար համաձայնության են գալիս որեւէ գործարք կամ ծառայությունների մատուցում կատարելու դեպքում:

**ակցիզային հարկ, excise tax, акцизный налог** - պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է, որը վճարում են այդ հարկով հարկվող արտադրատեսակները (գարեջուր, խաղողի եւ այլ գինիներ, գինենյութ, սպիրտ եւ սպիրտային խմիչքներ, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ, սիգարներ, հում նավթ, նավթամթերքներ եւ այլն) ներմուծող կամ արտադրող ֆի-

զիկական եւ իրավաբանական անձինք: Ակցիզային հարկը վճարվում է հարկման ենթակա ապրանքների իրացման հասույթից համապատասխան դրույքաչափերով կամ հաստատագրված վճարներով, որոնք սահմանվում են ապրանքի գնի նկատմամբ: «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2000թ.-ի հուլիսին: Ակցիզային հարկի դրույքաչափը տարբեր արտադրատեսակների համար տարբեր է:

**ակրեդիտիվ, etter of credit, bill of credit, аккредитив -** գնորդի բանկի կողմից թողարկվող ֆինանսական գործիք, որում բանկը խոստանում է սահմանված ժամանակամիջոցում մատակարարված ապրանքների համար մինչեւ նշված գումարի չափով փող վճարել:

**աճուրդ (դասական, հոլանդական, լոտային), auction (classical, Dutch, lot) аукцион (класси-ческий, голландский, лот) -** վաճառք հրապարակային սակարկումներով, որի դեպքում վաճառվող ապրանքը կամ գույքը ձեռք է բերում այն անձը, ով առաջարկում է ամենաբարձր գինը: Աճուրդը լինում է կամավոր եւ հարկադրական: Կամավոր աճուրդը կազմակերպվում է ապրանքատերերի նախաձեռնությամբ՝ դրանց առավել շահեկան իրացման համար: Հարկադիր աճուրդը կազմակերպվում է իշխանության կամ դատական մարմինների կողմից՝ անվճարունակ պարտապանների գույքը վաճառելու նպատակով:

**Դասական classical, классический** աճուրդի դեպքում գները բարձրանում են ներքեւից վերեւ, **հոլանդականի Dutch, голландский** դեպքում՝ սակարկությունը սկսվում է բարձր գնով եւ ընթացքում կարող է նվազել մինչեւ մի որոշակի մակարդակ:

**ամորտիզացիա, depreciation, amortization, амортизация -** հիմնական ակտիվների արժեքի աստիճանական նվազեցումը (վերագրումը ծախսումներին) տարիների ընթացքում:

**ամորտիզացիոն հատկացումներ, depreciation charges, амортизационные отчисления -** ազգային արդյունքի արտադրության գործընթացում մաշված կամ օգտագործված (սպառված) կապիտալի ծավալի փոխհատուցումը:

**ամրակցված գույք, settled estate, закрепленное имущество -** մշտական օգտագործման նպատակով հողին ամրակցված իրերն են: Ամրակցված գույքը ընդգրկում է շենքերը, շինությունները, կոմունալ եւ օժանդակ կառույցները, բազմամյա տնկարկները, եւ այլ գույք, որը հնարավոր չէ տեղաշարժել՝ առանց դրան էական վնաս պատճառելու:

**անալիտիկ հաշիվ, analytical**

**account, аналитический счет -** այն հաշիվն է, որում տնտեսական միջոցները (ակտիվ), դրանց կազմավորման աղբյուրները (պասիվ) եւ տնտեսական գործառնությունները գրանցվում են ավելի մանրամասն, ըստ առանձին տարատեսակների արժեքային արտահայտության:

**անապրանք գործարք, non-commodity transaction, нетоварная операция** - անապրանք գործարքը, դա առանց ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթեր տրամադրելն է, որը քրեորեն հետապնդելի արարք է: Ի դեպ, այս դեպքում իրավախախտը ոչ միայն հաշիվ դուրս գրողն է, այլեւ ստացողը:

**անասնաբուծության համախառն արտադրանք, gross output of animal husbandry, валовая продукция животноводства** - ներառում է հաշվետու տարում անասունի աճեցումից ստացված մթերքի արժեքը, անասունի, թռչնի եւ այլ անասնատեսակների աճեցումից ստացված արժեքը, առանց իրացված մսի արժեքը, մեղվաբուծության արտադրանքի արժեքը եւ այլն):

**անբարեխիղճ մրցակցություն, unfair competition, недобросо-вестная конкуренция** - ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ է, որը հակասում է օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջեւ կամ վերջիններիս ու սպառողների միջեւ բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները:

**անուղղակի հարկում, indirect taxation, косвенное налогообложение -** հարկման տեսակ, երբ հարկային բեռը կրում են անձինք կամ կազմակերպություններ, որոնք հարկատուներ չեն: Հայաստանում հիմնական անուղղակի հարկը ԱԱՀ-ն է, որը վճարում են ապրանքներ և ծառայություններ վաճառողները, բայց ԱԱՀ-ի արժեքը մտցվում է ապրանքի և ծառայության գնի մեջ, այսինքն հարկային բեռը հաղորդվում է վերջնական սպառողին: Անուղղակի հարկերի առավելություններից մեկն էլ այն է, որ համեմատաբար փոքր թվով աղբյուրների հարկումից կարելի է ստանալ զգալի տնտեսական արդյունք, ինչը հարկային վարչարարության տեսակետից գրավիչ է:

**անուղղակի հարկեր, indirect taxes, косвенные налоги -** այն հարկերն են, որոնց դրույքաչափի մեծությունը կախված չէ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց տնտեսական գործունեության արդյունքներից: Անուղղակի հարկերի օրինակներն են

հողի հարկը, գույքահարկը, ակցիզային հարկը, ավելացված արժեքի հարկը:

**անհատ ձեռնարկատեր, private entrepreneur, частный пред-приниматель** - անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից եւ իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է: Հայաստանում անհատ ձեռնարկատեր կարող են լինել ՀՀ եւ օտարերկրյա գործունակ քաղաքացիները, ինչպես նաեւ քաղաքացիություն չունեցող այն անձինք, որոնց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը չի սահմանափակված օրենքով: Անհատ ձեռնարկատեր չի կարող գրանցվել սնանկ ճանաչված այն ֆիզիկական անձը, որը դիմում տալու պահին չի կատարել սնանկ ճանաչելու համար հիմք հանդիսացած իր պարտավորությունները: Անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվում են օրենքով առեւտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ իրավահարաբերության էությունից:

**անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ, natural person not private entrepreneur, физическое лицо не являющееся частным пред-принимателем -** հարկեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտավորություն կրող ֆիզիկական անձ, ում եկամուտները չեն ձեւավորվում բացառապես հարկային գործակալ հանդիսացող անձանցից ստացվող եկամուտների հաշվին:

**անձնական խնայողություններ, personal savings, личные сбережения -** տնային տնտեսությունների անձնական եկամուտը` հանած հարկերը եւ անձնական սպառման ծախսերը: Դա եկամուտների այն մասն է, որը չի ծախսվել սպառողական ապրանքների վրա եւ մնում է հարկերը վճարելուց հետ:

**անհուսալի պարտք, bad debt, безнадежный долг** - դեբիտորական պարտք, որն ակներեւաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն չի գանձվելու` չնայած այն գանձելու ջանքերին, օրինակ, պարտապանի անվճարունակության պատճառով:

**անվճարունակություն, insolvency, неплатежеспособность**

**-** պարտքերը գերազանցում են գույքի արժեքը: Անվճարունակը ի վիճակի չէ մարելու կուտակված պարտավորություններն իր գույքի վաճառքից ստացված հասույթներից: Անվճարունակության խնդրի լուծման առաջին քայլը կամավոր համաձայնեցման գնալն է, որի ձախողման դեպքում դատարանը կարող է անվճարունակին սնանկ հայտարարել:

**անհատույց փոխանցում, transfer, трансферт -** գործառնություն է, երբ կառուցվածքային մեկ միավորը տրամադրում է ապրանքներ, ծառայություններ, ֆինանսական եւ ոչ ֆինանսական ակտիվներ մեկ այլ միավորի՝ առանց դրանց դիմաց ապրանքի, ծառայության կամ ակտիվի ձեւով փոխհատուցում ստանալու: Տարբերվում են ընթացիկ եւ կապիտալ անհատույց փոխանցումներ, որոնք կարող են իրականացվել դրամական կամ բնեղեն ձեւով:

**անշարժ գույք, real estate, real property, недвижимое имущество, недвижимость** - անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, շենքերը, շինությունները եւ հողին ամրակցված այլ գույք, այսինքն այն օբյեկտները որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքի նշանակությանն անհամաչափ վնաս պատճառելու:

**անվանական արժեք, nominal value, face value, нарицательная цена, номинальная стоимость -** պարտատոմսի, պարտամուրհակի, գրավագրի կամ այլ արժեթղթի վրա նշված գինը: Կարող է լինել շուկայի գնից բարձր կամ ցածր: Մարման ժամկետը հասնելիս պարտքային պարտավորությունը մարվում է իր անվանական արժեքով:

**աշխատանք, labor, труд -** արտադրության գործընթացում մարդկանց կողմից կատարվող մտավոր եւ ֆիզիկական բոլոր ծախսումները:

**աշխատանքի արտադրողականություն, labor productivity, производительность труда -** ծախսված աշխատանքի միավորին բաժին ընկնող արտադրանքի թողարկման ծավալը:

**աշխատուժ, labor force, рабочая сила -** բնակչության այն մասը, որն ընդգրկում է զբաղվածներին եւ աշխատանք որոնողներին:

**աշխատանքի կենսաթոշակ, pension, пенсия** - տես՝ թոշակ

**աշխատավարձ, wage, salary, заработная плата** - աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է:

**ապահովագրություն, insurance, страхование** - գործունեություն է, ըստ որի ապահովագրողները ստանձնում են պարտավորություն՝ հատուցել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարների հետեւանքով ապահովագրվողների կրած փաստացի վնասը կամ կորուստները:

**ապահովադրի սոցիալական վճարների գծով պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման ենթակա գումար՝ գերավճար, overpayment, переплата -** որի սոցիալական վճարների պարտավորությունների դիմաց հաշվանցումը կամ վերադարձը հարկային մարմնի կողմից ճանաչվել է հիմնավորված և օրենքով ենթակա է պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի հանդեպ պարտավորությունների (այդ թվում՝ առաջիկայում առաջանալիք) դիմաց հաշվանցման կամ վերադարձման:

**ապառք, arrears, недоимка -** սահմանված ժամկետում չկատարված՝ հարկի վճարման պարտավորություն:

**ապրանքի ծագման երկիր, country of origin, страна происхождения товара** - այն երկիրն է, որտեղ ապրանքն ամբողջությամբ արտադրվել կամ վերջին անգամ ենթարկվել է բավարար վերամշակման: Ծագման երկիր կարող է դիտվել երկրների խումբը, մաքսային միությունը, աշխարհի կամ որեւէ երկրի տարածաշրջանը:

**ապրանքային բորսա, commodity exchange, товарная биржа -** իրավաբանական անձ հանդիսացող ձեռնարկություն է, որն առեւտուրն իրականացնում է իր սահմանած կանոններով, որոշակի տեղում եւ ժամանակահատվածում՝ հրապարակային սակարկության ձեւով:

**ապրանքային նշան, trademark, торговая марка** - այն նշանակումն է, որը, սովորաբար, տեղակայվում է ապրանքների վրա նկարի, գրաֆիկական պատկերի, բառակապակցությունների և այլ նշանակումների (ծայնային, լուսային, գունային և այլն) տեսքով և ապահովում այդ ապրանքների տարբերակումը այլ ապրանքներից: Ապրանքային նշանը կոնկրետ կազմակերպության նշանն է (սիմվոլ), որն օգտագործվում է արտադրողի ապրանքի անհատականացման համար: Այն չի կարող օգտագործվել այլ ապրանքարտադրողների կողմից՝ առանց վերջինիս տիրոջ թույլտվության: Ապրանքային նշանը հատկապես, ենթակա է գրանցման, երբ ապրանքներն արտահանվում են արտասահման:

**ապառիկ, on credit, в кредит**

-ապրանքի վաճառքը՝ հետագայում վճարելու պայմանով: Կատարվում է մասնավճարումներով մինչեւ ապրանքի լրիվ արժեքի վճարումը: Ի տարբերության վարձագնման՝ ապառիկ վաճառքի դեպքում ապրանքը գնորդի սեփականությունն է դառնում ապառիկ վաճառքի պարտավորագիրը կնքելու եւ առաջին մասնամուծումը կատարելու պահից:

**ապահովադիր, contributor to social insurance fund, лицо, делающее взнос в фонд социального обеспечения** - սոցիալական վճարները հաշվարկող, դրանց պահումները կատարող եւ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմին, փոխանցող (վճարող) իրավաբանական եւ ֆիզիկական անձ:

**ապրանքի կամ տնտեսության ճյուղի «տեխնոլոգիատարություն», expenditures, трата, расходование -** առանձին ճյուղերում ապրանքների արտադրության և առևտրի ծավալներում հետազոտությունների և մշակումների վրա կատարված ծախսումների բաժնեմաս: Այս ցուցանիշը հաշվարկվում է ըստ երկրների առանձին ճյուղերի և ապրանքների, այնուհետև սահմանվում է միջին ցուցանիշ, որով և որոշվում է ապրանքի կամ տնտեսության ճյուղի տեխնոլոգիատարության մակարդակի բարձր կամ ցածր լինելը:

ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման հանձնաժողովի (UNCTAD) դասակարգման համաձայն բարձր տեխնոլոգիատարության մակարդակ ունի տիեզերական սարքավորումների առևտուրը, որտեղ հետազոտություններին և մշակումներին ընկնող ծախսերը կազմում են համախառն ծախսերի 22.7%, համակարգիչների առևտուրը՝ 17.5%, էլեկտրոնիկայի և առանձին բաղկացուցիչների առևտուրը՝ 10.4%, դեղորայքի առևտուրը՝ 8.7% և այլ ապրանքների առևտուրը: Այսպիսով բարձր տեխնոլոգիատարության մակարդակը տատանվում է 4.4-22.7%-ի սահմաններում, իսկ բարձր տեխնոլոգիատարության միջին մակարդակը կազմում է 11.4%:

**ապրանք, goods, товар** - իրացման համար նախատեսված ձեռնարկատիրական գործունեության արդյունք (ներառյալ աշխատանքները, ծառայությունները):

**ապրանքային շուկա, commodity market, товарный рынок** - երկրի տարածքում որոշակի ապրանքի եւ դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ, որի սահմանները որոշվում են գնորդի կողմից համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման տնտեսական հնարավորու-

թյուններով եւ նպատակահարմարությամբ:

**առաջարկ, supply, offer, предложение** - վաճառողների՝ ապրանքները շուկայում վաճառելու համար ներկայացնելու ցանկությունը եւ ունակությունը:

**առեւտրային գաղտնիք, commercial secret, trade secret, коммерческая таúна -** պայմանագրի պայման, ըստ որի պահպանվում է պայմանագրի գծով բոլոր արտադրական, առեւտրական եւ ֆինանսական գործառնությունների, ինչպես նաեւ պայմանագրի վերաբերյալ բոլոր փաստաթղթերի գաղտնիությունը:

**առեւտուր մանրածախ, retail trade, розничная торговля -** բնակչությանը ապրանքներ եւ ծառայություններ իրացնող առեւտուր: Մանրածախ առեւտրի ցանցի մեջ մտնում են հանրախանութները, ունիվերսամները, մասնագիտացված խանութները, հանրային սննդի ձեռնարկությունները եւ այլն:

**առեւտուր մեծածախ, wholesale trade, оптовая торговля -** ներքին առեւտրի բաղադրամաս, ապրանքների շրջանառության սկզբնական փուլ, դրանց շարժը արտադրողներից մինչեւ առեւտրի ձեռնարկություններ: Մեծածախ առեւտրին են վերաբերում նաեւ գյուղատնտեսական ապրանքների, եւ հումքի գնումներն ու իրացումը:

**առեւտրային բանկ, commercial banks, коммерческие банки**-կազմակերպություն, որն իրականացնում է տարբեր տեսակի բանկային գործառնություններ, բնակչությանը մատուցում է բազմաբնույթ ֆինանսական ծառայություններ:

**առեւտրային ռիսկ, commercial risk, коммерческиú риск -** ծագում է ապրանքների իրացման եւ ծառայությունների մատուցման ընթացքում: Դրա համար պատճառ կարող են հանդիսանալ արտադրանքի իրացման ծավալի նվազումը, նյութական ռեսուրսների գների բարձրացումը, ծախսերի ավելացումը, մրցակցությունը եւ այլն:

**առեւտրի հաշվեկշիռ, trade balance, торговыú баланс (сальдо)** - հաշվետվություն է, որում արտացոլվում են միջազգային առեւտրում տվյալ երկրի մասնակցության արդյունքները եւ արտահայտում է այլ երկրների հետ առեւտրական կապերը: Այն տվյալ երկրի վճարային հաշվեկշռի բաղկացուցիչ մասն է եւ հաշվարկվում է որպես ապրանքների արտահանման եւ ներմուծման տարբերություն: Հաշվեկշիռը կոչվում է դրական, եթե երկրից արտահանվող ապրանքերի ծավալները գերազանցում են ներմուծմանը: Այն վերաբերում է միայն իրական ապրանքատե-

սակներին եւ չի ընդգրկում ծառայությունները:

Այլ կերպ ասած՝ առեւտրային հաշվեկշիռը արտահանման եւ ներմուծման ծավալների տարբերությունն է:

**առքուվաճառք, purchase and sale, купля-продажа -** համապատասխան պայմանագրով, կամ բանավոր համաձայնությամբ, կողմերից մեկը՝ վաճառողը մյուս կողմին գնորդին որպես սեփականություն է հանձնում գույք, ապրանք: Իսկ գնորդը ընդունում է այդ ապրանքը եւ դրա համար վճարում որոշակի գումար:

**առեւտրահաշվեկշռային հաշիվներ, trade-balance account, торгово-балансовый счет -** դրանց միջոցով հնարավորություն է տրվում հաշվառելու որեւէ կազմակերպության հաշվապահական հաշվեկշռում չներառվող, բայց ժամանակավոր օգտագործման կամ պահպանման նպատակով իր մոտ գտնվող նյութական եւ դրամական ակտիվները (միջոցները): Առեւտրահաշվեկշռային հաշիվներով հաշվառվում են կազմակերպությանը չպատկանող ոչ ընթացիկ ակտիվները, ապրանքանյութական արժեքները, դրամական միջոցները, արժեթղթերը եւ այլն:

**առեւտրի իրականացման վայրի կազմակերպիչ, trade organizer, организатор торговли -** առեւտրի իրականացման վայրի աշխատանքը կազմակերպող, համապատասխան օրենքով սահմանված պարտավորություններ կամ իրավունքներ ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:

**առեւտրի կենտրոն, trade center, shopping center, торговый центр -** առեւտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից որպես մեկ ամբողջություն տիրապետվող եւ կառավարվող առեւտրի օբյեկտների համախումբ, որտեղ նախատեսված են նաեւ հանրային սննդի, զվարճանքի, կենցաղային ծառայությունների համար առանձնացված մասեր:

**Առեւտրի Համաշխարհային Կազմակերպություն (ԱՀԿ), WTO (World Trade Organization), ВТО (Всемирная Торговая Организация)** - պաշտոնապես հիմնվել է 1995 թվին մաքսերի եւ առեւտրի գլխավոր համաձյանագրի (ՄԱԳՀ) շրջանակներում: Այն նպատակ ունի ստեղծել թափանցիկ եւ կանխատեսելի միջազգային առեւտրային համակարգ: ԱՀԿ անդամ են աշխարհի 152 երկրներ (առ 16.05.2008թ.): ԱՀԿ -ի հիմքում ընկած են համաձյանագրեր, որոնք ընդունվել են ԱՀԿ անդամ երկրների կողմից եւ հանդիսանում են միջազգային առեւտրի հիմնական կանոնները: Դրանք ապահովում են անդամ երկրների

առեւտրային իրավունքների պաշտպանությունը, եւ պարտավորեցնում են անդամ երկրների կառավարություններին վարել համաձայնեցված առեւտրային քաղաքականություն, որի նպատակն է աջակցել արտադրողներին, ծառայություններ մատուցողներին, արտահանողներին, ներմուծողներին եւ ներդրողներին առանց խտրականության իրականացնելու իրենց գործունեությունը: Հայաստանի Հանրապետությունը ԱՀԿ-ին անդամակցել է 2003թ. փետրվարի 5-ին՝ դառնալով 145-րդ անդամը:

**ավանդ, deposit, депозит** - ա) այն միջոցներ են (դրամական գումար, չեկեր, մուրհակներ եւ կանխիկի արագ վերածվող այլ վճարային փաստաթղթեր), որոնք թողնվել են բանկում կամ այլ ֆինանսական կազմակերպությունում՝ պահելու կամ տոկոսային եկամուտ ստանալու նպատակով: բ) այն արժեթղթերն են, որոնք գտնվում են բանկում, այլ ֆինանսական կազմակերպությունում կամ հանձնվել են մասնավոր անձի կոնկրետ նպատակով: գ) այն դրամական գումարն է, որը հանձնվել է բրոքերին կամ դիլերին՝ հնարավոր առեւտրային կորուստներից պաշտպանվածության ապահովման համար: դ) դրամական գումարն է, որը մուծվել է որպես պայմանագրային պարտավորությունները կատարելու մտադրություն: ե) այն դրամական գումարն է կամ արժեթուղթը, որը պարտապանը դնում է դատական կամ վարչական մարմիններում պարտատիրոջը հանձնելու կամ հայցի ապահովման համար:

**ավանդների ապահովագրություն, deposit insurance, страхование депозитов** - միջոցառումների համալիր է, ըստ որի կարգավորված է ավանդատուների ներդրած միջոցների պաշտպանությունը բանկի կամ ավանդապահ այլ կազմակերպության սնանկացման դեպքում: ՀՀ «Կենտրոնական բանկի մասին» օրենքով բանկերը սկսած 2003 թ.-ի հուլիսի մեկից պարտավոր են տվյալ օրենքով սահմանված կարգով երաշխավորել ֆիզիկական անձանցից ներգրավված բոլոր դրամական եւ արտարժութային ավանդները՝ ԿԲ խորհրդի սահմանած չափով: Բանկի կողմից իրավաբանական անձանց ավանդների վերադարձն ապահովելու եղանակները սահմանվում են բանկային ավանդի պայմանագրով:

**ավել վճարված գումար, overpaid sum, переплаченная сумма -** օրենքով որոշվող կամ սահմանված կարգով հաշվարկվող պարտավորության գումարից ավել վճարված գումար կամ պարտավորության բացակայության պայմաններում (ներառյալ՝

օրենքով չնախատեսված դեպքերում)՝ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի հաշվին փոխանցված (վճարված) գումար կամ դատարանի վճռով վճարողին վերադարձման ենթակա գումար:

**ավալ, aval (guarantee, security), аваль (вексельное поручительство)** - մուրհակային հանձնարարական երաշխիք է, որի համաձայն համաձայնություն ստացած անձը (ավալիստը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ) իր վրա է վերցնում մուրհակի դիմաց վճարման պարտականությունը նրա տիրոջ փոխարեն: Ավալը հաճախակի տրամադրվում է բանկի կողմից:

**ավելացված արժեք, value added, добавленная стоимость** - իրացված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների արժեքի եւ սահմանված կարգով արտադրության եւ շրջանառության ծախսերին վերագրվող նյութական ռեսուրսների, վառելիքի, աշխատանքների եւ ծառայությունների, հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների արժեքի տարբերությունն է:

**ավելացված արժեքի հարկ, value added tax (VAT), налог на добавленную стоимость (НДС)** - անուղղակի հարկ է, որը վճարվում է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, երկրի տարածքում դրանց արտադրության եւ շրջանառության, ինչպես նաեւ ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: ԱԱՀ-ն վճարվում է հարկման ենթակա ապրանքների (աշխատանքերի, ծառայությունների) իրացման հասույթից: ՀՀ-ում «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքն ընդունվել է 1997թ.-ի մայիսին: ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանված է 20% ապրանքների եւ ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

**արդյունաբերական արտադրանքի ծավալ, volume of industrial production, объем промышленного производства** - ամբողջովին եւ ըստ առանձին ճյուղերի, որոշվում է արժեքային արտահայտությամբ՝ որպես իրավաբանական անձանց եւ դրանց առանձնացված ստորաբաժանումների թողարկած արտադրանքի եւ կատարած արդյունաբերական բնույթի աշխատանքի եւ ծառայությունների ծավալի հանրագումար: Արտադրանքի ծավալի մասին տվյալները բերվում են համապատասխան տարվա գործող գներով:

**արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքս, volume index of industrial production, индекс физического объема промышленного производства -** հարաբերական ցուցանիշ է, որը

բնութագրում է արտադրվող նյութական բարիքների ծավալների փոփոխությունը համեմատվող ժամանակաշրջաններում: Արդյունաբերական արտադրանքի գնահատումը համադրելի գներով իրականացվում է անմիջականորեն կազմակերպություններում՝ արդյունաբերողների գների հիման վրա: Արդյունաբերական արտադրանքի ծավալում եւ ֆիզիկական ծավալի ինդեքսի հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում ավելացված արժեքի հարկը եւ ակցիզային հարկը:

**արդյունաբերական արտադրանքի արտադրությունը բնեղեն արտահայտությամբ, output of industrial products in physical, производство промышленной продукции в натуральном выражении** - արտադրանքի համախառն թողարկման, այսինքն՝ ներառյալ կազմակերպության ներսում արդյունաբերա-արտադրական կարիքների համար ծախսված եւ պատվիրատուի հումքից թողարկված արտադրանքը:

**արժեզրկում, devaluation, девальвация -** փոխհատուցելի գումարի նվազումը հաշվեկշռային արժեքից ցածր:

**արժեթուղթ, security, ценная бумага** - արժեթուղթը սահմանված ձեւով եւ վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է: Այն վկայություն է որոշակի չափով ներդրած կապիտալի կամ տրամադրած փոխառության մասին, որը տալիս է կանոնավոր եկամուտ (շահաբաժին կամ տոկոսային եկամուտ) ստանալու իրավունք: Արժեթղթեր են համարվում բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերը, պարտատոմսերը: Արժեթղթերի տեսակների թվին են դասվում՝ պարտատոմսը, չեկը, հասարակ մուրհակը (վճարագիր), բաժնետոմսը, կոնոսամենտը, բանկային վկայագիրը, հասարակ պահեստային վկայագիրը:

**արժեթղթերի առաջնային շուկա, first market, principal market of securities, ведущúй рынок ценных бумаг -** թողարկողը ներդրողներին է վաճառում նոր թողարկված արժեթղթերը եւ ի տարբերություն արժեթղթերի երկրորդային շուկայի (որտեղ գնվում եւ վաճառվում են նախկինում թողարկված արժեթղթերը), այն արժեթղթերի իրացման գործընթացի առաջին փուլն է: Արժեթղթերի սկզբնական վաճառքին օգնող միջոցներից են երաշխավորողները, բրոքերները եւ դիլերները:

**արժեթղթերի արտաբորսայական շուկա, over-the-counter market, внебиржевоú рынок ценных бумаг** - ֆոնդային բորսաների շրջանցմամբ եւ բանկցությունների անցկացմամբ ար-

ժեթղթերով կատարվող առեւտուր: Այստեղ արժեթղթերով գործառնություններն իրականացվում են հեռախոսով եւ դիլերներին միացնող համակարգչային ցանցով, այլ ոչ թե ֆոնդային բորսայի առեւտրային սրահում:

**արժեթղթերի թողարկում (էմիսիա), securities issue, эмиссия ценных бумаг -** շրջանառության մեջ արժեթղթեր բաց թողնելն ու դրանց առաջին իրացման գործառությունն է:

**արժեթղթերի շրջանառություն, securities turnover, оборот ценных бумаг** - դրանց առքը, վաճառքը եւ այլ գործառնություններն են, որոնք հանգեցնում են արժեթղթերի տիրոջ փոփոխմանը: Արժեթղթեր թողարկելու իրավունք ունեն բաժնետիրական ընկերությունները եւ վարկային հիմնարկությունները:

**արժեթղթերի տեղաբաշխում, distribution of securities, размещение ценных бумаг** - արժեթղթերի առաջին օտարումն է վաճառքի կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված եւ թողարկողի (էմիտենտի) կանոնադրությամբ նախատեսված այլ ձեւերով:

**արժեթղթերի փոխանցում, securities transfer, перевод ценных бумаг** - որպես լիցենզիոն վճարման ձև, հանդիպում է կամ ինքնուրույն, կամ համակցված այլ ձևերի հետ և ենթադրում է մասնակցություն լիցենզիառուի սեփականությունում:

**արժեթղթերի շուկայի ածանցյալ գործիք, derivative of securities market, производный инструмент рынка ценных бумаг** - ժամկետային իրականացման (կատարման) իրավունքը եւ (կամ) պարտավորությունը հավաստող արժեթուղթը, որի գինն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կախված է՝

ա) արժեթղթի շուկայական (բորսայական) գնից,

բ) տոկոսադրույքից կամ այլ հատուցումից,

գ) արժեթղթերի ինդեքսից,

դ) արտարժույթի փոխարժեքից,

ե) վարկային կամ այլ ռիսկից,

զ) ապրանքի կամ թանկարժեք մետաղի շուկայական (բորսայական) գնից,

է) գնաճի մակարդակից կամ պաշտոնական տնտեսական վիճակագրության այլ ցուցանիշներից.

**արժեթղթերի առաջարկ, securities offering, предложение ценных бумаг** - անձանց ուղղված ցանկացած ձեւի հաղորդակցությունը, որն արժեթուղթը վաճառելու առաջարկ կամ արժեթուղթը գնելու առաջարկ անելու հրավեր է պարունակում.

**արժեթղթերի հրապարակային առաջարկ, public offering of securities, публичное пред-**

**ложение ценных бумаг** - որակավորված ներդրող չհանդիսացող մեծ թվով կամ անորոշ թվով անձանց ուղղված արժեթղթերի առաջարկը:

**արժույթ, currency, валюта** - դրամական միավոր, որը հնարավորություն է տալիս տարբեր երկրներին իրենց ազգային դրամներով՝ արտարժույթով, մասնակցել միջազգային տնտեսական հարաբերություններում, որի հիմքում ընկած է փոխարժեք հասկացությունը:

**արժույթի արժեզրկում**, **currency depreciation, обесценение валюты** - ա) որևէ արժույթի արժեզրկումն է այլ երկրների արժույթների նկատմամբ, երբ այդ արժույթի տվյալ քանակով հնարավոր է ձեռք բերել ավելի քիչ քանակի այլ արժույթ, քան դա հնարավոր էր նախկինում: բ) պետության կողմից ձեռնարկվող այն միջոցառումները, որոնք ուղղված են այլ երկրների արժույթների կամ ոսկու նկատմամբ սեփական արժույթի փոխարժեքի նվազեցմանը՝ հաստատագրված փոխարժեքի պարագայում: Արժույթի արժեզրկում տեղի է ունենում, երբ իրավասու պետական մարմինը մեծացնում է ազգային արժույթի քանակը ընթացիկ փոխարժեքի պայմաններում այլ արժույթներով փոխանակելու համար: ԿԲ կատարում է արժեզրկում այն դեպքերում, երբ ազգային արժույթի փոխարժեքը դառնում է արհեստականորեն բարձր, օրինակ, եթե ակնհայտ է, որ գնաճի բարձր տեմպերի պատճառով երկրից արտահանվող արտադրանքը կորցրել է իր մրցունակությունը: Արժեզրկումը կարող է նպաստել երկրի վճարային հաշվեկշռի պակասուրդի կրճատմանը ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկի փոքրացման պայմաններում երկրից արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի բարձրացման միջոցով:

**արժույթի գնանշում**, **quotation of currency, котировка валюты** - այն մեխանիզմն է, որը հնարավորություն է տալիս սահմանելու տվյալ երկրի արժույթի փոխարժեքը մնացած այլ երկրների արժույթների նկատմամբ:

**արժույթի փոխարկելիություն, currency convertibility, конвертируемость валюты** - տվյալ երկրի արժույթը կամ որևէ երկրի ազգային արժույթը այլ երկրների արժույթների կամ ոսկու հետ փոխանակելու հնարավորությունն է: Ըստ փոխարկելիության աստիճանների կարող են լինել ազատ փոխարկելի, մասնակի փոխարկելի կամ ոչ փոխարկելի արժույթներ:

**Արժույթի միջազգային հիմնադրամ, International Monetery Fund (IMF), МВФ (Международный Валютный Фонд)** - Արժույթի միջազգային հիմնադ-

րամը Միավորված ազգերի կազմակերպության գործակալություն է: Ստեղծվել է 1947թ.-ին եւ նպատակ ունի աջակցել անդամ երկրների ֆինանսական համագործակցությանը, նրանց արժույթների փոխանակման դրույքների կայունացմանը եւ միջազգային առեւտրի ընդլայնմանը: Հիմնադրամի գործունեությունն ուղղված է երկրների միջեւ փողի ազատ հոսքի սահմանափակումների վերացմանը, փոխանակման դրույքների համակարգի սահմանմանը եւ վճարումների հաշվեկշռի դժվարություններ ունեցող երկրների համար փոխառությունների եւ միջազգային պահուստի ապահովմանը: Հիմնադրամի միջոցները բաղկացած են անդամ երկրների արժույթներից եւ միջազգային պահուստից՝ բացառությամբ ոսկու: Յուրաքանչյուր երկիր հիմնադրամին իր անդամակցության բաժնեչափը տրամադրում է 75% ազգային արժույթով, մնացածը՝ միջազգային դյուրիրացնելի միջոցներով: Միջոցների մեջ ընդգրկված է նաեւ հիմնադրամի ստեղծած հատուկ արժույթը, որը կոչվում է **Էս Դի Առ (SDR)** «փոխառման հատուկ իրավունք»: Կենտրոնատեղին գտնվում է Վաշինգտոնում: 2008թ հունվարի 1-ի դրությամբ հիմնադրամի անդամ էին հանդիսանում 185 երկիր՝ ներառյալ Հայաստանը:

**արտադրանք, product, продукция** - որոշակի ժամանակահատվածում արտադրված արդյունքների ամբողջություն:

**արտադրողականություն, productivity, производительность -** ծախսված ռեսուրսների միավորին բաժին ընկնող արդյունքի կամ իրական արտադրանքի միջին ծավալի ցուցանիշ: Օրինակ՝ աշխատանքի արտադրողականությունը կարող է չափվել հարաբերելով իրական արտադրված արտադրանքի քանակը աշխատաժամերին:

**արտադրության եւ սպառման թափոններ, production and consumption waste, отходы производства и потребления** - արտադրության կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաեւ ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները:

**արտադրական կոոպերատիվներ, production cooperatives, производственные кооперативы -** կոլեկտիվ սեփականության վրա հիմնված, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկություն է, որը ստեղծում է շահույթ: Արտադրական կոոպերատիվի հիմնադիր փաստաթուղթը նրա կանոնադրությունն է, եւ անդամներ կարող

են լինել տվյալ կամ այլ պետությունների քաղաքացիները, ինչպես նաեւ քաղաքացիություն չունեցող անձինք: Արտադրական կոոպերատիվի գույքը պատկանում է նրա անդամներին՝ համատեղ սեփականության իրավունքով, եւ նրանց համատեղ գործունեությունից ստացված շահույթը (եկամուտը) բաշխվում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր անդամի աշխատանքային ներդրումը:

**արտադրական հզորություն, productive capacity, производственная мощность** - արտադրանքի առավելագույն հնարավոր թողարկումն է (տարվա, օրվա, հերթափոխի ընթացքում) կամ հումքի արդյունահանման կամ վերամշակման ծավալը՝ ըստ անվանացանկի եւ տեսականու:

**արտադրական գործոններ, production factors, производственный факторы -** ապրանք արտադրելու կամ ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ տնտեսական ռեսուրսները՝ ներառյալ կապիտալը, աշխատանքը (մարդկային ռեսուրսները), գույքը՝ ներառյալ հողը եւ ձեռնարկատիրական հմտությունը:

**արտադրանքի իրացված ծավալ, volume of products sold, объем реализованной продукции -** հաշվետու ժամանակաշրջանում իրացված սեփական արտադրանքի, ինչպես նաեւ պատվիրատուի կողմից ընդունված, կատարված աշխատանքների եւ ծառայությունների արժեքն է՝ անկախ այն բանից, թե դրանց վճարները կազմակերպության հաշվարկային հաշվին մուտքագրվել են, թե ոչ):

**արտահանում, export, экспорт** - համարվում է ապրանքների եւ ծառայությունների դուրսբերումը երկրի մաքսային տարածքից: Կամ այլ կերպ ասած՝ այլ երկրներին վաճառված ապրանքների եւ ծառայությունների ամբողջություն:

**արտահանման ծավալներ, export volume, объем экспорта -** ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները: Արտահանման ծավալներում չեն ընդգրկվում արժեթղթերը, շրջանառության մեջ գտնվող թղթադրամները եւ մետաղադրամները, դրամական ոսկին, հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումները, ցուցահանդեսների եւ տոնավաճառների համար ուղարկված կամ ներկրված ապրանքները:

**արտահոսք, leakages, утечки -** ազգային եկամտի այն մասը, որը տնային տնտեսությունների կողմից չի օգտագործվում երկրի ներսում արտադրված սպառ-

ղական ապրանքների գնման համար:

**արտարժույթ, foreign currency, иностранная валюта -** ցանկացած օտարերկրյա պետության արժույթն է, որը ծառայում է որպես շրջանառության օրինական միջոց եւ ֆինանսական հաշվառման հիմք տվյալ երկրում: Այս կամ այլ երկիրը արտարժույթը կարող է գնել սեփական արժույթով եւ օգտագործել արտերկրի հետ առեւտուր կամ ֆինանսական գործառնություններ կատարելիս: Արտարժույթը գնվում եւ վաճառվում է արտարժույթի շուկաներում, բանկերի կողմից. ինչպես կանխիկ կամ չեկերով, այնպես էլ այդ երկրների բանկերում արտարժութային հաշիվների մնացորդների շարժի ձեւով:

**արտարժույթով թողարկված պարտատոմս, foreign currency bond, облигация в иностранной валюте -** պետության անունից արտարժույթով թողարկված պարտատոմս:

**արտարժույթային գործառնություններ, foreign currency operations, операции в иностранной волюте** - արտարժույթի առք ու վաճառքի այն գործառնություններն են, երբ մի արժույթը փոխանակվում է մեկ այլ արժույթի հետ: Արտարժույթային գործառնություն են համարվում նաեւ տվյալ երկրի արտարժույթի ներկրումը եւ առաքումը, տվյալ երկրից արտարժույթի արտահանումը եւ առաքումը, միջազգային դրամական փոխանցումների իրականացումը:

**արտարժութային դիրք, foreign currency position, позиция иностранной валюты -** տվյալ առեւտրային բանկի կողմից ժամանակի կոնկրետ պահին արտարժույթով ակտիվների եւ պարտավորությունների տարբերությունն է՝ հաշվի առած նաեւ արտահաշվեկշռային անավարտ գործարքների նկատմամբ պահանջները եւ պարտավորությունները (սփոթ, սվոփ, ֆյուչերսային, ֆորվարդային): Այն հաշվարկվում է յուրաքանչյուր արտարժույթի համար:

**արտարժութային պահուստներ, foreign currency reserves, запасы иностранной валюты -** դրանք արտարժույթի պաշտոնական այն պաշարներն են տվյալ երկրի ԿԲ եւ ֆինանսական մարմիններում կամ միջազգային արժութավարկային կազմակերպություններում, որոնք պահվում են սեփական արժույթը պաշտպանելու, պարտքերը վճարելու եւ միջազգային հաշվարկները կատարելու համար:

**արտարժութային ռիսկ, foreign currency risk, риск иностранной валюты -** կապված է օտարերկրյա արժույթի կուրսի փոփոխության հետ, ինչի հետեւ-

անքով բանկը կարող է վնաս կրել ակտիվների եւ պասիվների գները իջնելու պատճառով: Այն ֆինանսական ռիսկերի տեսակներից է, որը պայմանավորված է ապագայում այլ արժույթների նկատմամբ ազգային արժույթի գնի փոփոխության անորոշությամբ:

**արտարժույթի գնանշում, quotation of foreign currency, котировка иностранной валюты** - տվյալ երկրում գործող օրենսդրական նորմերին, կանոններին եւ ձեւավորված պրակտիկային համապատասխան արտարժույթների փոխարժեքների սահմանումն է: Արտարժույթի գնանշումը կատարում են պետական (ազգային) կամ խոշորագույն առեւտրային բանկերը՝ ուղղակի կամ անուղղակի եղանակով:

**արտարժույթի շուկա, foreign currency market, рынок иностранной валюты** - շուկա, որտեղ կատարվում է արտարժույթի եւ դրամով արտահայտված վճարային այլ փաստաթղթերի (մուրհակներ, չեկեր եւ այլք) առք ու վաճառք՝ պահանջարկի եւ առաջարկի հիման վրա: Արտարժույթի շուկայում հիմնականում գործում են արտարժույթի առեւտուր անող դիլերները, առեւտրային բանկերը եւ արտարժույթի առք ու վաճառքի բրոքերները:

**արտարժույթի պաշտոնական (հաշվարկային) փոխարժեք, official foreign exchange rate, официальный курс иностранной валюты** - պետության կողմից պաշտոնապես սահմանվող ազգային արժույթի փոխարժեքն է, որը սովորաբար սահմանում է տվյալ երկրի ԿԲ-ը: Եթե պաշտոնական փոխարժեքը տարբերվում է շուկայական փոխարժեքից, ապա Կենտրոնական բանկը պետք է պատրաստ լինի պահելու իր սահմանած փոխարժեքը՝ բաց շուկայում գնումների եւ վաճառքի միջոցով: Հաշվարկային փոխարժեքը օգտագործվում է հաշվապահական հաշվառման նպատակներով եւ հիմք է հանդիսանում գանձապետարանի բանկային սպասարկման համար:

**արտարժույթի փոխարժեք, foreign exchange rate, курс иностранной валюты** - որեւիցե մի երկրի դրամական միավորի գինն է՝ արտահայտված մեկ այլ երկրի դրամական միավորներով որոշակի անսաթվի դրությամբ, 1,100 կամ 1000 միավորի դիմաց: Փոխարժեքը ձեւավորվում է գլխավորապես արտարժույթի պահանջարկի եւ առաջարկի հարաբերակցության ազդեցության ներքո կամ սահմանվում է վարչական կարգով եւ շատ փոփոխուն է: Տարբերվում են լողացող (ճկուն), անվանական, իրական փոխարժեքներ: Տարբերվում են

արտարժույթի առքի եւ վաճառքի փոխարժեքները:

**արտաքին պետական պարտք, foreign debts, внешний долг -** պետության եւ տվյալ երկրի ԿԲ անունից ոչ ռեզիդենտների եւ օտարերկրյա պետությունների հանդեպ ստանձնած եւ որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումար:

**արտաքին առեւտրաշրջանառության ծավալը, foreign trade turnover volume, объем внешнеторгового оборота** - կամ արտաքին առեւտրի շրջանառությունը, արտահանման եւ ներմուծման ծավալների հանրագումարն է:

**արտաքին փոխառություն, foreign loan, иностранный заем** - օտարերկրյա փոխառություն է, որը տրամադրվում է միջազգային վարկի ձեւով արտերկրի վարկատուների կողմից:

**արտոնագիր, patent, патент** - իրավասու պետական մարմնի կողմից հայտնագործողին տրամադրված վկայականն է, որը հավաստում է գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հեղինակության, առաջնայնության, ինչպես նաև դրանց ապահովությունները: Գործնականում, հաճախ, արտոնագրի փոխանցումը իրականանում է նոու-հաուի միաժամանակյա փոխանցման և արտադրության կազմակերպման հարցում տեխնիկական օգնության ցուցաբերման հետ մեկտեղ: Արտոնագրի գործողությունը տարածվում է այն տվող պետության սահմաններում, իսկ գործողության ժամկետը սահմանվում է ազգային օրենսդրությամբ:

**արտոնյալ բաժնետիրական կապիտալ, preference share capital, привилегированный акцио-нерный капитал -** այն չափվում է բանկի կողմից թողարկվող ցանկացած բաժնետոմսի անվանական արժեքով, որոնց դիմաց շահաբաժին վճարվելու է խոստացված կայուն դրույքաչափերով:

**արտոնյալ բաժնետոմս, preference share, привилегированная акция** - բաժնետիրական ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունք չի տալիս, բայց տալիս է առաջնահերթ իրավունք՝ սահմանված կայուն չափի շահութաբաժնի ստացման համար, նույնիսկ այն դեպքում, երբ ընկերությունը համապատասխան շահույթ չի ստացել: Արտոնյալ բաժնետոմսերի թողարկումը թույլ է տալիս ավելացնել բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սեփական միջոցների ներգրավման ճանապարհով, ի տարբերություն պարտատոմսերի, որոնք սեփականության իրավունք չեն տալիս դրանց տերե-

րին եւ հանդիսանում են փոխառու աղբյուրներ:

**աուդիտ, audit, аудит -** որակավորված անկախ հաշվապահի կողմից պատվիրատուի հաշվապահական փաստաթղթերի ստուգումը՝ աուդիտորական եզրակացություն կազմելու նպատակով:

## Բ

**բազա հարկային, tax base, база налоговая** - ակտիվների արժեքը կամ ստացվող եկամուտը, որոնց հիման վրա հաշվարկվում են հարկերը:

**բազային դրույք, base rate, базовая ставка** - դրույք, որը բանկերն օգտագործում են վարկերի գծով տոկոսադրույքները սահմանելիս: Որպես կողմնորոշիչ կարող է օգտագործվել Կենտրոնական բանկի բանկային տոկոսի հաշվարկային դրույքը:

**բազային կապիտալ, core capital, базовый капитал** - հիմնադիր գլխավոր կապիտալը (հայտարարված բաժնետիրական կապիտալը) բաժնետոմսերի բաց թողնման կուրսի վերադիրը, չբաշխված շահույթը:

**Բազելյան համաձայնագիր, Basel Agreement, Базельский договор -** Մեծ Բրիտանիայի եւ Արեւմուտքի առաջատար երկրների միջեւ 1967թ. կնքված համաձայնագիր է, որով սահմանվեց ֆունտ ստեռլինգի ճգնաժամի ժամանակշրջանում Մեծ Բրիտանիային տրամադրված վարկերի մարման կարգը: Համաձայնագիրն ունեցավ մեծ նշանակություն, քանի որ առաջին անգամ տվյալ երկիրը համաձայնվեց տրամադրել դոլարային երաշխիք իր պարտքի դիմաց:

**բաժնեմաս (բաժնեչափ), quota, квота** - յուրաքանչյուրին բաժին ընկնող մաս, ա) հարկման որոշակի միավորին ընկնող հարկային դրույք, բ) արտադրության եւ իրացման մեջ արտադրական միավորման մասնակիցների համար սահմանված բաժինը, գ) ապահովագրողի մասնակցության բաժինը մի շարք ապահովագրողների կողմից ապահովագրվող օբյեկտի ապահովագրման մեջ: դ) երկրի վճարումներ ԱՄՀ-ին՝ գումարի 25%-ը կատարվում է ոսկով, իսկ մնացած մասը՝ երկրի ազգային արժույթով:

**բաժնետեր, shareholder, акционер -** իրավաբանական կամ ֆիզիկական անձ է, որը հանդիսանում է բաժնետիրական ընկերության մեկ կամ մի քանի բաժնետոմսերի սեփականատեր եւ որոնց միջոցով ունի բաժնային մասնակցություն տվյալ ընկերության գույքում: Կան երկու հիմնական տեսակի բաժնետերեր ա) արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերեր, որոնք ունեն հաստատագրված շահութաբաժին ստանալու եւ բաժնետի-

րական ընկերության լուծարման դեպքում բաժնետոմսերում ներդրած միջոցները ետ ստանալու առաջնահերթ իրավունք ի տարբերություն սովորական բաժնետոմսերի սեփականատերերի: բ) սովորական բաժնետոմսերի սեփականատերերը ենթարկվում են ավելի մեծ ռիսկի: Սովորաբար միայն նրանք ունեն ձայնի իրավունք ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում, ինչպես նաեւ` տնօրեններին ընտրելու իրավունք:

**բաժնետիրական եկամտաբերություն, joint-stock profitability, акционерная прибыльность -** մեկ բաժնետոմսի հաշվով ստացված զուտ շահույթի (բաժնետոմսի շահույթի նորմայի) եւ բաժնետոմսի շուկայական գնի հարաբերակցությունն է` արտահայտված տոկոսներով:

**բաժնետիրական ընկերության ներկայացուցչություն, joint-stock company representative, представительство акционерного общества** - տվյալ ընկերության կողմից առանձնացված եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ստորաբաժանում է, որը գտնվում է ընկերության գտնվելու վայրից դուրս, ներկայացնում եւ պաշտպանում է նրա շահերը:

**բաժնետիրական ընկերություն (ԲԸ), joint-stock company (JSC), акционерное общество (АО) -** իրավաբանական անձ, որի կանոնադրական հիմնադրամը (կապիտալը) բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի: ԲԸ հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է:

**բաժնետոմս, share, акция -** այն արժեթուղթն է, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ) բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձեւով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու եւ նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը:

**բաժնետոմսի շահույթի նորմա, stock profit rate, норма прибыли по акции -** ցույց է տալիս բաժնետիրական ընկերության զուտ շահույթի (հարկումից հետո) եւ տարվա ընթացքում շրջանառությունում գտնվող հասարակ բաժնետոմսերի միջին թվաքանակի հարաբերությունը: Այս ցուցանիշը մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող զուտ շահույթի չափն է:

**բանկ, bank, банк -** ֆինանսավարկային կազմակերպություն է, որը դրամական միջոցներով եւ արժեթղթերով իրականացնում է տարբեր տեսակի գործառույթ-

ներ, ֆինանսական ծառայություններ է մատուցում կառավարությանը, տնտեսավարող սուբյեկտներին, կազմակերպություններին, քաղաքացիներին եւ այլ բանկերին: Ներգրավում է ազատ դրամական միջոցներ ավանդների եւ դեպոզիտների տեսքով, տրամադրում է տարբեր տեսակի վարկեր, կատարում բազմատեսակ ֆինանսական գործառնություններ եւ ծառայություններ: Հայաստանում բանկերը «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով հիմնադրվում են որպես բաժնետիրական ընկերություն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կամ կոոպերատիվ բանկ: Դրանց վրա տարածվում են բաժնետիրական ընկերությունների եւ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ օրենքները եւ այլ իրավական ակտերը, եթե օրենքը այլ կանոններ չի սահմանում:

**բանկային ավանդ, bank deposit, банковский вклад, депозит -** լայն իմաստով իրավաբանական եւ ֆիզիկական անձանց այն դրամական միջոցներն են, որոնք գտնվում են բանկում ժամանակավոր պահպանման համար: Բանկում պահվող ավանդները կարող են հաշվառվել հաճախորդի ավանդային կամ ընթացիկ հաշիվներում եւ դրանց դիմաց կարող են հաշվարկվել կամ չհաշվարկվել տոկոսներ: Բանկի հաշվեկշռում ավանդներն արտացոլվում են որպես պարտավորություններ, եւ ներդրված ավանդի մնացորդը գրանցվում է բանկային հաշվի կրեդիտում, որն ավանդատուին տալիս է բանկից համարժեք գումարը ստանալու իրավունք: 2) դրամական այն միջոցներն են, որոնք դրվել են բանկում ավանդների ձեւով եւ որոնց դիմաց բանկը վճարում է հաշվարկված տոկոսային եկամուտ: Գոյություն ունեն բանկային ավանդների տարբեր տեսակներ՝ ցպահանջ, ժամկետային, անժամկետ եւ պայմանագրով նախատեսված այլ պայմաններով վերադարձվող ավանդներ:

**բանկային աուդիտ, bank audit, банковский аудит** - բանկային օրենսդրության պահանջներին համապատասխան աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող աուդիտորական կազմակերպության կողմից բանկերի հաշվապահական հաշվառման վարման ճշտության ու ֆինանսական հաշվետվությունների անկախ ստուգումն է, որի արդյունքում տրվում է համապատասխան եզրակացություն այդ հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ: Բանկային

աուդիտի հիմնական նպատակն է գնահատել բանկերի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը եւ նրանց կողմից իրականացված ֆինանսական գործառնությունների համապատասխանությունը օրենսդրությանը:

**բանկի անվճարունակություն, bank insolvency, неплатежеспособность банка** - բանկը համարվում է անվճարունակ, եթե՝

ա) սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը եւ ավելին,

բ) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները,

գ) բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից,

դ) պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը: Խախտման պարբերականությունը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը, եւ պետք է միեւնույնը լինի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բանկերի համար:

**բանկի անվճարունակության ռիսկ bank insolvency risk, риск неплатежеспособности банка** - արդյունք է, երբ բանկն ունի մեծ քանակությամբ վատ որակի վարկեր, կամ եթե նրա պորտֆելի մեծ մասը արժեզրկվում է, որը բերում է բանկային կապիտալի նվազման: Եթե ներդրողները եւ բաժնետերերը այդ մասին իմանալով սկսում են հանել իրենց միջոցները, ապա բանկը կարող է անվճարունակ ճանաչվել: Անվճարունակության ռիսկը բանկի երկարաժամկետ կենսունակության ապահովման չափանիշն է:

**բանկի արժութային դիրք, bank currency position, валютное положение банка** - բանկի տվյալ արժույթով արտահայտված ակտիվների եւ պարտավորությունների տարբերությունն է: Երբ տվյալ արժույթով արտահայտված ակտիվները հավասար են նույն արժույթով արտահայտված պարտավորություններին, ապա արժութային դիրքը կանվանվի փակ, իսկ դրանց անհավասար լինելու դեպքում կանվանվի բաց արժութային դիրք:

**բանկային գաղտնիք, bank secrecy, банковская тайна** - բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչ-

պես նաեւ նրա առեւտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները եւ նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել եւ բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ: Բանկային գաղտնիք համարվող տեղեկությունները կարող են տրամադրվել միայն հաճախորդներին կամ նրանց ներկայացուցիչներին: Պետական մարմիններին եւ դրանց պաշտոնատար անձանց տեղեկություններ կարող են տրամադրվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով: Բանկային գաղտնիք համարվող տեղեկությունները բանկի կողմից հրապարակվելու դեպքում հաճախորդը, ում իրավունքները խախտվել են, իրավունք ունի բանկից պահանջել պատճառված վնասների փոխհատուցում:

**բանկային գործառնություններ, bank operations, банковские операции** - բանկերի գործառնություններն են դրամական միջոցների ներգրավումն ու տեղաբաշխումը: Տարբերվում են ակտիվային, պասիվային եւ միջնորդային գործառնություններ: Ակտիվային գործառնությունների միջոցով բանկերը տեղաբաշխում են իրենց ունեցած ֆինանսական ռեսուրսները՝ սեփական եւ ներգրավված միջոցները: Որպես կանոն այդպիսի գործառնություններն են վարկային եւ արժեթղթերով գործառնությունները: **Բանկերի ակտիվային գործառնություններում, active operations, активные операции** - ամենաբարձր տեսակարար կշիռը կազմում են վարկային գործառնությունները, որոնք հիմնականում բնորոշ են առեւտրային բանկերին: Դրանք դասակարգվում են ըստ տարբեր չափանիշների՝ ապահովվածության բնույթի (ապահովված եւ չապահովված կամ բլանկային), մարման ժամկետների (ցպահանջ եւ ժամկետային), փոխառուների տեսակների (կազմակերպություններին, բանկերին, ֆոնդային բորսաների միջնորդներին, բնակչությանը): **Պասիվային գործառնությունների passive operations, пассивные операции** - միջոցով բանկերը ձեւավորում են իրենց ֆինանսական ռեսուրսները, որոնք բանկերը հետագայում օգտագործում են վարկային եւ այլ ակտիվային գործառնություններ իրականացնելու համար: Առեւտրային բանկերի պասիվները գոյանում են սեփական, ներգրավված, եւ փոխառու այլ միջոցների հաշվին: **Միջնորդային գործառնությու նները intermediary operations,**

**посреднические операции** - բանկերի կողմից տարբեր տեսակի միջնորդական ծառայությունների մատուցումն է, հաճախորդի հանձնարարականների կատարումը:

**բանկային գործարքներ, bank transactions, deals, банковские сделки** - կարող են իրականացնել բանկերը՝ բանկային գործառնությունների հետ միասին, ինչպես նաեւ այլ վարկային կազմակերպությունները: Բանկային գործարքներին վերաբերում են հետեւյալ գործարքները՝ ա) դրամական ձեւով պարտավորությունների կատարումը նախատեսող երրորդ անձանց համար երաշխավորությունների տրամադրումը, բ) երրորդ անձանցից դրամական ձեւով պարտավորությունների կատարման պահանջի իրավունքի ձեռք բերումը, գ) քաղաքացիների եւ իրավաբանական անձանց հետ պայմանագրով նրանց դրամական միջոցների եւ այլ գույքի հավատարմագրային կառավարումը, դ) օրենսդրությանը համապատասխան թանկարժեք մետաղներով եւ քարերով գործառնությունների իրականացումը, ե) փաստաթղթերի եւ արժեքների պահպանման համար, քաղաքացիների եւ արժեքների պահպանման համար քաղաքացիներին ու իրավաբանական անձանց հատուկ տարածքների վարձակալության տալը, զ) լիզինգային գործառնությունները, է) խորհրդատվական եւ տեղեկատվական ծառայությունների մատուցումը:

**բանկի գործառնական եկամուտներ, bank operating income/profit, операционная прибыль банка -** հաշվարկված եւ ստացված տոկոսային գումարները, մատուցված ծառայությունների դիմաց ստացված կոմիսիոն եկամուտները, հաճախորդների կողմից ծախսերի փոխհատուցումը, արտարժութային գործառնությունների դիմաց ստացված եկամուտները:

**բանկի գործառնական ծախսեր, bank operating expenses, операционные расходы банка** - հաշվարկված եւ վճարված տոկոսային գումարները, կոմիսիոն ծառայությունների եւ արտարժութային գործառնությունների դիմաց վճարումները, կապի եւ փոստի ծառայությունների դիմաց կատարվող վճարումները:

**բանկի գործառնական շահույթի զուտ մարժա, bank operating income margin, маржа операционной прибыли банка -** գործառնական եկամուտների եւ գործառնական ծախսերի տարբերության եւ ընդհանուր ակտիվների հարաբերակցությունն է, կամ այլ կերպ ասած գործառնական շահույթի եւ ընդհանուր ակտիվների հարաբերակցությունն է:

**բանկի եկամտաբեր ակտիվներ, bank earning assets, доходные активы** - վարկերն են, լիզինգային (վարձակալական) միջոցները եւ արժեթղթերում ներդրումները:

**բանկի եկամուտների եւ ծախսերի հաշվետվություն, bank income and expenditure account, отчет о доходах и расходах банка -** բանկերի կողմից կազմվող ֆինանսական հաշվետվությունն է, որը բնութագրում է հաշվետու ժամանակահատվածի բանկի գործունեության ֆինանսական արդյունքները, որի հետ անմիջականորեն կապված տարրերը եկամուտներն ու ծախսերն են: ՀՀ բանկային օրենսդրության համաձայն բանկերը, ՀՀ Կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն ամսական, եռամսյակային եւ տարեկան հաշվետվություններ եկամուտների եւ ծախսերի վերաբերյալ:

**բանկային երաշխիք, bank guarantee, банковская гарантия** - փաստաթուղթ է, ըստ որի բանկը երաշխավորում է իր հաճախորդի ստանձնած դրամական պարտավորությունների պատշաճ կատարումը, այսինքն այդ հաճախորդի կողմից պարտքը չմարելու դեպքում բանկն ինքն է դա իրականացնում: Մի բանկի կողմից տրված երաշխիքը կարող է ծառայել որպես ապահովում մեկ այլ բանկի կողմից տրամադրվող վարկի համար: Առավել տարածված են վճարային երաշխիքները, երբ երաշխիք տված բանկը պարտավորվում է պարտատիրոջ կամ արտահանողի առջեւ պատասխան տալ պարտապանի կամ ներմուծողի կողմից պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

**բանկի ընդհանուր ակտիվներ, bank total assets, суммарные активы банка -** արտացոլվում են հաշվեկշռի ձախ մասում եւ ներառում են՝ կանխիկ դրամական միջոցները (դրամով եւ արտարժույթով) թղթակցային հաշվի մնացորդը ԿԲ-ում:

**բանկի ընդհանուր ակտիվների շահութաբերություն (ROA), return on total assets of the bank, рентабельность, доходность активов банка -** հարկումից հետո զուտ շահույթի եւ ընդհանուր ակտիվների հարաբերակցությունն է: Այս ցուցանիշը բնութագրում է առաջին հերթին բանկի աշխատանքի արդյունավետությունը:

**բանկի ընդհանուր կապիտալ, bank total capital, суммарный капитал банка** - բանկի ընդհանուր ակտիվների եւ ընդհանուր պարտավորությունների տարբերությունն է: Կապիտալի մեծությունը բանկի հուսալիության գրավականն է եւ դրանով է

նաեւ պայմանավորված ներդրողների, վարկառուների եւ հաճախորդների վստահությունը:

**բանկի ընդհանուր պասիվներ, bank total liabilities, суммарные пассивы банка -** արտացոլվում են հաշվեկշռի աջ մասում եւ հավասար է պարտավորությունների եւ սեփական կապիտալի հանրագումարին:

**բանկի իրացվելիության ռիսկ, bank liquidity risk, риск ликвидности банка** - բանկերի համար կարեւորագույն նշանակություն ունի ցանկացած պահին դեպոզիտների վերադարձման, վարկերի տրամադրման եւ այլ գործառնությունների ապահովման համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը: Այն բանկը, որի առջեւ ծառացել է իրացվելիության ռիսկի վտանգը, ստիպված է լինում շատ բարձր տոկոսներով ներգրավել դրամական միջոցներ, որը եւ կհանգեցնի շահույթի նվազմանը: Գործնականում բանկերը հազվադեպ են հանդիպում իրացելիության ռիսկի, քանի որ իրացվելիության պակասը հեշտությամբ համալրվում է միջբանկային շուկայում:

**բանկոմատներ, cash machi nes, ATM (automated teller machine), банкоматы** - դրանք բազմաֆունկցիոնալ ապարատներ են, որոնք կառավարվում են վերջին սերնդի մագնիտային պլաստիկ քարտերով եւ որոնց միջոցով դեբետային կամ կրեդիտային քարտերի տիրոջը տրամադրում են կանխիկ դրամական միջոցներ՝ որոշակի սահմանափակումներով:

**բանկնոտներ, bank notes, банкноты** - Կենտրոնական բանկի կողմից բանկային տոմսերի (դրամանիշերի) թողարկում, որոնք հանդես են գալիս շրջանառության եւ վճարման միջոց: Բանկային տոմսերի թողարկման անհրաժեշտությունը պայմանավորված է շուկայական տնտեսության առեւտրային եւ վարկային գործընթացի զարգացմամբ: Շրջանառության մեջ բանկային տոմսերը բաց են թողնվում վարկային եւ դրամավարկային պլանների հիման վրա՝ դրամաշրջանառության օրենքի պահանջներին համապատասխան:

**բանկ կոնսորցիում, consortium bank, банк консорциальный -** ինքնուրույն բանկ, որը պատկանում է երկու եւ ավելի վարկային հիմնարկների (սովորաբար մի շարք երկրների): Նրանցից յուրաքանչյուրի բաժինը, որպես կանոն չի գերազանցում 50%-ը: Կազմավորվել են 1964թ.-ից եվրոարժութային շուկայում գործառնություններ կատարելու համար:

**բանկային հաշիվ, bank account, банковский счет -** բանկում համապատասխան պայմա-

նագրով հաճախորդի բացած հաշիվն է, որի վրա մուտքագրվում է մուտք եղող դրամական միջոցները, կատարվում են փոխանցումներ եւ այլ ֆինանսական գործառնություններ:

**բանկային համակարգ, banking system, банковская система -** այս կամ այլ երկրում պատմականորեն ձեւավորված եւ օրենսդրորեն ամրագրված տարբեր տեսակի փոխկապակցված բանկերի եւ վարկային կազմակերպությունների ամբողջությունն է, որոնք գործում են միասնական ֆինանսավարկային մեխանիզմի շրջանակներում: Բանկային համակարգը, տվյալ երկրի վարկային համակարգի բաղկացուցիչ մասն է: Տարբեր երկրների բանկային համակարգերը միմյանցից տարբերվում են գործող բանկերի տեսակներով: Ներկայումս մեծ թվով երկրներում գործում է երկմակարդակ բանկային համակարգ, որի առաջին մակարդակում գտնվում է Կենտրոնական բանկը (ԱՄՆ-ում Դաշնային պահուստային համակարգը), իսկ երկրորդ մակարդակում առեւտրային բանկերի եւ այլ հաշվարկավարկային հիմնարկությունների ցանցը: Բանկային համակարգը պարտադիր ընդգրկում է Կենտրոնական բանկը, որն իրականացնում է պետական էմիսիոն, արժութային եւ դրամավարկային քաղաքականություն:

**բանկային հաշիվ, bank account, банковский счет -** տվյալ բանկի կողմից իրավաբանական եւ ֆիզիկական անձանց համար բացված հաշիվ է, որտեղ գրանցվում են հաճախորդի ավանդադրած դրամական միջոցները դրամով կամ արտարժույթով: Այն արտահայտում է բանկի եւ նրա հաճախորդի միջեւ ֆինանսական փոխհարաբերությունները: Գոյություն ունեն բազմաթիվ բանկային հաշիվներ՝ ընթացիկ, հաշվարկային, ցպահանջ, ժամկետային, մեկ անձի, մի քանի անձանց, ընդհանուր կամ միավորված այլ հաշիվներ: ՀՀ տարածքում գործող բանկերը կարող են իրենց կողմից սահմանված կարգով ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ հանդիսացող հաճախորդների սպասարկման նպատակով ցանկացած արժույթով նրանց կամ նրանց կողմից նշանակված անձանց անունով բացել եւ վարել միջազգային բանկային պրակտիկայում ընդունված հաշիվներ առանց սահմանափակումների:

**բանկի հաշվեկշիռ, bank balance, банковское сальдо** - ֆինանսական հաշվետվություն է, որը ներառում է բանկի ակտիվների եւ պասիվների վերաբերյալ տվյալներ, բացահայտում է բանկի գործառնությունների չափերն ու կառուցվածքը որոշակի ամսաթվի դրությամբ: Հաշվեկշռի

ակտիվներում բերվում է մի քանի ռեսուրսների բաշխումն ըստ գործառնությունների, իսկ հաշվեկշռի պասիվը ներառում է տվյալներ հաճախորդների եւ թղթակից բանկերի հաշիվներում ներգրավված միջոցների, ինչպես նաեւ սեփական կապիտալի չափերի վերաբերյալ: Բանկերը պարտավոր են պարբերաբար հրապարակել տարեկան հաշվեկշիռը՝ ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ժամկետում:

**բանկային հոլդինգ, bank holding, банковский холдинг -** ընդհանուր նշանակությամբ ցանկացած ընկերություն է, որը տնօրինում կամ վերահսկում է մեկ կամ մի քանի բանկերի:

**բանկի մասնաճյուղ, bank branch, филиал банка** - բանկի առանձնացված ստորաբաժանումը, գրասենյակն է, որը գտնվում է նրա գտնվելու վայրից դուրս եւ առաջարկում է բանկային ծառայություններ: Այն չի հանդիսանում իրավաբանական անձ եւ գործում է բանկի հաստատած կանոնադրության հիման վրա:

**բանկի շահույթի զուտ մարժա, bank net profit margin (NPM), маржа чистой прибыли банка** - հարկումից հետո զուտ շահույթի եւ գործառնական եկամուտների հարաբերակցությունն է: Այն բնութագրում է գործառնական եկամուտների մեկ այլ միավորին բաժին ընկնող զուտ շահույթի գումարի չափը հարկումից հետո:

**բանկի շահույթի սպրեդ, bank profit spread, спред прибыли банка** - տոկոսային եկամուտների եւ եկամտաբեր ակտիվների հարաբերակցության եւ տոկոսային ծախսերի ու բանկի պասիվների հարաբերակցության տարբերությունն է: Սպրեդի միջոցով գնահատվում է բանկի կողմից միջոցների ներգրավման եւ տրամադրման գործընթացում բանկային մրցակցության աստիճանը:

**բանկային ռիսկ, bank risk, банковский риск -** բանկային գործառնությունների առանձնահատկություններից բխող կորուստների վտանգն է, որն արտահայտվում է անորոշությամբ եւ շահույթ չստանալու հավանականությամբ: Բանկերը եւ այլ վարկային կազմակերպությունները կարող են վնասներ կրել երկրում տնտեսական իրավիճակի վատթարացման, տրամադրված վարկերի գծով չվճարումների, արժեթղթերի գնանշումների, տոկոսադրույքների դինամիկայի փոփոխության, ռեսուրսների կրճատման, արտահաշվեկշռային գործառնությունների գծով վճարումների կատարման եւ այլ հանգամանքների հետեւանքով: Բանկային ռիսկերը լինում են

արտաքին (ապահովագրական, արտարժութային, անհաղթահարելի ուժի հանգամանքների) եւ ներքին (վարկային, ներդրումային, կոնկրետ բանկային գործառնությունների) ռիսկեր: Ռիսկի մակարդակը վերահսկվում է կոնկրետ բանկային գործառնությունների (ֆորֆետավորում, հեջավորում եւ այլն) կամ դրանց ապահովագրության օգնությամբ:

**բանկի սեփական կապիտալ, bank own capital, собственный капитал банка** - արտացոլվում է հաշվեկշռի աջ մասում եւ ներառում է՝ կանոնադրական կապիտալը, գլխավոր պահուստները, եկամուտների եւ վերագնահատման պահուստները, կուտակված շահույթը:

**բանկային վարկ, bank credit, банковский кредит -** վարկային պայմանագրով նյութական արժեքների գրավադրմամբ բանկի կողմից տրամադրվող դրամական կամ արտարժութային միջոցներ:

**բանկի վարկային ռիսկ, bank credit risk, банковский кредитный риск** - բանկի ակտիվների (հատկապես վարկերի) արժեքի նվազման հավանականությունը կոչվում է վարկային ռիսկ: Քանի որ բանկային ակտիվների մեծ մասը ֆինանսավորվում է ներգրավված միջոցների հաշվին, իսկ սեփական միջոցների հաշվին ձեւավորված ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում աննշան է, ուստի անհուսալի վարկերի թեկուզեւ չնչին մեծությունը բանկի սնանկացման վտանգ կարող է առաջացնել:

**բանկային վկայագիր, bank certificate, банковский сертификат -** բանկային վկայագիրը (բանկային գրքույկ, բանկային սերտիֆիկատ) համարվում է այն արժեթուղթը, որը հավաստում է ավանդի գումարը, եւ ավանդատուի իրավունքը՝ սահմանված ժամկետի ավարտից հետո վկայագիր տված բանկում կամ այդ բանկի ցանկացած մասնաճյուղում ստանալ ավանդի գումարը եւ դրանից տոկոսներ:

**բանկային տոկոսադրույք, bank interest rate, процентная ставка банка -** զեղչադրույք է կամ հաշվարկային դրույք, որը սահմանում է տվյալ երկրի Կենտրոնական բանկը:

**բանկի տոկոսային մարժա, bank interest margin, процентная маржа банка** - իրենից ներկայացնում է բանկի տոկոսային եկամուտների եւ տոկոսային ծախսերի տարբերությունը: Այն հանդիսանում է բանկային շահույթի հիմնական աղբյուրը եւ կոչված է ծածկելու բանկերի կողմից իրականացվող ծախսերի զգալի մասը: Տոկոսային մարժայի մեծությունը բնութագրվում է

ինչպես բացարձակ մեծություններով, այնպես էլ բազմաթիվ ֆինանսական գործակիցների միջոցով:

**բանկային օֆշորային գոտիներ, offshore banking zones, офшорные банковские зоны -** աշխարհագրական կամ իրավաբանական առումով առանձնացված տարածքներ են: Այստեղ ոչ ռեզիդենտների հետ իրականացվող բանկային գործառույթների պայմանները տարբերվում են կապիտալի ներքին ազգային շուկայում գործողներից: Այդ գոտիներում գործառույթների վարումը հիմնականում ենթարկվում է օրենսդրական կարգավորման (գոտիներն ունեն խիստ մասնագիտացված բնույթ, որը բացառում է դրանց մասնակիցների կողմից զուտ ֆինանսական գործառնությունների իրականացումը), իսկ մասնակիցներն ամբողջությամբ ազատված չեն հարկեր վճարելուց:

**բարտեր, barter, бартер**- ապրանքանյութական արժեքների փոխանակումն է մեկը մյուսով՝ առանց դրամական միջոցների միջամտության:

**բաց բաժնետիրական ընկերություն, open joint-stock company, открытое акционерное общество -** մասնակիցներն առանց մյուս բաժնետերերի համաձայնության կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը: Նման բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված պայմաններով անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն եւ դրանց ազատ վաճառք: ԲԲԸ-ն պարտավոր է ամեն տարի հրապարակել իր տարեկան հաշվետվությունը եւ հաշվապահական հաշվեկշիռը:

**բեռնագիր, waybill, накладная -** ապրանքի առաքումը հաստատող գրավոր փաստաթուղթ, որը բեռն առաքողին տրվում է փոխադրող ձեռնարկության կողմից: Բեռնագրում նշվում են բեռի առաքման պայմանագրի պայմանները (ժամանակը, վայրը, այն անձի անունը, ով ստանալու է բեռը): Նրանում հաստատվում է նաեւ բեռի ստացման փաստը: Բեռնագրի փոխանցման դեպքում փոխանցվում է նաեւ ապրանքների սեփականության իրավունքը:

**բեռնագիր ապրանքային, consignment note, waybill, транс-портная накладная** - սկզբնական հաշվապահական փաստաթուղթ, որում ձեւակերպվում են ապրանքանյութական արժեքների ընդունման եւ հանձնման գործառնությունները:

**բեռնաշրջանառություն, freight turnover, грузооборот** - (տոննա) կիլոմետրերով) հաշվարկվում է փոխադրվող բեռնե-

րի յուրաքանչյուր խմբի քաշի (տոննա) եւ այդ բեռնափոխադրման հեռավորության արտադրյալների հանրագումարով:

**բիզնես, business, бизнес** - շահույթ բերող առեւտրաարտադրական եւ գործունեության ցանկացած այլ ձեւ է:

**բիզնեսմեն (գործարար), businessman, бизнесмен, предприниматель** - առեւտրական, ձեռնարկատեր, որը զբաղվում է շահույթ կամ այլ շահ բերող տնտեսական գործունեությամբ:

**բիզնես ինկուբատոր, business incubator, бизнес инкубатор** - նորաստեղծ փոքր եւ միջին ձեռնարկություններին եւ սկսնակ ձեռնարկատերերին օժանդակելու նպատակով ստեղծված կազմակերպություն, որը կարող է լինել ինչպես ինքնուրույն, այնպես էլ գործել տեխնոպարկի կազմում:

**բյուջե, budget, бюджет -** բառը առաջացել է միջնադարյան անգլերենի «budjet» բառից, որով անվանվում է այն քսակը, որտեղ թագավորը պահում էր հանրային ծախսերի համար նախատեսվող դրամական միավորները: Բյուջեն որոշակի ժամանակահատվածի համար եկամուտների եւ ծախսերի նախահաշիվ է:

**Բյուջեում արտացոլվում է.**

թե ինչպես են պետական կառավարման (կենտրոնական) և տեղական ինքնակառավարման մարմինները հայթայթում իրենց գործունեության իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցները: Որքան գումար է հավաքագրվելու հարկերից, տուրքերից և բյուջետային եկամտի այլ աղբյուրներից, թե ինչպես (պետական) կենտրոնական և տեղական մարմինները պետք է ծախսեն հավաքագրված գումարները: Որ ոլորտները պետք է ֆինանսավորվեն: Ինչքան գումար պետք է հատկացվի պաշտպանության, միջավայրի պահպանության, սոցիալական ծառայությունների, կրթության և այլ ծրագրերին, պետության կողմից փոխառու միջոցների ներգրավման և պետական պարտքի մարման քաղաքականությունը: Եթե ծախսերը գերազանցում են եկամուտներին, ապա կառավարությունը ստիպված է պարտք վերցնել՝ քաղաքացիներին մատուցած ծառայությունների համար վճարելու եւ պետական պարտքը սպասարկելու համար:

**Պետական բյուջեն, state budget, государственный бюджет** - ազդում է պետության տնտեսության վրա: Որոշ տեսակի ծախսեր, օրինակ, կրթության, գիտության և նոր տեխնոլոգիաների մշակման և ներդրման գծով հավանաբար կբարձրացնեն արտադրողականությունը տնտեսության առանձին ճյուղերում,

ինչպես նաև քաղաքացիների եկամուտները ապագայում: Հարկերը, մյուս կողմից, նվազեցնում են քաղաքացիների եկամուտները և ավելի քիչ գումար են թողնում իրենց ծախսերի համար, զգալիորեն փոխվում է՝ կախված երկրի տնտեսության վիճակից: Տնտեսական աճի պայմաններում ավելի շատ մարդ է ապահովված աշխատանքով և եկամուտներն էլ բարձր են: Կառավարությունը կարող է ֆինանսավորել ավելի շատ թվով ծրագրեր և լրացուցիչ ֆինանսավորման ռեսուրսների փոխառության անհրաժեշտությունը կնվազի, պետական քաղաքականության ապագա ռազմավարությանը առնչվող փաստաթուղթ է:

**բյուջետային դասակարգում, budget classification, бюджетная классификация -** պետական եւ համայնքային բյուջեների եկամուտների եւ ծախսերի խմբավորումն է ըստ տեսակների եւ ուղղությունների: Այն արտահայտվում է հետեւյալ կառուցվածքով՝ ա) բյուջեների եկամուտներ եւ պաշտոնական տրանսֆերտներ, բ) բյուջեների ծախսեր եւ վարկավորում՝ հանած մարումը, գ) պետական բյուջեի պակասուրդի (դեֆիցիտ) ֆինանսավորման աղբյուրներ եւ բյուջեների պարտքեր, 2) բյուջեի մուտքերի եւ ելքերի համակարգված խմբավորումն է՝ հիմնված այնպիսի հատկանիշների վրա, ինչպիսիք են օրինակ. ծախսերի տնտեսագիտական բնույթը, գործառնական առանձնահատկությունները, գերատեսչական կառուցվածքը եւ այլ բնութագրերը:

**բյուջետային եկամուտներ, budget receipts, бюджетные доходы** - բոլոր հարկային, ոչ հարկային եւ այլ եկամուտներն են, որոնք հավաքագրվում են պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից երկրի օրենսդրության համաձայն: Բյուջետային եկամուտները ներառում են նաեւ պաշտոնական եւ այլ տրանսֆերտներ (նվիրատվություններ):

**բյուջեի ծախսային մաս, budget expenditures, бюджетные рас-ходы -** բյուջետային ռեսուրսների հատկացումներն են, որոնք օգտագործվում են ծրագրերի եւ միջոցառումների ֆինանսավորման համար:

**բյուջետային համակարգ, budget system, бюджетная система** - բաղկացած է պետական եւ համայնքների բյուջեներից, որոնք հիմնվում են ֆինանսական, դրամավարկային եւ հարկային միասնական պետական քաղաքականության վրա: Բյուջետային համակարգն իր գործունեությունը կարգավորում է բյուջեների նախագծերի կազմման, բյուջեների եկամուտների (մուտքերի) եւ ծախսերի բյուջե-

տային դասակարգման, հաշվառման, հաշվետվության ներկայացման եւ բյուջեների կատարման ընդհանուր սկզբունքների հիման վրա:

**բյուջետային հատկացումներ, budget subsidies, бюджетные субсидии -** բյուջեի մասին օրենքով սահմանված՝ ծախսվող միավորներին տրվող լիազորություններն են, բյուջետային միջոցների հաշվին տվյալ բյուջետային տարում որոշակի չափով ծախսեր կատարելու համար:

**բյուջեի պակասուրդ, budget deficit, бюджетный дефицит** - կառավարության ծախսերի գերազանցումը եկամուտներին: Պակասուրդը կարելի է վերացնել փոխառության, թղթադրամի թողարկման, կառավարուրթյան ծախսերի սահամանափակման եւ հարկերի բարձրացման միջոցով:

**բյուջետային տարի, budget year, бюджетный год** - Հայաստանի հանրապետության բյուջետային տարին համընկնում է օրացույցային տարվա հետ: Այն սկսվում է հունվարի 1-ին եւ ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

**բնակչության բնական աճ, natural growth of population, естественный прирост населения -** տվյալ տարվա ընթացքում ծնվածների եւ մահացածների թվաքանակների տարբերությունն է:

**բնակչության բնական շարժ natural movement of population, естественное движение насе-ления** - ծնվածների եւ մահացածների համակցության ընդհանրացված անվանումն է՝ այսինքն բնական ճանապարհով բնակչության թվաքանակի փոփոխումը: Բնակչության բնական շարժին վերագրվում են նաեւ ամուսնություններն ու ամուսնալուծությունները, որոնք բնակչության թվաքանակի ցուցանիշի վրա ազդեցություն չունեն, սակայն հաշվարկվում են նույն եղանակով:

**բնակչության դրամական (իրական) եկամուտներ, population real income, реальные доходы населения** - ներառվում են բնակչության բոլոր խմբերի աշխատանքի վարձատրությունը, կենսաթոշակները, նպաստները կրթաթոշակները եւ այլ սոցիալական անհատույց փոխատվությունները, գյուղատնտեսական մթերքի վաճառքից մուտքերը, սեփականությունից եկամուտները՝ ներդրումների, արժեթղթերի շահութաբաժինների տոկոսների տեսքով, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվածների եկամուտները, ինչպես նաեւ վարկերը, արժեթղթերի վաճառքից եկամուտները եւ այլ եկամուտներ:

**բնակչության դրամական ծախսեր, population money expenditures, денежные расходы населения** - ներառվում են ապրանքների գնման եւ ծառայությունների վճարման ծախսերը, պարտադիր վճարումները եւ կամավոր մուծումները (հարկեր, գանձումներ, ապահովագրական վճարներ, հասարակական կազմակերպություններին կատարված մուծումներ, ապառիկ գնված ապրանքների դիմաց վճարված տոկոսներ եւ այլն), ինչպես նաեւ խնայողությունների հավելաճը (նվազումը) արժեթղթերում եւ ավանդներում, տարադրամի գնումը եւ այլ ծախսերը:

**բնօգտագործման վճար, nature utilization payment, платеж за природопользование** - պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաեւ տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսվարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց օրենքին համապատասխան պետական բյուջե վճարվող վճարն է: ՀՀ ԱԺ կողմից այս օրենքը ընդունվել է 1998 թ.-ի դեկտեմբերին:

**բնապահպանական եւ բնօգտագործման վճարներ nature protection and nature utilization payments, платежи за охрану природы и за природопользование** - «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» օրենքով բնապահպանական վճար, որը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով համապատասխան կարգով պետական բյուջե օրենքով նախատեսված դեպքերում՝ համայնքային բյուջե վճարվող պարտադիր վճար է:

**բոնիֆիկացիա, bonification, бонификация -** ա) որակի համար ապրանքի գնի վրա հավելուրդ, բ) ապրանքի արտահանման դեպքում երկրի ներսում այդ նույն ապրանքի համար գանձված հարկի գումարի վերադարձ, գ) պետական վարկային սուբսիդիա վարկառուներին՝ վարկային տոկոսի իջեցման նպատակով, դ) պետական փոխառության պարտատոմսեր տնօրինողների կողմից միաժամանակյա վճարում, որը կատարվում է պարտատոմսերը այլ արժեթղթերով փոխարինելու դեպքում:

**բոնիտետ, credit solvency, бонитет -** փոխառուի՝ վարկը մարելու հնարավորությունների գնահատում: Վճարունակության ցուցանիշ է:

**բոնուս, bonus, бонус -** կյանքի ապահովագրության որոշ տեսակներում՝ 1) ապահովագրա-

կան գումարին ավելացող գումար է, 2) ապահովագրավճարից զերծ է: 3) Հանքարդյունահանման հատուկ լիցենզիայի տրամադրումը կարող է պայմանավորվել հատուկ վճարի՝ բոնուսի վճարման պայմանով: Բոնուսային վճարի պահանջ առաջանում է այն դեպքում, երբ պետությունը լիցենզառուին տրամադրում է առեւտրային արժեք ներկայացնող տեղեկատվություն տվյալ հանքավայրի մասին, որը ձեռք է բերվել նախկինում իրականացված ուսումնասիրությունների հիման վրա: Հայաստանի Հանրապետությունում բոնուսի մեծության հաշվարկման մեխանիզմը եւ կարգը սահմանում է կառավարությունը:

**բորսա, exchange, биржа -** մեծածախ շուկա, ուր առեւտուրը կազմակերպվում է ապրանքի նմուշով (ապրանքային բորսա), արժեթղթերով (ֆոնդային բորսա), օտարերկրյա արտարժույթով (արժութային բորսա): Դա այն վայրն է , ուր գործարք կնքելու համար վաճառողներն ու գնորդները հանդիպում են իրար: Բորսան ունի անդամների հաստատագրված կազմ եւ առեւտրի իրականացման կանոններ: Բորսաները լինում են պետական եւ մասնավոր: Պետական բորսաներում գործարքներ կարող են կնքել ինչպես բորսայի անդամներ, այնպես էլ անդամ չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտներ: Մասնավոր բորսաները կազմակերպվում են բաժնետիրական հիմունքներով, ուր գործարքներ կարող են կնքել միայն դրանց անդամագրված բաժնետերերը: Բորսային անդամները հանդես են գալիս որպես բրոքերներ, մեծածախ առեւտրի միջնորդներ, որոնց բորսան ապահովում է տեղով, կապի միջոցներով, կատարում է գործառնությունների հաշվառում, մշակում օրինակելի պայմանագրեր, քննարկում է արբիտրաժային վեճեր:

**բորսայական ինդեքսներ, exchange indices, биржевые индексы -** ֆոնդային շուկայի գների դինամիկայի ընդհանուր ցուցանիշ է, որն արտացոլում է դրանում շրջանառվող արժեթղթերի ողջ ոլորտը: Այն միջին մեծություն է եւ հաշվարկվում է նախկին՝ բազիսային ժամանակաշրջանի, շուկայական գնահատման նկատմամբ:

**բորսայական փոխարժեք, ex-change rate, биржевоú курс -** ֆոնդային բորսաներում շրջանառվող արժեթղթերի (բաժնետոմսեր, պարտատոմսեր) արժեքն է, կամ այսպես ասած վաճառքի գինը: Այն որոշվում է փոխատվական տոկոսի մակարդակի եւ տվյալ արժեթղթի եկամտաբերության մակարդակի հարաբերակցությամբ:

**բորսայական շահույթ, ex-**

**chan-ge profit, биржевая прибыль** - ֆոնդային բորսաներում վաճառվող արժեթղթերի, իսկ ապրանքային բորսաներում ապրանքների վաճառքից գոյացած եկամուտն է: Բորսայական շահույթը բորսայական գների եւ կատարած ծախսերի (ներառյալ մաքսերը, ապահովագրությունը) տարբերությունն է:

**բրենդ կամ մակնիշ, brand, бренд -** արտադրանքը կամ ծառայությունը ներկայացնելու եւ նման ապրանքներից տարբերակելու համար օգտագործվող հանրաճանաչ դարձած անուն, նշան, առեւտրանշան, գեղակառույց եւ այլն: Մակնիշը կարող է իրավական պաշտպանություն ստանալ հեղինակի իրավունքի կամ առեւտրանիշի միջոցով: Կա նաեւ մակնիշի կերպար **(brand image)** հասկացողությունը, որը սպառողի երեւակայության մեջ մակնիշի կազմավորված պատկերն է, որը կարող է ամրապնդել հավատարմությունը մակնիշին եւ նպաստել բազմակի գնումներ կատարելուն: Մակնիշի դրական կերպարն արմատավորվում է գովազդի, վաճառքի խթանման, գնորդների կարծիքի բանավոր փոխանցման միջոցով:

**բրոքեր, broker, брокер -** բորսաներում պաշտոնական առեւտրային միջնորդ է, որը վաճառողի համար փնտրում է գնորդ, իսկ գնորդի համար վաճառող: Գործարքը կնքվում է հաճախորդի հանձնարարությամբ:

**բուսաբուծության համախառն արտադրանք, gross output of plant-growing, валовая продук-ция растениеводства -** ներառում է հաշվետու տարում ստացված հացահատիկի եւ հատիկաընդեղենի, տեխնիկական մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարաբոստանային մշակաբույսերի, պտղի եւ հատապտղի, խաղողի, կերային մշակաբույսերի արտադրանքի, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի եւ բազմամյա տնկարկների տնկանյութի եւ այլնի արժեքը: Ինչպես նաեւ. բազմամյա տնկարկների հիմնման եւ մշակման արժեքը, բուսաբուծության արտադրանքի անավարտ արտադրության փոփոխության արժեքը (աշնանացանի, ցրտահերկի բարձրացման եւ այլ աշխատանքների ծախսերը, որոնք կատարվում են հաշվետու տարում՝ հաջորդ տարվա բերքի տակ):

## Գ

**գանձապահ, cashier, кассир -** կազմակերպության ծառայող է, որը կատարում է կանխիկ դրամը եւ արժեթղթերը հաշվառելու, ընդունելու, պահպանելու եւ դրամարկղից դուրս տանելու պարտականությունները: Գանձապահը պատասխանատու է դրամա-

կան միջոցները ստանալու եւ ծախսելու համար:

**գանձապետական արժեթղթեր, treasury securities, казначейские ценные бумаги** - ա) ԱՄՆ-ում գանձապետարանի կողմից թողարկվող արժեթղթերի ընդհանրական անվանումն է: բ) Թողարկվում են հարկային մուտքերի հաշվին չծածկվող պետական ծախսերի ֆինանսավորման (միջոցների ներգրավման) նպատակով: Շուկայում շրջանառվող գանձապետական արժեթղթերը հանդես են գալիս մուրհակների եւ պարտատոմսերի տեսքով:

**գանձապետարան, treasury, казначейство** - հատուկ ֆինանսական մարմին է, որը գործում է ֆինանսների նախարարությանն առընթեր կամ նրա կազմում: Գանձապետարանի գործառույթներում ներառվում են պետական բյուջեի նախագծի կազմումը եւ դրա կատարման նկատմամբ հսկողության իրականացումը (այդ թվում բյուջեի դրամարկղային կատարման կառավարումը), բյուջետային միջոցների ծախսման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաեւ պետական պարտքի սպասարկումը եւ պետական արժեթղթերի թողարկումն ու դրա կատարման հսկողությունը:

**գերավճար**, **overpayment, пере-плата** - սահմանված կարգով հաշվարկվող որեւէ հարկային պարտավորության գումարից ավելի վճարված գումար, կամ պարտավորության բացակայության պայմաններում (ներառյալ` օրենքով չնախատեսված դեպքերում)` տվյալ հարկատեսակի համապատասխան գանձապետական հաշվին հարկ վճարողի կամ հարկ վճարողի անունից այլ անձի կողմից փաստացի փոխանցված (վճարված) գումար, կամ դատարանի վճռով (կամ վճռի կատարման արդյունքում) հարկ վճարողին վերադարձման ենթակա գումար, կամ հարկատեսակի պարտավորությանը գերազանցող գումարով այլ հարկատեսակից տվյալ հարկատեսակին հարկային մարմնի կողմից հաշվանցված գումար:

**գերավճարից տարբերվող գումար, amount differing from overpayment, сумма отличающейся от переплаты** - գերավճար չհանդիսացող գումար, որն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կարող է հաշվանցվել հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց:

**գերավճարի (գերավճարից տարբերվող գումարի) մնացորդ, overpayment balance, сальдо переплаты** - գերավճարի (գերավճարից տարբերվող գումարի) այն մասը, որը, ժամանակագրական կարգով մարման արդյունքում, մնացորդի արձանագրման (որոշման) օրվա դրու-

թյամբ պակասեցված չէ հարկային պարտավորությունների հաշվին:

**գերիշխող դիրք, superior position, превосходящее положение** - տնտեսավարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող, եթե նա որպես մատակարար կամ սպառող`

ա) չունի մրցակից կամ չի հանդիպում որեւէ էական մրցակցության.

բ) իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը: Գերիշխող դիրքի չարաշահումն արտահայտվում է`

ա) իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված գների, երկրի օրենսդրությանը կամ գործարար շրջանառության սովորույթներին հակասող առեւտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրմամբ, որը հանգեցնում է մրցակցության սահմանափակմանը.

բ) առեւտրի կամ արտադրության արդիականացման սահմանափակմամբ, արհեստական պակասորդի ստեղծմամբ` արտադրության չհիմնավորված կրճատման, ապրանքներն ի վնաս սպառողի շահերի պահելու, փչացնելու, ոչնչացնելու միջոցով.

գ) առանձին գործընկերների նկատմամբ խտրական պայմանների կիրառմամբ` նրանց համար ստեղծելով մրցակցային անհավասար պայմաններ.

դ) պայմանագրի կողմին լրացուցիչ պարտավորությունների պարտադրմամբ, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ.

ե) տնտեսավարող սուբյեկտների վերակազմավորման կամ տնտեսական կապերի խզման պարտադրմամբ:

**գին, price, цена** - ապրանքի միավորի դրամական միջոցներով արտահայտված արժեքը, որը գնորդը պարտավոր է վճարել վաճառողին դրա ձեռք բերման համար: Սովորաբար ապրանքի գինը նախօրոք սահմանվում է վաճառողի կողմից արտադրության եւ վաճառքի ընդհանուր ծախսումների հիման վրա` հաշվի առնելով շահութաբերության ընդհանուր ցուցանիշը:

**գյուղատնտեսական վարկեր, agricultural credits, сельскохозяйственные кредиты -** նախատեսված է գյուղատնտեսության զարգացման համար, փոխատվական կապիտալի ներդրման ձեւ է եւ տրամադրվում է գրավադրմամբ: Դրանք տրվում են հողի մշակման, բերքահավաքի, անասունների բտման եւ խնամքի հետ կապված աշխատանքերին նպաստելու նպատա-

կով:

**գյուղացիական տնտեսություն, agricultural economy, крестьянское хозяйство** - ազատ ձեռնարկատիրության ձեւ է, որտեղ ցմահ ժառանգատիրության հիման վրա կամ հողի օգտագործման վարձակալության պայմաններով իրականացվում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը, դրա վերամշակումը եւ իրացումը:

**գնաճ, սղաճ, ինֆլյացիա, price increase, inflation, инфляция, повышение цен -** տնտեսության մեջ գների ընդհանուր մակարդակի բարձրացումն է կամ դրամաշրջանառության գերհագեցումը դրամով, որը բերում է դրամական միավորի արժեզրկմանը, գնողունակության փոքրացմանը եւ համապատասխան ապրանքների եւ ծառայությունների աճին, որը պայմանավորված չէ դրանց որակի բարձրացմամբ:

**գնի ինդեքս (համաթիվ) price index, индекс цен** - գների բարձրացման կամ իջեցման ցուցանիշ է, որը բնութագրում է գների հարաբերական փոփոխությունը որոշակի ժամանակաշրջանում: Հաշվարկվում է որոշակի քանակի ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) որեւէ ժամանակաշրջանի միջին կշռված գները, տոկոսային արտահայտությամբ բաժանելով բազիսային ժամանակաշրջանի միջին կշռված գների վրա: Բազիսային տարին ընդունվում է 100%: Գների ինդեքսն արտացոլում է գների ընդհանուր (միջին) մակարդակի հարաբերական փոփոխությունը: Այլ կերպ ասած գների ինդեքսը որոշակի ժամանակահատվածում ապրանքների միջին գնի փոփոխությունը բնութագրող ինդեքս է: Եթե ինդեքսն իջնում է 100%-ից, ապա տեղի է ունենում գնանկում, իսկ եթե ինդեքսն աճում է, ապա առկա է գնաճ:

**գնանկում, deflation, дефляция -** գների մակարդակի ընդհանուր անկումն է՝ կապված ապրանքերի (աշխատանքների, ծառայությունների) առաջարկվող ծավալի նկատմամբ պահանջարկի ընդհանուր ծավալի նվազման հետ: Գնանկումն ի տարբերություն գնաճի, բնորոշվում է գների աճի արագության նվազմամբ:

**գնողունակություն, paying capacity, покупательная способность** - ա) դրամի գնողունակությունն է, որի արժեքը բնորոշվում է ապրանքներ եւ ծառայություններ ձեռք բերելու ընդունակությամբ: Ցույց է տալիս, թե երկրի մեկ դրամական միավորով ինչ քանակությամբ ապրանքներ եւ ծառայություններ կարելի է գնել: Դրամի գնողունակությունն ուղղակիորեն կախված է ապրանքների գների եւ ծառայությունների սակագների մակարդակից: բ)

բնակչության գնողունակությունն է, որը ցույց է տալիս ապրանքների եւ ծառայությունների այն քանակը, որը բնակչությունն ընդունակ է ձեռք բերել իր ունեցած դրամական միջոցներով:

**գնահատում, estimation, evaluation, оценка** - տնտեսական միջոցներն ու գործընթացները դրամական չափիչով արտահայտելու եղանակ է: Գնահատումը հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերից մեկն է եւ այն բացառիկ կարեւոր նշանակություն ունի տնտեսավարող սուբյեկտների տնտեսական դրությունը ճանաչելու եւ նրա հետագա աշխատանքներին ճիշտ ուղղություն տալու գործում:

**գործազրկության մակարդակ, unemployment level, уровень безработицы** - հաշվարկվում է որպես գործազուրկների թվաքանակի հարաբերություն տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի նկատմամբ:

**գործազրկության նպաստ, unemployment benefit, пособие по безработице** - նշանակվում է այն քաղաքացիներին, ովքեր 16 տարեկան են, գրանցված են զբաղվածության տարածքային կենտրոններում եւ ունեն գործազուրկի կարգավիճակ:

**գործազուրկ, unemployed, безработный** - հանրապետության տարածքում մշտապես բնակվող աշխատունակ տարիքի աշխատունակ այն քաղաքացիներն են, ովքեր դիտարկվող ժամանակաշրջանում աշխատանք չեն ունեցել:

**գործատու, employer, работодатель -** քաղաքացիաիրավական հարաբերությունների ցանկացած սուբյեկտ, որն իր գործունեության իրականացման կամ ապահովման համար իրավունք ունի օրենքով չարգելված աշխատանք առաջարկել ֆիզիկական անձանց, այդ նպատակով աշխատողներ վարձել եւ աշխատանքային պայմանագրերի միջոցով նրանց ներգրավել որոշակի աշխատանքների կատարման:

**գործակալ, agent, агент** - ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը լիզորված է կատարելու որոշակի գործողություններ մեկ այլ անձի հանձնարարությամբ, նրա անունից եւ հաշվին, օրինակ՝ կնքել պայմանագիր պրինցիպալի եւ երրորդ կողմի միջեւ: Նա հանդես է գալիս որպես միջնորդ, որի հիմնական պարտականությունն է պատշաճ եւ բարեխիղճ կերպով կատարել պրինցիպալի հանձնարարությունները:

**գործակալություն, agency, агентство** - գործակալության պայմանագրով մի կողմը՝ գործակալը, պարտավորվում է մյուս կողմի՝ պրինցիպալի հանձնա-

լարության, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից կատարել իրավաբանական եւ այլ գործողություններ:

**գործարար ակտիվություն, business activity, деловая активность -** տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների պլանի կատարման աստիճանը եւ դրանց աճի տեմպերի ապահովումը, ընդհանուր կապիտալի եւ դրանում ներառվող առանձին տարրերի օգտագործման արդյունավետության մակարդակն ու տնտեսական աճի կայունությունն է:

**գրանցված գործազրկության մակարդակ, registered unemployment rate, уровень зарегистри-рованной безработицы -** հաշվարկվում է որպես գործազուրկների եւ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակների հարաբերակցություն:

**գրավ, security, залог** - գրավը լրացուցիչ միջոց է, որով ապահովվում է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորությունների կատարումը:

Գրավի առարկա կարող է լինել ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք, բացառությամբ շրջանառությունից հանված գույքի:

**գրավական, bail, залог** - համարվում է այն գրավը, որի առարկան անցնում է գրավառուի տիրապետմանը:

**գրավառու, bailee, хранитель залога -** անձ, որի շահերը, հիմնական պարտավորությանը համապատասխան, ապահոված են գրավով:

**գրավատու, bailor, залогодатель -** անձ, ում գույքը կամ գույքի մի մասը գրավ է դրված:

**գուդվիլ, goodwill, гудвилл -** ոչ նյութական ակտիվների տեսակ է: Այն նախատեսված է որոշ խումբ կազմակերպությունների համար, երբ ձեռքբերողը մայր կազմակերպությունն է, իսկ ձեռք բերվողը՝ դուստր կազմակերպությունը: Հետեւաբար, երբ մայր կազմակերպությունը ձեռք է բերում դուստր կազմակերպությանը կամ նրա ակտիվները անվանական գնից ավելի բարձր կամ ցածր արժեքներով, ապա առաջացած տարբերությունը ճանաչվում է բարձրի դեպքում՝ դրական գուդվիլ, ցածրի դեպքում՝ բացասական:

**գույք, property, имущество -** սեփականության իրավունքի նյութական օբյեկտ, որոշակի ֆիզիկական կամ իրավաբանական անձի պատկանող գույքային իրավունքի ամբողջություն, բ) օրենքով պետական գրանցման ենթակա անշարժ գույք եւ օրենքով նախատեսված դեպքերում

պետական գրանցման ենթակա շարժական գույք:

**գույքի ապահովագրություն, property insurance, страхование собственности** - գույքը կարող է ապահովագրվել հօգուտ այն անձի (ապահովագրողի կամ շահառուի), ով ըստ օրենքի այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահ ունի: Համապատասխան պայմանագրով ապահովագրողը պարտավորվում է պայմանավորված վճարի դիմաց պայմանագրով նախատեսված դեպքերում շահառուին հատուցել ապահովագրված գույքին պատճառված վնասները որոշված գների սահմաններում:

**գույքագրում, inventory, инвентаризация -** ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների եւ այլն) ապրանքանյութական արժեքների, ինչպես նաեւ դրամարկղում, բանկի հաշվում, դրամական միջոցների եւ տնտեսավարող սուբյեկտների այլ միջոցների առկա մնացորդների որոշումն ու ցուցակագրումն է քանակական եւ դրամական արտահայտությամբ: Այն հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերից մեկն է:

**գույքի հավատարմագրային կառավարում, accredited management of property, доверите-льное управление имуществом -** համապատասխան պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի` հավատարամագրային կառավարչի հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի` շահառուի: Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում հավատարմագրային կառավարչին դրա նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման: Հավատարմագրային կառավարման օբյեկտ կարող են լինել անշարժ գույքի առանձին տեսակներ, արժեթղթեր, ոչ փաստաթղթային արժեթղթերով հաստատված իրավունքներ, բացառիկ իրավունքներ եւ այլ գույք:

**գույքահարկ, property tax, налог на имущество** - այդ հարկատեսակը վճարող անձանց սեփականության իրավունքով պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար օրենքով սահմանված կարգով եւ չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողները տնտեսական գործունեության արդյունքներից: Գույքահարկ վճարողներ են համար-

վում ՀՀ-ում եւ օտարերկյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները, ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաեւ քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց ՀՀ տարածքում պատկանում է հարկվող օբյեկտ համարվող գույքը: Գույքահարկ չեն վճարում ՀՀ պետական մարմինները, ՀՀ Կենտրոնական բանկը, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները եւ հիմնարկները: Հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա օրենքով սահմանված դրույքաչափերով եւ կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 2002 թ.-ին:

## Դ

**դանդաղ իրացվելի ակտիվներ, slow assets, illiquid assets, неликвидные активы** - դրանց թվին են դասվում ընթացիկ ակտիվներից արտադրական պաշարները, անավարտ արտադրության ծախսերը, երկարաժամկետ ֆինանսական ներդրումները, դեբիտորական պարտքերը, ապրանքանյութական արժեքների ձեռքբերման գծով ավելացված արժեքի եւ ակցիզային հարկերը:

**դեբետ, debit, дебет** - հաշվապահական հաշիվների գծով կազմված աղյուսակի ձախ կողմի անվանումն է, որը հանդես է գալիս երկու իմաստով: Ակտիվային հաշիվներում դեբետը նշանակում է հաշվառվող տնտեսական միջոցների (ակտիվի) գումարների մուտքագրում կամ ավելացում, իսկ պասիվային հաշիվների դեպքում՝ ակտիվի կազմավորման աղբյուրների (պասիվի) գումարների ելքագրում կամ նվազեցում:

**դեբիտորական պարտք, accounts receivable, дебиторская задолженность** - տնտեսական փոխհարաբերությունների հետեւանքով իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից (կրեդիտորներից) տնտեսավարող սուբյեկտին, կազմակերպությանը եւ տարբեր հաճախորդներին (դեբիտորին) հասանելիք կամ չվճարված պարտքերի գումարն է: Հաշվապահական հաշվեկշռում ներկայացվում է որպես ընթացիկ ակտիվ:

**դեմպինգ dumping, демпинг** - զգալի քանակությամբ ապրանքների վաճառք արտաքին շուկայում՝ էապես ավելի ցածր գներով, քան ներքին շուկայում (կամ տվյալ ապրանքն արտադրող երկ-

րում) սովորական առեւտրական գործարքների ժամանակ: Դրա նպատակը այս կամ այն շուկա-յում արտահանման մրցակցային առավելություն ձեռք բերելն է: Մի շարք դեպքերում ապրանքները վաճառվում են նույնիսկ իրենց ինքնարժեքից ցածր գներով:

**դեպոզիտ, deposit, депозит**-լատիներենից բառացի թարգմա-նությամբ՝ որեւիցե տեղ պահ-պանման տրված միջոցներն են: Այլ առումներով՝ ա) այն տարբեր հաճախորդներից բանկերում ներգրավված դրամական ավանդներն են, բ) վարկային հիմնարկություններում պահ-պանման համար տրված դրամա-կան միջոցներն ու արժեթղթերն են:

**դեպոզիտարիա, depositary, депозитарий -** ա) դեպոնացված արժեքները պահելու տեղ, պա-հեստարան, գանձատուն, բ) պա-հառու՝ կազմակերպություն, որն ի պահ է ընդունում դրամական միջոցներ, փաստաթղթեր, ար-ժեթղթեր, դրանց հավաստագրեր եւ այլ արժեքավոր ակտիվներ: Դեպոզիտարիաներն առաջացել են որպես հաճախորդների ար-ժեթղթերի պահառուներ, սակայն ժամանակի ընթացքում ընդլայ-նել են իրենց գործունեության ոլորտը եւ սկսել մատուցել ար-ժեթղթերի սեփականատերերի հաշվառման, սեփականության իրավունքի ամրագրման կամ այդ իրավունքը այլ անձանց փո-խանցման կազմակերպման գծով ծառայություններ:

**դեպոզիտար ստացական, depositary receipt, депозитное свидетельство** - համարվում է օտարերկրյա թողարկողի բաժ-նետոմսերի, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ փաստաթղթերի, պարտա-տոմսերի կամ պարտքային այլ արժեթղթերի հիման վրա թո-ղարկված այն արժեթուղթը, որը սեփականատիրոջն իրավունք է տալիս իրականացնել դրա հիմ-քում ընկած արժեթղթերով ամ-րագրված իրավունքները:

**դեպո հաշիվ, depot account, счет-депо** - դեպոզիտարիայի հաշվառման գրանցամատյաննե-րում գրառումների ամբողջու-թյունն է, որն անհրաժեշտ է դե-պոնենտի հետ դեպո հաշվի պայ-մանագիրը դեպոզիտարիայի կողմից կատարելու եւ արժեթղ-թերը հաշվառելու համար: Այդ հաշվում հաշվի են առնվում ար-ժեթղթերի նկատմամբ դեպոնեն-տին պատկանող իրավունքները:

**դեպոնենտ, depositor, депонент -** ֆիզիկական կամ իրավա-բանական անձ, որը արժեքները ներդրել է որպես ավանդ (դեպո-զիտ): Դեպոնենտ են համարվում նաեւ ժամանակին աշխատա-վարձ չստացող աշխատողները, առանձին կազմակերպություն-

ներն ու անձինք, հօգուտ որոնց տեղի են ունենում աշխատավարձի պահումները (ալիմենտ եւ այլն):

**դեվալվացիա, devaluation, depreciation, девальвация**- դրամական միավորի ոսկու պարունակության իրական պակասեցումն է կամ միջազգային հաշվարկային միավորով արտարժույթի նկատմամբ նրա պաշտոնական կուրսի իջեցումը: Դեվալվացիայի են դիմում ինֆլյացիայի պայմաններում՝ դրամաշրջանառությունը կայունացնելու համար:

**դեցիլային խմբեր, decile groups, децильные группы** - ըստ բնակչության եկամուտների եւ ծախսերի մակարդակի տոկոսային հավասարաչափ բաշխված 10 խմբեր, որոնց համար հաշվարկվում է Ջինիի գործակիցը:

**դեֆիցիտ (պակասուրդ) և հավելուրդ, deficit, дефицит & surplus, избыток** - բյուջեի եկամուտների և ծախսերի փոխհարաբերության չափանիշներն են: Դեֆիցիտը այն մեծությունն է, որով ծախսերը գերազանցում են եկամուտներին, իսկ հավելուրդը ցույց է տալիս, թե ինչքանով են եկամուտները գերազանցում ծախսերին:

**դեֆլյատոր, deflator, дефлятор** - ընթացիկ գներով հաշվարկված տնտեսական ցուցանիշների՝ կայուն, անփոփոխ գներով փոխադրելու գործակից:

**դեֆլյատոր ՀՆԱ-ի, GDP deflator, дефлятор ВВП -** ՀՆԱ-ի անվանական ծավալի հարաբերությունը իրականին, գնի ընդհանուր մակարդակի ամփոփ ցուցանիշ, որը հաշվարկվում է որպես՝ երկրում թողարկվող ապրանքների փաստացի գների հարաբերություն բազիսայինի նկատմամբ:

**դեֆլյացիա, deflation, дефляция - տես նաեւ գնանկում** - ինֆլյացիայի (սղաճ, գնաճ) հակառակ գործընթացն է, երբ տեղի է ունենում ապրանքների եւ ծառայությունների գնի իջեցում կամ այլ կերպ՝ այն շրջանառությունից ավելորդ թղթադրամը հանելու միջոցով դրամական զանգվածի պակասեցումն է: Այս գործընթացը երբեմն նախորդում է դրամական ռեֆորմներին եւ նպաստում ոչ ցանկալի երեւույթների՝ հանգեցնում է տնտեսության զարգացման տեմպերի իջեցմանը, ներդրումների ծավալի նվազեցմանը, գործազրկության աճին:

**դիլեր, dealer, дилер** – ֆիզիկական կամ իրավաբանական անձ գործարարության (բիզնեսի) մասնակից է, որն իր սեփական միջոցների հաշվով գործունեություն է իրականացնում: Դիլերային գործունեությունը արժեթղթերի կամ արտարժույթի շուկայում

մասնագիտացված գործունեության տեսակներից է, բ) բանկի գործունեությունն է, որը հանդես է գալիս որպես արժեթղթերի գծով դիլեր, այսինքն արժեթղթերի երաշխավորությամբ, դրանց առքով կամ վաճառքով զբաղվող սուբյեկտ:

**դիսկոնտ, discount, дисконт** - արժեթղթերի իրացման գնի զեղչումը նրա անվանական արժեքի նկատմամբ: Հասկացությունն ավելի շատ կիրառական է արժեթղթերի բնագավառում:

**դիվերսիֆիկացիա, diversification, диверсификация -** տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրանքի տեսականու փոփոխումն ու ընդլայնումն է, արտադրության արդյունավետության բարձրացման նպատակով դրանց նոր տեսակների յուրացումն է, որոնք կարող են նպաստել եկամուտների ստացմանը սնանկացումից խուսափելու համար:

**դոտացիա, dotation, дотация** - անվերադարձ ֆինանսական օգնություն պետբյուջեից, որը տրանսֆերտների տեսքով տրվում է վնասով աշխատող ձեռնարկություններին՝ նրանց եկամուտների եւ ծախսերի խզումը ծածկելու եւ շահութաբերություն ապահովելու նպատակով:

**դրամ (փող), money, деньги -** հատուկ ապրանք, որի ընդհանրական համարժեքի դերի կատարումը ստացել է օբյեկտիվ հասարակական բնույթ, եւ որը ձեռք է բերել համընդհանուր նշանակություն: Բոլոր ապրանքների արժեքի ընդհանրական ձեւն է, որը հանդես է գալիս թղթադրամների, մետաղադրամների, բանկերում հաշիվների մնացորդի տեսքով: Դրամը (փողը) օրինական վճարամիջոց է, որն ազատ կատարում է շրջանառության միջոցի գործառույթ, այն ամենը, ինչ ընդունվում է մյուս իրերի փոխարեն: Դրամի հիմնական բնորոշ հատկություններից են՝ հեշտությամբ ճանաչելը, որակական համասեռությունը, բաժանելիությունը, եւ փոքր ծավալը, բայց համեմատաբար նրա բարձր արժեքը:

**դրամարկղ, cash office, касса** - կանխիկ դրամի ընդունման, պահպանման եւ բացթողման համար նախատեսված պահոց (պահեստարան):

**դրամական ագրեգատ, monetary aggregate, денежный агрегат -** դրամի եւ դրամական միջոցների տեսակներն են, որոնք միմյանցից տարբերվում են իրացվելիության աստիճանով՝ այսինքն կանխիկ դրամի արագ վերածվելու հնարավորությամբ: Հանդիսանում են դրամական զանգվածի կառուցվածքի եւ ծավալի ցուցանիշներ: Տարբեր երկրներում առանձնացվում են տարբեր կազմով դրամական ագ-

րեգատներ: Ամենից հաճախ օգտագործվում են հետեւյալ դրամական ագրեգատները. M0 (կանխիկ դրամ), M1 (կանխիկ դրամ, չեկեր, ցպահանջ ավանդներ), M2 (կանխիկ դրամ, չեկեր, ցպահանջ ավանդներ եւ ոչ մեծ ժամկետային ավանդներ), M3 (կանխիկ դրամ, չեկեր, բոլոր ավանդները), L (կանխիկ դրամ, չեկեր, ավանդներ, արժեթղթեր):

**դրամական բազա, monetary base, денежная база** - ներառում է Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամը: Կենտրոնական բանկում առեւտրային բանկերի պարտադիր պահուստները եւ ոչ բանկային կազմակերպությունների ավանդները: Այլ արտահայտությամբ՝ դրամական բազան զուտ արտաքին եւ զուտ ներքին ակտիվների գումարն է:

**դրամարկղային գործառնություն, cash operation, кассовая операция** - կանխիկ դրամի մուտքագրումը կազմակերպություն, ելքագրումը կազմակերպությունից, ինչպես նաեւ շարժը դրամարկղների ու հաշվետու անձանց միջեւ.

**դրամարկղային գիրք, cash book, кассовая книга -** գրանցամատյան, որում գրանցվում է դրամարկղում կանխիկ դրամի մնացորդը ժամանակաշրջանի սկզբի եւ վերջի դրությամբ, ինչպես նաեւ կանխիկ դրամի մուտքը դրամարկղ եւ ելքը դրամարկղից:

**դրամական զանգված, money supply, денежная масса** - այն ներառում է շրջանառության մեջ գտնվող կանխիկ գումարը եւ ռեզիդենտների (բնակչության, ձեռնարկությունների եւ հասարակական կազմակերպությունների) դրամով եւ արտարժույթով բոլոր ավանդները բանկային համակարգում:

**դրամական համակարգ, monetary system, денежная система -** երկրում դրամաշրջանառությունն ապահովող իրավական նորմերի եւ ֆինանսական միջոցների ամբողջությունն է: Ներառում է տվյալ երկրի դրամական միավորը, կանխիկ դրամի թողարկման կարգը, օրինական վճարամիջոցները, ազգային արժույթը, այլ պետությունների արժույթներով փոխանակման վերահսկողությունը, դրամաշրջանառության կազմակերպումը եւ կարգավորումը, արժութային պահուստների կառավարումը: Դրամական համակարգը վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից, որը դրամավարկային քաղաքականության միջոցով կարգավորում է դրամական զանգվածն ու տոկոսադրույքը: Դրամական համակարգին են վերագրվում նաեւ օրենսդրությամբ սահմանված դրամական հարաբերությունները եւ պետական մարմինների կողմից տարվող դրամաշրջանառությունը:

**դրամավարկային համակարգ, monetary-credit system, денежно -кредитная система -** շուկայական տնտեսությանը հատուկ եւ առավել բարդ ենթակառուցվածք է: Այն դիտվում է որպես ա)վարկահաշվարկային հարաբերությունների, վարկավորման ձեւերի եւ մեթոդների ամբողջություն: Վարկային հարաբերությունները կապված են փոխատվական կապիտալի ժամկետայնության, վերադարձելիության եւ վճարելիության սկզբունքներով շարժի հետ: Դրամավարկային համակարգը ներառում է նաեւ երկրի տարածքում դրամն օգտագործելու համար բնակչությանը դրամով ապահովման, այլ երկրների արժույթների ազգային արժույթի փոխանակման նկատմամբ վերահսկողության, իր դրամավարկային քաղաքականությունն իրականացնելու համար երկրի կողմից օգտագործվող համակարգերը: բ) վարկային կազմակերպությունների ամբողջություն, գ) մի խումբ երկրների արտարժույթի փոխարժեքների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար օգտագործվող համակարգ է:

**դրամական միջոցներ, monetary funds, денежные средства -** պետության, կազմակերպությունների, բնակչության կանխիկ եւ անկանխիկ ձեւով կուտակված դրամը եւ հեշտությամբ դրամի վերածվող այլ միջոցներն են:

**դրամական շուկա, money market, денежный рынок -** միջոցների այն ազատ շրջանառվող եւ եվրո-դոլարով ավանդային սերտիֆիկատների, առեւտրային արժեթղթերի, բանկային ակցեպտների (հօժարագրերի), կարճաժամկետ գանձապետական մուրհակների, ինչպես նաեւ կառավարական զեղչով մուրհակների եւ այլ արժեթղթերի շուկա է, որի ընդհանուր գծերն են անվտանգության եւ իրացվելիության ապահովումը: Դրամական շուկայի մասնակիցներն են կենտրոնական եւ առեւտրային բանկերը, բրոքերային եւ դիլերային ընկերությունները, ֆինանսավարկային այլ հիմնարկությունները, որոնք մասնակցում են դրամի, արտարժույթի, արժեթղթերի առք ու վաճառքին: Դրամական շուկայում առեւտրային բանկերի գործառնություններից ձեւերից է նաեւ **կարճաժամկետ դրամական պարտավորությունների, short-term money obligations**,, **краткосрочные денежные обязательства** առեւտուրը: Դրանք վաճառվում է կարճատեւ, սովորաբար 90 եւ ավելի քիչ օր ժամկետով եւ համարվում են բարձրորակ վարկեր:

**դրամական շուկայի գործիքներ, money market instru-**

**ments, инструменты денежного рынка** - համարվում են մինչեւ մեկ տարի մարման ժամկետ ունեցող պարտքային արժեթղթերը, այդ թվում՝ կարճաժամկետ պարտատոմսերը, բանկային վկայագրերը եւ այլ կարճաժամկետ պարտքային արժեթղթերը:

**դրամարկղային չեկ, cash voucher, кассовый чек -** չեկ ըստ ներկայացնողի, որով հաշվի տիրոջը կամ երրորդ անձին վճարվում է կանխիկ դրամական միջոց՝ առանց այդ չեկի օրինականությունը ստուգելու:

**դրամավարկային քաղաքականություն, monetary-credit policy, денежно-кредитная политика** - Կենտրոնական բանկի քաղաքականությունն է, որով նա ձգտում է ազդել մակրոտնտեսական պայմանների վրա, մեծացնելով կամ փոքրացնելով դրամական զանգվածը: Դրա նպատակն է նպաստել երկրում տնտեսական աճին, գների եւ վճարային հաշվեկշռի կայունությանը, զբաղվածությանը, վերահսկել դրամաշրջանառությունը եւ բանկային համակարգի իրացվելիությունն ու վճարունակությունը, ինչպես նաեւ այն, որ դրամի եւ վարկային ռեսուրսների առաջարկի մակարդակը նպաստի համազգային տնտեսական խնդիրների լուծմանը: Դրամավարկային քաղաքականությունն անմիջական ազդեցություն է թողնում այնպիսի մակրոտնտեսական ցուցանիշների վրա, ինչպիսիք են՝ համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), գների մակարդակը, գնաճը եւ զբաղվածությունը: Այն հետապնդում է կամ վարկի եւ դրամական էմիսիայի ընդլայնում (վարկային էքսպանսիա) կամ էլ դրանց սահմանափակում (վարկային ռեստրիկցիա): Այսպես, տնտեսության ճգնաժամային իրավիճակում Կենտրոնական բանկերը փորձում են աշխուժացնել շուկայական իրադրությունը՝ վարկի ընդլայնման եւ տոկոսադրույքի իջեցման ճանապարհով, իսկ տնտեսական վերելքի ժամանակ՝ ընդհակառակը, նրանք սահմանափակում են վարկը եւ բարձրացնում տոկոսադրույքը: Նույն կարգի միջոցառումներով պետությունը նպաստում է դրամական զանգվածի ընդլայնմանը կամ կրճատմանը: Դրամավարկային քաղաքականության մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ ընդհանուր (փոխատվական կապիտալների շուկայի վրա ազդեցությունը ամբողջությամբ վերցրած) եւ ընտրովի (վարկի կոնկրետ ձեւերի կարգավորում կամ առանձին ճյուղերի, խոշոր ֆիրմաների եւ այլ սուբյեկտների վարկավորում): Օգտագործվում են դրամավարկային կարգավորման երեք հիմնական մեթոդներ՝բաց շուկայական գործառ-

նությունների իրականացում, պաշտոնական հաշվարկային (վերաֆինանսավորման) տոկոսադրույքի փոփոխություն, բանկերի համար պարտադիր պահուստավորման նորմատիվի սահմանում: Իր հիմնական խնդիրն իրագործելու համար ԿԲ-ը թողարկում է նաեւ պետական արժեթղթեր, կառավարում արժութային պահուստները եւ ազգային արժույթի փոխարժեքը: Կենտրոնական բանկերը հաճախ վարում են «կոշտ» դրամավարկային քաղաքականություն՝ գնաճը զսպելու նպատակով: Հարկաբյուջետային (ֆիսկալ) քաղաքականության հետ միասին դրամավարկային քաղաքականությունը տնտեսության կայունացման լծակ է:

**դրամարկղի օրդեր, cash order, кассовый ордер** - ա) ձեռագիր կամ տպագրված անդորրագիր է, որով կանխիկ դրամի մուծումը գրանցվում է ավանդային հաշվում: Գանձապահը ստանում է կանխիկ դրամը եւ այն գրանցում դրամարկղի օրդերում, բ) դրամական փաստաթուղթ է, որով իրականացվում եւ ձեւակերպվում են կազմակերպության դրամարկղի կողմից կանխիկ դրամն ընդունելու եւ դուրս գրելու հետ կապված դրամարկղային գործառնությունները: Դրամը բաց է թողնվում ելքի օրդերով, կամ դրան փոխարինող այլ փաստաթղթով (վճարման տեղեկագիր, վճարման հաշիվ), իսկ դրամն ընդունվում է դրամարկղի մուտքի օրդերով:

**դրույք, rate, ставка** - վճարման համար սահմանված գումարը հաշվարկման որոշակի բազիս, որպես հիմք **ընդունելով**:

**դրույք հարկային, tax rate, налоговая ставка -** հարկման միավորին ընկնող հարկի մեծությունը: Կայուն հարկային դրույքները սահմանվում են հարկման միավորին ընկնող բացարձակ գումարով, անկախ եկամտից:

**դուստր ձեռնարկություն, branch establishment, daughter enterprise, дочернее предприятие** - իրավաբանական անձ հանդիսացող այն ձեռնարկությունն է, որի ամբողջ գույքը սեփականության իրավունքով պատկանում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մեկ այլ ձեռնարկության, ինչպես նաեւ հասարակական կամ կրոնական կազմակերպության: Դուստր ձեռնարկություն հիմնադրելու իրավունք ունեն կոլեկտիվ սեփականության վրա հիմնված ձեռնարկությունները, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները եւ տվյալ երկրի եւ այլ պետությունների պետական ընկերությունները:

**դեֆոլտ, default, дефолт, отказ от уплаты** - իրավազան-

ցում, օրենքով սահմանված պահանջների չկատարում, հատկապես՝ իրավական արարողակարգի կանոնների զանցառում, 2. պարտավորագրի պայմանների չկատարում:

## Ե

**եկամուտ, income, доход** - որոշակի ժամանակաշրջանում ստացված բոլոր տեսակի տնտեսական շահերի ստացման աճն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի ավելացմանը, բացառությամբ բաժնետերերի կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների գումարի չափի: Այլ կերպ ասած՝ եկամուտը իրացումից հասույթի եւ այլ եկամուտների հանրագումարն է:

**եկամտաբեր ակտիվներ, profitable assets, прибыльные активы** - բանկի այն ակտիվներն են, որոնք եկամուտ են բերում տոկոսի կամ շահութաբաժինների տեսքով: Դրանք հիմնականում բանկի կողմից տրամադրված վարկերն են, լիզինգը, եւ արժեթղթերում կատարված ներդրումները: Անվանվում են նաեւ աշխատող ակտիվներ: Եկամտաբեր ակտիվները պետք է տարբերել ոչ եկամտաբեր այնպիսի ակտիվներից ինչպիսիք են կանխիկ դրամական միջոցները, Կենտրոնական բանկում պարտադիր պահուստները: Կազմակերպության շենքը, որպես կանոն, եկամտաբեր ակտիվ չէ, սակայն այլ անշարժ գույքում ներդրումները կարող են լինել այդպիսին, եթե այդ ակտիվը բերում է եկամուտ վարձավճարի տեսքով:

**եկամուտ բրուտտո, gross yield, доход брутто** - արժեթղթերի գծով եկամուտը մինչեւ հարկերի վճարումը: Մեծ Բրիտանիայում գոյություն ունի բրուտտո եկամուտ՝ մինչեւ մարումը, որը արժեթղթերի գծով ստացած եկամուտն է մինչեւ դրանց հետգնումը: Այն իր մեջ ներառում է կապիտալի կանխատեսվող հավելաճը՝ հանած եկամուտների եւ կապիտալի հավելաճի հարկերը:

**եկամտահարկ, income tax, подоходный налог** - հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով եւ չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Եկամտահարկ վճարում են ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-դեկտեմբերի 31-ը ներառյալ) ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում առնվազն 183 օր եւ ավելի, ինչպես նաեւ ՀՀ-ում պետական ծառայությունում գտնվող, ժամանակավոր նրա տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձինք: Եկամտահար-

կը հարկվում է սահմանված տոկոսադրույքներով ստացված համախառն եկամտից, այդ թվում աշխատավարձից եւ դրան հավասարեցված այլ վճարումներից: Խաղատներում՝ շահումներով խաղերից ստացած եկամուտներից, շահութաբաժիններից եւ եկամտահարկի օրենքով սահմանված այլ եկամուտներից: ՀՀ ԱԺ կողմից այս օրենքն ընդունվել է 1997թ.-ին:

**եկամտաբերության ցուցանիշ, earnings yield, показатель эффективности -** պայմանական հարաբերական ցուցանիշ, որը դիտվում է որպես ընկերության՝ վերջին մեկ տարվա ընթացքում ստացված ամբողջ շահույթի մեծության հարաբերությունը 100 բաժնետոմսերի ընթացիկ գնին: Գործնականում օգտագործվում է նաեւ այսպես կոչված գին-շահույթ հարաբերությունը:

**ենթաաբոնենտ, sub-subscriber, субабонент -** էներգամատակարարող կազմակերպությունից միացված ցանցի միջոցով ստացած էներգիան աբոնենտը կարող է փոխանցել մեկ այլ անձի՝ ենթաաբոնենտի, էներգամատակարարող կազմակերպության համաձայնությամբ:

**ենթավարձակալություն, sublease, субаренда** - վարձակալն իրավունք ունի վարձակալած գույքը հանձնել ենթավարձակալության, վարձակալության պայմանագրով իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել այլ անձի, վարձակալած գույքը հանձնել անհատույց օգտագործման:

**Եվրազես, EurAsES, ЕврАзЕС** -
Միջազգային տնտեսական կազմակերպություն, որի նպատակն է անդամ երկրների համար ապահովել ընդհանուր մաքսային սահմաններ: Այն ստեղծվել է 2000թ. օգոստոսին: Անդամ պետություններն են Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանը եւ Ուզբեկստանը: Դիտորդի կարգավիճակում են Հայաստանը, Մոլդովան, Ուկրաինան:

**Եվրասիա, Eurasia, Евразия** - «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամը հանդիսանում է Եվրասիա հիմնադրամի հետնորդ կազմակերպությունը, որը գրանցված գրասենյակներ ունի Հայաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում: Եվրասիա հիմնադրամը մասնավոր կառավարվող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որն ստեղծվել է 1992 թվականին՝ նախկին Խորհրդային Միության երկրներում քաղաքացիական հասարակության զարգացմանն աջակցելու նպատակով: Ֆինանսական

աջակցություն ստանալով ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության եւ այլ դոնորների կողմից Եվրասիա հիմնադրամը Հարավային Կովկասում ներդրել է մոտ 70 միլիոն ԱՄՆ դոլար եւ իրականացրել ավելի քան 1700 դրամաշնորհային եւ տեխնիկական աջակցության ծրագրեր: «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամը հայտնի է որպես դրամատու եւ ծրագրեր իրականացնող կազմակերպություն՝ ուղղված քաղաքացիների մասնակցության եւ մոնիտորինգի ապահովմանը, կորպորատիվ եւ համայնքային բարեգործության խթանմանը, գործարար միջավայրի բարելավմանը, տարածաշրջանային համագործակցության հաստատմանը եւ բաց-դռների մեխանիզմով դրամաշնորհների հատկացմանը:

**եվրոարժույթ, euro-currency, евровалюта** - օտարերկրյա արժույթները, որոնցով առեւտրային բանկերն իրագործում են ավանդափոխատվական անկանխիկ գործառնություններ, այդ արժույթները թողարկող երկրների սահմաններից դուրս: Օրինակ, ԱՄՆ-ի դոլարը Ֆրանսիայի կամ Իտալիայի բանկային հաշիվներում կոչվում է եվրոդոլար, ճապոնական իենը Շվեյցարիայի կամ Մեծ Բրիտանիայի բանկերի հաշիվներում՝ եվրոիեն եւ այլն:

**Եվրոպական Միավորում Ազատ Առեւտրի, European Free Trade Association, Европейская ассоциация свободной торговли** - վեց արեւմտաեվրոպական երկրների տարածաշրջանային տնտեսական խմբավորում (Ավստրիա, Իռլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա, Ֆինլանդիա): Կազմակերպվել է 1960 թվականին Ստոկհոլմի համաձայնագրի հիման վրա: Հետագայում մասնակից երկրների կազմը փոխվել է, դրանց մի մասը չեզոք պետություններ են: ԵՄԱԱ-ի գործունեության շրջանակը ազատ առեւտրի գոտի է: Փոխադարձ առեւտրում վերացված են մաքսային տուրքերը եւ քանակային սահմանափակումները, սակայն բացակայում է միասնական արտաքին սակագինը: Յուրաքանչյուր երկիր երրորդ երկրների նկատմամբ վարում է ինքնուրույն առեւտրական քաղաքականություն:

**Եվրոպական համագործակցություն, European Community (EC), Европейское Сообщество (ЕС)** - Եվրոպական միության (Եվրամիություն) բաղկացուցիչ մասն է, որը մինչեւ 1993 թ. անվանվում էր Եվրոպական տնտեսական համագործակցություն: Ստեղծվել է 1957թ. եվրոպական միավորման 6 անդամ երկրների՝ Բելգիայի, Գերմանիայի, Իտալիայի, Լյուքսեմբուրգի, Նիդերլանդների եւ Ֆրանսիայի միջեւ

Հռոմում կնքված պայմանագրի հիման վրա՝ նրա անդամների միջեւ առեւտրի եւ տնտեսական համագործակցության նպատակով: 1973 թ. համագործակցությանը միացան Դանիան, Իռլանդիան եւ Մեծ Բրիտանիան: Եվրոպական համագործակցության հիմնական նպատակն է՝ անդամ երկրների տնտեսական սերտ միավորումը, դրամական միջոցների եւ մարդկանց ազատ հոսքի ապահովումը, ընդհանուր դրամի (եվրո) եւ ընդհանուր ազատ շուկայի ստեղծումը եւ այլն: Օգտագործվում էր համատեղ հաշվարկային արժույթ՝ էքյու, ներկայումս՝ եվրո, գործում է Եվրարժույթի համակարգը: 1992թ.-ից ԵՀ –ն անվանվում է տնտեսական միություն, որն ընդգրկումը է 12 արեւմտաեվրոպական երկրներ (Բելգիա, Մեծ Բրիտանիա, Հունաստան, Դանիա, Գերմանիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդերլանդներ, Պորտուգալիա, եւ Ֆրանսիա), որոնք իրականացնում են իրենց տնտեսությունների ինտեգրացիան:

**երաշխավորություն, recommendation, рекомендация -** երաշխավորը երաշխավորության պայմանագրով այլ անձի պարտատիրոջ առջեւ պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար:

**երաշխիք, guarantee, гарантия -** երաշխիք տված անձը (բանկը), այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը այլ անձի (պրինցիպալ) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիար) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան պարտատիրոջը վճարել դրամական գումար վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս: բ) որոշակի պահի դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության պարտավորությունն է փոխատուների և վարկատուների առջև, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պարտավորությունն է ոչ ռեզիդենտ փոխատուների և վարկատուների առջև՝ ամբողջությամբ կամ մասնակի մարելու Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ փոխառուների և վարկառուների կողմից վճարման ենթակա գումարները՝ սահմանված ժամկետներում նրանց կողմից չվճարելու դեպքում:

**երաշխավորված եկամուտ, guaranteed income, гарантированный доход** - մշտական հասույթով ապահովված եկամուտ, սովորաբար՝ պետական արժեթղթերից:

**երկարատեւ տրենդ, secular trend, долговременный тренд** - տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացում կամ իջեցում երկար տարիների ընթացքում:

**երկարաժամկետ ակտիվներ, long-term assets, долгосрочные активы** - այն ակտիվներն են, որոնք ունեն մեկ տարուց ավելի ծառայության ժամկետ, օգտագործվում են արտադրական գործընթացում եւ նախատեսված չեն հաշվետու ժամանակաշրջանում վաճառելու համար:

**երկարաժամկետ պասիվներ, long-term liabilities, долгосрочные обязательства** - երկարաժամկետ բանկային վարկերն ու փոխառություններն են, ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունները, հետաձգված հարկային պարտավորությունները եւ այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, որոնք ենթակա են մարման հաշվետու պահից ավելի քան 12 ամիս հետո:

**երկակի պահեստային վկայագիր, dual warehouse receipt, двóйная складская расписка** - օրդերային այն արժեթուղթն է, որը հավաստում է ապրանքային պահեստի կողմից ապրանքն ի պահ ընդունելը: Երկակի պահեստային վկայագիրը կազմված է երկու մասից՝ պահեստային վկայագրից եւ գրավային վկայագրից (վարանտից), որոնք առանձին-առանձին արժեթղթեր են:

**երկրաբանական հատկացում, geological allocation, геоло-гическое распределение** - ընդերքի տեղամաս, որը տրամադրված է երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով:

**երկմակարդակ շուկա, two-level market, двухуровневый рынок** - արժույթի շուկա, որն ունի երկու մակարդակ: Սովորաբար առաջին մակարդակը զբոսաշրջիկների ներհոսքի կազմակերպումն է, իսկ մյուս մակարդակը գործարարության կարգավորման համար է:

**երկրի տնտեսական ռիսկ, country economic risk, экономический риск страны** - ազգային քաղաքականության այն վտանգն է, որ արտերկրյա կառավարությունը կիրաժարվի սպասարկել կամ մարել պարտքը եւ կատարել այլ պարտավորություններ փոփոխության հետեւանքով: Երկրի տնտեսական ռիսկը կապված է ամբողջ պետության ֆինանսական դրության, բոլոր տնտեսական գործակալների (ներառյալ կառավարությունը) կամ նրանց մեծ մասի կողմից արտաքին վճարումները դադարեցնելու հնարավորության հետ:

**երկրորդային շուկա, second-**

**ary market, вторичный рынок** - 1) նախկինում թողարկված արժեթղթերի շրջանառությունն է, դրանց գոյության ամբողջ ժամանակահատվածում նրա առք ու վաճառքի կամ արժեթղթի մի սեփականատիրոջից մյուսին այլ միջոցներով փոխանցման գործողությունների համախումբը: Այլ կերպ ասած դա շուկա է, որտեղ շրջանառվում են արդեն գոյություն ունեցող արժեթղթերը, ի տարբերություն առաջնային շուկայի, որտեղ արժեթղթերը վաճառքի են հանվում առաջին անգամ: Այս շուկայում առուծախի գործառնությունները կատարվում են սկզբնական պարտատեր չհանդիսացող անձանց եւ փոխատուների միջեւ: Երկրորդային շուկայի դերը հիմնականում կատարում է արժեթղթերի բորսան, քանի որ նոր թողարկումները կազմում են նրա շրջանառության միայն մի փոքր մասը:

**երկկողմանի մոնոպոլիա (մենաշնորհ), bilateral monopoly, двустороная моно-полия** - շուկա, որտեղ միակ վաճառողին (մոնոպոլիա) հարկադրվում է միակ գնորդը (մոնոպոլիա):

## Զ

**Զարգացման Եվրոպական Հիմնադրամ, European Development Fund, Европейский Фонд Развития -** Եվրոպական համագործակցության կողմից կառավարվող հիմնադրամ: Այն զարգացող երկրներին տրամադրում է միջոցներ սուբսիդիաների եւ վարկերի տեսքով՝ ենթակառուցվածքների զարգացման կոնկրետ նախագծերի համար:

**զարգացող երկրներ, developing countries, развивающиеся страны -** Աֆրիկայի, Ասիայի եւ Լատինական Ամերիկայի բազմաթիվ երկրներ, որոնց բնորոշ են արտադրության միջոցների պակասը, հետամնաց տեխնոլոգիան, գրագիտության ցածր մակարդակը, գործազրկության եւ բնակչության արագ աճը եւ աշխատուժի զբաղվածությունը գլխավորապես գյուղատնտեսության մեջ:

**զբաղվածներ, employees, служащие** - ինչպես վարձու (անկախ այն բանից աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր, սեզոնային կամ միանգամյա) այնպես էլ ոչ վարձու աշխատող անձինք:

**զբաղվածության մակարդակ, employment rate, уровень занятости -** որոշակի պահին աշխատանք ունեցող աշխատուժի թվաքանակի տոկոսային ցուցանիշը աշխատել ցանկացողների թվի նկատմամբ:

**զբոսաշրջություն, tourism, ту-ризм** - ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգա-

կաններին այցելության, մասնագիտական, գործնական եւ այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը մինչեւ մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեություն: Ներքին զբոսաշրջություն՝ որեւէ երկրում բնակվող քաղաքացիների ճանապարհորդությունն իրենց երկրի սահմաններում: Արտագնա զբոսաշրջություն՝ որեւէ երկրում բնակվող քաղաքացիների ճանապարհորդությունը մեկ այլ երկիր: Ներգնա զբոսաշրջություն՝ քաղաքացիների ճանապարհորդությունը որեւէ երկիր, որը նրանց բնակության վայրը չէ:

**զեղչ, discount, скидка** - տվյալ պահին արժեթղթերի վաճառքի գնի, ընթացիկ բորսայական փոխարժեքի եւ արժեթղթի անվանական արժեքի կամ մարման պահին նրա վաճառքի գնի միջեւ տարբերությունն է, ֆինանսական միջոցի գնումը: 1) տվյալ պահին արժեթղթերի բորսայում արժեթղթերի վաճառքի գնի, ընթացիկ բորսայական փոխարժեքի եւ արժեթղթի ավանդական արժեքի կամ մարման պահին նրա վաճառքի գնի միջեւ տարբերությունն է, ֆինանսական միջոցի գնումը մինչեւ դրա մարումն այնպիսի գնով, որը փոքր է անվանական արժեքից: 2) արտարժույթի ֆորվարդային փոխարժեքի՝ գործարքի կնքման պահին ամրագրված, սակայն գալիք ժամկետներում վճարվող փոխարժեքի (գործարքի կնքման պահին սակայն գալիք ժամկետներում վճարվող փոխարժեքի) եւ անհապաղ վճարման դեպքում փոխարժեքի միջեւ տարբերությունն է: 3) մատակարարման տարբեր ժամկետներով միեւնույն ապրանքի գների միջեւ տարբերությունն է: 4) ապրանքի գնացուցակում նշված կամ հայտարարված գնի իջեցում, կապված կանխիկ վճարողի, մեծաքանակ գնորդների, մշտական հաճախորդների, այլ հանգամանքների հետ:

**զուտ ազգային արդյունք, net national product, чистый национальный продукт** - որոշակի ժամանակաշրջանում (սովորաբար մեկ տարում) երկրում արտադրված բոլոր վերջնական ապրանքների եւ ծառայությունների գումարային ծավալն է դրամական արտահայտությամբ հանած հիմնական միջոցների համար նախատեսված ամորտիզացիան: Այն որոշվում է որպես համախառն ազգային արդյունքի (ՅԱԱ) եւ ամորտիզացիոն հատկացումների միջեւ տարբերություն:

**զուտ ակտիվներ, net assets, чистые активы** - կազմակերպության գույքն է կամ բոլոր տե-

սակի ակտիվներն են պարտավորությունները հանելուց հետո: Այն իրենից ներկայացնում է կազմակերպության սեփական կապիտալի մեծությունը: Կազմակերպության զուտ ակտիվների արժեքի ցուցանիշը հանդիսանում է կազմակերպության, որպես ամբողջական գույքային համալիրի հաշվեկշռային արժեքի որոշման հիմք:

**զուտ արժեք, net value, чистая стоимость** - արտադրանքի (ծառայության) իրական արժեքն է, որը որոշվում է արտադրանքի (ծառայության) ընդհանուր արժեքից հանելով ամբողջ շահույթը կամ ֆինանսական եկամուտները:

**զուտ արտահանում, net export, чистый экспорт -** հաշվարկվում է որպես ապրանքների եւ ծառայությունների արտահանման եւ ներմուծման տարբերություն, որն իր մեջ ներառում է արտերկրների (ներառյալ ԱՊՀ երկրները) հետ երկրի ապրանքաշրջանառությունը:

**զուտ արտահանման պակասուրդ (դեֆիցիտ), net export deficit, дефицит чистого экспорта** - որոշակի ժամանակահատվածում ներմուծման ծավալների գերազանցման մեծությունն է նույն ժամանակահատվածի արտահանման ծավալների նկատմամբ:

**զուտ արտաքին ակտիվներ, net foreign assets, чистые иностранные активы** - Կենտրոնական բանկի եւ բանկային համակարգի ոչ ռեզիդենտների հետ փոխհարաբերություններից բխող արտաքին ակտիվների եւ արտաքին պարտավորությունների տարբերությունն է:

**զուտ արտադրանք, net product, чистая продукция -** ձեռնարկության նյութական արտադրության արդյունքները բնութագրող ցուցանիշ, որն արտացոլում է միայն նոր ստեղծված արժեքը եւ հիմք է ծառայում արտադրության արդյունավետության, աշխատանքի արտադրողականության որոշման համար: Արժեքային կառուցվածքով զուտ արտադրանքը կազմված է աշխատավարձից եւ շահույթից:

**զուտ եկամուտ, net income, чистый доход** - նույնը՝ ֆինանսական հաշվետվության մեջ՝ շահույթը՝ հարկերը վճարելուց հետո:

**զուտ հասույթ, net revenue, чистая выручка -** առանց ուղղակի հարկերի (ԱԱՀ, ակցիզային հարկ եւ այլ հաստատագրված վճարներ) ապրանքների, արտադրանքի, ոչ նյութական ակտիվների (արտոնագրեր, ապրանքանիշեր,հեղինակային իրավունքներ եւ այլն) եւ այլ ակտիվների (կարճաժամկետ եւ երկարաժամկետ արժեթղթեր) իրացման դիմաց ստացված դրամա-

կան միջոցների ընդհանուր գումարն է:

**զուտ ներդրումներ, net investments, чистые инвестиции -** համախառն ներդրման եւ ամորտիզացիոն հատկացումների տարբերությունն է որոշակի ժամանակահատվածում: ՀՀ բանկերի հիմնական միջոցների եւ դրանց գծով կուտակված ամորտիզացիոն հատկացումների գումարի տարբերությունն անվանվում է **զուտ հիմնական միջոցներ, net fixed assets, чистые основные средства,** իսկ տրամադրված վարկերի եւ դրանց հնարավոր կորուստների ծածկման պահուստի գումարի տարբերությունը **զուտ վարկային ներդրումներ, net credit investments, чистые кредитные инвестиции:**

**զուտ ներքին ակտիվներ, net domestic assets, чистые внутренние активы** - ՀՀ Կենտրոնական բանկի եւ բանկային համակարգի պահանջներն են երկրի ներքին տնտեսության նկատմամբ: ՀՀ Կենտրոնական բանկի համար ներքին տնտեսության հիմնական ոլորտներն են՝ ՀՀ կառավարությունը եւ առեւտրային բանկերը, իսկ ամբողջ բանկային համակարգի համար՝ կառավարությունը եւ իրական հատվածը: Տնտեսության մյուս հատվածների նկատմամբ պահանջներն ընդգրկվում են զուտ այլ ակտիվներում, իսկ կառավարության նկատմամբ պարտավորությունները առանձնացվում են պահանջներից:

**զուտ շահույթ, net profit, чистая прибыль** - արտադրության բոլոր գործոնների ծախսերի փոխհատուցումից, շահութահարկի վճարումից հետո ձեռնարկատերերի տրամադրության տակ մնացող շահույթը:

## է

**էլեկտրոնային բանկային ծառայություններ, electronic banking services, электронные бан-ковские услуги -** բանկային գործառնություններ, որոնք իրականացվում են համակարգչային համակարգերի միջոցով: Դրանք հիմնականում դրամական փոխհատուցումներն են եւ այլ բանկային ծառայությունները, որոնք իրականացվում են հեռավորության վրա էլեկտրոնային ազդանշանների (հեռախոսային գծեր, տերմինալներ) օգնությամբ: Իջեցնում են ծառայությունների արժեքը եւ բարձրացնում արդյունավետությունը:

**էլեկտրոնային բանկինգ, electronic banking system, электронная банковская система** - բանակային գործառնություններ, որոնք իրականացվում են համակարգչային համակարգերի միջոցով: Դրանք հիմնակա-

նում դրամական փոխանցումներն են եւ այլ բանկային ծառայությունները, որոնք իրականացվում են համակարգչային ցանցով եւ չեն օգտագործվում արդեն ավանդական դարձած այնպիսի վճարման միջոցներ, ինչպիսիք են՝ կանխիկ դրամական միջոցները եւ չեկերը:

**էլեկտրոնային գնում, e-commerce, электронная коммерция -** հեռուստացույցով ցուցադրվող ապրանքների գնումն է, որը սպառողը կատարում է տանը՝ ապրանքը պատվիրելով հեռախոսով կամ ինտերնետային կապով:

**էկոնոմիկա (տնտեսագիտություն), economics, экономика** - հասարակական գիտություն՝ սահմանափակ տնտեսական ռեսուրսների օգտագործման մասին՝ հասարակության անսահմանափակ նյութական պահանջմունքներն առավելագույն չափով բավարարելու համար:

**էմբարգո, embargo, эмбарго** - ապրանքների կամ արժութային արժեթղթերի՝ որեւէ երկրից արտահանելու կամ որեւէ երկիր ներմուծելու արգելում պետական իշխանության կողմից: 2) երկրի նավահանգիստներից որոշ երկրների կամ նավերի դուրս գալը եւ օտարերկրյա նավերի մուտքը նավահանգիստներ արգելելը պետական իշխանության կողմից կամ դրանց հարկադրաբար պահելը տարածքային ջրերում՝ որպես ազդելու միջոց կամ ճնշելու գործողություն: 3) ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն՝ կոլեկտիվ պատժիչ միջոցառում այն պետության նկատմամբ, որի գործողությունները սպառնում են միջազգային անվտանգությանը: Էմբարգոն կարող է մտցվել ինչպես պատերազմական, այնպես էլ խաղաղ ժամանակներում՝ այլ երկրների տնտեսական շրջափակման, կամ նրանց վրա տնտեսական եւ արժութաֆինանսական ճնշում գործադրելու միջոցով:

**էմիսիա, emission, эмиссия, выпуск** - տարբեր տեսակի դրամանիշների, արժեթղթերի թողարկումն է եւ ոչ միայն դրանց տպագրումը, այլեւ զանգվածի ավելացումը կանխիկ եւ անկանխիկ շրջանառության մեջ:

**էմիսիոն բանկ, emission bank, bank of issue, эмиссионный банк -** բանկ (որպես կանոն՝ ԿԲ), որն օրենսդրորեն օժտված է բանկնոտներ թողարկելու, երկրում դրամաշրջանառությունը, արտարժույթի փոխարժեքը եւ վարկը կարգավորելու՝ երկրի արժութային պահուստների պահպանման մենաշնորհային իրավունքով: Նրանք իրականացնում են բանկային տոմսերի՝ բանկնոտների թողարկում եւ վարկային համակարգի կենտրոնն են: ՀՀ-ում միակ էմիսիոն բանկը ՀՀ Կենտրոնական բանկն է:

**էմիսիոն շահույթ, emission profit, эмиссионная прибыль** - բաժնետիրական ընկերության եկամուտն է, որը ձեւավորվում է ի հաշիվ բաժնետոմսերի սկզբնական տեղաբաշխման գնի եւ դրանց անվանական արժեքի միջեւ եղած տարբերության:

**էմիտենտ, issuer, эмитент** - անձ, որը շրջանառության մեջ թողարկում է դրամանիշեր, արժեթղթեր եւ վճարահաշվարկային փաստաթղթեր:

**էնգելի կոր, Engel curve, кривая Энгеля** - կոր, որը ցույց է տալիս ապրանքների վրա կատարված ծախսերի չափը՝ կախված եկամտի աստիճանից: Էնգելի կորն օգտագործվում է պահանջարկի վրա եկամտի եւ հարաբերական գների փոփոխության ազդեցության աստիճանը որոշելիս:

**էներգակիր, energy carrier, энергоноситель** - զանազան ագրեգատային վիճակներում գտնվող նյութ (պինդ, հեղուկ, գազային) կամ մատերիայի այլ ձեւեր (պլազմա, դաշտ, ճառագայթում եւ այլն), որոնցում կուտակված էներգիան կարող է օգտագործվել էներգամատակարարման նպատակով:

**էներգակիրների արդյունավետ օգտագործում, efficient use of energy carriers, эффективное использование энергоносите-лей** - տեխնիկայի եւ տեխնոլոգիայի զարգացման ժամանակակից մակարդակով եւ շրջակա միջավայրի պահպանման պահանջներով պայմանավորված էներգակիրների օգտագործումը տնտեսապես շահավետ եւ առավելագույն արդյունավետություն ստանալու պայմանով.

**էներգետիկ փորձաքննություն, energetic expertise, энергетическая экспертиза** - խորհրդատվական ծառայություն՝ ուղղված իրավաբանական եւ ֆիզիկական անձանց էներգետիկական տնտեսությունների էներգետիկ հաշվեկշիռների եւ (կամ) էներգատեղակայանքներում էներգակիրների արդյունավետ օգտագործման էներգաարդյունավետության ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն ներառող փաստաթղթերում (այսուհետ՝ էներգետիկ հաշվետվություններ) առկա տեղեկատվության ստուգմանը (այդ թվում՝ էներգաարդյունավետության ցուցանիշների չափագրմամբ), որի արդյունքում տրամադրվում է էներգետիկ փորձաքննական եզրակացություն:

**էքսպիրացիա, expiration, экспирация** - բնորոշում է պայմանագրի, կրեդիտային քարտի եւ օպցիոնի գործունեության ժամկետի տեւողությունը:

**էքյու, European Currency Unit (ECU), европейская валютная единица, ЭКЮ** - եվրոպական ար-

ժույթի միավոր: 1979թ. ստեղծված Արժույթի եվրոպական համակարգում օգտագործվող արժույթի հաշվարկային միավոր է (նյութական փող չէ): Էքյուի արժեքը հաշվարկվում է Եվրամիության երկրների արժույթների զամբյուղի կշռված միջինով եւ պարբերաբար վերանայվում է՝ կախված զամբյուղի արժույթների արժեքի եւ Եվրամիության անդամների թվի փոփոխությունից: Էքյուն որոշ չափով նման է Արժույթի միջազգային հիմնադրամի փոխառման հատուկ իրավունքին, սակայն էքյուի պահուստը ոչ թե բաշխվում է առանձին երկրների միջեւ, այլ կուտակվում է Արժույթի համագործակցության եվրոպական հիմնադրամում, որտեղից անդամ երկրները կարող են փոխառություն ստանալ:

## Ը

**ընդերք, bosom, interior, недра** - հողածածկույթից, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերեւույթից, ջրավազանների եւ ջրհոսքերի հատակից ներքեւ՝ ըստ խորության տեղադրված երկրակեղեւի մաս:

**ընդերքի օգտագործում**, **interior, bosom utilization, использование недры** - ընդերքի տրամադրումը երկրաբանական ուսումնասիրությունների, ձեռնարկատիրական գործունեության եւ այլ նպատակներով:

**ընդերքի տեղամաս, bosom site, place, участок** -երկրի մակերեսում սահմանագծված որոշակի տարածքի տակ տեղադրված ընդերքի մաս:

**ընդհանուր տարեկան ժողով, annual general meeting, ежегодное общее собрание** - բաժնետերերի տարեկան ժողով, որն ընկերությունն օրենքով պարտավոր է գումարելու, որպեսզի բաժնետերերին հնարավորություն ընձեռի քննարկելու ընկերության տարեկան զեկույցն ու հաշվետվությունը, ընտրելու տնօրեններին եւ սահմանելու շահութաբաժինը: Ըստ անհրաժեշտության կարող են հրավիրվել նաեւ արտահերթ ընդհանուր ժողովներ:

**ընթացիկ ակտիվներ, current assets, текущие активы** - տնտեսական միջոցների մի մասն են, որոնք արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի 2-րդ բաժնում եւ որում ներառվում են նյութերը, աճեցվող եւ բտվող կենդանիները, արագամաշ առարկաները, ապրանքները, դրամական միջոցները, տրված ընթացիկ կանխավճարները, առեւտրային դեբիտորական պարտքերը եւ այլ ակտիվները:

**ընթացիկ ծախսեր, current expenses, текущие затраты, расходы -** ամենօրյա օգտագործման եւ սպառման համար

ապրանքների եւ ծառայությունների վրա կատարված դրամական ծախսերն են, որոնք արտացոլվում են ընթացիկ հաշիվներում: 2) տվյալ ժամանակաշրջանում եւ տվյալ պահին իրականացվող եւ վճարվող ծախսերը: 3) բանկերի եւ այլ կազմակերպությունների կողմից կատարվող փոքր ծախսերն են, որոնք չեն փոխհատուցվում հաճախորդների կողմից:

**ընթացիկ հաշիվ, current account, счет текущий -** բանկային հաշիվ է, որտեղից հաճախորդը կարող է ցանկացած պահին դրամ հանել (ԱՄՆ-ում համարժեքը չեկային հաշիվն է): Այդ հաշիվը թույլ է տալիս գրելու չեկեր, հաճախորդին հնարավորություն է տալիս առօրյա ընթացիկ վճարումներ կատարել չեկերի միջոցով, ստանալ կանխիկ դրամ եւ միջոցներն օգտագործել այլ ձեւերով: Ընթացիկ հաշիվ կարող է բացվել նաեւ ֆիզիկական անձանց, կազմակերպությունների մասնաճյուղերի բյուջետային հիմնարկությունների համար, 2) երկու կազմակերպությունների միջեւ փոխհարաբերությունների հաշիվ է, որում արտացոլվում է նաեւ միջոցների, ապրանքների եւ այլնի շարժը, 3) հաշիվ է, որում արտացոլվում են կազմակերպությունների ստորաբաժանումների միջեւ եղած փոխադարձ վճարումները եւ պարտքերը, 4) հաշիվ է, որում գրանցված են ընկերության որեւէ անդամի կողմից կատարված բոլոր գործառնությունները, որոնք անմիջապես չեն վերաբերում ընկերության կապիտալում նրա բաժնեմասին: 5) երկրի վճարային հաշվեկշռի մի մասն է, որում գրանցվում են կապիտալի շարժի հետ չկապված գործառնությունները: Ընդգրկում է առեւտրային հաշվեկշիռը, ներմուծումը, արտահանումը, միակողմանի փոխանցումները, օտարերկրյա ներդրումների գծով տոկոսները եւ այլ եկամուտները:

**ընթացիկ պարտավորություններ, current liabilities, текущие обязательства** - մեկ տարվա ընթացքում ձեռնարկության կողմից վճարվելիք փողի բոլոր պարտավորությունները՝ ներառյալ պարտքերը առեւտրի վարկատուներին եւ դրամատան փոխառություններն ու վերազանցումները:

**ընկերություն վենչուրային, venture company, венчурная компания -** փոքր կամ միջին ներդրումային ընկերություն, որն զբաղված է գիտական ուսումնասիրություններով, ինժեներային մշակումներով եւ դրանց վարկավորմամբ: Ֆինանսավորելով նոր գաղափարներ վենչուրային ընկերությունները օգնում են խոշոր ընկերություններին մշակել

գիտատեխնիկական առաջադիմության նոր ուղղություններ: Տարբերվում են նաեւ ներքին եւ արտաքին վենչուրային ընկերություններ: Վենչուրային գործառնություններն ունեն ռիսկի բարձր աստիճան, այդ պատճառով էլ երբեմն դրանք անվանվում են «ռիսկային ընկերություններ»: Այդպիսի ձեռնարկատիրության հայրենիքը ԱՄՆ-ն է, որտեղ այն առաջացել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Փորձը վկայում է, որ վենչուրային ընկերությունների 20 %-ը վերածվում է բաց կորպորացիաների, 60%-ը կուլ են գնում ավելի խոշոր ընկերություններին, իսկ մյուս 20%-ը լուծարվում է:

**ընկերություն օֆշորային, off-shore company, офшорная компания** - օֆշորային (որեւէ ազգային օրենսդրություն կարգավորումից դուրս) կենտրոնում գրանցված արտասահմանյան ընկերություն, որի տերերը եւ եկամտի աղբյուրները գտնվում են արտասահմանում: Այդպիսի ընկերությունները, որոնք ազատված են շահութահարկից, սովորաբար ստեղծվում են որպես ՍՊԸ-ներ՝ սիմվոլիկ կանոնադիր կապիտալով եւ պարտադիր չէ, որ ունենան գրասենյակ, կապի միջոցներ, աշխատողների հաստիք: Փաստորեն այդպիսի ընկերությունը միայն փաստաթղթերի փաթեթ է:

**ընտանեկան ձեռնարկություն, family corporation, семейная корпорация** - իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն ձեռնարկությունն է, որը պատկանում է ընտանիքի անդամներին՝ նրանց համատեղ սեփականության իրավունքով: Ընտանեկան ձեռնարկության հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է եւ կարող է գործել վարձու աշխատողների ընդգրկմամբ: Ընտանեկան ձեռնարկությունը կարող է զբաղվել օրենսդրությամբ չարգելված տնտեսական գործունեության ցանկացած ձեւով:

**ընտանիքի բյուջե, family budget, семейный бюджет** - փաստացի եկամուտների եւ ծախսերի հաշվեկշիռն է, որը ցույց է տալիս մարդկային տարբեր սոցիալական խմբերի ապրուստի միջին մակարդակը:

**ըքաունթինգ, accounting, ведение учёта** - գործարարության ոլորտ է, որը կապված է ֆինանսական տեղեկատվության հավաքագրման, դրանց մշակման եւ վերլուծության հետ:

## Թ

**թանկարժեք մետաղներ, precious metals, драгоценные металлы** - թանկարժեք մետաղնե-

րից պատրաստված իր չհանդիսացող ոսկի, արծաթ, պլատին եւ պլատինային խմբի մետաղներ (պալադիում, իրիդիում, ռոդիում, ռուտենիում եւ օսմիում)՝ ցանկացած տեսքով եւ վիճակում (բնակտոր, զտարկված, ձուլակտոր, հումք, համաձուլվածք, նախապատրաստվածքներ, կիսաֆաբրիկատ, քիմիական միացություն, մետաղադրամ, ջարդոն, թափոն եւ այլն):

**թանկարժեք քարեր, precious stones, драгоценные камни** - բնական, անմշակ եւ մշակված՝ ալմաստ, զմրուխտ, սուտակ, շափյուղա, ալեքսանդրիտ եւ բնական մարգարիտ:

**թանկարժեք մետաղների զտարկում (աֆինաժ), precious metals affinage аффинаж, очистка благородных металлов** - այլ խառնուրդներից եւ ուղեկցող տարրերից թանկարժեք մետաղների կորզման եւ մաքրման մետալուրգիական գործընթաց: Զտարկված թանկարժեք մետաղները Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ստանդարտներին համապատասխան՝ թանկարժեք մետաղների ցանկացած չափի ձուլակտորներ, մանրագնդիկներ, փոշի, որոնք պետք է ունենան հիմնական թանկարժեք մետաղի 99,5 տոկոսից ոչ պակաս պարունակություններ:

**թափոնների պահում, waste storage, хранение отходов** - թափոնների ժամանակավոր տեղադրում հատուկ հատկացված տեղերում կամ օբյեկտներում՝ դրանց հետագա օգտահանման կամ հեռացման նպատակով:

**թափոնների օգտագործում, waste utilization, использование отходов** - թափոնների կիրառումն ապրանքների արտադրության, էներգիայի ստացման կամ այլ նպատակներով:

**թափոնների մշակում, վերամշակում, waste processing, обработка отходов** - տեխնոլոգիական գործողությունների իրականացում, որոնք կապված են թափոնների ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկությունների փոփոխման հետ:

**թափոնների օգտահանում, waste utilization использование отходов** - թափոնների օգտագործում՝ որպես երկրորդային նյութական կամ էներգետիկ ռեսուրս:

**թափոնների հեռացում, waste removal, удаление обрезков** - թափոնների հետ կապված գործողություններ, որոնք չեն հանգեցնում դրանց օգտահանմանը:

**թափոնների վնասազերծում, waste neutralization обезвреживание отходов** - թափոնների վտանգավոր հատկությունների նվազեցում կամ վերացում մեխանիկական, ֆիզիկաքիմիա-

կան կամ կենսաբանական մշակման միջոցով:

**թափոնների տեղադրում, waste isolation, изоляция отходов** -թափոնների մեկուսացում, որը բացառում է թափոնների հետագա օգտագործումը եւ ուղղված է դրանց չեզոքացմանն ու շրջակա միջավայրում վտանգավոր նյութերի հետագա տարածմանը.

**թափոնների թաղում, waste disposal, захоронение отходов** - թափոնների վերջնական տեղադրում հատուկ առանձնացված տեղերում կամ օբյեկտներում, որը բացառում է դրանց վտանգավոր ներգործությունը մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա.

**թափոնների գործածության օբյեկտներ, waste utilization objects, объекты использования отхо-дов** - թափոնների հավաքման, պահման, մշակման, վերամշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման եւ թաղման համար օգտագործվող տեղեր կամ օբյեկտներ:

**թափոնների տեղաբաշխման տեղեր, waste distribution points, пункты распределения отхо-дов** - հատուկ հատկացված տեղեր, պոլիգոններ, թափոնակուտակիչներ, աղբավայրեր, համալիրներ, շինություններ, ընդերքի տեղամասեր, որոնց օգտագործման համար սահմանված կարգով տրվել է թափոնների հեռացման կամ դրանց հետ այլ գործողություններ կատարելու թույլտվություն:

**թափոնների փոխադրում**՝, **waste transportation, транспортировка отходов** - թափոնների տեղափոխում դրանց գոյացման կամ պահման վայրերից դեպի մշակման, օգտահանման կամ հեռացման վայրեր կամ օբյեկտներ:

**թափոնների անդրսահմանային փոխադրում, waste foreign shipping, заграничная перевозка отходов** - թափոնների փոխադրում որեւէ պետության տարածքից այլ պետության տարածք կամ որեւէ պետության իրավասության ներքո չգտնվող տարածքով՝ պայմանով, որ թափոնների նման փոխադրումը առնչվում է առնվազն երկու պետության շահերի:

**թափոնների պետական դասակարգիչ waste official classifier, официальный классификатор отходов** - թափոնների ծածկագրերի եւ անվանումների համակարգված ցանկ, որը նախատեսված է պետական կամ վարչական վիճակագրությունում օգտագործելու համար՝ թափոնների գոյացման, կուտակման, մշակման (վերամշակման), վնասազերծման եւ հեռացման մասին բազմակողմանի հիմնավորված տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

**թաքնված զբաղվածներ (գործազուրկներ), hidden employees, скрытые служащие** - գործատուի հետ բանավոր համաձայնությամբ, (առանց պայմանագրի, հրամանի, կամ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ փաստաթղթային ձեւակերպման) աշխատող վարձու աշխատողները, եւ այն գործատուներն ու ինքնազբաղվածները, ովքեր իրականացնում են չգրանցված տնտեսական գործունեություն:

**թղթադրամ, paper monery, бумажные деньги -** հատուկ թղթի վրա տպագրած դրամանիշեր, որոնք համարվում են օրինական վճարամիջոց: Թղթադրամներն ըստ էության հանդիսանում են պայմանական դրամ, քանի որ դրանց իսկական արժեքը, որը չափվում է դրամանիշի բանկնոտի պատրաստման վրա կատարված ծախսերով շատ անգամ փոքր է դրամանիշի վրա նշված անվանական արժեքից: Դրանք օգտագործվում են շնորհիվ իրենց էժանության եւ դրանցով շրջանառություն կատարելու հարմարավետությամբ: Իրենց պատմական զարգացման ընթացքում թղթադրամները փոխարինել են մետաղադրամներին: Ունեն կեղծումից պաշտպանվելու մի քանի աստիճաններ: Թղթադրամները շրջանառության մեջ փոխարինում են լիարժեք փողին՝ ոսկուն եւ արծաթին:

**թղթակից բանկ, correspondent bank, банк-корреспондент -** բանկ, որը ֆինանսական գործառնություններ է կատարում մեկ այլ բանկի հետ կնքած համաձայնագրի, հանձնարարության հիման վրա, վճարներն ու հաշվարկները կատարվում են հատուկ հաշիվներով (թղթակցային հաշվով) կամ երրորդ բանկում բացված հաշիվներով (ոչ թղթակցային հաշիվ):

**թողարկում (ապրանքների, ծառայությունների), emission, эмис-сия -** իրենից ներկայացնում է հաշվետու տարում տնտեսությունում, ընկերությունում, ֆիրմաներում արտադրված ապրանքների եւ ծառայությունների ընդհանուր արժեքը:

**թողարկման գին, emission price, цена эмиссии** - այն գինը որով թողարկվում են արժեթղթերը: Պարտադիր չէ, որ հավասար լինի արժեթղթի անվանական արժեքին:

**թոշակ, pension, пенсия** - ա) ապահովագրական ստաժի առկայության դեպքում քաղաքացիներին վճարվում է տարիքային կենսաթոշակ, բ) հաշմանդամության կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին, գ) կերակրողին կորցնելու դեպ-

քում վճարվող կենսաթոշակ, դ) ծերության սոցիալական կենսաթոշակ, ե) առանձնապես վնասակար, առանձնապես ծանր, վնասակար, ծանր պայմաններում աշխատելու եւ երկարամյա ծառայության համար տրվող մասնակի կենսաթոշակ:

## Ժ

**ժամանակավոր ներմուծում ՀՀ մաքսային տարածք եւ ժամանակավոր արտահանում այդ տարածքից, temporary import to RA customs territory and temporary export, временный ввоз на таможенную территорию РА и временный вывоз** - ներմուծումը ՀՀ մաքսային տարածք՝ այդ տարածքից հետադարձ արտահանման պայմանով եւ արտահանումը ՀՀ տարածքից՝ այդ տարածք հետադարձ ներմուծման պայմանով:

**ժամկետային ավանդ, time deposit, срочный вклад, депозит -** ավանդ, որը ներդրվում է բանկում (ավանդային հաշվում) որոշակի ժամկետով: Ավանդատուն կարող է հաշվից հանել ավանդը պայմանագրով սահմանված ժամկետը լրանալիս կամ նախնական ծանուցումից հետո: Ժամկետային ավանդների տոկոսադրույքներն ավելի բարձր են, քան ցպահանջ ավանդներինը:

**ժամկետային գործարք, bargain on term, Futures Contract, срочная сделка** - արժեթղթերի, արտարժույթի վաճառքի գործարքն է, ըստ որի գնորդը ստանում է արժեթղթերը, արտարժույթը գործարքի կնքման պահին, իսկ դրանց վճարումը կատարում է որոշակի ժամանակ անց՝ գործարքի կնքման պահին ամրագրված գնով կամ փոխարժեքով:

**ժամկետային վարկ, time credit, срочный кредит -** կարճաժամկետ վարկ՝ մինչեւ 1 տարի, միջնաժամկետ՝ 1-3 տարի, երկարաժամկետ՝ 3-ից ավելի տարի: Նշված վարկերը ժամկետային առումով յուրահատուկ են անցումային տնտեսություն վարող երկրներին, իսկ զարգացած երկրներում միջնաժամկետ վարկերը 1-6 տարի են, երկարաժամկետը՝ 6-ից ավելի:

**ժամկետանց պարտք, overdue debt, просроченный долг** - իրական կամ պայմանական ֆինանսական պարտավորությունն է, որը ժամկետային առումով դարձել է չկատարված: Հասկացությունը հաճախ կիրառվում է սպառողական վարկեր, գրավականների, ռենտային վճարների գծով պարտավորությունների նկատմամբ, որոնք կարող են եւ պետք է վճարվեն որոշակի օր: բ) ձեռնարկությունների, կազմակերպությունների կողմից մատա-

կարարներին, վարկային կազմակերպություններին, ֆինանսական մարմիններին, աշխատողներին ժամանակին չկատարված վճարումներն են:

## Ի

**ինդեքս, index, индекс** - տնտեսական եւ վիճակագրական հարաբերական ցուցանիշ է, որն արտահայտվում է ժամանակային (դինամիկ ինդեքսներ) եւ տարածական առումով: Ինդեքսի տարրերն են՝ ա) ինդեքսավորվող մեծությունը (գնի, ինքնարժեքի, արտադրանքի ֆիզիկական ծավալի, աշխատանքի արտադրողականության եւ այլն), բ) ձեւը (ագրեգատային եւ միջին՝ թվաբանական, հարմոնիկ, երկրաչափական ինդեքսներ եւ այլն), գ) կշիռները (պարզ եւ կշռված, կայուն եւ փոփոխական), դ) հաշվարկման ժամկետները (բազիսային եւ շղթայական):

**ինդեքս գների, price index, индекс цен** - տվյալ ժամանակաշրջանում ապրանքների եւ ծառայությունների որոշակի խմբերի (շուկայական զամբյուղ) անվանական գների հարաբերությունը բազիսային ժամանակաշրջանում նույն խմբի գներին ՝ բազմապատկած 100-ով:

**ինդեքսավորում, indexation, индексация** - վճարումների չափերի ավտոմատ կարգավորում՝ հաշվի առնելով գների ինդեքսի բազայի վրա հաշվարկված ինֆլյացիայի տեմպերը:

**ինդեքս Դոու-Ջոնսի, Dow-Jones average, индекс Доу-Джонса** - բորսայի իրավիճակի ամենահանրահայտ ինդեքսն է, որն օգտագործվում է Նյու-Յորքի ֆոնդային բորսայում: Այն բաժնետոմսերի հատուկ կուրս է: Ինդեքսը կազմված է. 30 արդյունաբերական կորպորացիաների, 20 տրանսպորտային, 15 կոմունալ սպասարկման ընկերությունների բաժնետոմսերի միջին կուրսերից եւ բոլոր այդ 65 կորպորացիաների ամփոփ կուրսից: Առաջին ցուցանիշը (արդյունաբերական 30 ընկերությունների վերաբերյալ) առավել ներկայացուցչական է, եւ հաճախ այդ նկատի ունեն, երբ ասում են Դոու-Ջոնսի ինդեքս: Դոու-Ջոնսի ինդեքսի հաշվարկման ժամանակ համարիչում օգտագործվում է տվյալ բաժնետոմսերի շուկայական գնի եւ անվանական գնի հարաբերությունը, իսկ հայտարարում՝ տվյալ բաժնետոմսերի ընդհանուր քանակության մեջ չվաճառված բաժնետոմսերի տեսակարար կշիռը:

**ինդեքս սպառողական գների, consumer price index, индекс потребительских цен -** Սպառողական ապրանքների եւ ծառայությունների (պարենային ապրանքներ, բնակարան, զանգվա-

ծային սպառման արդյունաբերական ապրանքներ, վառելիք եւ այլն) «զամբյուղի» արժեքի դինամիկայի հարաբերական ցուցանիշ: Ինֆլյացիայի մակարդակի հիմնական ցուցանիշներից մեկն է եւ հաշվարկվում է ամեն ամիս: Այդ ինդեքսը հաշվարկելիս ճոխության առարկաների գները հաշվի չեն առնվում:

**ինդուստրիալ (արդյունաբերական) քաղաքականություն, industrial policy, индустриальная (промышленная) политика -** տնտեսական քաղաքականության մի ճյուղ է, որը ստեղծվում է արդյունաբերության կառուցվածքի ձեւավորման եւ կազմակերպման գործում կառավարության անմիջական մասնակցության եւ ակտիվ դերի հիման վրա՝ նպատակ ունենալով խթանել տնտեսական աճը:

**ինկասացիա, collection, инкассация** - ձեռնարկությունների, հիմնարկությունների, կազմակերպությունների դրամարկղներում եղած կանխիկ դրամի եւ արժեքների հավաքագրումն ու դրանք վարկային հիմնարկությունների (բանկերի) դրամարկղում տեղավորելու ծառայությունների մատուցումն է:

**ինկասատոր, collector, инкассатор** - պաշտոնական անձ, որը փողն ընդունում է կազմակերպություններից, ձեռնարկություններից՝ բանկ հանձնելու համար:

**ինովացիա, innovation, инновация** - տնտեսական շրջանառության մեջ օգտագործվող, նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացի, նոր կամ կատարելագործված արտադրանքի կամ ծառայության տեսքով իրացում գտած վերջնական արդյունք:

**ինովացիոն նախագիծ, innovation project, инновационный проект** - գիտական հետազոտությունների, մշակումների, փորձակոնստրուկտորական աշխատանքների կամ այլ գիտատեխնիկական արդյունքի օգտագործմամբ, տնտեսական շրջանառության մեջ իրացվելուն, նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացի, նոր կամ կատարելագործված ծառայության կամ արտադրանքի ստեղծմանն ուղղված գործունեության նախագիծ:

**ինովացիոն պետական քաղաքականություն, state policy innovation, государственная инновационная политика** - տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ ուղղված ինովացիոն գործունեության զարգացմանն ու խթանմանը: Պետական ինովացիոն ծրագիրը ենթադրում է ինովացիոն նախագծերի եւ միջոցառումների ամբողջություն, որի իրականացումն ապահովվում է պետական բյուջեի ֆինանսավորմամբ կամ

համաֆինանսավորմամբ:

**ինտերվենցիա (ներխուժում) արժութային, currency intervention валютная интервенция** - Կենտրոնական բանկի գործառնությունները երկրի արժույթի գնման եւ վաճառքի վերաբերյալ՝ կուրսի պահպանման նպատակով: բ) նպատակային գործառնություններ արտասահմանյան արժույթի առք ու վաճառքի վերաբերյալ՝ ազգային արժույթի կուրսի դինամիկայի որոշակի չափերով բարձրացումը կամ իջեցումը սահմանափակելու համար:

**ինտերվենցիա (ներխուժում) ֆորվարդային, forward intervention, форвардная интервенция** - Կենտրոնական բանկի կողմից փոխարկային շուկայում իրականացվող գործառնություններ, որոնց նպատակն է պահպանել ազգային արժույթի կուրսը կանխիկ հաշվարկներով գործարքների ժամանակ: Այն կարող է կատարվել նաեւ տոկոսադրույքների վրա ներգործելու համար, որոնք գոյություն ունեն փոխարկային շուկայում՝ ազգային արժույթով շտապ գործարքների գծով:

**ինվեստիցիա, investment, инвестиция -** շահույթ ստանալու նպատակով երկրի ներսում կամ արտերկրում կապիտալի երկարաժամկետ ներդրումն է տարբեր ճյուղերի տնտեսավարող սուբյեկտներում, ձեռնարկատիրական եւ նորամուծությունների նախագծերում եւ սոցիալ-տնտեսական ծրագրերում:

**ինքնակամ զբաղեցված հողամաս, unauthorized occupation of land, самовольное занятие земельных участков** - քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից ինքնակամ, այդ թվում՝ առանց իրավաբանական պատշաճ ձեւակերպման զբաղեցված եւ օգտագործվող պետական կամ համայնքային սեփականության հողամաս.

**ինքնարժեք, cost, себестоимость** - ձեռնարկության արտադրանքի արտադրության եւ իրացման հետ կապված ընթացիկ ծախսերը արժեքային արտահայտությամբ՝ արժեքի մի մասը: Ինքնարժեքի մեջ մտնող եւ հարկվող շահույթի (եկամտի) որոշման մեջ հաշվարկվող ծախսերի կազմը որոշվում է օրենսդրությամբ: Ինքնարժեքն իր մեջ ընդգրկում է նյութերի եւ կոմպլեկտավորող շինվածքների ծախսերը, ամորտիզացիան, էներգետիկական ծախսերը, վերադիր ծախսերը, աշխատավարձը եւ սոցհատկացումները:

**ինֆլյացիայի (արժեզրկման) ռիսկ, inflation risk, инфляционный риск** - պայմանավորված է այն հավանականությամբ, որ կարող են բարձրանալ ապրանք-

ների ու մատուցվող ծառայությունների գները եւ, որի պատճառով էլ հանկարծակի կարող է իջնել սպասվելիք շահույթի մեծությունը եւ դրանից կախված բաժնետերերին տրվելիք շահաբաժինների գումարի չափը:

**ինֆլյացիայի (գնաճի, սղաճի) տեմպեր (նորմ), inflation rate, темпы инфляции** - որոշակի ժամանակաշրջանի ընթացքում գնի ընդհանուր մակարդակի աճի տարեկան տեմպ՝ արտահայտված տոկոսներով:

**ինֆլյացիա**, **inflation, инфляция - տես՝ գնաճ**

**ԻՍՕ, ISO (International Organization for Standardization), ИСО (Международная Организация по Стандартизации)** - ստանդարտացման միջազգային կազմակերպությունը (ISO - International Organization for Standartization) հիմնադրվել է 1946 թվականին:

ISO-ի նպատակն է ստանդարտացման սկզբունքների զարգացումը եւ դրանց հիման վրա ստանդարտների մշակումը, որոնք կնպաստեին ինտեգրացման գործընթացներին բիզնեսի տարբեր ոլորտներում: 1987 թվականին ISO-ի կոմիտեի կողմից մշակվեցին ISO 9000 սերիայի ստանդարտները (սերտիֆիկացիա ԻՍՕ 9000): Ստանդարտների երրորդ, ներկայումս գործող ԻՍՕ 9000-2000 համակարգը Ստանդարտացման միջազգային կազմակերպությունը մշակել է 2000թ.:

**իրական աշխատավարձ, real wage, реальная заработная плата** - աշխատողի համար իրական աշխատավարձը հավասար է իր աշխատավարձի եւ գների մակարդակի հարաբերությանը, հետեւաբար, իրական աշխատավարձը չափվում է ապրանքների այն քանակով, որն այդ աշխատողը կարող է ձեռք բերել իր աշխատավարձով: Ֆիրմայի համար իրական աշխատավարձը վճարվող աշխատավարձի հարաբերությունն է թողարկման գնին:

**իրական աշխատավարձի ինդեքս, real index, индекс реальной заработной платы -** որոշվում է միջին ամսական անվանական աշխատավարձի եւ ապրանքների ու ծառայությունների սպառողական գների ինդեքսների հարաբերակցությամբ: Երկու ինդեքսներն էլ պետք է վերաբերվեն միեւնույն ժամանակաշրջանին:

**իրական արժեք, real value, реальная стоимость** - ակտիվի, աշխատավարձի, շահույթի եւ այլնի արժեքն է, որը ճշգրտված է ըստ գների մակարդակի փոփոխության, մասնավորապես գնաճի (սղաճի): Արտահայտվում է որեւէ բազիսային տարվա հաստատուն եւ ոչ թե ընթացիկ գնե-

րով: Այսպես, անվանական աշխատավարձը կարող է ավելացված լինել, մինչդեռ իրական աշխատավարձը մնացած լինել նույնը, եթե աշխատավարձն աճում է գնաճի չափով: Իսկ եթե անվանական աշխատավարձն աճում է սղաճից պակաս չափով, ապա իրական աշխատավարձը նվազում է, այսինքն փոքրանում է աշխատավարձի գնողունակությունը:

**իրական բյուջետային պակասուրդ, real budget deficit, actual deficit, реальный бюджетный дефицит -** տվյալ տարում կառավարության եկամուտների համեմատությամբ ծախսերի գերազանցման փաստացի գումար:

**իրական դրամական եկամուտներ, real cash income, реальные денежные доходы** - ընթացիկ ժամանակաշրջանի դրամական եկամուտներն են՝ ճշգրտված սպառողական ապրանքների ու ծառայությունների գների ինդեքսով:

**իրական եկամուտ, real income, реальный доход** - անհատի, խմբի կամ երկրի եկամուտը՝ ճշգրտված ըստ սղաճի պատճառով գնողունակության փոփոխումների: Օրինակ՝ եթե շուկայական միջին գները տասը տարում աճել են 20%-ով այդպիսով 20%-ով պակասեցնելով գնողունակությունը, ապա աշխատավարձերը պետք է ավելացվեն 20 %-ով, եթե իրական եկամուտը պետք է պահպանվի նույն մակարդակի վրա:

**իրական համախառն ազգային արդյունք (ՀԱԱ), real gross national product (GNP), реальный валовой национальный продукт (ВНП)** - Գների մակարդակի փոփոխությամբ ճշգրտված Համախառն ազգային արդյունք: Տվյալ տարվա ՀԱԱ-ի հարաբերությունը նույն տարվա ՀԱԱ-ի դեֆլյատորին:

**իրական տոկոսադրույք, real interest rate, реальная ставка процента** - գնաճից (սղաճից) մաքրված տոկոսադրույքն է, որը հավասար է անվանական տոկոսադրույքի եւ գնաճի մակարդակի տարբերությանը: Դա այնպիսի տոկոսադրույք է, որով անձը ձեռք է բերում դրամական ակտիվների ապագա գնողունակությունը: Իրական տոկոսադրույքը հանդես է գալիս երկու ձեւով՝ ա) մինչեւ ենթադրվող գնաճի (սղաճի) ժամանակաշրջանի վրա հասնելը եւ, որին սպասում են պարտատերերն ու փոխառուները փոխատվությունների տրամադրման պահին, բ) իրական, փաստացի, կայացած:

**իրական փոխարժեք, real exchange rate, реальный валютный курс** - արտացոլում է տարբեր արժույթներով արտահայտված միեւնույն ապրանքնե-

րի գների հարաբերակցությունը, որով կարգավորվում է երկրների միջեւ ապրանքափոխանակության համամասնությունը: Կախված է անվանական փոխարժեքից, արժույթների փոխարժեքների հարաբերակցությունից եւ ազգային արժույթներով արտադրանքի գներից: Իրական փոխարժեքն իրենից ներկայացնում է անվանական փոխարժեքի ու տարբեր երկրների գների մակարդակների հարաբերակցության արտադրյալ:

**իրավաբանական անձ, juridical person, юридическое лицо** - իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը որպես սեփականություն, ունի առանձնացված գույք եւ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կարող է իր անունից ձեռք բերել եւ իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքեր, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ: Իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առեւտրային) կամ շահույթ չհետապնդող եւ ստացված շահույթը մասնակիցների միջեւ չբաշխող (ոչ առեւտրային) կազմակերպություններ: Առեւտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների եւ ընկերությունների ձեւով: Ոչ առեւտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ինչպես նաեւ օրենքով նախատեսված այլ ձեւերով: Ոչ առեւտրային կազմակերպությունները կարող են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նրանք ստեղծվել են եւ համապատասխանում են այդ նպատակներին: Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ոչ առեւտրային կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակիցը:

**իրավունք սեփականության-, property right, право собствен-ности** - օրենքով սահմանված կանոններ, որոնք որոշում են, թե այս կամ այն անձը ինչպիսի իրերից կարող է օգտվել կամ տնօրինել դրանք, ինչպես նաեւ այն պայմանները, որոնց դեպքում այդպիսի օգ-

տագործումը կամ տնօրինումը կարող է իրականացվել:

**իրացվելիություն, liquidity, ликвидность** - ընկերության, ձեռնարկության, բանկի ակտիվների շարժունություն, նյութական արժեքների եւ արժեթղթերի արագ իրացման հնարավորություն: ա) Ընկերության իրացվելիությունը որոշվում է ֆիրմայի ընդհանուր պարտքի մեծության եւ իրացվելի ակտիվների հարաբերակցությամբ: Բանկի իրացվելիությունը առեւտրային բանկի ավանդատուների առջեւ իր պարտավորությունների անխափան կատարումն ապահովելու ընդունակությունն է: Որոշվում է բանկի հաշվեկշռի պասիվների եւ ակտիվների հաշվեկշռմամբ, բանկի կողմից ակտիվների տեղաբաշխման եւ ներգրավված պասիվների ժամկետների համապատասխանության աստիճանով: Իրացվելիությունն ապահովելու համար օրենսդրությամբ սովորաբար սահմանվում են փողի պահուստների չափերը, որոնք առեւտրային բանկերը պարտավոր են պահել Կենտրոնական բանկում` բանկերի նվազագույն պահուստներ: բ) տնտեսավարող սուբյեկտի ընդունակությունն է ժամանակին կատարելու իր պարտավորությունները եւ իրեն ներկայացված օրինական դրամական պահանջները կամ ֆինանսավորել` իր ենթակայության ակտիվներն ավելացնելու համար: Կախված է տվյալ սուբյեկտի ակտիվների եւ պասիվների ընթացիկ հավասարակշռվածության աստիճանից: Իրացվելիությունը եւ շահութաբերությունը սովորաբար իրարամերժ նպատակներ են, քանի որ բարձր իրացվելի ակտիվները, որպես կանոն, ցածր եկամտաբեր են կամ եկամտաբեր չեն:

**իսկական արժեք, current value, present value, настоящая стоимость** - վերաբերում է ներդրումների, արժեթղթերի արժեքին. նույնն է` ժամանակակից արժեք:

**իրեղեն (նյութական) հարստություն, tangible wealth веще-ственное богатство** - իրեղեն ակտիվներ, երկարատեւ օգտագործման ակտիվներ: Ի տարբերություն թղթային ակտիվների (ֆինանսական հարստություն) նյութական հարստություն են համարվում կապիտալը եւ հողը:

## L

**լիբօր, առաջարկի Լոնդոնի միջբանկային դրույք, LIBOR, London interbank offered rate, ЛИБОР, Лондонская межбанковская ставка предложения** - միջին տոկոսադրույք, որով

Լոնդոնի բանկերը եվրոարժույթներով փոխառություններ են տրամադրում առաջնակարգ բանկերին՝ ավանդների տեղաբաշխման ճանապարհով: Փոխատվական կապիտալների միջազգային շուկայում, տոկոսադրույքների կառուցվածքում կարեւորագույն ցուցանիշներից մեկն է: Գործնականում ԼԻԲՕՐ-ը տոկոսադրույքների սանդղակ է, որը կիրառվում է Լոնդոնի բանկերի կողմից: ԼԻԲՕՐ-ի տոկոսադրույքի սանդղակի պաշտոնական սահմանում գոյություն չունի, եւ Լոնդոնի յուրաքանչյուր խոշոր բանկ այն սահմանում եւ փոխում է՝ փողի շուկայի իրավիճակից կախված: Հիմնական դրույքները սահմանվում են յուրաքանչյուր գործնական օրվա առավոտյան ժամը 11-ին: Եվրոարժույթների շուկայի նոր կենտրոնների առաջացմանը զուգընթաց, ի հայտ են եկել ԼԻԲՕՐ-ին համանման տոկոսադրույքներ. ՓԻԲՕՐ՝ Փարիզում, ՍԻԲՕՐ՝ Սինգապուրում, ՆԻԲՕՐ՝ Նասաուում, ՔԻԲՕՐ՝ Քուվեյթում, ԼՅՈՒՔՍԻԲՕՐ՝ Լյուքսեմբուրգում: Այդ դրույքների մակարդակն ունի հավասարվելու միտում: Այնուամենայնիվ, դրանց միջեւ միշտ որոշակի տարբերություն է պահպանվում, որը պայմանավորված է յուրաքանչյուր կենտրոնի աշխատանքի ռեժիմի տարբերությամբ: ԼԻԲՕՐ-ի որոշիչ դերը ձեւավորվել է պատմականորեն:

**լիցենզիա, license, лицензия** - արտահանման, ներմուծման եւ արժույթի շարժի վերահսկման նպատակով պետական մարմինների կողմից տրվող թույլտվություն՝ արտահանման-ներմուծման գործառնություններ, սահմանափակ քանակներով ապրանքների ներկրում եւ արտահանում իրականացնելու համար, բ) այլ անձանց կամ կազմակերպություններին տրվող իրավունք՝ որոշակի ժամանակաշրջանի ընթացքում պայմանավորված վարձատրության դիմաց օգտագործելու պատենտներով պաշտպանված գյուտերը, տեխնոլոգիաները, տեխնիկական գիտելիքները եւ արտադրական փորձը, արտադրության գաղտնիքները, ապրանքանիշը, արտադրության համար անհրաժեշտ առեւտրային եւ այլ տեղեկատվությունը, գ) պետական իրավասու մարմինների կողմից կազմակերպությանը կամ անձին ընձեռվող իրավունք զբաղվելու գործունեության որոշակի տեսակներով, որոնք կարիք ունեն սահմանափակման: Օրինակ՝ վաճառելու ոգելից խմիչք կամ ծխախոտ, կրելու զենք, եթեր արձակելու հեռուստահաղորդումներ, իրականացնել բանկային գործունեություն եւ այլն: Սեփականատերը կոչվում է լիցենզոր, իսկ ձեռք բերողը՝ լիցենզիատ:

**լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, activity subject to licensing, деятельность подлежащая лицензированию** - գործունեության տեսակ, որի իրականացման համար օրենքով պահանջվում է լիցենզիա:

**լիցենզիաների միջազգային առևտուր, international license trade, международная лицензионная торговля -** երկրների միջև գիտատեխնիկական փոխանակության հիմնական եղանակ: Միջազգային լիցենզավորման գործարքները իրականանում են պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա, որոնք կարող են նախատեսել ինչպես զուտ գյուտի, նոու-հաուի, ապրանքային նշանի փոխանցում, այնպես էլ վերջիններիս հետ մեկտեղ տեխնիկական փաստաթղթերի, արտադրական գործընթացի բաղկացուցիչների փոխանցում, մասնագետների վերապատրաստում և տեխնիկական օգնության ցուցաբերում: Լիցենզիաների առևտուրը միջազգային շուկայում գրավում է աննշան տեղ, քանի որ գիտական հետազոտությունների բարդացման պայմաններում միայն լիցենզիայի ձեռքբերումը չի կարող ապահովել լիցենզիայում ամրագրված գիտատեխնիկական գիտելիքի արդյունավետ օգտագործումը: Գործնականում արտոնագրված արդյունքը հնարավոր է լինում միայն լիցենզիայի տիրոջ կողմից արտադրության գաղտնիքների միաժամանակյա փոխանցման եւ լիցենզավորված հայտնագործության յուրացման ասպարեզում տեխնիկական օգնության պայմաններում:

**լիցենզիոն վճարումներ, licence payments, лицензионные пла-тежи** - ելնելով հաշվարկման մեթոդի առանձնահատկություններից, բաժանվում են երկու խմբի՝ լիցենզիոն վճար, որը հաշվարկվում է լիցենզիայի օգտագործման փաստացի տնտեսական արդյունքի հիման վրա և լիցենզիոն վճար, որի չափն անմիջականորեն կախված չէ լիցենզիայի փաստացի օգտագործման արդյունքից, այլ նախօրոք նախատեսվում է լիցենզիոն պայմանագրում՝ ելնելով լիցենզիայի առարկայի օգտագործման հնարավոր կանխատեսվող արդյունքից, շահույթից: Առաջին խմբին պատկանում են հետևյալ ձևերը՝ պարբերական տոկոսային մասհանումները (ռոյալթի) և լիցենզիառուի շահույթում մասնակցությունը: Երկրորդ խմբին են դասվում առաջնային վճարումները, լիցենզիառուի կողմից արժեթղթերի փոխանցումը, ինչպես նաև տեխնոլոգիական փաստաթղթերի տրամադրումը: Լիցենզիառուի շահույթում մասնակցությունը, որպես լիցենզիոն

վճարման ձև, նշանակում է լիցենզիայի օգտագործման արդյունքում գոյացած շահույթից որոշակի չափի (տոկոսի) հատկացում լիցենզիատուի օգտին:

**լիզինգ (վարձակալություն), leasing, лизинг** - ձեռնարկատիրական գործունեության տեսակ է՝ ուղղված ազատ կամ ներգրավված ֆինանսական միջոցների ներդրմանը, երբ համաձայն ֆինանսական վարձակալության պայմանագրի (լիզինգի պայմանագրի)՝ մի կողմը պարտավորվում է վաճառողից որպես սեփականություն ձեռք բերել պայմանագրում նշված գույքը եւ որոշակի վճարի դիմաց որոշակի ժամկետով երրորդ կողմին ձեռնարկատիրական նպատակով տալ ժամանակավոր օգտագործման: Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձատուն պարտավորվում է վարձակալի նշված գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված վաճառողից եւ վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար: Այդ դեպքում վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության առարկայի եւ վաճառողի ընտրության համար:

Չնայած լիզինգի վարձակալության հետ ունեցած նմանությանը՝ լիզինգն էականորեն տարբերվում է վարձակալությունից: Ի տարբերություն վարձակալի՝ լիզինգառուն պատասխանատվություն է կրում լիզինգի առարկայի տեխնիկական սպասարկման և պատահական կորուստի համար: Լիզինգառուն, ի տարբերություն վարձակալի, վճարում է ոչ թե վարձակալական վճար լիզինգի առարկայի օգտագործման համար, այլ ամորտիզացիոն հատկացումների վճարներ:

Լիզինգն ընդունված է բաժանել երկու հիմնական տեսակի՝ ֆինանսականի և գործառնականի:

**Ֆինանսական լիզինգը, (financial leasing, финансовый ли-зинг),** որին հաճախ անվանում են նաև լրիվ ամորտիզացիայով լիզինգ, լիզինգի տարատեսակ է, որի դեպքում լիզինգատուն պարտավորվում է ձեռք բերել լիզինգառուի կողմից նշված գույքը և այն որպես լիզինգի առարկա՝ հանձնել լիզինգառուի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը՝ որոշակի վճարի դիմաց, որոշակի ժամկետով, որոշակի պայմաններով: Ընդ որում, այն ժամկետը, որով տրամադրվում է լիզինգի առարկան, համադրելի է գույքի լրիվ ամորտիզացման ժամկետի տեւողության հետ, իսկ լիզինգի առարկան ժամկետի ավարտից հետո կամ ժամկետից շուտ կարող է անցնել լիզինգառուին ի

սեփականություն միայն գույքի արժեքի ամբողջական վճարումից հետո: Ֆինանսական լիզինգը լիզինգի ամենատարածված ձևերից է և ենթադրում է գույքի երկարաժամկետ հանձնում, ինչպես նաև արժեքի ամբողջական փոխհատուցում օգտագործվող ժամանակահատվածի ընթացքում:

**Գործառնական լիզինգը (service, operating leases, операционный лизинг),** որին անվանում են նաև ոչ լրիվ ամորտիզացիայով լիզինգ, լիզինգի տարատեսակ է, որի դեպքում լիզինգատուն իր հայեցողությամբ ձեռք է բերում գույք և այն որպես լիզինգի առարկա՝ հանձնում լիզինգառուի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը՝ որոշակի վճարի դիմաց, որոշակի ժամկետով, որոշակի պայմաններով: Ընդ որում այն ժամկետը, որով տրամադրվում է լիզինգի առարկան, էականորեն ավելի կարճ է գույքի ամորտիզացիոն ժամկետի տևողությունից, ինչը հնարավորություն է տալիս լիզինգատուին մի քանի անգամ այն տրամադրել, իսկ լիզինգի առարկան ժամկետի ավարտից հետո կամ ժամկետից շուտ վերադարձվում է լիզինգատուին: Գործառնական լիզինգի առարկան հանդես է գալիս այնպիսի գույքը, որը հարկավոր է լիզինգառուին կարճաժամկետ, միանգամյա եւ սեզոնային օգտագործման համար, ինչպես նաև այնպիսի տեխնիկա, որը բարոյապես շուտ է մաշվում:

**լճացում, depression, депрессия, спад**- տնտեսական ճգնաժամին հետևող՝ տնտեսության վիճակ: Բնութագրվում է տնտեսության լճացումով, ապրանքների թույլ պահանջարկով, զանգվածային գործազրկությամբ եւ այլն: Լճացման փուլում նախադրյալներ են ստեղծվում աշխուժացման եւ դրան հետեւող վերելքի փուլերին անցնելու համար:

**լոմբարդային վարկեր**, **pawn credits, ломбардные кредиты** - 1) հեշտ իրացվող շարժական գույքի գրավի դիմաց տրամադրվող կարճաժամկետ վարկ է: 17-18-րդ դարերում լոմբարդային վարկեր սկսեցին տրամադրել բանկերը: Գրավ ծառայում էին թանկարժեք մետաղներն ու ապրանքները: Գրավի արժեքը սովորաբար գերազանցում էր վարկի մեծությունը: Փոխառուն պահպանում էր պարտատիրոջ մոտ գրավ դրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը: Եթե վարկը ժամանակին չէր մարվում, ապա սեփականության իրավունքն անցնում էր պարտատիրոջը, որն իրացնում էր գույքը եւ ստացված հասույթից պահում գրավի գումարը՝ հաշվեգրված տոկոսների հետ միասին: Լոմբարդային վարկի ժամանակա-

կից ձեւը՝ բանկում դեպոնացված արժեթղթերի գրավի դիմաց տրված բանկային վարկն է: Որպես գրավ սովորաբար ընդունվում են պետական արժեթղթերը եւ ֆոնդային բորսայում գնանշվող արժեթղթերը, որոնք վարկավորման ընթացքում հանձնվում են բանկին: Վարկի գումարը կազմում է գրավի արժեքի 50-90%-ը: Լոմբարդային վարկը աստիճանաբար դուրս է մղվում վարկավորման այլ ձեւերի կողմից, բ) իրենից ներկայացնում է ՅՅ տարածքում գործող ռեզիդենտ բանկերի կողմից (կարճաժամկետ իրացվելիության կարգավորման նպատակով) վարկավորում՝ պետական արժեթղթերի, բանկային ոսկու, թանկարժեք մետաղների, արտարժույթի գրավադրման դիմաց:

**լողացող կուրս, floating exchange rate, плавающий курс** -արժույթի ազատ փոփոխվող, տատանվող փոխարժեք է, որի մեծությունը որոշվում է շուկայական իրադրությամբ, պահանջարկի եւ առաջարկի հարաբերակցությամբ եւ շուկայական այլ գործոններով, բ) ազգային արժույթի փոխարժեքի տատանումներն են, երբ դրա արժեքը չի ամրագրվում ոսկով կամ մեկ այլ ազգային արժույթով եւ, որը ձեւավորվում է շուկայական տատանումների հետեւանքով՝ արտարժույթի առուծախի ազատ շուկայի պայմաններում:

**լոտ, lot, лот -** ապրանքի քանակի եւ որակի գծով ստանդարտ խումբ, մեկ պայմանագիր բորսայում, ապրանքի ցանկացած խումբ, որը վաճառքի է առաջարկվում որպես միասնական ամբողջություն: Լոտի որոշման համար օգտագործվում են չափի ստանդարտ միավորներ: Այսպես, ամերիկյան բորսաներում հացահատիկի առեւտրում լոտի մեծությունը հավասար է 5 հազար բուշելի (136.1 տոննա ցորեն եւ սոյա, 127 տոննա եգիպտացորեն եւ 76.6 տոննա վարսակ), (հեղուկ նյութերի համար մեկ բուշելը հավասար է 36.346 լիտրի): Լոտի մեծությունը հաճախ որոշվում է տրանսպորտային միջոցների տարողությամբ: բ) իր կամ մի քանի իրերի խումբ աճուրդում, որոնք վաճառվել են ընդհանուր գնով: գ) ապրանքների ցանկացած խումբ, որը դառնում է գործառնությունների առարկա:

**Լորենցի կոր, Lorenz curve, кривая Лоренца -** եկամուտների փաստացի բաշխման օբյեկտիվ գնահատականի համար օգտագործում են «Լորենցի կորը» եւ «Ջինի գործակիցը», որոնք ցույց են տալիս, թե համախառն եկամուտների որ մասը բնակչության առանձին խմբերի մոտ ինչպես է կենտրոնացված: Դա թույլ է տալիս դատել տվյալ երկրում տնտեսական անհավասարության մա-

կարդակի մասին: «Լորենցի կո-րը» ցույց է տալիս ընտանիքների եկամուտների անհավասարու-թյան աստիճանը: «Ընտանիքնե-րի տոկոսը» տեղադրված է աբս-ցիսների, իսկ «եկամուտների տոկոսը»՝ կոորդինատների առանցքի վրա: «Լորենցի կորը» կարելի է կառուցել հարկերի վճարումից հետո մնացող եկա-մուտների համար, հաշվի առնե-լով տրանսֆերտները եւ առանց հաշվի առնելու հարկերն ու տրանսֆերտները:

**Լաֆֆերի կոր, Laffer curve, кривая Лаффера -** ցույց է տա-լիս հարկերի դրույքաչափերի եւ հարկերից ստացվող պետական բյուջեի եկամուտների միջեւ գո-յություն ունեցող փոխկապվա-ծությունը: Հարկերի դրույքաչա-փերի բարձրացման դեպքում սկզբնական շրջանում հարկե-րից ստացվող պետության եկա-մուտներն ավելանում են: Սա-կայն, եթե հարկերի դրույքաչա-փը գերազանցում է որոշակի N սահմանը, ապա պետության հարկային մուտքերը սկսում են նվազել: Այլ կերպ ասած ամերի-կացի տնտեսագետ Արթուր Լաֆֆերի առաջարկած կորը ցույց է տալիս հարկի վճարվող ամբողջ ծավալի կախումը հար-կադրույքից:

**լուծարում, liquidation, ликви-дация** - նախկինում գնված բոր-սայական պայմանագրի վա-ճառք, բ) գործարքի ավարտում, գ) ձեռնարկության, հիմնարկի եւ այլն գործունեության դադարե-ցում: Լուծարման դեպքում որոշ-վում են ձեռնարկությանը պատ-կանող գույքի արժեքը, պարտքե-րի ընդհանուր գումարը, դրամա-կան եւ նյութական միջոցները բաժանվում են ձեռնարկության հիմնադիրների միջեւ: Ձեռնար-կության լուծարումն իրականաց-վում է լուծարային հանձնաժողո-վի կողմից, որի կազմի մեջ ընդգրկվում են սեփականատե-րերը կամ նրանց լիազոր մար-մինները, իսկ ձեռնարկության սնանկացման դեպքում՝ դատա-րանի կամ արբիտրաժի ներկա-յացուցիչները:

## Խ

**խթանող տնտեսական քա-ղաքականություն, stimulating, promotional economic policy, стимулирующая экономичес-кая политика -** տնտեսական քաղաքականություն, որն ուղղ-ված է ամբողջական պահան-ջարկի ընդլայնմանը, իրական եկամուտների եւ զբաղվածու-թյան աճին:

**խնայողություն, savings, сбере-жения** - եկամուտ, հարկե-րը վճարելուց հետո, որը չի ծախսվել սպառողական ապ-րանքների ձեռք բերելու վրա: Հավասար է՝ հարկերի վճարու-

մից հետո ստացած եկամտից հանած անձնական սպառման ծախսերը:

**խոշոր ձեռնարկություն, խոշոր ընկերություն, big business, large-scale enterprise крупное предприятие, крупная компания -** ֆիրմա, որն արտադրում է ճյուղի արտադրանքի ընդհանուր ծավալի մեծ մասը կամ խոշոր է համարվում իր չափերով (զբաղվածների կամ բաժնետոմսերի տերերի թվով, վաճառքի ծավալով, ակտիվների կամ բաժնետոմսերի չափերով), կամ այդ երկու հատկանիշներով էլ աչքի է ընկնում:

**խորհուրդ տնօրենների, board of directors, совет директоров** -բաժնետիրական ընկերության վարչություն, բաժնետերերի ընդհանուր ժողովում ընտրված ղեկավար մարմին: Տնօրենների խորհրդի առկայությունը նախատեսված է երկրների մեծ մասի օրենսդրությամբ, սակայն, օրինակ, Գերմանիայում եւ Ֆրանսիայում այն չի ընտրվում, այլ նշանակվում է ընկերության դիտորդների խորհրդի կողմից: Տնօրենների խորհրդի վրա են դրվում բաժնետիրական ընկերության կառավարման եւ ներկայացուցչական գործառույթներ, չնայած այն հանգամանքին, որ այդ գործառույթները փոխանցվում են վարչության մեկ կամ երկու անդամի:

## Ծ

**ծագման հավաստագիր, certificate of origin, сертификат происхождения** - վկայական, որը հաստատում է ապրանքի ծագման երկիրը: Միջազգային առեւտրում առաքման փաստաթղթերից մեկն է, որի հիման վրա որոշվում է ներմուծման մաքսադրույքը: Վկայականը սովորաբար տրվում է ապրանքի ծագման երկրի կառավարության որեւէ մարմնի կամ առեւտրի պալատի կողմից:

**ծախս, expense, затрата** - ձեռնարկության միջոցների նվազում կամ նրա պարտավորությունների ավելացում, որոնք առաջանում են տնտեսական գործունեության ընթացքում եւ հանգեցնում են սեփական կապիտալի մեծության նվազման: Ծախսերին վերաբերում են միջոցների տարբեր ծախսումները՝ իրացվող արտադրանքի ինքնարժեքը, ոչ արտադրական եւ վարչական ծախսերը, տոկոսների, վարձակալության վճարումները, աշխատավարձը, հարկերը եւ այլն:

**ծախք, cost, expenses, затраты, издержки -** ձեռնարկության արտադրանքի թողարկման եւ վաճառքի ընթացքում օգտագործվող կամ սպառվող պաշարամիջոցների վրա կատարվող ծախսերը: Ծախքը հասույթ եւ

շահույթ ստանալու համար պաշ-արամիջոցների օգտագործման եւ սպառման դիմաց վճարվող գինն է: Ծախքը կարելի է դասակարգել ըստ գործառույթների (արտադրության, վաճառքի, բաշխման, վարչական եւ դրամավորման) կամ ըստ կառույցի մակարդակի (ընկերություն, մասնաճյուղ, բաժանմունք եւ այլն): Ծախքը կարող է լինել ուղղակի (հումք եւ աշխատանք) եւ անուղղակի (վերադիրները): Ծախքը կարող է նաեւ դասակարգվել որպես փոփոխական (կախված է արտադրանքի ծավալից) եւ հաստատագրված ծախք (անկախ է ծավալից):

**ծախքի նվազեցում, cost minimization, минимизация затрат -** վարքագծի տեսության մեկնակետ, ըստ որի ամեն մի անձ կամ ձեռնարկություն այլ հավասար պայմաններում ձգտում է բարիքների կամ ներդրանքի տվյալ քանակը ձեռք բերել նվազագույն ծախքով:

**ծախքահավելում, cost-plus, издержки плюс фиксированная прибыль** - պարտավորագրի պայման, ըստ որի վաճառողը ապրանքի գինը սահմանում է միավոր ապրանքի ինքնարժեքին գումարելով որոշակի վճար կամ տոկոս: Օգտագործվում է, երբ նախօրոք դժվար է գնահատել նյութերի ծախքը, օրինակ՝ շինարարության մեջ: բ) աշխատանքի գնահատման եղանակ, երբ կատարված աշխատանքի ծախքը հավելվում է որոշակի հաստատագրված տոկոսով, որպեսզի ծածկվեն վերադիր ծախքերը եւ ապահովվի շահույթ:

## Կ

**կադաստր, cadastre, кадастр** -մատյան, որը տեղեկություններ է ներառում օբյեկտների (հողերի, տների, ձեռնարկությունների) գնահատման եւ միջին եկամտաբերության մասին, որոնք օգտագործվում են համապատասխան իրական հարկերի հաշվարկման համար: Այսպես, հողային կադաստր կազմելու ժամանակ երկրի տարբեր շրջանների տիպիկ հողահանդակները խմբավորվում են՝ ըստ որակի, դիրքի եւ օգտագործման: Յուրաքանչյուր խմբի համար մի շարք տարիների կտրվածքով, որոշվում է միավոր մակերեսի միջին եկամտաբերությունը: Մյուս բոլոր հողահանդակները հավասարեցվում են այս կամ այն կատեգորիային, որի համար որոշվում է հարկի դրույքը միավոր մակերեսից: 2) Անձանց ցուցակ, որոնք ենթակա են շնչահարկի գանձման:

**կալանք ավանդի, blockage of deposit, account, арест вклада, депозита** - ավանդատուի հաշվից փող բաց թողնելու գործողությունների դադարեցում:

Այդպիսի կալանք կարող է դրվել միայն դատա րանի, նախնական քննության եւ հետաքննության մարմինների որոշմամբ, ինչպես նաեւ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Ավանդի վրա կալանք դնելու մասին ավանդատուի անձնական հաշվում կատարվում է համապատասխան նշում:

**կալանք գույքի, seizure, sequestration, arrest, арест имущества** - արգելքի սահմանում գույքի կամ դրամական միջոցների տնօրինման վրա: Կիրառվում է, որպես եղանակ՝ քաղաքացիական դատավարության կարգով՝ հայցը դատավճռով լուծելու համար, օրինակ, գույքի, տուգանքների, հարկերի եւ այլ պարտադիր վճարումների հնարավոր բռնագրավումը: Կալանքի է ենթակա ցանկացած գույք, բացառությամբ քաղաքացիների առաջին անհրաժեշտության առարկա հանդիսացող գույքից: Գույքին կարող է կալանք դրվել, թողնելով այն տիրոջ պատասխանատու պահպանության տակ կամ պահպանության հանձնելով որեւէ երրորդ անձի կամ հիմնարկի:

**կայուն եկամուտ, fixed income, постоянный доход** - եկամուտ, որի կանոնավոր ստացումը ենթադրվում է նաեւ հետագայում:

**կայուն շրջանառու կապիտալ, constant working capital, постоянный оборотный капитал** - անընդմեջ արտադրական գործունեության համար շրջանառու կապիտալի նվազագույն չափ, որի վրա սեզոնային կամ այլ պարբերաշրջանային փոփոխությունները չեն ազդում:

**կանխավաճառք, forward contract, форвардный контракт** - որեւէ բան վաճառելու համար նախնական պայմանագրի կնքում կամ դեռեւս անպատրաստ արտադրանքի նախնական վաճառք:

**կանխավճար, advance, аванс** -ընթացիկ ամսվա համար հաշվարկված աշխատավարձի հաշվին կազմակերպության աշխատակիցներին ամսվա կեսերին վճարվող միջոցներն են, 2) ծառայողական գործուղումների կամ այլ վայր աշխատանքի անցնելու հետ կապված ծախսերը հատուցելու, տնտեսական գնումներ, տրանսպորտի եւ կապի ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար կազմակերպության աշխատակիցներին տրամադրվող գումարներն են, 3) որեւէ ծառայության (նյութական արժեքների ձեռք բերման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) դիմաց համաձայնեցված վարձատրություն (առաջիկա վճարումների) այն մասը, որը գնորդը վճարում է մինչեւ աշխատանքը սկսելը, պայմանագրի

ստորագրելուն պես, 4) դրամի այն գումարն է, որը տրվում է կանխավճարը ստացողին (օրինակ, գործակալին, վստահված անձին) հանձնառությունների կատարման հետ կապված ծախսերը հոգալու համար, 5) միջազգային առեւտրում լայն տարծում ստացած, այսպես կոչված, գնման կանխավճարները՝ որպես ներմուծողների կողմից արտահանողների վարկավորման ձեւ է: Կանխավճարի չափը սովորաբար կազմում է պայմանագրի գնի 10-15%-ը: Կանխավճարը հաշվի է առնվում ամբողջությամբ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գծով վերջնահաշվարկի ժամանակ կամ մաս-մաս՝ ապրանքի առանձին խմբաքանակների կամ աշխատանքների փուլերի համար վճարում կատարելիս: Պայմանագրի պայմանները չկատարելու կամ կանխավճարը ստացողի կողմից իր պարտավորությունները ժամանակին չիրականացնելու դեպքում կանխավճարը սովորաբար վերադարձվում է: Կանխավճար ստացած անձը ներկայացնում է ծախսված գումարի վերաբերյալ համապատասխան հաշվետվություն: Կանխավճարը, ինչպես նաեւ նախավճարը, ծառայում է որպես ապացույց պայմանագիրը կնքելու համար, սակայն ի տարբերություն նախավճարի, չի հանդիսանում պարտավորության կատարման ապահովման եղանակ, քանի որ պարտավորությունը չկատարելու դեպքում այն ենթակա է վերադարձման:

**կանխիկ դրամ, cash, наличные деньги -** արժույթը եւ արտարժույթը թղթադրամների կամ մետաղադրամների տեսքով:

**կանխիկի հոսք, cash flow, поток денежных средств** - ձեռնարկության կողմից ստացված կամ վճարված կանխիկ դրամական միջոցների գումարներն են, որոնք հաճախ վերլուծվում են ըստ տարբեր հոդվածների: Բնորոշում է ընթացիկ պարտավորությունների կատարման ունակությունը: Կանխիկի հոսքի կանխատեսումն արտահայտում է տվյալ ժամանակաշրջանում սպասվող բոլոր վճարվելիք ու ստացվելիք գումարների չափը: Շահույթի եւ վնասների պլանի համեմատ ունի շատ մեծ կարեւորություն, քանի որ կանխիկի շարժի կանխատեսման (պլանի) հիման վրա ղեկավարները կատարում են աշխատողների եւ պարտատերերի ժամանակին վճարումները:

**կանխիկ փող, ready money, cash, денежный поток** - շրջանառության մեջ բաց թողնված թղթե եւ մետաղյա դրամ:

**կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ, authorized capital, уставный капитал** - ձեւավորման կարգը կարգավոր-

վում է օրենսդրությամբ եւ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով: Կանոնադրական կապիտալի գումարի չափը հայտարարվում է այն հիմնադրելիս եւ ամրագրվում է կանոնադրության մեջ: Կանոնադրական կապիտալը ձեւավորվում է բաժնետերերի ներդրումներից եւ նրա գումարը հավասար է բաժնետերերի կողմից տեղաբաշխված բոլոր տեսակի բաժնետոմսերի անվանական արժեքների գումարին: Կանոնադրական կապիտալի գումարի չափը ձեւավորվում է շահագործման մեջ գտնվող եւ չգտնվող հիմնական միջոցներով, բնական ռեսուրսներով, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներով, ոչ նյութական ակտիվներով, նյութերով, արգամաշ առարկաներով, ապրանքներով, հողամասերով եւ այլ նյութական ակտիվներով: Կամ այլ կերպ ասած՝ կանոնադրական կապիտալը նախապես որոշված դրամաչափ է, որն օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է բաժնետերերի կողմից մուծվի ընկերությանը մասնակից դառնալու համար՝ որպես ներդրում իրենց հասանելիք բաժնետոմսերի գումարի չափով: Կանոնադրական կապիտալն արտահայտվում է ազգային դրամով (փող):

**կապալառու, contractor, подрядчик** - կապիտալ շինարարության կապալառուական պայմանագրի հիման վրա իր տարածքում կամ արտասահմանում օբյեկտների կառուցման ժամանակ շինմոնտաժային աշխատանքներ կատարող մասնագիտացված կազմակերպություն, ֆիրմա: Կապալառուական եղանակի դեպքում բոլոր աշխատանքների կատարման պատասխանատվությունը կրում է գլխավոր կապալառու կոչվող կազմակերպությունը, որն առանձին աշխատանքների կատարման համար կարող է հրավիրել այլ մոնտաժային շինարարական մասնագիտացված կազմակերպությունների, որոնք կոչվում են ենթակապալառու կազմակերպություններ:

**կապիտալ, capital, капитал** - կազմակերպության զուտ ակտիվները՝ պարտավորությունները հանելուց հետո: Այն գումարն է, որը կազմակերպությունը պարտք է ձեռնարկատիրոջը: ա) արտադրության մեջ օգտագործվող սարքավորումների, շենքերի եւ կառույցների ամբողջություն: բ) սարքավորումների, շենքերի եւ կառույցների ձեռք բերման համար նախատեսված ֆինանսական միջոցներ: Յավելյալ արժեք բերող արժեք:

**կապիտալիզացիա, կապիտալացում, capitalization, капитализация** - 1) կազմակերպության կապիտալի կառուցվածքն

է, օրինակ՝ բաժնետիրական կապիտալի եւ փոխառու դրամական միջոցների կամ սովորական բաժնետոմսերի եւ արտոնյալ բաժնետոմսերի միջեւ եղած հարաբերակցությունները, 2) մասնակիցների (բաժնետերերի) կողմից ընկերությունում ներդրված բոլոր դրամական միջոցների գումարն է, 3) գույքի (հողամաս, ձեռնարկություն, արժեթղթեր եւ այլն) արժեքի գնահատումն է՝ դրանից ենթադրվող օգտագործման ամբողջ ժամանակաշրջանում սպասվելիք եկամուտները հաշվարկելու միջոցով, 4) տվյալ ժամանակաշրջանում կատարված ծախսերի վերագրումը երկարաժամկետ ակտիվներին, 5) ընկերության կապիտալի ընդհանուր գինն է, որը հաշվարկվում է բաժնետոմսերի ընդհանուր քանակը բազմապատկելով դրանց շուկայական գնով, 6) պահուստների վերածումն է բաժնետիրական կապիտալի:

**կապիտալ անվանական, nominal capital, номинальный капитал** - կապիտալի այն ընդհանուր գումարը, որի չափով ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսեր թողարկելու:

**կապիտալի արտահանում, capital export, экспорт, вывоз капитала -** երկրի քաղաքացիների եւ ֆիրմաների կողմից այլ երկրներում իրական ակտիվների եւ արժեթղթերի ձեռք բերման համար կատարված ծախսերի գումարը:

**կապիտալի արտահոսք, capital outflow, отток капитала** - արտասահմանյան փոխառուներին տրված վարկերի (զուտ մեծություն) եւ արտասահմանից ստացված ֆինանսական միջոցների դրամական տարբերությունը:

**կապիտալի զուտ արտահոսք, net capital outflow, чистый отток капитала** - մի երկրի մարդկանց եւ ֆիրմաների կողմից մեկ այլ երկրում իրականացրած իրական ֆինանսական ներդրումների, փոխառությունների եւ տվյալ երկրում այլ երկրների առանձին մարդկանց եւ ֆիրմաների կատարած ներդրումների եւ փոխառությունների միջեւ տարբերությունը: Կապիտալի արտահոսքից հանած կապիտալի ներհոսքը:

**կապիտալ բաժնետիրական, joint stock, cguity, share capital, акционерный капитал** - բաժնետիրական ընկերության կողմից թողարկման համար հավանության արժանացած կամ, փաստորեն թողարկված բաժնետոմսերի արժեքների ընդհանուր գումարը: Հայտնի են բաժնետիրական կապիտալի ստեղծման երկու եղանակներ՝ բաժնետոմսերի հրապարակային բաժանորդագրում (բաց տիպի ընկերություն) եւ առանց հանրությանը

դիմելու, հիմնադիրների միջեւ բաժնետոմսերի բաշխում (փակ տիպի ընկերություն): Զարգացած երկրներում առավելապես հանդիպում են երկրորդ կարգի ընկերությունները: Այս տեսակետից բնութագրական է 1965թ. ԳՖՅ-ում ընդունված օրենքը, որը նախատեսում է միայն բաժնետիրական կապիտալի երկրորդ եղանակով ստեղծումը: Բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի անվանական գների գումարի հարաբերությունը կանոնադիր կապիտալի մեծությանը, որոշում է յուրաքանչյուր բաժնետիրոջ բաժինը բաժնետիրական ընկերության մեջ:

**կապիտալ երաշխիքային, guarantee capital, гаранти́йный капитал** - բաժնետիրական, խնայողական բանկերի, ապահովագրական ընկերությունների սեփական կապիտալը: Սովորաբար գտնվում է իրացվելի ձեւերում եւ որոշակի տոկոս է կազմում նրանց պարտավորությունների գումարի նկատմամբ: Ստացվում է բաժնետերերի վճարներից եւ այնուհետեւ լրացվում է շահույթի մասհանումներից:

**կապիտալի հոսքեր, capital flows, потоки капитала** - կապիտալի արտահոսքը երկրից արտահայտվում է կապիտալի հաշվի բացասական մնացորդով եւ իրենից ներկայացնում է այդ երկրի կողմից արտասահմանյան ակտիվների գնման գերազանցում արտասահմանցիների կողմից հայրենական ակտիվների գնման նկատմամբ: Երկիրն ունենում է կապիտալի ներհոսք (կապիտալի հաշվին դրական հաշվեկշիռ) այն դեպքում, երբ արտասահմանցիների կողմից հայրենական ակտիվների գնումը իր չափերով գերազանցում է հայրենական գործակալների կողմից արտասահմանյան ակտիվների գնման ծավալին:

**կապիտալ ներդրումներ, capital investment, капитальные вложения** - միջոցներ, որոնք ծախսվում են հիմնական արտադրական եւ ոչ արտադրական ֆոնդերի ավելացման եւ ապրանքանյութական պաշարների կուտակման համար:

**կապիտալ շրջանառու, circulating capital, working capital, оборотный капитал -** ընթացիկ ակտիվների գերազանցումը կարճաժամկետ պարտավորություններին, որն ընկերություններին հնարավորություն է տալիս ֆինանսավորել իրենց մշտական գործառնությունները, ընկերության այն ֆոնդերը, որոնք կարող են արագորեն ձեւափոխվել փողի: Շրջանառու կապիտալը ձեւավորվում է դրամական միջոցներից, հեշտորեն իրացվող արժեթղթերից, դեբիտորական պարտքերից, նութական-ար-

տադրական պաշարներից, պատրաստի արտադրանքից, անավարտ արտադրությունից, նյութերից, կոմպլեքսավորվող շինվածքներից եւ գալիք ժամանակաշրջանի ծախսերից: Շրջանառու կապիտալի տարածման հիմքում ընկած է իրացվելիության չափանիշը՝ ձեռնարկության միջոցները կանխիկ փողի վերածելու ունակություն, որ ընկերության գործունեության կարեւոր ցուցանիշ է եւ որով գնահատվում է նրա ֆինանսական վիճակը:

**կապիտալիզմ, capitalism, капитализм** - տնտեսական համակարգ, որտեղ սեփականության մեծ մասը մասնավոր է: Անհատ սեփականատերն ազատ է միջոցներ տնօրինելու ըստ իր հայեցողության, մասնավորապես՝ դրանք օգտագործելու շահույթ ստանալու նպատակով: Այսպիսի տնտեսության մեջ շուկան միջոցների եւ եկամուտների ստեղծման հիմնական շարժիչն է:

**կապիտալիստական տնտեսություն, capitalist economy, капиталистическая экономика** - տնտեսություն, որում արտադրության միջոցները (կապիտալը եւ հողը) պատկանում են մասնավոր անձանց, իսկ ռեսուրսները բաշխվում են շուկայի միջոցով: Շուկայական կապիտալիզմի պայմաններում պետության դերը ռեսուրսների բաշխման գործընթացում հանգում է հասարակական բարիքների արտադրության կարգավորմանը (հիմնականում սակագների կարգավորման եւ լիցենզիաների միջոցով): Պլանային կապիտալիզմի պայմաններում պետությունը կարեւոր դեր է խաղում ռեսուրսների բաշխման գործընթացում, չնայած, կապիտալը հանդիսանում է մասնավոր սեփականություն:

**կառավարության պարտք, government debt, правительственный долг** - կառավարության ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումար:

**կաշառակերություն, corruption, коррупция** - օրինախախտում, որը կապված է պաշտոնատար անձի վրա անօրինական ազդեցություն գործելու հետ: Կաշառքը փողով, ապրանքով կամ այլ կերպ անօրինական վճարումը պաշտոնատար անձին՝ որոշակի գործողություններ կատարելու համար:

**Կենտրոնական բանկի պարտք, Central bank debt, долг Центрального банка** - ոչ ռեզիդենտների, օտարերկրյա պետությունների առջև կենտրոնական բանկի ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումար:

**կլաստեր** -կլաստերն իրենից ներկայացնում է աշխարհագրորեն տեղայնացված փոխկապ-

ված ընկերությունների, մասնագիտացված ծառայությունների, կոմպլեկտավորող մասերի, սարքավորման մատակարարների, ենթակառուցվածքի ձեռնարկությունների, գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի եւ այլ կազմակերպությունների խումբ, որոնք փոխլրացնում են մեկը մյուսին եւ ուժեղացնում առանձին ընկերությունների եւ ամբողջությամբ վերցրած կլաստերի մրցակցային առավելությունները:

**կոմիսիոն վճար, commission charges, комиссионные** - պայմանագրով վճարվող կոմիսիոն վարձատրություն, որը սովորաբար արտահայտվում է պայմանավորված տոկոսի ձեւով՝ կատարված գործարքի գումարից: Օրինակ, բրոկերային ծառայությունները նախկինում վճարվում էին բորսային տրամադրած պաշտոնական դրույքով: Ներկայումս հաճախորդը եւ բրոկերն են պայմանավորվում կոմիսիոն վճարի չափերի մասին: Հաստատագրված կոմիսիոն վճարները հանվեցին ԱՄՆ-ում՝ 1975թ-ին, Կանադայում՝ 1983թ-ին, Մեծ Բրիտանիայում՝ 1986թ-ին:

**կոմիտենտ, consignor, комитент** - իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը մեկ այլ անձի (կոմիսիոներ) հանձնարարություն է տալիս պայմանագիր կնքելու կոմիսիոների անունից, բայց՝ կոմիտենտի հաշվին:

**կոոպերատիվներ, cooperatives, кооперативы** - կոոպերատիվ է համարվում քաղաքացիների եւ իրավաբանական անձանց անդամություն վրա հիմնված եւ իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական եւ այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը:

**կոռուպցիա, corruption, коррупция** - կաշառակերություն, անձի կողմից իր պաշտոնական իրավունքների չարաշահումը անձնական հարստացման նպատակով: Կոռուպցիան, որպես կանոն, ուղեկցվում է օրենքների խախտումով եւ հետապնդվում է քրեական օրենսդրությամբ:

**կրեդիտ, credit, кредит -** Հաշվապահական հաշիվների գծով կազմված աղյուսակի աջ կողմի անվանումն է, որը հանդես է գալիս երկու իմաստով: Ակտիվային հաշիվներում կրեդիտը նշանակում է հաշվառվող տնտեսական միջոցների (ակտիվի) գումարների ելքագրում կամ նվազեցում, իսկ պասիվային հաշիվների դեպքում՝ ակտիվի կազմավորման աղբյուրների (պասիվի) գումարների մուտքագրում կամ ավելացում:

**կրեդիտորական պարտքեր, credit indebtedness, bill payable, кредиторская**

**задолженность -** մատակարարներից ձեռք բերված ապրանքների կամ ստացված ծառայությունների դիմաց վճարելու պարտավորություն: Հաշվապահական հաշվեկշռում ներկայացվում է որպես ընթացիկ պարտավորություն:

**կրկնակի հարկում, double taxation, двойное налогообложение** -շահույթի հարկումը երկու անգամ՝ առաջացման աղբյուրի մակարդակում (ընկերությունից) եւ շահույթը ստացողի մակարդակում (բաժնետոմսերի շահաբաժիններից):

**կոնոսամենտ bill of lading, коносамент -** կոնոսամենտ է համարվում ապրանքը տնօրինելու մասին փաստաթուղթը, որը հավաստում է դրա տիրոջ իրավունքը՝ տնօրինելու կոնոսամենտում նշված բեռը եւ փոխադրելուց հետո ստանալու այն: Կոնոսամենտը կարող է լինել ըստ ներկայացնողի՝ օրդերային կամ անվանական:

**կոմիսիայի պայմանագիր, commission contract, комиссионный договор** - կոմիսիայի պայմանագրով մի կողմը՝ կոմիսիոները պարտավորվում է մյուս կողմի՝ կոմիտենտի հանձնարարությամբ, վարձատրությամբ, իր անունից, սակայն կոմիտենտի հաշվին, կնքել մեկ կամ մի քանի գործարք:

**կոնցեսիոն վճար**, **concession payment, концессионный платеж** ուսումնասիրության կամ հանքարդյունահանման հատուկ լիցենզառուն, ինչպես նաեւ ուսումնասիրության կամ հանքարդյունահանման լիցենզառուն պարտավոր են տարեկան վճարել պետական բյուջե կոնցեսիոն միանվագ վճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով եւ կարգով, ընդ որում, դա չպետք է գերազանցի՝

ա) ուսումնասիրության լիցենզիայի կամ ուսումնասիրության հատուկ լիցենզիայի դեպքում ընդերքի հատկացված տեղամասի յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի համար՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկը.

բ) հանքարդյունահանման լիցենզիայի կամ հանքարդյունահանման հատուկ լիցենզիայի դեպքում ընդերքի հատկացված տեղամասի յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի համար՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը:

**կուտակային բաժնետոմսեր, cumulative shares/stocks, куму-лятивные акции -** սովորական բաժնետոմսեր, որոնք շահաբաժնի փոխարեն տրվում են ընկերության սովորական բաժնետերերին: Կուտակային բաժնետոմսերը բաժնետիրոջ տարեկան եկամուտը վերածում են նրա իսկ սեփական միջոցների՝

միաժամանակ ազատելով եկամտահարկից:

**կենսաթոշակ** - տես՝ թոշակ

## Հ

**հակաինֆլյացիա, disinflation, дезинфляция -** գների աճի նախկին տեմպերի անկում:

**հակամրցակցային համաձայնություններ, anticompetitive agreements, антиконкурентные соглашения -** հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսավարող սուբյեկտների միջեւ կնքված այն պայմանագրերը, համաձայնագրերը կամ նրանց համաձայնեցված գործողությունները, որոնք կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը: Դրանք են

ա) խտրական գների սահմանումը.

բ) ապրանքային շուկայում գների արհեստական բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը.

գ) շուկայի բաժանումը տարածքային սկզբունքով, ըստ իրացման կամ ձեռքբերման ծավալի, ապրանքի տեսականու, սպառողների կամ մատակարարների խմբերի եւ այլն.

դ) այլ տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելը (սահմանափակելը) կամ շուկայից նրանց դուրս մղելը:

**հակամրցակցային պրակտիկա, anticompetition, антиконкурентная политика -** մենաշնորհների կողմից մրցակցային պայքարի նորմերի խախտում՝ շուկայում տիրապետող դիրք գրավելու նպատակով, որը թույլ է տալիս սահմանափակել մյուս արտադրողների մուտքը շուկա, թելադրել գները եւ առեւտրային գործունեության մյուս պայմանները:

**համադրելի արժեք, comparable worth сопоставимая стоимость, сопоставимая ценность** - աշխատանքի վարձատրության չափի որոշման տեսակետ, որի համաձայն, այն պետք է հիմնված լինի կատարվող աշխատանքի արժեքի կամ ծանրության աստիճանի, այլ ոչ թե աշխատուժի շուկայի մեծություններին վրա:

**համախառն ավելացված արժեք, gross value added, валовая добавленная стоимость** - հաշվարկվում է ճյուղային մակարդակով՝ որպես ապրանքների եւ ծառայությունների թողարկման եւ միջանկյալ սպառման տարբերություն: «Համախառն» արտահայտությունը ցույց է տալիս, որ ցուցանիշն իր մեջ ներառում է հիմնական կապիտալի արժեքի սպառումն արտադրության գործընթացում:

**համախառն արտադրանք, gross product, валовая продукция** - ձեռնարկության արտադրանքի ծավալն արժեքային արտահայտությամբ, որն իր մեջ ընդգրկում է ոչ միայն պատրաստի արտադրանքը, այլեւ անավարտ արտադրության մնացորդների տարբերությունը, իրացված կիսաֆաբրիկատները, դրսի պատվերով կատարած աշխատանքների արժեքը, սեփական ֆոնդերի կապիտալ վերանորոգման արժեքը, եթե այն կատարվում է սեփական ուժերով եւ միջոցներով: Սոցիալիստական տնտեսությունում այն ձեռնարկության գործունեության գնահատման հիմնական ցուցանիշն էր համարվում եւ հաշվարկվում էր որեւէ տարվա համադրելի գներով:

**համախառն ազգային արդյունք (ՀԱԱ), gross national product (GNP), валовой национальный продукт (ВНП)** - երկրի բոլոր քաղաքացիների ամբողջական եկամուտը, այդ թվում՝ արտասահմանում նրանց պատկանող արտադրության գործոններից ստացվող եկամուտը: Տվյալ երկրի գործակալների ամբողջական ծախսերը ապրանքների արտադրության եւ ծառայությունների վրա:

**համախառն արտաքին պարտք՝ Հայաստանի Հանրապետության, RA gross foreign debt, валовый внешний долг РА** - Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի անունից, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների կողմից ոչ ռեզիդենտների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հանդեպ ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումար:

**համախառն շահույթ, gross profit, валовая прибыль** - թողարկված արտադրանքի, ապրանքների, կատարված աշխատանքների եւ մատուցված ծառայությունների իրացումից զուտ հասույթի (առանց անուղղակի հարկերի՝ ավելացված արժեքի հարկ եւ ակցիզային հարկ), եւ դրանց հետ կապված ծախսերի միջեւ եղած տարբերությունն է: Երբ զուտ հասույթի գումարի չափը գերազանցում է ծախսերին, արդյունքում ստացվում է համախառն շահույթ, իսկ հակառակ դեպքում՝ վնաս: Վերջինիս գումարը «Ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվությունում ցույց է տրվում փակագծերի մեջ:

**համախառն եկամուտ, gross income, gross revenue, валовой доход** - 1) ֆիզիկական կամ իրավաբանական անձի

եկամուտն է (մուտքերը) նախքան դրա ստացման հետ կապված ծախսերը հանելը, 2) ապրանքների եւ ծառայությունների իրացումից ստացված դրամական հասույթի եւ դրանց արտադրության վրա կատարված նյութական ծախսերի տարբերությունն է: Այն հավասար է աշխատավարձի եւ զուտ եկամտի (շահույթի) գումարին, 3) հարկատուի համախառն եկամուտն է բոլոր աղբյուրներից՝ մինչեւ հարկերի վճարումը: Ներառում է ոչ միայն ընթացիկ, այլեւ անցած տարիների եկամտի վրա հիմնված աղբյուրներից հարկման տարում ստացված եկամուտը: Եկամուտների շատ տեսակների գծով հարկերը կարող են պահվել աղբյուրի մոտ՝ հարկատուին թողնելով զուտ գումարը, 4) բոլոր աղբյուրներից ստացված եկամուտների ընդհանուր գումարն է, 5) արժեթղթերում կամ անշարժ գույքում կատարված ներդրումների գծով եկամուտն է, որը հաշվարկված է լրիվ տեսքով՝ մինչեւ հարկերի վճարումը եւ հատկացումների կատարումը: Համաձայն ՀՀ հարկային օրենսդրության, համախառն եկամուտը հարկային կամ հաշվետու տարում հարկատուի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

**համախառն ներքին արդյունք (ՀՆԱ), gross domestic product /GDP, валовой внутренний продукт/ ВВП** - Երկրի տարածքում ստացված ամբողջական եկամուտը, այդ թվում՝ արտասահմանցիների սեփականություն հանդիսացող արտադրության գործոններից: Երկրի տարածքում ապրանքների արտադրության եւ ծառայությունների գումարային ծախսերը:

Մակրոտնտեսական ցուցանիշ է, որը բնութագրում է երկրի տնտեսության բոլոր ճյուղերում արտադրված ապրանքների եւ ծառայությունների արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման եւ զուտ արտահանման համար: ՀՆԱ-ն հաշվարկվում է երեք եղանակով՝ արտադրական, եկամուտների ձեւավորման եւ եկամուտների օգտագործման (ծախսային): Արտադրական եղանակով ՀՆԱ-ն ստացվում է որպես ապրանքների եւ ծառայությունների ողջ թողարկման եւ միջանկյալ սպառման տարբերություն, կամ որպես տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքի հանրագումար: Ընդ որում ըստ ճյուղերի ավելացված արժեքի ծավալները հաշվարկվում են հիմնական գներով, որոնք չեն ներառում ապրանքների եւ ներմուծման հարկերը, սակայն ներառում են ապրանքների եւ ներմուծման

լրացուցիչ հատկացումները: Շուկայական գներով ՀՆԱ-ի հաշվարկման համար անհրաժեշտ է ավելացնել ապրանքների եւ ներմուծման զուտ (առանց լրացուցիչ հատկացումների) հարկերը: Ըստ եկամուտների ձեւավորման աղբյուրների համախառն ներքին արդյունքն արտացոլում է անմիջապես արտադրական գործընթացին մասնակցող միավորների, ինչպես նաեւ պետական հիմնարկներն ու տնային տնտեսությունները սպասարկող ոչ առեւտրային կազմակերպությունների կողմից ստացած սկզբնական եկամուտները: Եկամուտների օգտագործման եղանակով (ծախսային) հաշվարկված համախառն ներքին արդյունքն իրենից ներկայացնում է ապրանքների եւ ծառայությունների վերջնական սպառման ծախսերի, համախառն կուտակման եւ զուտ արտահանման հանրագումար:

**ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատոր, GDP index-deflator, индекс-дефлятор ВВП** - ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի հարաբերությունն է նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալի նկատմամբ:

**համայնքների բյուջեներ, budgets of communities, бюджеты общин** - համայնքների բյուջեների կառուցվածքը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների եւ դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, բաժանվում է հետեւյալ բաղկացուցիչ մասերի՝ համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե), համայնքի բյուջեի հիմնադրամային մաս (հիմնադրամային բյուջե): Համայնքի բյուջեի բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրը պետք է հաշվեկշռված լինի: Համայնքների բյուջեների վարչական մասը (վարչական բյուջեն) ներառում է համայնքների բյուջեներին օրենքով եւ իրավական այլ ակտերով ամրագրվող եկամուտները, ոչ հարկային եկամուտները, պաշտոնական տրանսֆերտները:

**համայնքների բյուջեների ձեւավորման սկզբունքները**, **principles of communities budget formation, принципы формирования бюджетов общин** - հիմնական սկզբունքներն են՝ համայնքի զարգացման եռամյա ծրագրի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը, պահուստային հիմնադրամի ստեղծումը՝ որպես տվյալ տարվա համայնքի բյուջեում չկանխատեսված, ինչպես նաեւ վարկերի եւ այլ փոխառու միջոցների օգտա-

գործման վճարների (տոկոսների) գծով ծախսերի աղբյուրի եւ կապիտալ ծախսերի ֆինանսավորման հիմնական երաշխիք, համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը, ըստ որում յուրաքանչյուր բյուջետային տարվա համար համայնքի բյուջեով նախատեսված ծախսերի հանրագումարը չպետք է գերազանցի տվյալ տարվա բյուջեով նախատեսված եկամուտների (մուտքերի) հանրագումարին, խնայողականությունը, երբ կատարված ծախսին համապատասխանում է դրան համարժեք նյութական եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերումը, արդյունավետությունը, երբ ապահովվում է կատարված ծախսի եւ համայնքի համար դրա օգտակարության միջեւ պատշաճ հարաբերակցությունը, հավաստիությունը եւ հստակությունը, որը հնարավորություն է ընձեռնում ապահովել բյուջեի կատարման եւ բյուջետային գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը՝ բյուջեի հոդվածների հիմքում դրվող հստակ հաշվարկների միջոցով, հրապարակայնությունը, որն ապահովում է համայնքի բյուջեի ձեւավորման եւ կատարման վերաբերյալ համայնքի անդամների իրազեկությունը:

**Համաշխարհային բանկ, WB/ world bank, ВБ/всемирный банк** - այս անվանումով հայտնի են ՀԲ-ի խմբի մեջ մտնող կառույցները, այդ թվում՝ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը, Զարգացման միջազգային ընկերակցությունը եւ Միջազգային ֆինանսական կորպորացիան: Այս երեք միջազգային ֆինանսական ինստիտուտներից յուրաքանչյուրն ունի Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ինքնուրույն մասնագիտացված հիմնարկության կարգավիճակ: Համաշխարհային բանկը (ՀԲ) ստեղծվել է Բրետոն Վուդսի համաժողովում (1944թ.) եւ սկսել է գործել 1946թ-ից: Բանկի անդամները պարտադիր պետք է լինեն Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) անդամներ: ՀԲ-ի բարձրագույն մարմինը կառավարիչների խորհուրդն է, որում յուրաքանչյուր երկիր ունի իր ներկայացուցիչը: Ձայները որոշվում են ըստ ԱՄՀ-ում առանձին երկրների քվոտայի: Օպերատիվ աշխատանքն իրականացնում է 20 տնօրեններից բաղկացած տնօրինությունը, ըստ որում ամենամեծ քվոտայով երկրներից յուրքանչյուրը ներկայացված է մեկական տնօրենով, իսկ մնացած 15 տնօրեններն ընտրվում են մյուս երկրների կողմից 2 տարի ժամկետով: ՀԲ-ն ստեղծվեց երկարաժամկետ վարկավորման եւ մասնավոր փոխառությունների երաշխա-

վորման ճանապարհով երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Արեւմտյան Եվրոպայի տնտեսության վերականգնմանը աջակցելու նպատակով: Հետագայում բանկն անցավ գլխավորապես շուկայական պայմաններով վարկային գործառնություններին: Վարկերը տրամադրվում են միայն կառավարություններին եւ կենտրոնական բանկերին՝ երկրի տնտեսության զարգացման համար նախատեսված ծրագրերի ֆինանսավորման համար՝ պետության երաշխավորության դեպքում: Դրանց օգտագործումը խիստ կենտրոնացված է եւ կատարվում է փուլերով՝ նախագծի իրացմանը զուգընթաց: ՀԲ-ի վարկերի տոկոսադրույքները հաշվարկվում են ելնելով կապիտալների միջազգային շուկաների տոկոսադրույքներից: ՀԲ-ի ռեսուրսները գոյանում են անդամ երկրների մուծումներից, ինչպես նաեւ կապիտալների միջազգային շուկաներում պարտատոմսային փոխառությունների (10-30 տարի ժամկետով) թողարկման միջոցով ստացված փոխառու միջոցներից: ՀԲ-ի փոխառությունները համարվում են ամենաապահովվածներից մեկը:

**համաշխարհային գներ, world prices, мировые цены -** կիրառվում են միջազգային առեւտրում: Համաշխարհային են համարվում այն գները, որոնց միջոցով իրականացվում են արտահանման - ներմուծման առավել խոշոր գործարքները: Դրանք միշտ հաշվարկվում են ազատ փոխարկելի արժույթով եւ արտացոլում են տվյալ ապրանքի համար մի շարք տարիների գների շարժը:

**համատեղ գործունեություն, joint activity, совместная деятельность -** այն գործունեությունն է երբ երկու կամ ավելի անձինք՝ մասնակիցները, պարտավորվում են միացնել իրենց ավանդները եւ առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար: Մասնակիցների համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է ընդհանուր գործում նրանց ավանդի արժեքին համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ համատեղ գործունեության պայմանագրով:

**համատեղ ձեռնարկություն, joint venture, совместное предприятие** - օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ պայմանագրային պայմանավորվածություն, ըստ որի երկու կամ ավելի կողմեր տնտեսական գործունեություն են ձեռնարկում , որը ենթակա է համատեղ վերահսկման:

**համատեղ ձեռնարկատիրություն, joint entrepreneurship,**

**совместное предпринимательство -** երկու կամ մի քանի երկրների, կամ նրանց տնտեսավարող սուբյեկտների արտադրատնտեսական համագործակցություն, որի նպատակը կոոպերացիան է՝ արտադրության, շրջանառության, գիտատեխնիկական, ներդրումային եւ ծառայողական ոլորտներում: Համատեղ ձեռնարկատիրություն իրագործվում է այնպիսի ձեւերով, ինչպիսիք են՝ տեխնոլոգիաների եւ ծառայությունների փոխանակման, արտադրահիրացման գործունեությամբ կոնսորցիումները եւ բաժնետիրական ընկերությունները, միջազգային տնտեսական կազմակերպությունները, միջկառավարական եւ միջպետական տնտեսական կազմակերպությունները, միջազգային միավորումները եւ ընկերությունները, համատեղ (խառը) ձեռնարկությունները, ազատ տնտեսական գոտիները:

**համաձայնագիր գների, price agreement, соглашение о ценах** - համաձայնագիր տնտեսական գործունեության սուբյեկտների միջեւ՝ գների մասին գաղտնի պայմաններով սահմանափակ գործարար պրակտիկայի ձեւ: Տարբերում են՝ գների հորիզոնական համաձայնագրեր, երբ հնարավոր մրցակիցները պայմանավորվում են շուկայում բարձր գների պահպանման մասին եւ ուղղահայաց համաձայնագրեր, երբ արտադրանքի մատակարարը սահմանում է նվազագույն գին, որով վաճառողը կարող է այն մատակարարել գնորդներին: Այդպիսի համաձայանգրերը կարող են սահմանվել ինչպես ուղղակի ձեւով (միասնական գների համաձայնություն, գների ձեղչերի փոփոխության համաձայնություն եւ այլն), այնպես էլ անուղղակի ձեւով (պայմանագիր միանման գնացուցակի կիրառման մասին, յուրաքանչյուր գործարքից մուծումների հատկացման մասին եւ այլն): Այդպիսի համաձայնագրերը հիմնականում տարածված են նավթի եւ դեղագործական համաշխարհային արդյունաբերության մեջ, որտեղ դրանք հաճախ արտացոլում են ոչ միայն տնտեսական, այլ նաեւ քաղաքական շահեր, ինչպես, օրինակ՝ նավթ արդյունահանող երկրների կազմակերպության շրջանակներում գների համաձայնեցման դեպքում:

**համաձայնություն գաղտնի, collusion, сговор, тáйное соглашение -** իրավիճակ, երբ ֆիրմաները գործում են համաձայնեցված՝ նրանցից յուրաքանչյուրի արտադրած արտադրանքի ծավալը սահմանելու կամ այն աշխարհագրական շրջանը որոշելու նպատակով, որում յուրաքանչյուր ֆիրմա կարող է վաճառել իր արտադրանքը:

**համաշխարհային տնտեսություն, world economy, мировая экономика** - ազգային տնտեսությունների միջազգային տնտեսական կապերի համախմբում: Այն կազմավորվել է 20-րդ դարի սկզբին: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տարբերում էին նրա երկու ստորաբաժանում՝ համաշխարհային կապիտալիստական տնտեսություն եւ համաշխարհային սոցիալիստական տնտեսություն: Սոցիալիզմի համաշխարհային համակարգի կազմալուծումը, միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացումն ու ընդլայնումը, աշխատանքի միջազգային բաժանման հետագա խորացումը նորից նկատելի են դարձնում միասնական համաշխարհային տնտեսության կազմավորման եւ հետագա զարգացման միտումը:

**հայտարարագիր, declaration, декларация -** պաշտոնական հայտարարություն պետության, կառավարության, կուսակցությունների, կազմակերպությունների կամ մարդկանց անունից, հիմնական սկզբունքների հանդիսավոր հռչակում, ինչպես նաեւ փաստաթուղթ, ուր դրանք շարադրված են (օրինակ, Մարդու իրավունքների համընդհանուր հայտարարագիր, ՄԱԿ, 10 դեկտեմբերի 1948թ.): 2) Որոշակի տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ (օրինակ, հարկային, մաքսային, փոստային հայտարարագրեր):

**հայտարարագիր մաքսային, customs declaration, таможенная декларация** - երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան ձեւակերպված փաստաթուղթ, որն անհրաժեշտ տեղեկություն է պարունակում սահմանով անցնող բեռների մասին՝ ներառնելով արտահանվող եւ ներմուծվող ապրանքները, ուղեբեռները, ձեռքի ճամպրուկը, արժեքներն ու արժույթները: Մաքսային հայտարարագիրը հիմք է հանդիսանում արտակրման, ներկրման կամ տրանզիտ փոխադրումների ժամանակ պետական սահմանով բեռների անցումը թույլատրելու համար:

**հայտարարագիր հարկային, tax return, налоговая декларация** - հարկատու ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայտարարությունը եկամուտների չափերի, գույքի արժեքի մասին եւ այլն:

**հաշվանցվող գումար, transferred sum, перечисляемая сумма** - փաստացի վճարման, այլ հարկատեսակից տվյալ հարկատեսակի դիմաց հաշվանցման կամ հարկատեսակի հաշվարկի ներկայացման արդյունքում, ինչպես նաև դատարանի վճռով պետական բյուջեի հանդեպ տվյալ հարկատեսակի պարտավորու-

թյունից պակասեցվող (դեբետագրվող) գումար.

**հաշվապահական հաշվառում, bookkeeping, бухгалтерский учет** - Տնտեսական փաստաթղթերի հիման վրա ձեռնարկության տնտեսական գործունեության ամբողջական, անընդմեջ եւ փոխկապակցված արտացոլում՝ արժեքային արտահայտությամբ: Հաշվապահական հաշվառման առարկա են հանդիսանում ձեռնարկության՝ արժեքային ձեւով արտահայտված տնտեսական միջոցները, դրանց ձեւավորման աղբյուրները եւ տնտեսական գործընթացները: Այն կատարում է տնտեսական գործունեության վերլուծություն, կառավարման եւ վերահսկողության գործառույթներ: Հաշվապահական հաշվառման տարրեր են. փաստաթղթերը՝ տնտեսական գործառնությունների ավարտման մասին գրավոր վկայությունը, գույքագրումը՝ նյութական արժեքների առկայության ստուգումը (հիմնական եւ շրջանառու միջոցների), որը հնարավորություն է տալիս ի հայտ բերել դրանց վիճակը եւ համապատասխանությունը հաշվապահական հաշվառման տվյալներին, հաշվապահական հաշվառման հաշիվները, կրկնակի գրանցումը, հաշվեկշիռը: Այս տարրերից յուրաքանչյուրի օգտագործումը կարգավորվում է գործող օրենսդրությամբ:

**հաշվարկային հաշիվ, account, расчетный счет** - բանկի հիմնարկներում ձեռնարկության կամ կազմակերպության բացած հաշիվ՝ շահագործման հետ կապված փողի գործառնությունների իրականացման համար: Բանկում հաշվարկային հաշիվ բացելու համար պետք է ներկայացվեն հետեւյալ փաստաթղթերը՝ ձեռնարկության կանոնադրությունը եւ հիմնադիր պայմանագիրը, ձեռնարկության գրանցման մասին համապատասխան մարմնի որոշման պատճենը եւ գրանցման վկայագիրը, տեղեկանք հարկային տեսչությունից եւ համապատասխան կենսաթոշակային ֆոնդից՝ այդ մարմիններում ձեռնարկության գրանցման մասին: Բոլոր պատճենները պետք է գրանցվեն նոտարիատի կամ ձեռնարկությունը գրանցած մարմնի կողմից: Որպես ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձը բանկ է ներկայացնում իր որոշումը՝ անհատական մասնավոր ձեռնարկություն ստեղծելու մասին եւ այն գրանցող մարմնի որոշումը: Հաշվարկային հաշիվ բացելու ժամանակ լրացվում են հատուկ քարտեր՝ ղեկավարի (ղեկավարների) եւ ձեռնարկության գլխավոր հաշվապահի ստորագրությունների նմուշներով, որոնք հավաստիացվում են

նոտարիատի կողմից (բացառություն են կազմում միայն պետական ձեռնարկությունները, որոնց ղեկավարների ստորագրությունները հավաստիացնում է վերադաս կազմակերպությունը): Ձեռնարկության համար կարող է բացվել միայն մեկ հաշվարկային հաշիվ:

**հաշվապահական հաշվեկշիռ, accounting balance, бухгалтерский баланс** - հաշվեկշռային հաշվետվություն, որն ըստ կառուցվածքի երկկողմանի աղյուսակ է՝ արժեքային արտահայտությամբ, որի ձախ մասը (ակտիվ) որեւիցե ժամանակաշրջանի պահի դրությամբ արտահայտում է տնտեսավարող սուբյեկտի տնտեսական միջոցների կազմն ու տեղաբաշխումը, իսկ աջ մասը (պասիվ)՝ այդ տնտեսական միջոցների կազմավորման աղբյուրները: Հաշվեկշռի ակտիվի եւ պասիվի հանրագումարներն իրար հավասար են լինելու, քանի որ տվյալ տնտեսավարող սուբյեկտը պետք է իր տրամադրության տակ ունենա կազմավորման աղբյուրների գումարին համապատասխան տնտեսական միջոցներ: Հաշվեկշռի ցուցանիշները կազմվում են հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա: Ըստ հաշվապահական հաշվառման գործող ստանդարտների, հաշվեկշիռը բաղկացած է հինգ բաժիններից, ընդ որում, ըստ ակտիվի՝ ոչ ընթացիկ ակտիվների եւ ընթացիկ ակտիվների, իսկ ըստ պասիվի՝ սեփական կապիտալ, ոչ ընթացիկ պարտավորություններ եւ ընթացիկ պարտավորություններ:

**հաշվանցում, netting off, вычет, удержание** - տվյալ կամ այլ հարկատեսակի պարտավորության պակասեցում կամ հարկ վճարողի հանդեպ պարտավորության ձևակերպում (գրանցում): Ընդ որում, պարտավորության պակասեցման դեպքում վերջինս մարվում է հաշվանցվող գումարով, իսկ հարկատեսակի մասով հարկ վճարողի հանդեպ պարտավորության գումարը ձևակերպվելու դեպքում գրանցվում (արձանագրվում) է հաշվանցվող գումարի և հարկ վճարողի հարկային պարտավորության դրական տարբերության գումարը:

**հաշվանցման և (կամ) վերադարձման ներկայացված գումար, sum deductible, сумма, подлежащая вычету** - գերավճարի կամ գերավճարից տարբերվող գումարի մնացորդի հաշվից հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձի համար հարկ վճարողի դիմումով պահանջված գումար:

**հաշվեկշիռ, balance, баланс** - հաշվապահական տեղեկագիր, որում արտացոլում են ակտիվ-

ներն ու պասիվները (եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաեւ դրանց տարբերությունը` դրական կամ բացասական):

**հաշիվ ապրանքագիր (ֆակտուրա**), **invoice, счет-фактура** - ֆինանսական փաստաթուղթ է, որը վկայում է ապրանքների կամ ցուցաբերվող ծառայությունների մատակարարման մասին: Այն լրացվում եւ դուրս է գրվում մատակարարի, վաճառողի կողմից գնորդի անունով յուրաքանչյուր տեսակի ապրանքի (ապրանքախմբի), ցուցաբերվող ծառայության եւ կատարվող աշխատանքի գծով: Այդ փաստաթղթում նշվում են կողմերի անվանումներն ու հասցեները, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ճշգրիտ անվանումը, գինը, քանակը եւ այլն: Հաշիվ ֆակտուրան համարվում է հաշվարկներ եւ վճարումներ կատարելու հիմք:

**հաշվեկշիռ առեւտրային, trade balance, торговый баланс** -երկրի ապրանքային արտահանման ծավալը` հանած ապրանքային ներմուծումը:

**հաշվեկշռային արժեք (փոխանցվող գումար), book value**, **балансовая стоимость** - այն գումարը, որով ակտիվը ճանաչվում է եւ հաշվառվում հաշվեկշռում` ցանկացած կուտակված մաշվածություն հանելուց հետո:

**հետաձգված հարկային պարտավորություններ, deferred tax liabilities, отсроченные налоговые обязательства -** գալիք ժամանակահատվածում վճարման ենթակա շահութահարկի գումարները` կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների հետ:

**հաշվարկային արժեք, accounting price, расчетная цена -** այն զուտ գումարը, որով ակտիվը ցույց է տրվում հաշվեկշռում: Այսինքն ակտիվի հաշվեկշռային արժեքը ցանկացած պահին հավասար է նրա սկզբնական արժեքից հանած այդ պահի դրությամբ կուտակված մաշվածության գումարը:

**հաստատագրված վճար, fixed paymenz , иксированный платеж** - օրենքով նախատեսված չափերով եւ ժամկետներում վճարողների (ֆիզիկական եւ իրավաբանական անձինք) կողմից պետական բյուջե վճարվող առանձին հարկատեսակներին (ավելացված արժեքի հարկին, ակցիզային հարկին, շահութահարկին (եկամտահարկին) եւ պարտադիր այլ վճարներին (մաքսատուրք) փոխարինող պարտադիր եւ անհատույց վճար է:

**հասարակական կազմակերպություններ, NGO/non-governmental organizations, неправительственные организации -** ոչ առեւտրային կազմակերպություններ են: Հասարակա-

կան կազմակերպություններ են համարվում քաղաքացիների կամավոր միավորումները, որոնք օրենքով սահմանված կարգով միավորվել են իրենց շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգեւոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու համար:

**հաստատագրված բյուջե, fixed budget, фиксированный бюд-жет** - երբ բյուջեում բոլոր եկամուտներն ու ծախսերը հաստատագրված մեծություններ են:

**հասույթ, դրամամուտք, revenue, выручка** - եկամտի այն մասն է, որն առաջանում է սովորական գործունեության ընթացքում եւ արդյունք է տարբեր տեսակի վաճառքներից, գանձույթների, տոկոսների, շահութաբաժինների եւ ռոյալթիների:

**հավելավճար, bonus, бонус, премия** - աշխատողին վճարվող վարձատրություն՝ լրացուցիչ աշխատավարձ. լավ աշխատանքի դիմաց, փոխհատուցում՝վտանգավոր աշխատանքի համար, կամ շահութաբաժին տարին շահույթով փակելու կապակցությամբ:

**հավելյալ արժեք, surplus value, прибавочная стоимость** - բանվորների աշխատանքով ստեղծված արժեքի եւ նրանց ստացած աշխատավարձի տարբերությունը: Մարքսիստական տնտեսագիտության հիմնարար դրույթն է: Հավելյալ արժեքի տեսությունը Կ. Մարքսի տնտեսագիտության անկյունաքարն է:

**հարգ, standard, проба** - չափանիշ, որը ցույց է տալիս թանկարժեք մետաղների կշռային պարունակության չափը համաձուլվածքի մեկ հազար կշռային միավորի մեջ: Հարգորոշումը՝ նյութերի եւ իրերի մեջ տարբեր մեթոդներով թանկարժեք մետաղների պարունակության որոշելն է: Հարգադրոշմը այն դրոշմն է, որը հավաստում է թանկարժեք մետաղներից պատրաստված իրի մեջ թանկարժեք մետաղի պարունակության չափը մեկ հազար կշռային միավորի մեջ (հարգ):

**հարկվող եկամուտներ, հարկ եկամուտներից, income taxation, налогообложение доходов -** հարկի տեսակ, որով հարկվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի եկամուտը, որ ստացվել է նրա գործունեության հետեւանքով կամ գույքի օգտագործումից: Եկամտահարկը բնակչության ուղղակի հարկերի հիմնական տեսակն է եւ գանձվում է հարկման աճող դրույքների առաջադիմական համակարգով: Իրավաբանական անձանց համար եկամտահարկը հաշվարկվում է ամբողջական եկամտից, տոկոսներով՝ հանելով փաստաթղթերով հաստատված այն ծախսերը, որոնք գործող

օրենսդրության համաձայն ընդգրկվում են արտադրանքի ինքնարժեքի մեջ: Մի շարք երկրներում օգտագործվում է բացասական եկամտահարկ: Սա հարկման այնպիսի համակարգ է, երբ հարկվող մակարդակից ցածր եկամուտ ունեցող անձինք ստանում են դոտացիա:

**հարկային արտոնություններ (խթաններ), tax remissions, налоговые льготы -** Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց մասնակի կամ լրիվ ազատումը հարկերից: Առավել տարածված են հարկային խթանների հետեւյալ տեսակները. եկամտի չհարկվող նվազագույնը, հարկային զեղչեր, հարկվող եկամուտների գումարների որոշ ծախսերից հարկ չվերցնելը, որոշ տեսակի եկամուտների հարկումից ազատելը, եկամուտների գումարից հարկի հանումը, նախկինում վճարած հարկերի հետ վերադարձնելը, որոշ հարկերի վճարումներից լրիվ ազատումը եւ այլն:

**հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումար sum deductible, сумма, подлежащая вычету** - հաշվանցման և (կամ) վերադարձման ներկայացված գումարի այն մասը, որը, հարկային մարմնի կողմից համարվել է հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման եւ (կամ) վերադարձման ենթակա.

**հարկի չհաշվանցվող մնացորդ, nondeductible tax balance, не подлежащее вычету сальдо налога** - հարկի դեբետային մնացորդի այն մասը, որը տվյալ օրվա դրությամբ ենթակա չէ հարկ վճարողի այլ հարկային պարտավորության դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման: Հարկի չհաշվանցվող գումարի մեջ ներառվում են՝ հարկ վճարողի առաջիկա հարկային պարտավորություններից հաշվանցման ենթակա գումարը, որն առաջացել է որևէ հարկատեսակի պարտավորության կատարման (այդ թվում՝ կանխավճարի, հարկատեսակի նվազագույն գումարների վճարման) կամ մատակարարներին, մաքսային մարմիններին վճարման արդյունքում, այն գումարները, որոնց հաշվանցումը և (կամ) վերադարձը ուսումնասիրություններով կամ ստուգումներով (այդ թվում՝ նախկինում անցկացված) մերժվել է կամ համարվել է չհիմնավորված, այն գումարները, որոնց հաշվանցման և (կամ) վերադարձի ժամկետի ընթացքը սույն կարգին համապատասխան, կասեցված է:

**հարկի դեբետային մնացորդ, tax debit balance, дебетовое сальдо налога -** տվյալ օրվա

դրությամբ հարկի չհաշվանցվող մնացորդի, գերավճարի և գերավճարից տարբերվող գումարի մնացորդների հանրագումարը:

**հարկային մարմին, tax authority, налоговый орган** - «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով տրված (սահմանված) հարկային մարմին:

**հարկ վճարող, taxpayer, налогоплательщик**- օրենսդրությամբ սահմանված հարկեր և (կամ) այլ պարտադիր վճարներ վճարելու պարտավորություն կրող ֆիզիկական և իրավաբանական անձ (այդ թվում` ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ, օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկ, օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղ, ներկայացուցչություն), հիմնարկ, տեղական ինքնակառավարման մարմին:

**հարկ վճարողի հաշվառում`, taxpayer identification, идентификация налогоплательщика** - պետական գրանցում ստացած կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկ վճարողի հաշվառման համարների տրամադրում և հաշվառում:

**հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ), taxpayer identification number (TIN), индивидуальный номер налогоплательщика (ИНН)** - պետական գրանցում կամ հաշվառում ստացած կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց` հարկային մարմնում հաշվառման կանգնելիս տրամադրվող հաշվառման համար:

**հարկ վճարողների վերաբերյալ տվյալների միասնական բանկ, databank on taxpayers, база данных налогоплательщиков -** Հայաստանի Հանրապետության հարկային մարմնում հաշվառված կազմակերպությունների և ֆիզիկական անձանց (այդ թվում` անհատ ձեռնարկատերերի) վերաբերյալ տվյալների միասնական բանկ:

**հարկ, tax, налог** - պետական եւ հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր եւ անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից, (այդ թվում` ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավասբանական անձանց հիմնարկներից օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերից, ներկայացուցչություններից), հիմնարկներից եւ տեղական ինքնակառավարման մարմիններից, հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով եւ սահմանված ժամկետներում:

**հարկվող շահույթ, taxable profit, налогооблагаемая прибыль** - հարկատուի համախառն եկամտի եւ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

**հարկային բեռ, tax burden, налоговое бремя -** վճարվող հարկի այն գումարը, որը կաշկանդում է գործարարությանը եւ չի նպաստում ձեռնարկատիրության զարգացմանը՝ ձեռնարկատերերի շահագրգռվածության նվազման պատճառով:

**հարկային գաղտնիք, tax secret, налоговая таина** - հարկ վճարողի (հարկ վճարողի գործունեության) վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկություն, բացառությամբ՝

- հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,
- հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,
- հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների,
- հարկային օրենսդրության եւ հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների խախտման եւ կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների,
- հարկ վճարողի (հարկ վճարողի գործունեության) վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային (մաքսային) մարմիններին ներկայացվող տեղեկությունների:

Հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների օգտագործման, տրամադրման եւ հրապարակման դեպքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ.

**հետգնում (հակաինֆլյացիա), repurchase, обратная покупка -** գների աճի նախկին տեմպերի անկում: 2) բաժնեմիավորման ներդրողի բաժնի գնումը բաժնեմիավորման կառավարչության կողմից:

**հիմնադրամ, fund, фонд -** ոչ առեւտրային կազմակերպություններ են: Քաղաքացիների եւ (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված եւ անդամություն չունեցող կազմակերպություն, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ:

**հիմնական միջոցներ, fixed assets, основные средства** - ոչ ընթացիկ ակտիվների մի մասն են, այդ թվում՝ շենքերը, կառույցները, մեքենաներն ու սարքավորումները (բանվորական եւ ու-

ժային մեքենաներն ու սարքավորումները, չափիչ եւ կարգավորիչ փործասարքերն ու հարմարանքները, լաբորատոր սարքավորումները, հաշվողական տեխնիկան), փոխադրամիջոցները եւ հիմնական միջոցների այլ տեսակները: Հիմնական միջոցների մեջ են ներառվում նաեւ պետական եւ մասնավոր հատվածների կազմակերպությունների բոլոր հիմնական միջոցները, ինչպես նաեւ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցները: Այդ միջոցների մեջ ներառվում են բնակելի տները, բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների, ինչպես նաեւ գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների (տնտեսական շենքեր, բազմամյա տնկարկներ, բանող եւ մթերատու անասուններ, գյուղտեխնիկա) հիմնական միջոցները:

բ) այն նյութական ակտիվներ են, որոնք նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով:

**հիմնադրամի ստեղծում, foundation, основание фонда** - որպես տվյալ տարվա համայնքի բյուջեում չկանխատեսված, ինչպես նաեւ վարկերի եւ այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների (տոկոսների) գծով ծախսերի աղբյուրի եւ կապիտալ ծախսերի ֆինանսավորման հիմնական երաշխիք, համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը, ընդ որում յուրաքանչյուր բյուջետային տարվա համար համայնքի բյուջեով նախատեսված ծախսերի հանրագումարը չպետք է գերազանցի տվյալ տարվա բյուջեով նախատեսված եկամուտների (մուտքերի) հանրագումարին, խնայողականությունը, երբ կատարված ծախսին համապատասխանում է դրան համարժեք նյութական եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերումը, արդյունավետությունը, երբ ապահովվում է կատարված ծախսի եւ համայնքի համար դրա օգտակարության միջեւ պատշաճ հարաբերակցությունը, հավաստիությունը եւ հստակությունը, որը հնարավորություն է ընձեռնում ապահովել բյուջեի կատարման եւ բյուջետային գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը՝ բյուջեի հոդվածների հիմքում դրվող հստակ հաշվարկների միջոցով, հրապարակայնությունը, որն ապահովում է համայնքի բյուջեի ձեւավորման եւ կատարման վերաբերյալ համայնքի անդամների իրազեկությունը:

**հիպոթեկ, hypothec, mortgage, ипотека** - անշարժ գույքի (հիմնականում՝ հողի եւ կառույցների) գրավադրման տարատեսակ՝ փոխատվություն ստանա-

լու նպատակով: Հիպոթեկի համար բնորոշ են. գույքի թողնելը պարտապանի ձեռքում, նույն գույքի լրացուցիչ հիպոթեքային փոխատվությունների ստացման հնարավորությունը երկրորդ, երրորդ գրավականներով եւ այլն, գրավի պարտադիր գրանցումը հողային գրքերում, որոնք վարվում են պետական եւ կոմունալ հաստատություններում:

**հոլդինգ, holding, холдинг** - կորպորացիա, ընկերություն, առաջատար ձեռնարկություն է, որը կառավարում եւ հսկողություն է իրականացնում այլ ձեռնարկությունների, ընկերությունների գործունեության նկատմամբ: Տարբերվում են հոլդինգի երկու տեսակներ՝ 1) որոնք չեն զբաղվում արտադրական, առեւտրային կամ բանկային գործունեությամբ, 2) որոնք տարբեր ոլորտներում զբաղվում են ձեռնարկատիրությամբ:

**հողի հարկ, land tax, земельный налог** - տեղական հարկ (հողի վարձ), որով հարկվում են հողի սեփականատերերը եւ օգտագործողները: «Հողի հարկի մասին» օրենքը ընդունվել է 1994թ.-ին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից:

**հովանավորչություն, sponsorship, спонсорство** - պետական տնտեսական քաղաքականություն, որն ուղղված է ազգային տնտեսության զարգացման խրախուսմանը եւ արտասահմանյան մրցակցությունից նրա պաշտպանությանը: Անց է կացվում արտասահմանից ներմուծված ապրանքների նկատմամբ մաքսատուրքերի բարձր դրույքների, ինչպես նաեւ այնպիսի ոչ սակագնային սահմանափակումների միջոցով, ինչպիսիք են՝ ներմուծման քանակական եւ արժույթային սահմանափակումները, դրանց հետ կապված բարդ մաքսային արարողությունը (մաքսային մաքրում), ներմուծվող ապրանքների նկատմամբ առաջադրվող ազգային, տեխնիկական եւ սանիտարական ստանդարտներին համապատասխանելու բարձր պահանջները, կոշտ հակադեմպինգային տուրքերը եւ այլն:

**հսկիչ գնում, control purchase, контрольная закупка** - համարվում է հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժութային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրությունը: Ընդ որում,

տարբեր հարկատեսակների գծով հարկային պարտավորությունների վերահաշվարկը կատարելու նպատակով ֆինանսական տարվա մեջ յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար անհրաժեշտ է կատարել առնվազն մեկ հսկիչ գնում:

**հրաժարագին, compensation, smart-money, отступное -** կողմերի համաձայնությամբ պարտավորությունը կարող է դադարել կատարման փոխարեն հրաժարագին տրամադրելով, դրամ վճարելով գույք հանձնելով եւ այլն: Հրաժարագրի չափը, ինչպես նաեւ տրամադրելու ժամկետները եւ կարգը սահմանում են կողմերը:

**«Հոլանդական հիվանդություն -** «Հոլանդական հիվանդությունը» (տնտեսության ավանդական ճյուղերի քայքայում նոր բնական պաշարների (ավելի հաճախ՝ նավթի եւ գազի) հայտնաբերման արդյունքում)՝ նոր ճյուղերում ներդրումների աճը հանգեցնում է ազգային արժույթի փոխարժեքի աճին, ինչը նվազեցնում, կրճատում է արտահանական մրցունակությունը, արտադրությունը եւ զբաղվածությունը ավանդական ճյուղերում, հանգեցնում է նրանց լճացման կամ լրիվ անհետացման: Տերմինը կապված է 1950-ականների վերջին - 1960-ական թվականների սկզբին Հյուսիսային ծովի Հոլանդիային պատկանող հատվածում բնական գազի հանքավայրերի հայտնաբերման հետ, որին հաջորդած բնական գազի արտահանման աճը հանգեցրեց ազգային արժույթի էական թանկացման, ինչը բացասաբար ազդեց արտահանող մյուս ճյուղերի վրա:

## Ձ

**ձեռնարկատիրություն, entrepreneurship, предпринимательство -** ձեռնարկատիրական գործունեություն է համարվում ինքնուրույն, սեփական ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

**ձեռներեց, ձեռնարկատեր, entrepreneur, предприниматель** - անձ, որն իր վրա է վերցնում նոր գործ սկսելու եւ այն վարելու ռիսկը: Նախաձեռնող եւ գործարար անձ է, որը հայտնաբերում է գործունեության նոր ոլորտներ եւ փնտրում նոր ապրանքների եւ ծառայությունների արտադրության եւ վաճառքի նոր եղանակներ:

## Ճ

**ճանապարհային վճար, road fee, дорожная плата -** ընդհա-

նուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների, շինարարության, նորոգման եւ պահպանման աշխատանքները կազմակերպելու եւ իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով օրենքով սահմանված կարգով եւ չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է: Ճանապարհային վճար վճարողներ են համարվում տրանսպորտային միջոցների սեփականատերերը, իրենց պատկանող տրանսպորտային միջոցներով կամ օրենքով սահմանված գործունեությամբ զբաղվելու նպատակով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք: Ճանապարհային վճարի տեսակներն են՝

ա) այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը.

բ) ծանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթեւեկելու համար վճարը.

գ) մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթեւեկելու համար վճարը.

դ) ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար վճարը:

## Մ

**մասնավորեցում, privatization, приватизация** - պետական գույքի նկատմամբ սեփականության կամ պետությանը պատկանող այլ գույքային իրավունքների փոխանցումն է մասնավորեցման սուբյեկտներին: Առավել լայնամասշտաբ մասնավորեցման գործընթացներ են ընթանում հետհամայնավարական երկրներում, որտեղ այս միջոցառումը դիտվում է որպես պետականից մասնավոր սեփականության անցման հիմնական ուղիներից մեկը: Հայաստանում ընդունված մասնավորեցման ձեւերն են. բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությունը, մրցույթը, աճուրդը, ուղղակի վաճառքը, նոր բաժնետոմսերի տեղաբաշխումը, պարտատոմսերի թողարկումը՝ բաժնետոմսերի փոխարկման իրավունքով, բաժնետոմսերի վաճառքը ֆոնդային բորսաներում, պետական գույքի, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց եւ համայնքների գույքի նկատմամբ պետությանը պատկանող օգտագործման իրավունքի փոխանցումը:

**մաքսային ձեւակերպում, customs processing, таможенное оформление** - համարվում է Մաքսային օրենսգրքին եւ այլ իրավական ակտերին համապա-

տասխան ապրանքների եւ տրանսպորտային միջոցների բացթողման համար սահմանված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը՝ մինչեւ որոշակի մաքսային ռեժիմով դրանց բացթողումը:

**մաքսատուրք (մաքս), customs duty, таможенная пошлина** - մաքսատուրքը երկրի մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար օրենքով սահմանված կարգով եւ չափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճարն է: Մաքսատուրք գանձվում է ներմուծվող, արտահանվող եւ տարանցիկ ապրանքներից: Դրա չափը որոշվում է մաքսադրույքներով, որոնք ընդգրկում են մաքսատուրքի ենթակա ապրանքների ցուցակները: Մաքսադրույքում ապրանքները խմբավորված են՝ կախված դրանց մշակման աստիճանից (պատրաստի արտադրանք, հումք, կիսաֆաբրիկատ) եւ ծագումից (արդյունաբերական, գյուղատնտեսական, հանքահումքային եւ այլն): Գանձման մեթոդով տարբերվում են «ադվալոր», այսինքն՝ ապրանքի արժեքի որոշակի տոկոսով կամ ապրանքի միավորի դիմաց սահմանված կայուն դրույքների ձեւով մաքսատուրքեր: Մաքսատուրքը բարձրացնում է ներմուծվող ապրանքների գները, ինչը պետությանը թույլ է տալիս պաշտպանել ներքին շուկան, սահմանափակել ներմուծվող ապրանքների մրցունակությունը, կարգավորել ներմուծման ծավալն ու դրա կառուցվածքը:

**մաքսային արժեք, customs valuation, таможенная оценка -** մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքն այն գումարն է, որը փաստացի վճարվել է, ենթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ներմուծման երկիր արտահանելու նպատակով ձեռք բերելու եւ մինչեւ երկրի մաքսային սահմանը տեղափոխելու համար: Մաքսային արժեքը ներառում է՝ ա) արտահանման երկրում ապրանքների ձեռքբերման գինը, բ) մինչեւ մաքսային սահմանը ապրանքների տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, ապահովագրման, եւ համանման այլ ծախսերը, գ) մինչեւ մաքսային սահմանը ապրանքների տեղափոխման համար կատարված կոմիսիոն եւ միջնորդային (բրոքերային) ծախսերը, բացառությամբ ապրանքների ձեռքբերման համար կատարված կոմիսիոն եւ միջնորդային ծախսերի, դ) գնորդի կողմից ապրանքների վաճառքի համար անհրաժեշտ ռոյալթիների եւ թույլտվությունների դիմաց մատակարարին ուղղակի կամ անուղղակի վճար-

ված կամ վճարման ենթակա գումարներ, ե) տարայի, փաթեթի, եւ փաթեթավորման աշխատանքների արժեքը, զ) մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հետագա վաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդի կողմից մատակարարին վճարման ենթակա գումարները:

**մաքսային կանոնների խախտում, violation of customs rules, нарушение таможенных правил** - մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է ՀՀ մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային ոլորտին առնչվող միջազգային պայմանագրերով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության եւ մաքսային ձեւակերպման սահմանված կարգի դեմ  եւ որի համար օրենքով նախատեսված է պատասխանատվություն

**մաքսային հսկողություն, customs supervision, таможенный контроль** - Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով, ինչպես նաեւ միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգը:

**մաքսային ռեժիմ, customs regime, таможенный режим** - համարվում է մաքսային քաղաքականության իրագործումը կանոնակարգող դրույթների համախումբը, որը որոշում է մաքսային սահմանով ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխման նպատակը եւ կանոնակարգում է մաքսային սահմանով ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխման կապակցությամբ առաջացող հարաբերությունները:

**մաքսային վճարներ, customs fees, таможенные сборы** - համարվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխման համար մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված մաքսատուրքը, հարկերը, տուրքերը եւ այլ պարտադիր վճարներ:

**մաքսանենգություն, contraband, контрабанда** - ապրանքների, արժույթային արժեքների եւ այլ առարկաների անօրինական փոխադրումը պետական սահմանով, այսինքն՝ մաքսային օրենսդրության պահանջների անտեսումով: 2) Ապրանք, որը գաղտնի անցկացվում կամ փոխադրվում է պետական սահմանով: Մաքսանենգություն է հա-

մարվում նաեւ չդրոշմված արտասահմանյան ապրանքների պահելը, երբ դրանց քանակը գերազանցում է անձնական սպառման նորման, ինչպես նաեւ՝ դրանցով առեւտուր անելը: Մաքսանենգությունը պատժվում է օրենքով:

**մարժա, margin, маржа** - առեւտրական, բորսայական, ապահովագրական եւ բանկային պրակտիկայում կիրառվող տերմին՝ ապրանքների գների, արժեթղթերի կուրսերի, տոկոսադրույքների եւ այլ ցուցանիշների տարբերությունը նշելու համար: Առեւտրային պրակտիկայում մարժա ասելով սովորաբար հասկանում են ապրանքների գնման եւ վաճառքի գների տարբերությունը: Ժամկետային ֆոնդային գործառնություններում մարժա է կոչվում արժեթղթի կուրսի տարբերությունը գործարքը կնքելու, կատարելու օրերին, ինչպես նաեւ՝ գնողի եւ վաճառողի գների տարբերությունը: Բանկային տերմինաբանության մեջ մարժա կարող է նշանակել ներգրավվող եւ տրամադրվող վարկերի դրույքների, տարբեր կատեգորիաների փոխառուների վարկերի դրույքների, ապահովման գումարի եւ տրված վարկի գումարի միջեւ եղած տարբերությունը:

**մարժինալ (սահմանային) շահույթ, marginal revenue, предельный доход** - վաճառքից հասույթի եւ փոփոխական ծախսումների տարբերությունը: Սա այն գումարն է, որից հաստատուն ծախսումները ծածկելուց հետո մնում է շահույթը:

**մակրոտնտեսագիտություն - մակրոէկոնոմիկա, macroeconomics, макроэкономика** - գիտություն տնտեսության՝ որպես միասնական ամբողջության մասին: Երկրի ամբողջ տնտեսության զարգացման օրինաչափությունները ուսումնասիրող գիտություն:

**մարկետինգ, marketing, марке-тинг** - գոյություն ունեն ավելի քան 200 սահմանումներ, որոնք էապես տարբերվելով միմյանցից, ունեն նաեւ ընդհանուր եզրեր: Լոնդոնի մարկետինգի ինստիտուտի բնորոշմամբ այն «կառավարման գործողություն է, որն առանձնահատուկ ապրանքի կամ ծառայության նկատմամբ արդյունավետ պահանջարկի, գնորդի գնողունակության որոշման եւ նրան հնարավոր սպառող դարձնելը կազմակերպում եւ ղեկավարում է այնպես, որ ընկերության համար ձեռք բերվի պլանավորված շահույթ եւ լուծվեն այլ խնդիրներ»: Այսինքն, ապրանքներն ու ծառայությունները ներկայացվում եւ բաշխվում են արտադրողի, բաշխողի եւ հասարակության շահերի հաշվարկման միջոցով:

Բառացի նշանակում է շուկայավարություն, որի նպատակն է առավելագույն շահույթի ստացումը՝ կապված նոր արտադրատեսակների մշակման, դրանց թողարկման, իրացման եւ ծառայությունների մատուցման հետ: Հիմնական գործառույթներն են պահանջարկի, գնագոյացման, գովազդի, իրացումը խթանելու, ապրանքատեսակների պլանավորման հարցերի մշակումը եւ այլն:

**մենեջմենթ, management, менеджмент -** արտադրության կառավարում, արտադրության կառավարման այն սկզբունքների, մեթոդների միջոցների եւ ձեւերի ամբողջությունը, որոնք մշակվել են արտադրության ինտենսիվացման եւ շահույթի ավելացման նպատակով: 2) Գիտություն՝ արտադրական գործընթացում մարդկային հարաբերությունները եւ արտադրողների ու սպառողների փոխհարաբերությունները կառավարելու մասին:

**մարդկային ռեսուրսներ-մարդկային կապիտալ, human resources, трудовые ресурсы, людские резервы -** անհատի՝ եկամուտ բերելու ունակություն: Մարդկային կապիտալն ընդգրկում է բնածին ունակություններն ու տաղանդը, ինչպես նաեւ կրթությունը եւ ձեռք բերած որակավորումը:

**մենաշնորհ, monopoly, монополия -** 1) Պետությանը, ձեռնարկությանը, կազմակերպությանը կամ ֆիզիկական անձին տրամադրված բացառիկ իրավունք է՝ որեւէ գործունեությամբ զբաղվելու համար: Շուկայական տնտեսության պայմաններում հակադրվում է ազատ մրցակցությանը, 2) խոշորագույն կազմակերպություններ (ընկերություններ) եւ (կամ) դրանց միավորումներ (կարտելներ, տրեստներ, կոնցեռներ, կոնսորցիումներ, կոնգլոմերատներ), որոնք իրենց ձեռքում են կենտրոնացնում ապրանքների ու ծառայությունների արտադրության եւ իրացման զգալի մասը, որը նրանց թույլ է տալիս գերիշխող դիրք գրավել շուկայում եւ իրենց պայմանները թելադրել սպառողին, ընդհուպ մինչեւ մենաշնորհային գնի սահմանումը: Երբեմն անհատական ֆիրմաները կնքում են մենաշնորհային համաձայնագրեր՝ գները, արտադրության ծավալները վերահսկելու, կամ շուկաները միմյանց միջեւ բաժանելու նպատակով: Համարվում է շուկայի անարդյունավետ կառուցվածք, քանի որ մրցակիցների բացակայությունը ապրանքի արտադրության ծախսերն իջեցնելու նախադրյալներ չի ստեղծում: Ավելին, մենաշնորհը շուկայում չարաշահում է իր իշխանությունը սպառողների նկատմամբ՝ նշանակելով չափազանց բարձր

գներ եւ (կամ) պակասեցնելով արտադրանքը, ինչպես նաեւ հնարավոր մրցակիցների նկատմամբ՝ ստեղծելով արգելքներ շուկա մուտք գործելու համար:

**մեծաքանակ գնում, bulk buying, wholesale purchase, оптовая закупка** - մեծ քանակությամբ հումքի կամ կամ այլ ապրանքի գնում՝ զեղչ ստանալու նպատակով:

**ՄԱԳԱՏԵ, MAGATE (International Atomic Energy Agency), МАГАТЭ (Международное агентство по атомной энергии)**

**«Մետաքսի ճանապարհ», "Silk road", "Дорога шелка"** - Մետաքսի ճանապարհ - «Մետաքսի մեծ ճանապարհ» տերմինը ենթադրում է առեւտրական ճանապարհ: Հնում մետաքսը համարվում էր շատ թանկ նյութ, որը միատեսակ բարձր էր գնահատվում ինչպես արեւմուտքում, այնպես էլ արեւելքում: Դժվար է հավատալ, բայց համարվում է, որ չինացիները մետաքսը հայտնագործել են մոտ հինգ հազար տարի առաջ: Հսկայական շահույթներ պարգեւելով վաճառականներին, մետաքսը եղել է չինացիների առեւտրի գլխավոր առարկան Կենտրոնական Ասիայում, Պարսկաստանում, Սիրիայում եւ Բյուզանդիայում: Չինական սահմաններից հեռու մետաքսը ավելի թանկ էր գնահատվում: Եվրոպայում այն չափազանց թանկ ապրանք էր: Եղել են նույնիսկ ժամանակներ, երբ մետաքսն օգտագործվել է որպես միջազգային արժույթ (վալյուտա): Մետաքսե հագուստը հուշում էր նրա տիրոջ հարստության եւ բարեկեցության մասին: Դրանից բացի, մետաքսը միայն վաճառքի առարկա չի եղել: Նուրբ մետաքսաթելի օգնությամբ հաճախ կնքվում էին քաղաքական դաշինքներ: Մետաքսի մեծ ճանապարհը իբրեւ մայրուղի առաջացել է մեր թվարկությունից առաջ 3-րդ դարում եւ գոյատեւել մինչեւ 16-րդ դար: Մետաքսի մեծ ճանապարհը առավել նշանակալի ձեռքբերումներից մեկն է համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ: Քարավանային ճանապարհների ճյուղավորված ցանցերը հատում էին Եվրոպան եւ Ասիան Միջերկրական ծովից մինչեւ Չինաստան եւ հին ու միջնադարյան դարաշրջաններում ծառայում էին որպես Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ երկխոսության եւ առեւտրական կապերի կարեւոր միջոց: Մետաքսի ճանապարհի առավել երկար եւ մայրուղային տեղամասն անցնում էր Կենտրոնական Ասիայի, այդ թվում եւ Ղրղզստանի տարածքով: Չինական մետաքսով, հնդկական համեմունքներով ու քարերով, իրանական արծաթյա իրերով, բյուզանդական գործվածքով, աֆրիկյան խեցե-

ղենով եւ բազմաթիվ այլ ապրանքներով բեռնված քարավանները գնում էին Կարակումի եւ Կզլկումի անապատներով, անցնելով Մերվի եւ որեզմի օազիսները, Սարը Արկի անծայրածիր տափաստանները, հաղթահարում Պամիրի, Տյան-Շանի, Ալթայի լեռնանցքները, Մուրղաբ, Ամուդարյա եւ Սիրդարյա գետերը:

ՄԱԳԱՏԷ- Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը (ՄԱԳԱՏԷ) միջուկային տեխնոլոգիայի խաղաղ օգտագործման բնագավառում գիտատեխնիկական համագործակցության համաշխարհային առաջատար միջազգային կառավարական ֆորումն է: ՄԱԳԱՏԷ-ն, որ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) շրջանակում 1957 թվականին հիմնվել է որպես ինքնուրույն կազմակերպություն, իրենից ներկայացնում է միջազգային այն ջանքերի բարձրակետը, որ ուղղված էին իրականություն դարձնելու ԱՄՆ-ի նախագահ էյզենհաուերի առաջարկները, որ նա արտահայտել էր 1953 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովում արտասանած իր «Ատոմ խաղաղության համար» ճառում: Նա կանխատեսում էր ատոմային էներգիայի օգտագործման վերահսկողության եւ զարգացման միջազգային մարմնի ստեղծումը: Այսօր Գործակալության ծառայությունների, ծրագրերի եւ գործունեության տեսակների լայն սպեկտրը հիմնված է իր անդամ 130 պետությունների պահանջմունքների վրա:

**միջին գին, average price,** средняя цена - արժեթղթի, արտարժույթի կամ հումքի գինը, որը կազմում է վաճառքի համար առաջարկվող գնի եւ գնման գնի միջինը: Մամուլում հրապարակվում է հիմնականում միջին գինը:

**միկրոտնտեսագիտություն-միկրոէկոնոմիկա, microeconomics,** микроэкономика - գիտություն շուկաներում տնտեսական առանձին գործակալների գործելակերպի ուսումնասիրության մասին:

**միջազգային կորպորացիա, international corporation,** международная корпорация - խոշոր ընկերության կազմակերպական ձեւ է, որն ուղղակի ներդրումներ է կատարում աշխարհի տարբեր երկրներում: Առանձնացվում են միջազգային կորպորացիաների երկու ձեւ՝

**բազմազգային կորպորացիա, multinational corporation,** многонациональная корпорация - գլխամասային ընկերությունը պատկանում է երկու եւ ավելի երկրների, իսկ ուղղակի ներդրումներն իրականացվում են ամբողջ աշխարհի մասշտաբով:

**վերազգային կորպորացիա, transnational corporation,** транснациональная корпорация -

գլխամասային ընկերությունը պատկանում է մի պետությանը, իսկ ուղղակի ներդրումներն իրականացվում են աշխարհի բազմաթիվ երկրներում:

**միջազգային պահուստ, international reserves, международные резервы -** փողի քանակություն, որն օգտագործվում է երկրների միջեւ վճարումների հաշվեկշռի պակասուրդը լրացնելու համար: Այդպիսիք են ոսկին, որոշ արտարժույթները (մասնավորապես ԱՄՆ-ի դոլարը, եվրոն եւ Ճապոնիայի իենը) եւ Արժույթի միջազգային հիմնադրամի արժույթը՝ փոխառման հատուկ իրավունքը: Արժույթի եվրոպական համակարգի անդամ երկրները միմյանց միջեւ հաշիվները փակելիս օգտագործում են նաեւ եվրոպական արժույթի միավորը:

**միջազգային առեւտուր, international trade, международная торговля -** երկրների միջեւ բարիքների եւ ծառայությունների առեւտուրը, որը պայմանավորված է երկրի ունեցած մրցակցային առավելությամբ որոշակի ապրանք արտադրելիս, աշխատանքի միջազգային բաժանումով, եւ իրականացվում է արտահանման եւ ներմուծման փոխադարձ հոսքերի միջոցով:

**միջնորդավճար, brokerage, брокерское вознаграждение -** վաճառամիջնորդի վարձատրությունն իր ծառայության դիմաց:

**միջին ամսական աշխատավարձ, average monthly wage, среднемесячная зарплата -** հաշվարկվում է որպես աշխատանքի վարձատրության եւ դրան հավասարեցված այլ վճարումների (ներառյալ պարգեւավճարները, եւ փոխհատուցումները) ընդհանուր գումարի (ինչպես դրամական, այնպես էլ բնեղեն տեսքով) հարաբերություն աշխատողների միջին ցուցակային թվաքանակին:

**մրցակցություն, competition, конкуренция** - ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները:

**մրցույթ, contest, конкурс** - մրցություն, որի նպատակն է մասնակիցների շարքում առանձնացնել լավագույներին, օրինակ, գիտատեխնիկական նոր որակի արտադրանք ստեղծելու համար պայմանագիր կնքելիս պատվիրատուն, որպես կանոն, հայտարարում է մրցույթ՝ հնարավոր կատարողների միջեւ: Պատվերը

փոխանցվում է մրցույթի հաղթողին: 2) Պետական գույքի մասնավորեցման ձեւերից մեկը:

**մոնետարիզմ, monetarism,** монетаризм - տնտեսագիտական տեսություն, որի համաձայն շրջանառության մեջ եղած փողի քանակությունը հանդիսանում է տնտեսական իրավիճակի ձեւավորման որոշակի գործոն, եւ ուղղակի կապ գոյություն ունի շրջանառության մեջ եղած դրամի զանգվածի եւ համախառն ազգային արդյունքի մեծության միջեւ: Առաջացել է ԱՄՆ-ում 50-ական թվականների սկզբում եւ կոչվում էր «Չիկագոյի դպրոցի դոկտրինա»: Մոնետարիզմի կողմնակիցների, առաջին հերթին նրա հիմնադիր Մ. Ֆրիդմենի կարծիքով տարերային կապիտալիստական տնտեսությանը բնորոշ է «ներքին կայունությունը», որը պայմանավորված է մրցակցության եւ գնագոյացման շուկայական մեխանիզմի գործողությամբ: Մոնետարիզմի դրույթների գործնական կիրառումը ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում եւ մի շարք այլ երկրներում զգալիորեն նպաստել է ինֆլյացիայի գործընթացի դանդաղեցմանը: Մոնետարիզմն ունի մի քանի տարբերակներ եւ ուղղություններ, սակայն ավելի հայտնի է եւ լայն ընդունելություն ունի Մ. Ֆրիդմենի վարկածը: Այն ընդգրկում է. 1) դրամի քանակական տեսությունը, որը հիմնավորում է շրջանառության մեջ դրամի քանակի փոփոխությունների եւ ապրանքների գների մակարդակի միջեւ եղած պատճառական կապը, 2) տնտեսական պարբերաշրջանի մոնետար տեսությունը, որի համաձայն տնտեսական իրավիճակի բոլոր խոշոր տատանումները որոշվում են դրամի զանգվածի նախորդող փոփոխություններով, 3) վերարտադրության «իրական» գործոնների վրա դրամի ազդեցության հատուկ «փոխանցման» մեխանիզմը (ոչ թե տոկոսի նորմայի, ինչպես ենթադրում էին քեյնսականները, այլ ապրանքների գների մակարդակի միջոցով), 4) տնտեսական կարգավորման պետական միջոցառումների մասին դրույթը՝ կապված դրամական ցուցանիշների փոփոխությունների եւ արտադրության «իրական» գործոնների միջեւ փոփոխվող ուշացումների (լագերի) առկայության հետ, 5) «Մոնետար կանոնը» (կամ «K տոկոսի կանոնը»), որը մեխանիկորեն տարեկան մի քանի տոկոսով ավելացնում է դրամի զանգվածը շրջանառության մեջ՝ անկախ տնտեսության վիճակից, պարբերաշրջանի փուլից եւ այլն, 6) տատանվող արժույթների կուրսերի համակարգը արտաքին տնտեսական «ինքնակարգավորման» համար:

**մուտքի դրամարկղի օրդեր, income order, приходный ордер** - սկզբնական փաստաթուղթ, որը հավաստում է դրամը դրամարկղ մուտքագրելու փաստը: Մուտքի դրամարկղի օրդերը կազմված է անմիջապես բուն մուտքի դրամարկղի օրդերից, որը մնում է դրամն ընդունող գանձապահի մոտ, եւ անդորրագրից, որը հանձնվում է դրամը դրամարկղ հանձնած անձին: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, մուտքի դրամարկղի օրդերում պարտադիր արտացոլվում են ստանդարտ վավերապայմանները:

**մուրհակ, bill, promissory note, вексель** - արժեթուղթ է, որը հավաստում է մուրհակատուի պարտավորությունը՝ սահմանված ժամկետում մուրհակատիրոջը որոշակի գումար վճարելու մասին: Մուրհակը ոչ միայն հարմար հաշվարկային ձեւ է, այլ նաեւ առեւտրային վարկի տեսակ, քանի որ վճարումն ըստ մուրհակի կատարվում է ոչ թե անմիջապես, այլ որոշ ժամանակ անց, որի ընթացքում մուրհակի գումարը գտնվում է մուրհակատուի տրամադրության տակ: Մուրհակը պարտքի միակողմանի դրամական պարտավորություն է, ըստ որի մուրհակատերը ոչ մի պարտավորություն չունի, այլ մուրհակատուն է պարտավորվում վճարել նրանում նշված գումարը: Գոյություն ունեն հասարակ եւ փոխանցվող մուրհակներ: Հասարակ մուրհակում մասնակցում են երկու կողմեր՝ մուրհակատուն եւ մուրհակատերը: Այստեղ սահմանված է մուրհակատուի բացարձակ պարտավորությունը՝ մուրհակում նշված անձին (մուրհակատուին) գումարը որոշակի ժամկետում վճարելու մասին: Փոխանցվող մուրհակը տրվում է վարկատուի կողմից: Այն պարունակում է մուրհակատուի հրամանը վճարողին՝ սահմանված ժամկետում որոշակի գումար վճարել մուրհակ ներկայացնողին կամ մուրհակում նշված անձին, կամ նրան, ում նա կնշի մինչեւ մուրհակի ժամկետը լրանալը:

## Ն

**նախահաշիվ, cost calculation, estimate, смета** - գործունեության եւ գործնական ծրագրերի համար նախնական ֆինանսական պլան որոշակի ժամանակահատվածի համար:

**նախավճար, deposit, задаток** - այն դրամական գումարն է, որ պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվին տալիս է մյուս կողմին իբրեւ պայմանագրի կնքման ապացույց եւ դրա կատարման ապահովում:

**ներդրում, investment, инвестиции** - կապիտալի ներդրումն է (դրամական, նյութական եւ ոչ

նյութական ձևերով) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող օբյեկտներում՝ եկամուտ (տոկոս կամ շահաբաժին) ստանալու, կապիտալն ու ակտիվներն ավելացնելու կամ այլ նպատակներ իրագործելու համար, այսինքն՝ դրամի օգտագործումն է՝ ավելի մեծ քանակությամբ դրամ ստանալու նպատակով: Ներդրումներին վերաբերում են դրամական միջոցները, նպատակային բանկային ավանդները, փայաբաժինները, բաժնետոմսերը եւ այլ արժեթղթերը, տեխնոլոգիաները, մեքենաները, սարքավորումները, լիցենզիաները, վարկերը, ցանկացած այլ գույքը եւ գույքային իրավունքները, մտավոր արժեքները, որոնք ներդրվում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող օբյեկտներում: Հաշվառման, վերլուծության եւ պլանավորման նպատակներով ներդրումները դասակարգվում են ըստ տարբեր հատկանիշների՝ ա) ըստ միջոցների ներդրման օբյեկտների՝ իրական եւ ֆինանսական: Իրական ներդրումները կապիտալ ներդրումներն են որեւէ արտադրանքի արտադրության մեջ: Դրանց արդյունքն է իրական կապիտալի (շենքեր, սարքավորումներ, ապրանքանյութական պաշարներ եւ այլն) հավելաճը: Ֆինանսական ներդրումներն արժեթղթեր ձեռք բերելու համար կատարված ծախսերն են, ինչպես նաեւ բանկային ավանդները: Այս դեպքում իրական կապիտալի հավելաճ տեղի չի ունենում: Անհատների, կազմակերպությունների եւ ֆինանսական հաստատությունների կողմից կատարվող փաթեթային ներդրումները ծառայում են շահաբաժնի, տոկոսի, վարձավճարի եւ կապիտալի աճի ձեւով եկամուտ ստանալու նպատակով, բ) ըստ ներդրման մեջ մասնակցության բնույթի ուղղակի եւ անուղղակի, գ) ըստ ներդրման ժամանակաշրջանի՝ կարճաժամկետ եւ երկարաժամկետ, դ) ըստ ներդրումային ռեսուրսների սեփականության ձեւերի՝մասնավոր, պետական եւ համատեղ ներդրումներ, ե) ըստ տարածքային հատկանիշի՝ ներքին եւ օտարերկրյա ներդրումներ:

**Ներդրումների տեխնոլոգիական կառուցվածք, investments technology, технология инвестиций** - շինարարության, մոնտաժման աշխատանքներին ընկնող ծախսերի, այսինքն՝ ներդրումների պասիվային հատվածի հարաբերությունը սարքավորումների, մեքենաների և դրանց օժանդակ բաղկացուցիչների ձեռք բերմանն ուղղված ծախսերին, այսինքն ներդրումների ակտիվային հատվածին:

Տնտեսությունը ավելի շատ շահած կլինի այն դեպքում, երբ ներդրումների տեխնոլոգիական

կառուցվածքում գերակշռում է ներդրումների ակտիվային հատվածը: Ուստի պետության ՕՈՒՆ-ների ներգրավման ռազմավարությունը պետք է ուղղված լինի ոչ այնքան ՕՈՒՆ-ների ներգրավմանը որպես ֆինանսական ռեսուրսների ընդունման և, առավել ևս, սեփականության ձևի փոփոխության նպատակով, որքան ՕՈՒՆ-ների ներգրավմանը տեխնոլոգիական զարգացման առումով: Այնպիսի ՕՈՒՆ-ների ներգրավումը, որոնք հնարավորություն կտան ներկրել ժամանակակից առաջատար տեխնոլոգիաներ, հնարավորություն կընձեռեն բարձրացնել թողարկվող արդյունքի մրցունակությունը, իրականացնել ձեռնարկության, իսկ հետագայում նաև ճյուղի տեխնոլոգիական վերազինումը, ինչպես նաև մեղմացնել տեխնոլոգիական խզումը:

**Ներմուծում, import, импорт** - ապրանքների եւ տրանսպորտային միջոցների ներսբերումը երկրի մաքսային տարածք: 2) արտասահմանից (այլ երկրներից) գնված ապրանքների եւ ծառայությունների ամբողջություն:

**Ներքին պետական պարտք, internal, national debt, внутренний долг -** պետության պարտքն է տնտեսավարող սուբյեկտներին եւ բնակչությանը, որոնցից ներգրավվել են դրամական միջոցներ պետական ծրագրերի եւ պատվերների կատարման, շրջանառությունում արժեթղթերի բացթողնման եւ այլ նպատակների համար:

**Նպաստ, subsidy, субсидия** - քաղաքացիներին եւ կազմակերպություններին անվերադարձելիության կարգով տրվող պետական օգնություն՝ ֆինանսների ծածկման կամ այլ նպատակների համար: Տարբերվում են ուղղակի նպաստներ, որոնք ուղղված են տնտեսության անհրաժեշտ ճյուղերի զարգացմանը եւ անուղղակի նպաստներ, որոնք իրենցից ներկայացնում են արտոնյալ հարկային դրույքների համակարգ, արագացված ամորտիզացիայի քաղաքականություն եւ այլն: 2) բյուջեից առանձնացվող դրամագումար այն ձեռնարկության համար, որի արտադրանքի արտադրության եւ իրացման ծախսերը չեն ծածկվում ստացված եկամուտներով, ինչպես նաեւ լրավճար՝ բնակչությանը վաճառվող առանձին ապրանքների մանրածախ գների ցածր մակարդակը պաշտպանելու համար:

**Նվազող եկամուտներ, diminishing returns, сокращающиеся доходы** - տնտեսական օրենք, ըստ որի արտադրության գործընթացին ռեսուրսների լրացուցիչ միավորներ ավելացնելիս (առանց մյուս ներդրումները փոխելու) որոշակի սահմանից հետո լրացուցիչ արտադրանքի աճն

աստիճանաբար նվազում է:

**նվիրատվություն, donation, дарение -** որեւէ մեկին գույք կամ գույքային իրավունքների հանձնումը կամ որեւէ մեկին գույքային պարտականություններից ազատումը:

**նվազագույն աշխատավարձ, minimum wage, минимальная зарплата -** համարվում է Հայաստանի Հանրապետության «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի դրույքաչափը, բ) ապրելու նվազագույն մակարդակի ապահովման համար անհրաժեշտ սպառողական բարիքների եւ ծառայությունների գինը:

## Շ

**շահույթ, profit, прибыль** - այն մնացորդային գումարն է, որը մնում է ծախսերը հասույթից հանելուց հետո: Ցանկացած գումար, որը գերազանցում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի կապիտալը պահպանելու համար պահանջվող գումարը, շահույթ է: Այլ կերպ ասած սեփականատերերի եկամուտ, հասույթ՝ հանած ծախսերը:

**շահութահարկ, profit tax, налог на прибыль** - հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով եւ չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Շահութահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտները (պետական գրանցում ստացած իրավաբանական անձինք, որոնց համար հարկվող օբյեկտ է ՀՀ տարածքում եւ նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը եւ ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված իրավաբանական անձինք եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններն ու դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված իրավաբանական անձինք եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները), որոնց համար հարկվող օբյեկտ է հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը, բացառությամբ ՀՀ բյուջետային հիմնարկների եւ ՀՀ Կենտրոնական բանկի:

**շահութաբերություն, profitability, рентабельность, прибыльность** - առեւտրային կազմակերպության՝ զուտ շահույթ ստանալու կարողությունը, որը հաշվարկվում է շահույթի մեծությունը հարաբերելով արտադրության միջոցների միջին տարեկան արժեքին արտադրության շահութաբերություն) կամ էլ ինքնարժեքին (արտադրանքի շահութաբերություն):

**շահութաբաժին, dividend, дивиденд** - շահույթի բաշխումը

բաժնետերերի միջեւ իրենց պատկանող որոշակի դասի բաժնետոմսերի քանակին համամասնորեն:

**շինություն, building**, **сооружение** - հասարակական, արտադրական տարբեր գործառույթներ իրականացնելու, մարդկանց, բեռներ, էներգակիրներ, ջուր, տեղեկատվություն տեղափոխելու պաշտպանական եւ այլ նպատակների համար նախատեսված ստորգետնյա կամ վերգետնյա ծավալային, հարթ կամ գծային կառույց՝ կազմված կրող, որոշ դեպքերում նաեւ՝ պարփակող կոնստրուկցիաներից:

Բնակելի նշանակության շենքեր, շինություններ, այդ թվում՝ **apartment houses, buildings, жилые дома,**

**անհատական բնակելի տուն՝ private dwelling, частное жилье** -հողամասի վրա կառուցված բնակելի, օժանդակ եւ կոմունալ հարմարություններով օժտված, իր տնտեսական շինություններով կառույց,

**այգետնակ (ամառանոց), cottage, дача** - այգեգործական զանգվածում հողամասի վրա կառուցված ամառանոցային շենք կամ շինություն.

**բազմաբնակարան բնակելի շենք, apartment house, multiple dwelling многоквартирный дом -** մեկից ավելի բնակարաններ, ոչ բնակելի եւ ընդհանուր օգտագործման տարածքներ ունեցող շինություն.

**բնակարան**, **apartment, квартира** - բազմաբնակարան բնակելի շենքում գտնվող առանձին տարածք՝ բաղկացած բնակելի եւ օժանդակ մասերից, օժտված կոմունալ հարմարություններով.

**ավտոտնակ**, **garage, гараж** - անհատական օգտագործման նպատակով տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինություն:

**Հասարակական նշանակության շենք, շինություն, public building общественное здание** - բնակչության սոցիալական, մշակութային, կրթական սպասարկման, վարչական կամ հասարակական գործառույթների իրականացման համար նախատեսված շենք, շինություն:

**Արտադրական նշանակության շենք, շինություն, industrial building промышленное здание** - արդյունաբերական, գյուղատնտեսական եւ այլ արտադրությունների կազմակերպման համար նախատեսված շենք, շինություն:

**շուկա, market, рынок** - **պայմանների** ամբողջություն, որոնց միջոցով ապրանքի (ծառայության) գնորդները եւ վաճառողները միմյանց հետ շփման մեջ են մտնում այդ ապրանքը (ծառայությունը) գնելու կամ վաճառելու նպատակով:

**շրջանառու կապիտալ, circulating capital, working capital, оборотный капитал** - կազմակերպության ընթացիկ ակտիվներից հանած ընթացիկ պարտավորությունները: Շրջանառու կապիտալը կազմակերպության իրացվելիության չափանիշ է: Շրջանառու կապիտալը ֆինանսավորում է կազմակերպության դրամական միջոցների փոխարկման փուլը, այսինքն այն ժամանակահատվածը, որը պահանջվում է հումքը պատրաստի արտադրանքի, պարտադիր արտադրանքը վաճառքների եւ դեբիտորական հաշիվները դրամական միջոցների փոխարկելու համար: Շրջանառու կապիտալի աղբյուրներն են

ա) զուտ շահույթը, բ) ոչ ընթացիկ պարտավորությունների ավելացումը, գ) ոչ ընթացիկ ակտիվների նվազումը:

**շրջանառություն, turnover, оборотный капитал, товарооборот** - 1) ապրանքային արտադրությանը բնորոշ աշխատանքի արդյունքների, դրամի եւ սեփականության այլ օբյեկտների առք ու վաճառքի միջոցով փոխանակության ձեւ է, 2) բանկի կողմից թողարկված եւ շրջանառության մեջ գտնվող բանկնոտների ընդհանուր արժեքն է՝ ի տարբերություն բանկային պահուստներում գտնվող ամբողջ դրամի:

## Ո

**ոչ նյութական ակիվներ, intangible assets, нематериальные активы -** ակտիվներ, որոնք զուրկ են ֆիզիկական էությունից, (օրինակ՝ գուդվիլ) կամ իրենցից ներկայացնում են կառավարության կամ մեկ այլ ընկերության կողմից տրամադրված շնորհ (օրինակ՝ արտոնագիր, ապրանքանիշ եւ այլն): Ոչ նյութական ակտիվների տնտեսական կյանքը գերազանցում է մեկ տարին: Ամորտիզացվում են ծախսերի հաշվում իրենց օգտակար կյանքի ընթացքում, բայց ոչ ավելի քան 40 տարում:

**ոչ ռեզիդենտ, non-resident, нерезидент** - 1) արտասահմանյան ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ տվյալ երկրի անձինք, որոնք մշտապես բնակվում են արտասահմանում եւ գործում են ապրած երկրի օրենսդրության համաձայն: 2) տվյալ տարածքում գտնվող արտասահմանյան դիվանագիտական, առեւտրական եւ այլ պաշտոնական ներկայացուցչությունները, ինչպես նաեւ ձեռնարկությունների, ընկերությունների, ֆիրմաների եւ կազմակերպությունների ներկայացուցչությունները, որոնք չեն իրականացնում տնտեսական եւ այլ առեւտրային գործունեություն: Ոչ գործակալ (ռեզիդենտ)

տերմինն օգտագործվում է արտաքին տնտեսական ոլորտում՝ ներդրումային եւ մաքսային պրակտիկայում: Հարկման եւ օրենսդրական կարգավորման ռեժիմը ոչ ռեզիդենտի համար կարող է տարբերվել տվյալ երկրի գործակալների համար սահմանված ռեժիմից եւ հաճախ որոշվում է միջպետական համաձայնագրերով:

## Չ

**չեկ, cheque, check, чек** -բանկի ընթացիկ հաշվից փող փոխանցելու կամ դուրս գրելու փաստաթուղթ: Դա այն արժեթուղթն է, որը պարունակում է չեկ տվողի որեւէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկը տիրապետողին վճարել դրանում նշված գումարը:

## Պ

**պակասորդ, imbalance, дефицит баланса -** դրամական միջոցների, ապրանքների եւ այլ արժեքների փաստացիի նկատմամբ պակաս չափով լինելու բացահայտումն է: Այն կարող է տեղի ունենալ սահմանված նորմաներից ավելի կորուստների, հաշվառման մեջ թույլ տրված սխալների, ապրանքանյութական արժեքների ու դրամական միջոցների հափշտակման եւ գողության հետեւանքով: Պակասորդը հայտնաբերվում է գույքագրման միջոցով՝ հաշվապահական հաշվառման մեջ արտացոլված եւ առկա արժեքների քանակային համեմատությամբ:

**պակասուրդ, deficit, дефицит** - 1) կազմակերպության պարտավորությունների գերազանցումը նրա ակտիվներին ու եկամուտներին, 2) տվյալ բյուջետային ժամանակաշրջանի փաստացի պարտավորությունների ու ծախսերի գերազանցումը այդ ժամանակաշրջանի համար սահմանված բյուջեին, 3) որեւէ նպատակի,կամ նպատակների հետ կապված պարտավորությունների կամ ծախսերի գերազանցումը այդ նպատակի համար նախատեսված նախահաշվային գումարին, 4) բյուջետային ծախսերի գերազանցումը եկամուտներին (բյուջետային պակասուրդ):

**պահանջարկ, demand, спрос** - մարդկանց՝ ապրանքներ եւ ծառայություններ գնելու ցանկությունն ու ունակությունը:

**պահանջարկի կառավարում, demand management, управление спросом** - հարկաբյուջետային եւ դրամավարկային քաղաքականության օգտագործումը՝ ամբողջական պահանջարկի ավելացման կամ կրճատման նպատակով:

**պահանջարկի մեծություն**,

**quantity demanded, величина спроса** - տվյալ ապրանքի կամ ծառայության այն քանակը, որը գնորդը որոշակի գնով ցանկանում է գնել որոշակի ժամանակաշրջանի ընթացքում:

**պահանջագիր լրացուցիչ ապահովագրության մասին, margin call, требование дополни-тельного обеспечения** - պահանջագիր՝ բորսայում մարժա վճարելու մասին: Եթե ապրանքային շուկայում կամ արժեթղթերի շուկայում գներն արագ փոխվում են առեւտրականի կամ սպեկուլյանտի կանխատեսածի հակառակ ուղղությամբ, վերջինս կարող է ստանալ պահանջագիր լրացուցիչ գրավադրման մասին՝ նախկին ապահովությունը պաշտպանելու նպատակով:

**պահանջարկի կոր, demand curve, кривая спроса** - կոր, որը ցույց է տալիս ապրանքի (ծառայության) պահանջարկի կախվածությունը դրա գնից: Այլ կերպ ասած, ապրանքի շուկայական գնի եւ գնորդների կողմից այդ գնով քանակի միջեւ փոխկապվածության գրաֆիկական պատկերումն է: Եթե պահանջարկի կորը թեքված է դեպի ներքեւ, ապա արդյունքում ստացվում է, որ ապրանքների եւ ծառայությունների գների իջեցմանը զուգընթաց դրանց գնումների քանակն աճում է:

**պահանջագիր վճարային, payment request, платежное требование** - հաշվարկային փաստաթուղթ, որն իրենից ներկայացնում է մատակարարի պահանջները՝ բեռնված ապրանքների, կատարված աշխատանքների կամ ցուցաբերված ծառայությունների դիմաց միջոցները վճարողի հաշվից իր հաշվին փոխադրելու մասին:

**պահատվություն, safekeeping, хранение** - պահատվության պայմանագրով մի կողմը՝ պահառուն, պարտավորվում է պահել մյուս կողմի՝ պահատուի կողմից իրեն հանձնված գույքը եւ այն վերադարձնել պահպանված վիճակում: Կարող է լինել պահատվություն ապրանքային պահեստում, պահատվություն գրավատանը, պահատվություն հյուրանոցում, բանկում եւ այլն:

**պահուստներ**, **reserves, резервы** - 1) արդյունք են տնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գտնվող զուտ շահույթից մասհանումների, որի գումարի չափը որոշվում է կանոնադրական կապիտալի գումարի նկատմամբ սահմանված տոկոսադրույքի չափով: Պահուստային կապիտալն օգտագործվում է պատճառված կորուստները ծածկելու, ինչպես նաեւ ընկերության պարտատոմսերը մարելու եւ բաժնետոմսերը հետ գնելու համար: Պահուստային կապի-

տալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար, 2) այն միջոցներն են, որոնք կոչված են չնախատեսված ծախսեր կատարելու, ինչպես նաեւ չհայտարարված շահաբաժինների վճարման եւ պարտավորությունների մարման համար:

**պահուստներ ընդհանուր, general provisions, общие резервы -** ստեղծվում են բանկերի կողմից՝ ապագա հնարավոր կորուստների ծածկման համար: Կարող են սահմանվել տոկոսով՝ ելնելով վարկերի ընդհանուր գումարից՝ ամբողջ վարկային փաթեթի դիմաց:

**պայմանագիր, contract, agreement, контракт, договор, соглашение** - համարվում է երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների սահմանմանը, փոփոխելուն կամ դադարեցմանը: Քաղաքացիները եւ իրավաբանական անձինք ազատ են պայմանագիրը կնքելիս: Պայմանագիր կնքելուն հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է կամովին ստանձնած պարտավորությամբ: Կողմերը կարող են կնքել ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր:

**պայմանագրային գներ, contract, transaction prices, договорные цены** - լիովին շուկայական, ազատ գներ են, որոնք իրենց մեջ մարմնավորում են ձեռնարկատերերի ազատությունը: Այդ գները սահմանվում են գնորդի եւ վաճառողի համաձայնությամբ, այսինքն հաշվի է առնվում միայն տվյալ ապրանքի նկատմամբ առաջարկը եւ պահանջարկը: Մյուս կողմից դրանք կարող են լինել չհիմնավորված բարձր եւ ցածր եւ դրանով իսկ խախտեն շուկայի հավասարակշռված վիճակը: Այնուամենայնիվ, պայմանագրային գների տեսակարար կշիռն է որոշում տվյալ երկրում տնտեսության «շուկայացման» աստիճանը:

**պաշտոնական փոխարժեք (կուրս), official exchange rate, официальный валютный курс-** արտարժույթի փոխարժեքն է, որը որոշում է տվյալ երկրի իրավասու պետական մարմինը՝ սովորաբար Կենտրոնական բանկը: Եթե այն տարբերվում է շուկայական փոխարժեքից, ապա Կենտրոնական բանկը պետք է պատրաստ լինի պաշտպանելու պաշտոնական փոխարժեքը, որպեսզի այդ երկու փոխարժեքները համընկնեն: Այդ առումով պետք է իրականացնի բաց շուկայական քաղաքականություն:

Շատ երկրներ, այդ թվում ԱՄՆ-ն, իրենց արժույթների համար

պաշտոնական փոխարժեք չեն սահմանում:

**պաշտոնական տրանսֆերտներ, official transfers, официальные трансферты** - ա) օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների տրամադրած տրանսֆերտները, այդ թվում՝ ընթացիկ եւ կապիտալ տրանսֆերտները, բ) այլ աղբյուրներից տրամադրված տրանսֆերտները, այդ թվում՝ ընթացիկ եւ կապիտալ տրանսֆերտները, գ) համայնքների բյուջեներին՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով եւ տրամադրվող դոտացիաները, դ) համայնքների բյուջեներին պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները:

**պաշտոնական պահուստներ, official reserves, государственные резервы -** արտարժույթ՝ Կենտրոնական բանկի տնօրինության ներքո:

**պասիվներ, liabilities, пассивы-** տնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գտնվող տնտեսական միջոցների կազմավորման աղբյուրներն են, որոնք իրենց բովանդակությամբ հանդես են գալիս սեփական կապիտալի, ոչ ընթացիկ պարտավորությունների եւ ընթացիկ պարտավորությունների տեսքով: Պասիվներն իրենց արժեքային առումով արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի աջ կողմում (պասիվային մաս):

**պարտապան (դեբիտոր), debtor, должник** - իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տնտեսավարող սուբյեկտներ եւ անհատ ձեռնարկատերեր, որոնք ի վիճակի չեն կամ հրաժարվում են ժամանակին կատարել պարտատիրոջ (կրեդիտորի) հանդեպ ունեցած պարտավորությունները:

**պարտավորություն, obligation, обязательство** - մի անձը՝ պարտապանը, պատրաստվում է մեկ այլ անձի՝ պարտատիրոջ, օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն եւ այլն, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

**պարտատեր (կրեդիտոր), creditor, кредитор** - ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերեր, իրավաբանական անձինք, պետական մարմինները, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունները, որոնք պարտապանի՝ դեբիտորի, հանդեպ օրինական պահանջներ ունեն:

**պարտատոմս, bond, облигация -** արժեթուղթ, որը հավաստում է դրա տիրապետողի իրա-

վունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած անձից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք: Պարտատոմսը դրա տիրապետողին իրավունք է տալիս նաեւ ստանալ պարտատոմսի անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ:

**պարտք, debt, долг** - դրամական միջոցների որոշակի գումար է կամ այլ ակտիվ, որը որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ փոխ է վերցրել մեկ այլ անձից եւ, որպես կանոն, պարտավոր է վերադարձնել սահմանված ժամկետում՝ որոշակի պայմանների կատարմամբ: Պարտքն առաջանում է վճարման ուշացման կամ վարկի տրամադրման հետեւանքով:

**պարտքեր անհուսալի, bad and doubtful debts, безнадежные долги** - պարտքեր, որոնք ամենայն հավանականությամբ, չեն վերադարձվի: Դրանց ծածկման համար ստեղծվում են հատուկ ֆինանսական պահուստաֆոնդեր:

**պարտք դեբիտորական, accounts receivable, дебиторская задолженность** - ընկերության շրջանառու կապիտալի մի մասը, որը հաշվարկված է ընկերության համար, սակայն դեռեւս չի ստացել:

**պարտք կրեդիտորական, accounts payable, bill payable, кредиторская задолженность** - պարտքի գումարը այն վարկատուներին, որոնք ուրիշի միջոցները ներգրավել են իրենց միջոցների շրջանառության մեջ: Ձեռնարկության լուծարման դեպքում վարկատուների բողոքների ներկայացման համար պետք է տրվի լուծարվող ձեռնարկության գտնվելու վայրի պաշտոնական մամուլում այդ մասին հայտարարություն տալու օրից երկու ամիս ոչ պակաս ժամկետ: Լուծարային հանձնաժողովի կողմից չճանաչված պահանջները համարվում են մարված, եթե վարկատուները պահանջները լրիվ կամ մասնակի չճանաչելու մասին տեղեկությունը ստանալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում հայց չեն ներկայացրել դատարան կամ արբիտրաժ:

**պարտքային պարտավորություն, promissory note, долговое обязательство -** փաստաթուղթ, որը փոխառուն տալիս է պարտատիրոջը՝ փոխատվություն ստանալու ժամանակ: Պարտքային պարտավորության մեջ նշվում է վարկի գումարը եւ դրա մարման ժամկետը:

**պարտքի սպասարկում, debt service, обслуживание долга** - այն համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան, պարտապանի կողմից հիմնական պարտքերի եւ հաշվարկված

տոկոսային գումարների ժամանակին վճարումն է պարտատիրոջը:

**պարտադիր ապահովագրություն, obligatory insurance, обязательное страхование** - ապահովագրության այն ձեւն է, ըստ որի կողմերը օրենսդրորեն պարտավորվում են մտնել ապահովագրական հարաբերությունների մեջ: Օգտագործվում է, մասնավորապես, սոցիալական ուղղվածություն ունեցող, ինչպես նաեւ պատասխանատվության ապահովագրության տեսակների գծով: Պարտադիր ապահովագրությունն ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու միջոցով իրականացնում է այն անձը (ապահովագրվողը), ում վրա դրված է այդպիսի ապահովագրության պարտականությունը: Պարտադիր ապահովագրությունն իրականացվում է ապահովագրվողի հաշվին, բացառությամբ ուղեւորների պարտադիր ապահովագրության, որն օրենքով նախատեսված դեպքերում կարող է իրականացվել նրանց հաշվին:

**պարտադիր պետական ապահովագրություն, compulsory state insurance, обязательное государственное страхование** - սահմանվում է քաղաքացիների սոցիալական շահերի եւ պետության շահերի ապահովման նպատակով, որոշակի կատեգորիայի պետական ծառայողների կյանքի, առողջության եւ գույքի գծով: Նման տեսակի ապահովագրությունն իրականացվում է նախարարությունների եւ գործադիր իշխանության այլ մարմինների (ապահովագրվողների) համար պետական բյուջեից տրամադրվող միջոցների հաշվին:

**պարտադիր պահուստներ, required reserves, обязательные резервы** - բանկային ավանդներից, ինչպես նաեւ պասիվների այլ աղբյուրներից ստացված տոկոսաբաժին, որը պետք է պահվի Կենտրոնական բանկում:

**պարտադիր սոցիալական ապահովագրության վճար, compulsory social insurance payments, обязательные страховые взносы** - սոցիալական վճարները ապահովադիրների կողմից պարտադիր կարգով պետական բյուջե վճարվող միջոցներն են: Սոցիական վճարումներ կատարում են գործատուները, վարձու աշխատողները: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը համապատասխան օրենքն ընդունել է 1997թ.-ի դեկտեմբերին:

**պարտավորագիր արժույթային, currency contract, валютный контракт** - պարտավորագիր՝ սահմանված ժամկետում, նախօրոք սահմանված կուրսով

մեկ արժույթը մյուսով փոխարինելու մասին: Այդպիսի պարտավորագրերը կնքվում են արժութային կուրսերի փոփոխության դեպքում՝ ապահովության համար:

**պարզեցված հարկ, simplified tax, упрощенный налог** - օրենքով սահմանված չափերով ու ժամկետներում ձեռնարկատիրական գործունեության համար պետական բյուջե վճարվող, ավելացված արժեքի հարկին եւ (կամ) շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հարկ է: Առեւտրային կազմակերպությունների համար պարզեցված հարկը փոխարինում է ավելացված արժեքի հարկին եւ (կամ) շահութահարկին, իսկ անհատ ձեռնարկատերերի համար փոխարինում է ավելացված արժեքի հարկին եւ (կամ) եկամտահարկին: Այս հարկատեսակը ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 05.06.2000թ:

**պաուշալ վճար, lumpsum payment, flat payment, паушальный платеж** - միանվագ վարձատրություն լիցենզիոն պայմանագրի առարկայից օգտվելու իրավունքի առարկայի համար՝ մինչեւ դրա օգտագործումից տնտեսական արդյունքի (շահույթի) ստացումը: Պաուշալ վճարը, փաստորեն, լիցենզիայի գինն է:

**պետական բանկ, state bank, государственный банк** - բանկ, որը գտնվում է պետության սեփականության ներքո, այսինքն որի կապիտալն ամբողջությամբ պատկանում է տվյալ երկրի պետությանը: Տարբերում են կենտրոնական, առեւտրային, պետական եւ հատուկ պետական վարկային ինստիտուտներ:

**պետական բյուջե, state budget, государственный бюджет** - մեկ տարվա (սովորաբար, հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես ընդունված է ՀՀ-ում) առումով տվյալ պետության եկամուտների եւ ծախսերի նախահաշիվն է, որում ներառվում են եկամուտների կազմավորման ու նախատեսվող ծախսերի ուղղությունները: Պետական բյուջեն կազմվում է տվյալ երկրի կառավարության կողմից եւ վերջնական տեսքով ընդունվում ու հաստատվում է բարձրագույն օրենսդիր մարմինների կողմից:

**պետական բյուջեի դեֆիցիտ, state budget deficit, дефицит государственного бюджета** - երբ նախատեսվող ծախսերը գերազանցում են սպասվելիք եկամուտներին:

**պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներ, financial resources for state budget deficit, финансовые средства на погашение дефицита государственного бюджета** - ներ-

քին եւ արտաքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցներ են՝ 1) ներքին, այդ թվում՝ ՀՀ Կենտրոնական բանկի միջոցներ, ՀՀ առեւտրային բանկերի միջոցներ, պետական արժեթղթեր (պարտատոմսեր, մուրհակներ), պետական գույքի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) մուտքեր, այլ ներքին աղբյուրներ, 2) արտաքին, այդ թվում միջազգային կազմակերպությունների միջոցներ (վարկեր), օտարերկրյա պետությունների միջոցներ (վարկեր), այլ արտաքին աղբյուրներ:

**պետական բյուջեի եկամուտների աղբյուրներ, state budget income sources, источники доходов государственного бюджета** - դասակարգվում են ըստ՝ ա) հարկային եկամուտների եւ տուրքերի (պետական եւ տեղական), բ) ոչ հարկային եկամուտների, գ) կապիտալի գործառնություններից եկամուտների, դ) պաշտոնական տրանսֆերտներից մուտքագրումների:

Հարկային եկամուտներն ու տուրքերն են՝ ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, շահութահարկը, եկամտահարկը, գույքահարկը, հողի հարկը, հաստատագրված վճարները, մաքսային տուրքը, պետական տուրքը (բացառությամբ օրենքով սահմանված՝ համայնքների բյուջեներ մուտքագրվող պետական տուրքի տեսակների), հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները եւ տույժերը (բացառությամբ օրենքով սահմանված համայնքների բյուջեներ մուտքագրվող հարկերի գծով չվճարման համար գանձվող տուգանքների եւ տույժերի):

Ոչ հարկային եկամուտներն են՝ ՀՀ Կենտրոնական բանկի ծախսերի եւ մասհանումների նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը, դիվիդենտները (շահութաբաժինները), պետական ձեռնարկությունների եւ գույքի, համայնքների վարչական տարածքից դուրս գտնվող պետական պահուստի հողերի վարձակալության եւ օգտագործման վարձավճարներն ամբողջությամբ, պետության տված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսները), բռնագրավված, տիրազուրկ եւ ժառանգության իրավունքով պետությանն անցած գույքի իրացումից մուտքերը, պետական վիճակախաղերի անցկացումից ստացված եկամուտները, իրավախախտումների համար գործադիր եւ դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը, ճանապարհային վճարը, օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտները:

Կապիտալի գործառնություննե-

րից եկամուտներն են՝ պետությանը պատկանող հիմնական միջոցների օտարումից մուտքերը, պետական բյուջեի միջոցների հաշվին պահվող բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի օտարումից մուտքերը, պետության պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից մուտքերը, պետական սեփականություն համարվող հողի եւ ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքերը:

Պաշտոնական տրանսֆերտներն են՝ օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների տրամադրած տրանսֆերտները, այլ աղբյուրներից ստացվող տրանսֆերտները:

**պետական բյուջեի ծախսեր, state budget expenditures, расходы государственного бюджета -** դասակարգվում են ըստ. ա) պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների՝ ֆունկցիոնալ կամ գործառնական դասակարգման, բ) տնտեսագիտական բովանդակության: Պետական բյուջեի միջոցով ֆինանսավորվում են պետական նշանակության ծրագրերը եւ ծախսերը հետեւյալ հիմնական ուղղություններով. ընդհանուր բնույթի պետական ծառայությունների, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության եւ անվտանգության, կրթության եւ գիտության, առողջապահության, սոցիալական ապահովագրության եւ սոցիալական ապահովության, բնակարանային կոմունալ տնտեսության, մշակույթի, սպորտի եւ կրոնի, վառելիքաէներգետիկ համալիրի, գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ջրային տնտեսության եւ ձկնաբուծության, լեռնահանքային արդյունաբերության եւ հանքային հանածոների (բացառությամբ վառելիքի), վերամշակող արդյունաբերության, շինարարության եւ բնապահպանության, տրանսպորտի եւ կապի, ճանապարհային տնտեսության եւ պետական բյուջեի ծախսերի հիմնական ուղղությունների չդասվող այլ ծախսերի, այդ թվում՝ կառավարության պահուստային հիմնադրամ, համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ, համայնքների բյուջեներին պատվիրակված լիազորությունների համար տրամադրվող հատկացումներ, համայնքների կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ:

**պետական բյուջեի կատարում, state budget execution,**

**исполнение государственного бюджета** - բյուջեի կատարման կարգը սահմանում է կառավարությունը, որի կատարման ընթացքում պետական կառավարման համապատասխան մարմինների ղեկավարները կարող են պետական բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված հոդվածների միջեւ կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին օրենքով սահմանված չափաքանակը: Ազգային ժողովի կողմից հաստատված պետական բյուջեում փոփոխություններ եւ կամ լրացումներ կարող են կատարվել ԱԺ-ի պատգամավորների եւ կառավարության առաջարկությամբ օրենսդրական նախաձեռնության կարգով: Պետբյուջեում այն փոփոխությունները կամ լրացումները, որոնք նվազեցնում են պետբյուջեի եկամուտները կամ ավելացնում ծախսերը, ԱԺ-ն քննարկում է միայն կառավարության եզրակացության առկայությամբ եւ ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Պետբյուջեում փոփոխությունները եւ (կամ) լրացումները կատարվում են օրենքով: Պետբյուջեի կատարման պատասխանատուն կառավարությունն է եւ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, Ազգային ժողով է ներկայացնում տեղեկատվություն:

**պետական բյուջեի կատարման հսկողություն եւ վերահսկողություն, supervision and control of state budget execution, надзор и контроль за исполнением государственного бюджета** - բյուջեի կատարման հսկողությունն իրականացնում է կառավարությունն իր սահմանած կարգով, իսկ վերահսկողությունն իրականացնում է Ազգային ժողովը՝ տվյալ տարվա պետբյուջեի մասին օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ, օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների ու վարկերի օգտագործման նկատմամբ, բյուջետային պարտավորությունների կատարման, բյուջետային միջոցների ծախսման օրինականության եւ հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման ուղղությամբ:

**պետական բյուջեի նախագիծ, draft state budget, проект государственного бюджета** - ներառում է կառավարության բյուջետային ուղերձը, պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը, պետբյուջեի նախագծի վերաբերյալ կառավարություն

ներկայացված Կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը: Կառավարության բյուջետային ուղերձը ներառում է՝ կառավարության զեկույցը տարվա սոցիալ-տնտեսական զարգացման եւ հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ բյուջեի կատարումն ապահովող օրենքների նախագծերը, պետության սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների կանխատեսումն առաջիկա երեք տարվա համար, պետբյուջեի մասին օրենքի նախագծի բացատրագիրը: Վերջինս այդ օրենքի նախագիծը հիմնավորող փաստաթղթերի ամբողջություն է, որը ներառում է պետբյուջեի մասին օրենքի նախագծում նախատեսված եկամուտների, ծախսերի եւ պակասուրդի (հավելուրդի) հիմնավորումը, այդ թվում՝ պակասուրդի ֆինանսավորման նպատակով ներգրավվող վարկերի տոկոսադրույքները եւ հատկացման ժամկետները, ինչպես նաեւ այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ տարվա եւ ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային եւ սպասվելիք համապատասխան ցուցանիշների նկատմամբ:

**պետական բյուջեի պրոֆիցիտ (հավելուրդ), state budget overflow, избыток государствен-ного бюджета** - արդյունք է, երբ սպասվելիք եկամուտները գերազանցում են նախատեսված ծախսերին:

**պետական գույք**, **state property, государственное имущество** - սեփականության իրավունքով պետությանը պատկանող գույք, այդ թվում՝ պետական ընկերությունների բաժնետոմսեր, պետական մասնակցությամբ ընկերությունների եւ ոչ պետական ընկերությունների պետական բաժնետոմսեր, ինչպես նաեւ գույքի առանձին տարրեր:

**պետական գներ, government prices, государственные цены -** շուկայական տնտեսության պայմաններում սահմանվում են ամենեւին էլ ոչ միայն պետական ձեռնարկությունների արտադրանքի համար: Շուկայական տնտեսության պայմաններում պետական գները սահմանվում են մենաշնորհ ձեռնարկությունների արտադրանքի համար, տվյալ երկրի տնտեսության համար բազիսային համարվող ռեսուրսների համար, սոցիալապես կարեւոր ապրանքների համար: Պետական գների համակարգը բաղկացած է երկու տարրից. 1) միայն կառավարության կողմից սահմանվող հաստատուն գները, 2) կարգավորվող գներ, որոնք հաշ-

վի են առնում տնտեսական իրավիճակի փոփոխությունները:

**պետական եկամուտներ, state revenues, государственные доходы** - պետական գործակալների կողմից ստացվող եկամուտներ, տուրքեր եւ ոչ հարկային այլ վճարումներ: Ոչ հարկային պետական վճարումները լինում են պարտադիր եւ կամավոր: Պարտադիր վճարումների հիմք է հանդիսանում իրավասու մարմինների կողմից իրավաբանական եւ ֆիզիկական անձանց օգտին որոշակի գործողությունների կատարումը (այս կամ այն իրավունքների տրամադրումը, աշխատանքների, ծառայությունների կատարումը): Ոչ հարկային պետական եկամտի մեջ մտնող կամավոր վճարումների մուծումը հիմնված է իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կամքի ազատ արտահայտման վրա: Ոչ հարկային վճարումներին բնորոշ է մուտք եղած գումարների օգտագործման նպատակայնությունը:

**պետական եւ համայնքների բյուջեներ, state and communities budget, государственный бюджет и бюджеты общества** - պետությանը եւ տեղական ինքնակառավարման մարմիններին Սահմանադրությամբ եւ օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձեւավորման եւ ծախսման ֆինանսական ծրագրերն են՝ որոշակի ժամանակահատվածի համար: Բյուջեները կազմվում, քննարկվում եւ հաստատվում են Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով:

**պետական պարտք, public debt, государственный долг** - Հայաստանի Հանրապետության անունից և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի անունից (բացառությամբ ռեզիդենտների հանդեպ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի առկա պարտքային պարտավորությունների) ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումար:

**պետական (գանձապետական) պարտատոմս, state short-term and long-term bonds, государственные краткосрочные и долгосрочные облигация** - պետության անունից լիազոր մարմնի կողմից ազգային արժույթով թողարկված պարտատոմսեր: Մասնավորապես Հայաստանի Հանրապետության անունից պետական պարտատոմս թողարկվում է նաեւ արտարժույթով: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության Գանձապետական պահառուի միջոցով կարելի է ձեռք բերել մինչև 1 տարի մարման ժամկետով պետական կարճաժամկետ

պարտատոմսեր (ՊԿՊ) և 3 ամսից մինչև 25 տարի մարման ժամկետով պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի (ԽԱՊ): ՊԿՊ-երն իրացվում են նաև դիլեր-բանկերի միջոցով: ԽԱՊ-երը տեղաբաշխվում են բացառապես Գանձապետական պահառուի կողմից կազմակերպվող ազատ վաճառքի միջոցով և վաճառվում են միայն ֆիզիկական անձանց: Գանձապետական պահառուն հայտեր է ընդունում ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական, ինչպես նաև ռեզիդենտ իրավաբանական անձանցից (բացառությամբ բանկերի): ԽԱՊ-երը գրավադրման, նվիրատվության և առք ու վաճառքի ենթակա չեն, սակայն հետգնման օրերին: Կարող են դրանք հետ վերադարձվել:

**պետական մասնակցությամբ ձեռնարկություններ, state-owned enterprises, предприятия с долей госсобственности** - պետական մասնակցությամբ ձեռնարկություններ են համարվում այն ձեռնարկությունները, որոնց գույքի կազմում պետության (իշխանության տեղական մարմինների) սեփականության մասը 50%-ը եւ դրանից ավելին է:

**պետական վարկ, state credit, государственный кредит** - վարկային հարաբերությունների համակարգ է, որում կողմերից մեկը պետությունն է: Պետական վարկի հիմնական ձեւերն են՝ պետական փոխառությունները, խնայդրամարկղերում բնակչության ավանդները, որոնց միջոցով վերջիններս ձեռք են բերում պետական արժեթղթեր: Պետական վարկերը հանդես են գալիս երկու առումով՝ ներքին եւ միջազգային: Ներքին վարկի դեպքում, երբ վարկատուները բանկերն են, ապա պետությունը կատարում է վարկառուի (փոխառուի) դեր, իսկ երբ վարկառուները տեղական մարմիններն են (մարզ, համայնք եւ այլն), ապա պետությունն իրականացնում է վարկատուի դեր: Միջազգային վարկի դեպքում պետությունը, որպես վարկատու եւ վարկառու, փոխհարաբերությունների մեջ է մտնում այլ երկրների հետ:

**պետական ֆինանսներ, public finances, государственные финансы** - այն ֆինանսներն են, որոնց վիճակագրության տեղեկատվական բազան ձեւավորված է ֆինանսների նախարարության կողմից Ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրած պետական եւ համայնքային բյուջեների կատարման մասին, ինչպես նաեւ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշվետվությունների հիման վրա:

**պետական գնումներ, govern-**

**ment purchases, государственные закупки** - պետության կողմից ձեռք բերվող ապրանքների եւ ծառայությունների ամբողջություն՝ երկրի համապետական կարիքների բավարարման համար:

**պետական խնայողություն, public savings, государственные сбережения** - պետական բյուջեի եկամուտների եւ ծախսերի դրական տարբերություն:

**պետական ծախսեր, government purchases, государственные расходы** - պետության՝ ապրանքների գնման եւ ծառայությունների վճարման համար կատարվող ծախսերը, որոնք ազգային հաշիններում նշվում են G նշանով:

**պետական հատված, public sector, государственный сектор** - երկրի տնտեսության այն մասը, որն ամբողջությամբ վերահսկվում է պետության՝ կառավարության, կողմից:

**պետական ներքին պարտք, national debts, государственный внутренний долг** - պետության պարտքը իր երկրի բնակչությանը:

**պետական նպաստ, subvention, субвенция** - պետական ֆինանսական նպաստ, որը տրամադրվում է իշխանության տեղական մարմիններին, տնտեսության տարբեր ճյուղերին կամ ձեռնարկություններին: Ի տարբերություն դոտացիայի, նպաստի այս ձեւը տրամադրվում է որոշակի նպատակների համար: Այն օգտագործվում է որպես ձեռնարկությունների եւ բանկերի առողջացման միջոց, որոնք գտնվում են սնանկացման եզրին կամ սպասարկում են ռազմական արդյունաբերության եւ դրա հետ կապված ճյուղերին:

**պետական տուրք, state duty, государственная пошлина** - պետական մարմինների կողմից իրականացվող որոշակի ծառայությունների համար իրավաբանական եւ ֆիզիկական անձանանցից եւ այլ վճարողներից կանխիկ դրամով, տուրքային դրոշմանիշով, կամ վճարողի ունեցած հաշվից գանձվող գումար է, որը սահմանվում է բազային տուրքի նկատմամբ տոկոսավճարով կամ հաստատագրված վճարով:

**պլաստիկ քարտեր, plastic cards, пластиковые карточки** - տվյալ բանկի կողմից հաճախորդին տրված քարտն է, որը հանդես է գալիս քարտի տիրոջ անվանմամբ, ստորագրությամբ եւ ծածկագրի համարով: Պլաստիկ քարտի ցանկացած տեսակ սպառողի կողմից օգտագործվում է որպես վճարման մեխանիզմ: Պլաստիկ քարտերը համարվում են անկանխիկ հաշվարկների կազմակերպման ամենահիմնական եղանակներից մեկը: Օգտագործվող քարտերի տեսակները

սովորաբար նկարագրվում են որպես դեբետային, կրեդիտային, դրամական քարտեր:

**պոզիտիվ տնտեսական տեսություն, positive economics, позитивная экономическая теория** - տնտեսագիտության այն մասը, որն ուսումնասիրում է փաստերը եւ դրանց միջեւ կապերը:

**պոլիպոլիա, polypoly, полиполия** - իրավիճակ շուկայում, որի դեպքում գոյություն ունի խոշոր վաճառողների սահմանափակ քանակ: Ի դեպ, այդ քանակը բավարար է մրցակցություն եւ մրցություն ապահովելու համար:

**պրինցիպալ, principal, принципал -** 1) հիմնական, գլխավոր պարտապան պարտավորության մեջ: 2) ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ուրիշ անձի լիազորում է գործելու որպես գործակալ, 3) գործարքին իր հաշվին մասնակցող անձ, 4) պարտատոմսի անվանական արժեքը, որը չի ներառում հաշվարկված տոկոսները:

**պրոմեսա, promise, промесса** -փաստաթուղթ, որով շահող փոխառության՝ պարտատոմսի կամ վիճակախաղի տոմսի տերը՝ պրոմեսի վաճառողը, պարտավորվում է շահելու դեպքում որոշակի վճարով շահումը զիջել ուրիշ անձի՝ պրոմեսի գնորդին:

**պրոսպերիտի**, **prosperity, просперити** - տնտեսական ծաղկում, առաջադիմություն: Այս տերմինը ի հայտ է եկել ԱՄՆ-ում, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երկրի տնտեսական վերելքի ժամանակաշրջանը բնութագրելու համար:

## Ջ

**ջենտլմենական համաձայնագիր, gentleman's agreement, джентльменское соглашение** - ոչ պաշտոնական, բանավոր համաձայնություն:

**Ջիֆենի ապրանքներ, Giffen goods, товары Джиффена** - ապրանքներ, որոնք չեն ենթարկվում «պահանջարկի օրենքին», այսինքն գների բարձրացմանը զուգընթաց ավելի շատ են գնվում: Ջիֆենի ապրանք կարող է լինել ոչ միայն հացը, այլեւ բնակչության աղքատ խավերի համար լայն սպառման այլ ապրանքներ:

**Ջինի գործակից, Gini coefficient, коэффициент Джини -** ցույց է տալիս, թե որքան անհավասարաչափ են բաշխված եկամուտները բնակչության առանձին խմբերի միջեւ եւ որը թույլ է տալիս դատել տվյալ երկրում տնտեսական անհավասարության մակարդակի մասին: Ընդ որում, որքան գործակիցը մոտ է 1-ի, այնքան բարձր է հասարակության բեւեռացվածության աստիճանը:

**ջոբբեր, jobber, джоббер** - Լոնդոնի ֆոնդային բորսայի դիլեր: Ի տարբերություն բորսաների մեծ մասի դիլերների, ջոբբերներն իրավունք չունեն կատարելու բրոկերների գործառույթները եւ գործառնություններ իրագործել անմիջականորեն բորսայի անդամ չհանդիսացող հաճախորդների հետ:

## Ռ

**ռաբաթ, rebate, рабат** - զեղչ կատարել: Զեղչ՝ ապրանքի գնից, որը տրամադրվում է տոկոսների կամ որոշակի գումարի տեսքով՝ մեծ խմբերով ապրանքներ գնելու ժամանակ:

**ռամբուրսավորել, reimburse, рамбурсировать, возмещать** - վերադարձնել պարտքերը, փոխհատուցել ծախսերը:

**ռանտյե, rentier, рантье** - կապիտալի տեր, որն ապրում է կապիտալի եկամուտներով: Ռանտյեն եկամուտը ստանում է փոխատվական տոկոսի եւ բաժնետոմսերի շահութաբաժինների տեսքով:

**ռեգիստր, register, регистр** - Ձեռնարկությունների պետական ռեգիստրը պետական մարմին է՝ տեղական տարածքային (մարզային) ստորաբաժանումներով, որն իրականացնում է ձեռնարկությունների եւ մասնավոր ձեռնարկատերերի պետական գրանցումը (ռեգիստրացիան) Հայաստանի Հանրապետության տարածքում: Ձեռնարկությունների պետական ռեգիստրի կարգը սահմանված է կանոնադրությամբ եւ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Ձեռնարկությունների պետական ռեգիստրը, վերոհիշյալ օրենքի համաձայն, վարում է իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի պետական գրանցամատյանը: Պետական գրանցամատյանը ներառում է ձեռներեցների անունները, ձեռնարկությունների անվանումները, ինչպես նաեւ դրանց հիմնադիրների տվյալները, գտնվելու վայրը, իրավակազմակերպական տեսակը, տնտեսական գործունեության տեսակը, կանոնադրական կապիտալի չափը եւ աշխատողների թվաքանակը: Հարկ է նշել, որ աշխատողների թվի մասին իրավաբանական անձանց կողմից տեղեկություններ են տրամադրվում պետական գրանցման ժամանակ (ռեգիստրի) հիմնադիրների կողմից:

**ռեգրես (հետպահանջ), regress, регресс** - վճարված գումարի փոխհատուցման մասին հակադարձ պահանջ, որը ներկայացվում է մի իրավաբանական անձի կողմից մեկ այլ՝ պարտավորված անձին: Ռեգրեսը կիրառվում է մուրհակի կամ

չեկի բողոքարկման ժամանակ:

**ռեկվիզիտներ(վավերապայմաններ), requisites, реквизиты** - որոնց օգնությամբ փաստաթղթերում որոշվում են տնտեսական գործառնությունների կատարման տեղը, ժամանակը, կատարողներն ու այդ գործառնությունների բովանդակությունը եւ դրանով իսկ փաստաթղթին հաղորդվում է ապացուցողական բնույթ: Փաստաթղթերի հիմնական եւ կարեւորագույն ռեկվիզիտներն են կազմակերպության կամ տնտեսավարող սուբյեկտի անվանումը, որտեղ կազմվում է տվյալ փաստաթուղթը, այդ փաստաթղթի անվանումն ու հերթական համարը, գործառնության կատարման թվաքանակը` օր, ամիս, տարի, գործառնությանը մասնակցող կողմերը, գործառնության բովանդակությունը եւ այլն:

**ռեկվիզիցիա, requisition, реквизиция** - տարերային աղետների, վթարների, համաճարակների դեպքում եւ արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներում գույքը օրենքով սահմանված կարգով, պետական մարմինների որոշմամբ, կարող է վերցվել դրա սեփականատիրոջից` ի շահ հասարակության, դրա արժեքը վճարելու պայմանով: Սեփականատերն իրավունք ունի եւ կարող է դատարանում վիճարկել հարկադրաբար վերցված գույքի հատուցման արժեքի չափը:

**ռեկվիրենտ, requirent, реквирент -** մուրհակատեր, որը նոտարիատ է դիմում այս կամ այն օրինական պատճառով մուրհակը բողոքարկելու պահանջով:

**ռեմարկետինգ, remarketing, ремаркетинг** - մարկետինգի տարատեսակ, որի խնդիրն է ապրանքների եւ ծառայությունների պահանջարկի աշխուժացումը` վերջինիս իջեցման դեպքում: Ըստ էության դա կոնկրետ ապրանքի պահանջարկի «կենդանացումն» է:

**ռեյտինգ (վարկանիշ), rating, рейтинг** - գնահատում, որեւէ դասին, կարգին կամ կատեգորիային: Ֆինանսական եւ առեւտրային հաստատությունները վերլուծում են ընկերությունների դրությունը եւ որոշում նրանց վարկունակությունն արտացոլող վարկային ռեյտինգը:

**ռենտա, rent, рента** - 1) հողի, գույքի, կապիտալի օգտագործումից սեփականատիրոջ ստացած եկամուտն է: 2)ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական վկայականով (պոլիս) ապահովագրված անձին կանոնավոր վճարվող դրամական գումարն է:

**ռեպո, repo, repurchase agreement, репо, договор об обратной покупке** - համաձայնագիր է, որն իրենից ներկայացնում է կարճաժամկետ փոխառու-

թյան տեսակ: Այն երկու կողմերից բաղկացած ֆինանսական գործարք է, որի մասնակիցներից մեկը արժեթղթերը կամ ապրանքերը վաճառում է մյուս կողմին եւ միաժամանակ իր վրա պարտավորություն է վերցնում դրանք ետ գնել սահմանված ժամկետում կամ երկրորդ կողմի պահանջի դեպքում:

**ռեպորտ, report, репорт** - արժեթղթերի վաճառման բորսայական ժամկետային գործարք, որոշակի ժամանակ անց նոր, ավելի բարձր կուրսով հետագա գնման պարտավորությամբ: Ի հակադրություն դեպորտի, ռեպորտն ուղղված է արժեթղթերի կուրսի բարձրացմանը:

**ռեստրիկցիա, restriction, limitation, рестрикция** - ոսկու պաշարի արտահոսքը արտասահման, բանկի սնանկացումը եւ այլն հաղթահարելու նպատակով վարկի չափերի սահմանափակումը պետության եւ բանկերի կողմից: 2) Արդյունաբերական միավորման ձեւերից մեկը, որը արտադրության կամ արտահանման սահմանափակման մասին համաձայնության նպատակ ունի: Ռեստրիկցիայի նպատակը գների բարձրացումը եւ գերշահույթի ստացումն է:

**ռիելթոր, realtor, риелтор** - Ռիելտոր, անշարժ գույքի գործառնությունների գործակալ: Ռիելտորը շատ դինամիկ մասնագիտություն է, որ պահանջում է միշտ տեղյակ լինել անշարժ գույքի հետ կապված գործառնությունների տնտեսական, իրավաբանական եւ այլ մակարդակներում կատարվող փոփոխություններին:

**ռիեստր, register, реестр** - Ցուցակ, մատյան (դպրոցական, գրանցման եւ այլն, ցանկացած տեսակի մատյան, դոսիե եւ այլն, ուր պաշտոնապես գրառվում է կարեւոր համարվող ցանկացած փաստ), հաշվառման գիրք:

**ռիսկ (վտանգ), risk, риск** - որոշակի վնաս կրելու, եկամուտը բաց թողնելու հավանականությունն է, կամ համապատասխան եկամուտը ստանալու անվստահությունն է: Եթե հնարավոր է բացահայտել կորուստները եւ հաշվել դրանց տեղի ունենալու հավանականությունը, ապա այդպիսի ռիսկը կոչվում է ապահովագրական ռիսկ: Օրինակ՝ հրդեհը, կողոպուտը, ճանապարհատրանսպորտային պատահարը ապահովագրելի ռիսկեր են, քանի որ ապահովագրական ընկերությունը կարող է հաշվել դրանց հավանականությունը եւ ապահովագինը: Եթե ռիսկն այնքան հազվադեպ է, որ հնարավոր չէ հաշվել դրա հավանականությունը, ապա ոչ մի ապահովագրող չի համաձայնվի ապահովագրել այն, եւ այդպիսի ռիսկը կոչվում է անապահովագ-

րելի ռիսկ:

**ռիսկային ակտիվներ risk assets, рисковые активы** - 1) բանկային բոլոր ակտիվներն են, որոնք տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան չունեն ռիսկի զրոյական գործակից: Համաձայն ներկայումս գործող օրենսդրության, ՀՀ տարածքում գործող բանկերի համար ռիսկի զրոյական գործակիցներ ունեն ՀՀ Կենտրոնական բանկի կանոնակարգ 2-ով սահմանված համապատասխան ակտիվները, 2) բանկային ակտիվներն են, որոնց արժեքը ենթարկվում է շուկայական իրավիճակների եւ ակտիվների որակական փոփոխությունների ազդեցությանը:

**ռիսկի կառավարում, risk management, управление риском** - ընկերությունների, բանկերի եւ ֆիրմաների կողմից կիրառվող մեթոդների, միջոցառումների եւ գործողությունների ամբողջությունն է` ռիսկը նվազագույնին հասցնելու համար: Գործում են տարբեր տեսակի ռիսկերի փոքրացման ընթացակարգեր, որոնց հետ բանկը, ընկերությունը, ֆիրման առնչվում է իր գործունեության ընթացքում: Գոյություն ունեն ռիսկերի կառավարման հետեւյալ հիմնական մեթոդները` ռիսկի դիվերսիֆիկացիա, ռիսկերի վերլուծություն եւ մոնիտորինգի տարբեր մեթոդների կիրառում, մարկետինգային հետազոտությունների իրականացում, ռիսկի հեջավորում եւ ապահովագրում:

**ռոյալթի, royalty, роялти** - հանքարդյունահանման դիմաց լիցենզառուի կողմից պետական բյուջե վճարվող գումար: Ռոյալթիի վճարման ժամանակահատված` յուրաքանչյուր եռամսյակ` իրացման պահից սկսած:

## Ս

**սակագին մաքսային, customs tariff, таможенный тариф** - ըստ ապրանքների խմբերի դասակարգված տուրքերի ցուցակ, որոնք գանձվում են տվյալ երկրում ներմուծվող կամ արտահանվող ապրանքներից: Մաքսային սակագինը ներառում է ապրանքների անվանումը, հարկման միավորը, տուրքի դրույքը, ինչպես նաեւ մաքսային գանձումները:

**սակարկություն**, **bidding, торги** - նախօրոք պայմանավորված ժամկետում ապրանքների վաճառման, պատվերների տեղաբաշխման եւ կապալների տրման եղանակ` մի քանի առաքողների եւ կապալառուների կողմից առաջարկների ներգրավման ճանապարհով: Գործարքները կնքվում են այն մասնակիցների հետ, որոնց առաջարկներն ավելի շահավետ են:

**սահմանափակումներ ոչ սա-**

**կագնային, non-tariff restrictions, нетарифные ограничения** - ապրանքների ներմուծման սահմանափակումներ, որոնք կիրառվում են արտասահմանյան մատակարարների կողմից՝ մրցակցությունը շուկայում զսպելու համար:

**սակագնային քվոտա, tariff quota, тарифная квота** - ապրանքի ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափի տարբերակված սահմանում՝ կախված տվյալ ապրանքի ներմուծման ծավալից:

**սառեցված հաշիվ, frozen, blocked account, замороженный, блокированный счет** - 1) բանկային հաշիվ է, որով վճարումները դադարեցվել են մինչեւ դատարանի որոշումը կամ մինչեւ այն պահը, երբ օրինական գործողությունների հետեւանքով հնարավոր կլինի հաշվից գումար հանել: Հաշիվը սովորաբար սառեցվում է հաշվետիրոջ սնանկացման կամ մահվան դեպքում: Մահացած մարդու բանկային հաշիվը սառեցվում է նախքան դատարանի որոշմամբ մահացածի գույքը բաժանելը: Դատարանի որոշմամբ, որոշում են հաշվի նոր օրինական տիրոջը կամ տերերին, 2) բանկային հաշիվ է որեւէ երկրում այդ երկրի արժույթով եւ այդպիսի հաշվում եղած միջոցները կարող են օգտագործվել միայն այդ երկրի ներսում, 3) հաշիվ է, որի օգտագործումը լրիվ սահմանափակվում է այն դեպքում, երբ հաճախորդը ցանկանում է վաճառել նախկինում ձեռք բերված արժեթղթերը, որոնց դիմաց դեռեւս վճարում չի կատարվել, բայց փորձում է վաճառքից ստացված հասույթը հանել հաշվից, 4) բանկային հաշիվ է, որը չի կարող օգտագործվել, հիմնականում այն պատճառով, որ դրա օգտագործումն արգելված է կառավարության կողմից:

**սառեցված ակտիվներ, frozen assets, замороженные активы** -1) ակտիվներ, որոնք չեն կարող իրացվել առանց զգալի կորուստների, 2) ակտիվներ, որոնք այս կամ այն պատճառով ժամանակավորապես չեն թույլատրվում օգտագործել կամ վաճառել, մինչեւ գործընթացների ավարտը: Երբեմն սեփականատերը չի կարող այդ ակտիվներն արտահանել վերադաս մարմինների արգելման պատճառով:

**սելեկտիվ կարգավորում, selective controls, селективное регулирование** - Կենտրոնական բանկի կողմից կիրառվող՝ վարկի մի շարք կոնկրետ տեսակների մատչելիության փոփոխության մեթոդներ:

**սեկվեստր, sequestration, секвестр -** պետական բյուջեի ծախսային մասի գծով նախատեսված գումարների կրճատումն է, որը պայմանավորված է եկամտային

հոդվածների գծով պլանների չկատարմամբ: Դա հարկադրված քայլ է՝ երկրի տնտեսական վատ վիճակի հետ կապված:

**սերտիֆիկատ, certificate, сертификат** - ֆինանսավարկային հարաբերությունների ոլորտում հաշվարկային պալատների հավաստումներ, որոնց հիման վրա կարգավորվում է պալատների անդամ բանկերի պարտավորությունը. պետական փոխառության պարտատոմսի տեսակ, որը թողարկվում է ոչ մեծ խմբաքանակով եւ բաշխվում մանր ու միջին պահողների շրջանում: Արտաքին առեւտրական պրակտիկայում սերտիֆիկատը փաստաթուղթ է, որը տրվում է լիազորված համապատասխան մարմինների կողմից՝ առեւտրի կազմակերպման իրավունքի համար:

**սերտիֆիկատ որակի, quality certificate, сертификат качества** - պայմանագրով մատակարարվող արտադրանքի որակը հավաստող փաստաթուղթ, որը վճարով տրվում է որակը սահմանող հատուկ մարմնի կողմից: Մարմնի փորձագետները որակը որոշում են ըստ յուրաքանչյուր խմբից վերցրած նմուշների: Այդպիսի սերտիֆիկատի գործողության ժամկետը սահմանափակ է:

**սեփականություն, property, имущество, собственность** - սուբյեկտին պատկանող գույքն է եւ գույքային իրավունքները, որոնց նկատմամբ ունի օրենքով եւ այլ իրավական ակտերով ճանաչված սեփականության իրավունք: Նա կարող է իր հայեցողությամբ տնօրինել, տիրապետել եւ օգտագործել այդ սեփականությունը:

**սեփականություն բաժնետիրական, stock ownership, акционерная собственность** - սեփականության կոլեկտիվ ձեւի տարատեսակներից մեկն է, որն առաջանում է բաժնետոմսերի եւ պարտատոմսերի իրացման միջոցով: Բաժնետոմսերի տերերը հանդես են գալիս որպես փայատերեր, իսկ պարտատոմսի տերերը՝ ընկերության վարկատուներ:

**սեփականություն կոլեկտիվ, community property, коллективная собственность** - աշխատանքային կոլեկտիվի՝ արտադրության միջոցների եւ արդյունքների համատեղ տնօրինում, օգտագործում:

**սեփականություն կոոպերատիվ, cooperative property, кооперативная собствен-ность** - կոոպերատիվ սեփականությունը կոլեկտիվ սեփականության ձեւերից մեկն է: Կոոպերատիվի անդամներին են պատկանում արտադրության միջոցները եւ թողարկած արտադրանքը:

**սեփականություն համատեղ,**

**joint ownership, совместная собственность** - անբաժանելի սեփականություն, որը պատկանում է մի քանի տերերի: Այդպիսի սեփականության տնօրինումը հնարավոր է միայն բոլոր տերերի ընդհանուր համաձայնությամբ:

**սեփականություն մասնավոր, private property, частная собственность** - սեփականության ձեւերից մեկն է. ֆիզիկական կամ իրավաբանական անձի բացարձակ իրավունքը` կոնկրետ գույքի նկատմամբ: Մարդու եւ քաղաքացու իրավունքի ֆրանսիական հռչակագիրը (1789թ.) սեփականությունը հայտարարեց սուրբ եւ անձեռնմխելի իրավունք:

**սեփականություն մտավոր, intellectual property, интеллектуальная собственность** - իրավունք, որը վերաբերում է գրական, գեղարվեստական եւ գիտական ստեղծագործություններին, գյուտերին, գիտական հայտնագործություններին, արդյունաբերական սեփականության որոշ տեսակներին (ապրանքանիշերին, ֆիրմային անվանմանը, սպասարկման նիշին), համաձայնագրերին: Մտավոր սեփականության պահպանության օբյեկտ է հանդիսանում հեղինակային իրավունքը:

**սեփական կապիտալ, own capital, equity, собственный капитал** - տնտեսական միջոցների` ակտիվի, կազմավորման աղբյուրների` պասիվի մի մասն է, որն արտացոլված է հաշվապահական հաշվեկշռի պասիվում: Նրանում ներառվում են կանոնադրական կապիտալը, լրացուցիչ կապիտալը, պահուստները, կուտակված շահույթը, շահաբաժինների գծով կանխավճարները: Սեփական կապիտալը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական կայունության գնահատման ամենահիմնական ցուցանիշներից մեկն է:

**«Սեւ կապիտալիզմ», “black” capitalism, «черный» капитализм** - նոր ֆիրմաների ստեղծում, որոնք տնօրինում եւ կառավարում են նեգրերը:

**սինդիկատ, syndicate, синдикат** - ձեռնարկատերերի միավորում, որն իր վրա է վերցնում ամբողջ առեւտրական գործունեության իրականացումը` գների որոշում, արտադրանքի իրացում եւ այլն, նրա մեջ մտնող ձեռնարկությունների արտադրական եւ իրավաբանական անկախությունը պահպանելու պայմաններում:

**ՍԻՖ, CIF** (**cost, insurance, freight), СИФ (стоимость, страхование и фрахт)** - արտաքին առեւտրի ժամանակ առքուվաճառքի պայմանագրի ձեւ, որը կապված է ծովային ճանապարհով ապրանքի փոխադրման հետ: ՍԻՖ պայմանագրի կիրառման ժամանակ ապրանքի գինը ներառում է դրա ինքնարժեքը,

ապահովագրության եւ փոխադրման ծախսերը՝ առաքման նավահանգստից մինչեւ ստացման նավահանգիստ:

**սովորական գործունեությունից շահույթ (վնաս)**, **profit (loss) from common activity, прибыль (убыток) от обычной деятельности** - գործառնական գործունեությունից շահույթի (վնասի), ֆինանսական ծախսերի (ֆինանսական վարձակալության եւ վարկերի ու փոխառությունների հետ կապված ծախսեր), կապակցված կազմակերպությունների շահույթի (վնասի) եւ այլ գործառնական գործունեությունից շահույթի (վնասի) հանրագումարն է:

**սովորական բաժնետիրական կապիտալ, common share capital, обычный акционерный капитал** - որի արժեքը չափվում է բանկի կողմից թողարկվող սովորական բաժնետոմսերի անվանական արժեքով:

**սպառողական ապրանքներ, consumer goods, потребительские товары** - ապրանքներ եւ ծառայություններ, որոնք անմիջականորեն բավարարում են մարդու պահանջմունքները:

**սպառողական զամբյուղ, consumer basket, потребительская корзина** - բնակչությանն անհրաժեշտ սպառողական ապրանքների եւ ծառայությունների ամբողջությունը, մարդու ֆիզիոլոգիական եւ սոցիալական պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ ապրանքների եւ ծառայությունների վրա կատարվող ծախսերի գումարը: Նվազագույն սպառողական զամբյուղը հաշվարկվում է՝ ելնելով այն նվազագույն պահանջմունքներից, որոնք անհրաժեշտ են չորակավորված աշխատողի եւ նրա խնամակալության տակ գտնվող անձանց աշխատուժը վերարտադրելու համար:

**սպառում, consumption, потребление** - սպառողների կողմից ձեռք բերված ապրանքների եւ ծառայությունների ամբողջություն:

**սպառողական վարկ, consumer credit, потребительский кредит** - բանկի կողմից տրամադրվում է բնակչությանը սպառման ապրանքներ գնելու կամ կենցաղային ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար: Որպես կանոն, սպառողական վարկ տրամադրվում է մինչեւ 3 տարի ժամկետով՝ սահմանված տոկոսադրույքաչափերով: Տրամադրված վարկի դիմաց վճարումներ չկատարելիս, վարկառուի գրավ դրած գույքի սեփականության իրավունքն անցնում է բանկին եւ վաճառվում աճուրդով կամ այլ ձեւով:

**սպառողական գների ինդեքս, consumer price index, индекс потребительских цен** - բնութագրում է բնակչության անձնական սպառման համար ձեռք բերված ապրանքների եւ ծառայությունների գների (սակագների) ընդհանուր մակարդակի փոփոխությունը ժամանակի ընթացքում: Գների ինդեքսների հաջորդական փոխկապակցված հաշվարկի (ագրեգատային) համար օգտագործվող կշիռների համակարգն է ըստ տնային տնտեսությունների հետազոտությունների ծախսերի, հաշվարկվում է նախորդ տարվա տվյալների հիման վրա:

**սպառողի պաշտպանություն, consumer protection, защита потребителя** - օրենսդրություն, որը նպատակ ունի սպառողին պաշտպանել առեւտրի խարդախ, անազնիվ գործելակերպից եւ վտանգավոր ապրանքներից: Ընդունված են սպառողի շահերի պաշտպանության վերաբերյալ տարբեր օրենքներ:

**սպեկուլյանտ, speculator, спекулянт** - ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը գործարքներ է կնքում՝ բացառապես գների փոփոխությունից շահույթ ստանալու նպատակով:

**սպեկուլյացիա, speculation, спекуляция** - գնում եւ վաճառք այն նպատակով, որ ավելի ուշ, գների փոփոխության հետեւանքով կարելի լինի շահույթ ստանալ:

**սպեկուլյատիվ արժեթուղթ, speculative security, спекулятивная ценная бумага** - շուկայական արժեթղթեր, որոնք ձեռք են բերվում եւ պահվում մոտ ժամանակաշրջանում վերավաճառելու նպատակով:

**սպրեդ, spread, спрэд -** 1) մատակարարման տարբեր ժամկետներում ֆյուչերսային պայմանագրերով ապրանքատեսակների միաժամանակյա առք ու վաճառք է. 2) տարբեր ժամանակահատվածների ընթացքում կամ տարբեր գներով մեկ տեսակի ապրանքի միաժամանակյա առք ու վաճառք է օպցիոն պայմանագրերով, 3) առք ու վաճառքի գների միջեւ տարբերությունն է:

**սվոփ-(փոխանակում), swap, своп** - 1) ֆինանսափոխանակային գործարք է, որի ժամանակ անհրաժեշտ ակտիվը չի գտնվում, այլ փոխանակվում է առկա գտնվող մեկ այլ ակտիվի հետ՝ փոխադարձ համաձայնության հիման վրա: 2) Փոխանակում կամ բարտեր (պարտավորությունների կամ ակտիվների փոխանակման գործառնություն), որը կատարվում է դրանց կառուցվածքը բարելավելու, ռիսկերը եւ ծախսերը նվազեցնելու, շահույթ ստանալու նպատակով, 3) ժամանակավոր գնում՝ հետագա վաճառքի երաշխավորու-

թյամբ, 4) արժեթղթերով միաժամանակյա փոխանակման գործառնություն, 5) ազգային արժույթը արտարժույթով փոխանակելու գործառնություն՝ որոշակի ժամանակ անց հակադարձ փոխանակման պարտավորությամբ: Սովորաբար իրականացվում է Կենտրոնական բանկերի միջեւ, 6) փոխանակում արտարժույթի շուկայում, այսինքն արտարժույթի գնում կամ վաճառք «սփոթ» պայմաններով՝ միաժամանակ կնքելով հակադարձ ֆորվարդային գործարք (օրինակ, արտարժույթի ռիսկը ծածկելու համար), 7) նույն ժամկետով արժույթների գծով տոկոսադրույքների տարբերությունն է:

**սվոփի պայմանագիր, swap agreement, своп-соглашение** - երկու կողմերի միջեւ համաձայնագիր է դրամական միջոցների հոսքերի փոխանակման մասին, որով առաջին հոսքն ուղարկվում է հաստատագրված, իսկ հակադարձը՝ լողացող կուրսով (փոխարժեքով):

**սվիֆտ, SWIFT (Society for Worldwide Interbank Financial Telecommunications), СВИФТ (Международная межбанковская система передачи информации и совершения платежей)** - միջբանկային հեռահաղորդակցությունների եւ համակարգչային ծառայությունների հետ կապված միջազգային դրամական հաշվարկներ ու վճարումներ կատարելու ավտոմատացված համակարգ է:

**ստագնացիա, stagnation, стагнация, застой** - տնտեսական ցուցանիշների դանդաղ աճման կամ գործարար ակտիվության նվազեցման միտումն է:

**ստալիա, lay time, lay days, сталия** - այն ժամկետը, որի ընթացքում նավը պետք է բեռնվի կամ բեռնաթափվի: Որոշվում է կողմերի համաձայնությամբ, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ տվյալ նավահանգստում սովորաբար ընդունված ժամկետներով:

**ստացական, receipt, расписка, квитанция** - փողի ստացման, պարտքի մարման, վճարումներ կատարելու մասին գրավոր՝ հաստատող փաստաթուղթ:

**ստանդարտ ծախսեր, standard costs, стандартные издержки** - ծառայությունների կատարման կամ արտադրանքի արտադրության ծախսերի մեծությունը գործունեության առավել արդյունավետ պայմաններում:

**ստերիլացում, sterilization, стерилизация** - Կենտրոնական բանկը «ստերիլացում» (բացառում) է պահուստների հավելաճի կամ կրճատման ազդեցությունը փողի զանգվածի վրա՝ բաց շուկայում գործողությունների միջոցով, որոնք ճշտորեն փոխհատուցում են փոփոխությունները պա-

հուստներում՝ բարձրացված արդյունավետությամբ փողի զանգվածը թողնելով անփոփոխ:

**ստիվիդոր, stevedore, стивидор** - նավի բեռնումն ու բեռնաթափումը իրականացնող ֆիրմա: Ստիվիդորին վարձում է նավավարձողը կամ նավատերը:

**ստոկ-բրոկեր, stockbroker, стокброкер, фондовый брокер** - ֆոնդային բրոկեր, ֆոնդային բորսայի անդամ, որը զբաղվում է հաճախորդներին հանձնարարություններ տալու եւ կոմիսիոն վարձատրության գործառնություններով:

**ստոկիստ, stockist, стокист** - առեւտրական ֆիրմա, որին ապրանք արտադրողը պարտավորությունների փոխարեն գնման արտոնյալ պայմաններ է տալիս՝ տվյալ ապրանքի պաշարների որոշակի մակարդակ պահպանելու համար:

**ստվերային տնտեսություն, shadow economy, теневая экономика** - տնտեսական գործունեություն, որ թաքցվում է հարկերից խուսափելու նպատակով կամ հակաօրինական բնույթից ելնելով:

**ստրինգ, string, стринг** - աճուրդային սակարկությունների միավոր, որը հնարավորություն է տալիս որակով միանման լոտերը միավորել:

**սուբսիդիա, financing (subsidizing), субсидирование** - կառավարության կողմից հատկացվող դրամական օժանդակություն, որն ուղղված է որեւէ բարիքի կամ ծառայության մատակարարմանը կամ սպառմանը, վնասի փոխհատուցմանը:

**սուբվենցիա, subvention, субвенция -** դրամական օգնություն է, որը տրամադրվում է վերադաս մարմինների կողմից որպես նպատակային ֆինանսավորում որոշակի միջոցառումների իրականացման համար: Սուբվենցիան նպատակային չօգտագործման դեպքում ենթակա է վերադարձման նույն վերադաս մարմիններին:

**սուպերհիպերինֆլյացիա, superhyperinflatio, супергиперинфляция -** տնտեսական այնպիսի իրավիճակ, երբ գների ամսական աճի տեմպերը կազմում են 50% եւ ավելի: Նման պայմաններում տվյալ տնտեսությունը դառնում է առավել ավերիչ, վտանգավոր եւ անկառավարելի:

**սուպերստոր, superstore, супермаркет** - պարենային եւ արդյունաբերական ապրանքների լայն տեսականու եւ տարբեր ծառայությունների առեւտուր կատարող կենտրոն: Դրանց մեծ մասը նախատեսված է ավտոմեքենա ունեցող գնորդների համար եւ տեղակայված է քաղաքի սահմաններից դուրս: Սուպերստորները, որպես կանոն, ունեն բենզալցակայաններ, անվճար

կանգառներ՝ գնորդների ավտոմեքենաների համար: Կապված ապրանքների վաճառքի մեծ ծավալի հետ, սուպերստորներում գները կարող են 5-10 տոկոսով ցածր լինել, քան սովորական ինքնասպասարկման եւ այլ խանութներում:

**սուպերվիզոր, supervisor, супервизор** - ծառայող, որն իրականացնում է բանկի արտաքին աուդիտը՝ ըստ նրա հաշվետվության:

**սփոթ, spot, спот (առկա ապրանք, կանխիկ վճարում)** - առկա ապրանքներով գործարքի ձեւ, այդ թվում նաեւ կանխիկ արժութային գործարք, որի դեպքում արժույթների փոխանակությունը տեղի է ունենում երկրորդ աշխատանքային օրը՝ չհաշված գործարքի կնքման օրը : Սփոթ գործարքները կնքվում են հեռախոսով, որի հաշվարկները կատարվում են բանկային հեռագրային փոխանցումներով, կամ հաշվարկների էլեկտրոնային համակարգով:

## Վ

**վատ կամ անհուսալի պարտք, bad debt, безнадежный долг** - 1) սահմանված ժամկետում փոխառուի՝ վարկառուի, կամ հաճախորդի կողմից չվճարված պարտքն է այդ գումարը տրամադրող կազմակերպությանը, 2) ցանկացած կրեդիտորական կամ դեբիտորական պարտքն է, որը չի մարվել պայմանագրով սահմանված ժամկետներում եւ շատ հավանական է, չի վերադարձվի, օրինակ, պարտապանի անվճարունակության պատճառով: Նման պարտքը կորուստ է ճանաչվում եւ կազմակերպության հաշվեկշռից դուրս է գրվում որպես գործառնական ծախս: Այդպիսի պարտքերի ծածկման համար ստեղծվում են պահուստներ:

**վարկ, credit, кредит -** օգտագործվում է մի քանի իմաստներով. 1)վերադարձնելու եւ սովորաբար տոկոս վճարելու պայմանով տրամադրվող դրամական (արտարժութային ) կամ ապրանքային փոխատվություն է: Դրանք կարելի է դասակարգել ըստ ժամկետների (կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ), ըստ ապահովության տեսակների (ապահովված, չապահովված կամ բլանկային), ըստ պարտատերերի տեսակների (բանկային պետական, ապահովագրական ընկերությունների, սինդիկատային եւ այլն), ըստ փոխառուների տեսակների (գյուղատնտեսական,արդյունաբերական, կոմունալ, անձնական եւ այլն): 2) Ֆիզիկական անձի կամ կազմակերպության վարկանիշն է կամ ֆինանսական դրությունը:

**վարկային բիզնես, credit business, кредитный бизнес** -

ներառում է հաճախորդներին՝ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց, վարկերի տրամադրման եւ այլ առեւտրային բանկերին ազատ դրամական միջոցների ժամանակավոր փոխանցման գործընթացները՝ որոշակի վարձավճարի դիմաց: Վարկային բիզնեսի մյուս տեսակը կարող է հանդես գալ միջբանկային վարկի կամ ուրիշ բանկում ժամկետային դեպոզիտի տեսքով: Վարկային բիզնեսի զարգացման համար պայման է հանդիսանում ինչպես տնտեսությունում ազատ դրամական միջոցների առկայությունը եւ այդ միջոցների նկատմամբ կարիք ունեցող սուբյեկտների առկայությունը, այնպես էլ վարկային հաստատությունների միջեւ ընթացիկ կապի առկայությունը, բանկային շուկայում ռեսուրսների վերաբաշխման վրա մասնագիտացված եւ բավարար վստահություն ներշնչող միջնորդների առկայությունը:

**վարկային գիծ, credit line, кредитная линия** - վարկառուի՝ փոխառուի, հանդեպ բանկի ունեցած իրավաբանորեն ձեւակերպված պարտավորությունն է, որոշակի ժամանակաշրջանում, սահմանված առավելագույն գումարի սահմաններում նրան վարկեր տրամադրելու: Երբեմն վարկային գիծ բացելու մասին պայմանագրում ամրագրվում է պայման, ըստ որի փոխառուն պարտավոր է բանկում պահել ավանդ վարկային գծի եւ ընտրված վարկերի գումարի որոշակի տոկոսի չափով: Բանկն իրեն իրավունք է վերապահում չեղյալ համարել պայմանագիրը, եթե հաճախորդի ֆինանսատնտեսական իրավիճակը վատթարանում է, փոխառուն վարկային գծի միջոցները չի օգտագործում ըստ նշանակության (պայմանագրում սովորաբար նշվում են միջոցների օգտագործման նպատակները) եւ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

**վարկային ներդրումներ, credit investments, кредитные инвестиции** - իրենցից ներկայացնում են բանկային համակարգի կողմից տնտեսությանը կամ դրա կարիքը զգացող իրավաբանական անձանց տրամադրված վարկերի գծով միջոցներ: Վարկային ներդրումները բաժանվում են կարճաժամկետի՝ տրամադրված 1 տարուց պակաս ժամկետով եւ երկարաժամկետի՝ մեկ տարուց ավել ժամկետով:

**վարկային ռիսկ, credit risk, кредитный риск** - 1) վարկատուի կողմից վարկառուին տրամադրված վարկի գումարի եւ հասանելիք տոկոսների չվերադարձման հավանականությունն է սահմանված ժամկետներում, օրինակ, վարկառուի սնանկացման պատճառով, 2) Այն գործընթացի հավանականությունն է,

ըստ որի վարկատուի գործընկերը՝ վարկառուն, չի կարող կատարել համաձայնեցված պայմաններով նախատեսված իր պարտավորությունները:

**վարկային տոկոսադրույք, credit interest rate, кредитная ставка процента** - որոշակի ժամանակով տրամադրվող վարկի օգտագործման համար հաճախորդի կողմից բանկին վճարվող հաշվարկային գինն է: Վարկային տոկոսադրույքի դասակարգման հիմքում ընկած են՝ վարկի տեսակները (առեւտրային, բանկային, սպառողական եւ այլն), վարկային կազմակերպությունները (Կենտրոնական բանկի զեղչատոկոս, բանկային, լոմբարդային եւ այլն), վարկի ժամկետները (կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ), վարկի օգտագործման ուղղությունները (ընթացիկ ակտիվների համալրմանն ուղղված, օվերդրաֆտ, մուրհակների, զեղչում, նպատակային վարկեր), գործառնությունների տեսակները (տրամադրված վարկերի, ներգրավված դեպոզիտների, միջբանկային վարկի տոկոսները), տոկոսադրույքի հաշվարկման ձեւերը (բարդ եւ պարզ տոկոսներ):

**վարկային քաղաքականություն, credit policy, кредитная политика** - վարկադրամային միջոցառումների իրականացման համակարգ է, որը պետությունն օգտագործում է տնտեսական եւ քաղաքական որոշակի նպատակների հասնելու համար: Այն տնտեսական ընդհանուր քաղաքականության տարրերից է:

**վարկային քարտերով զբաղվող կազմակերպություններ, credit card companies, компании по работе с кредитными картами** - կարճաժամկետ վարկեր՝ օվերդրաֆտ են հատկացնում մասնավոր անձանց եւ տնտեսավարող սուբյեկտներին՝ մանրածախ առեւտրի խրախուսման նպատակով:

**վարկառու (փոխառու), borrower, заемщик** - վարկային հարաբերությունների մի կողմն է, որն օգտագործման համար ստանում է միջոցներ՝ վարկեր, եւ պարտավորվում է այն պայմանավորված ժամկետում վերադարձնել վարկատուին՝ հաշվարկված տոկոսային եկամտի հետ միասին:

**վարկատու, creditor, кредитор** - համարվում են ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, որոնք իրենց ժամանակավորապես ազատ դրամական միջոցները որոշակի ժամկետում տրամադրում են վարկառուին՝ փոխառուին:

**վարկավորման սուբյեկտներ, credit subjects, субъекты кредитования** - բոլոր տեսակի տնտեսավարող սուբյեկտներն են, ինչպես նաեւ պետությունը,

բնակչությունը եւ բանկերը:

**վարկավորման օբյեկտներ, credit objects, объекты кредитования** - այն նյութական միջոցներն են, որոնց համար տրամադրվում են վարկեր եւ կնքվում է վարկային պայմանագիր: Օրինակ, կարճաժամկետ վարկերն ուղղվում են նյութական ընթացիկ ակտիվներ՝ պաշարներ ձեռք բերելու, իսկ երկարաժամկետ վարկերը՝ արտադրական օբյեկտների շինարարության, վերակառուցման, հիմնական միջոցների ձեռք բերման եւ երկարաժամկետ այլ նպատակների համար:

**վարկ երաշխիքային, credit guarantee, гарантийный кредит** - փոխատվական կապիտալի ձեւ, որը տրվում է արդյունաբերական եւ առեւտրական ձեռնարկություններին՝ բանկի կամ պետության (ի դեմս կառավարական մարմինների եւ հիմնարկների) հանձնարարականի (երաշխիքի) դիմաց՝ կապված փոխառուի անբավարար հուսալիության հետ: Երաշխիքային վարկի տրամադրումը լայնորեն տարածված է հատկապես արտահանման գործարքների բնագավառում:

**վարկի արժեք, credit cost, стоимость кредита** - վարկատուին փոխառուի վճարած գումարը՝ վարկի օգտագործման համար: Վարկի արժեքի գլխավոր բաղադրամասերն են՝ տոկոսադրույքը, գանձումները, ապահովագրական պարգեւները եւ կոմիսիոն վճարները:

**վարձակալության պայմանագիր, lease agreement, договор аренды, лизинговое соглашение** - վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի տիրապետմանը եւ կամ օգտագործմանը ժամանակավորապես գույք հանձնել: Վարձակալության կարող են հանձնվել հողամասեր եւ մեկուսի բնական այլ օբյեկտներ, շենքեր, շինություններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ եւ այլ գույք, որոնք օգտագործման ընթացքում չեն կորցնում իրենց բնական հատկությունները: Վարձակալության պայմանագրում պետք է նշվեն տվյալներ, որոնք թույլ են տալիս որոշակիորեն սահմանել այն գույքը, որը որպես վարձակալության օբյեկտ հանձնվում է վարձակալին: Պայմանագրում այդպիսի տվյալների բացակայության դեպքում վարձակալության օբյեկտի մասին պայմանը համարվում է չհամաձայնեցված, իսկ պայմանագիրը՝ չկնքված: Վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր:

**վարձույթ, renting, аренда, наем -** վարձույթի պայմանագրով, որպես մշտական ձեռնարկատիրական գործունեություն գույքը վարձակալության հանձ-

նող վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը եւ օգտագործմանը հանձնել շարժական գույք:

**վարձակալություն, lease, аренда -** համաձայնություն, ըստ որի վարձատուն վճարի կամ մի շարք վճարների դիմաց համաձայնեցված ժամկետով վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը:

**վաճառքային գին, spot price,** продажная цена - գին, որով ապրանքն առաջարկվում է կանխիկ դրամով անհապաղ վաճառելու համար:

**վաստակ, earnings, зара**ботoк - աշխատողի ստացած դրամական եկամուտ. հավասար է՝ աշխատավարձի դրույքը բազմապատկած ծախսած աշխատանքի քանակով (ծախսված աշխատաժամանակով):

**վաուչեր, voucher,** ваучер - 1) գրավոր վկայագիր, հանձնարարագիր, երաշխիք կամ թույլտվություն: Փաստաթուղթ, որը հավաստում է ապրանքի կամ ծառայության վճարումը, վարկի տալը, փողի ստացումը եւ այլն, 2) փաստաթուղթ՝ զբոսաշրջության մեջ, որը զբոսաշրջիկների խմբի ղեկավարին իրավունք է տալիս ստանալ ընդհանուր ֆիրմայի ծառայությունների համաձայնեցված ցանկը:

**վերաապահովագրություն, reinsurance,** перестрахование - մեկ ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրով որոշված պայմաններով ապահովագրվողի նկատմամբ ունեցած իր բոլոր կամ մի շարք պարտավորությունների կատարման ռիսկի ապահովագրումն է մեկ այլ ապահովագրողի մոտ՝ վերաապահովագրող: Վերաապահովագրությունը համակարգ է, որով ապահովագրվողները կարող են ընդլայնել ապահովագրության հիմնական սկզբունքն իրենց ռիսկերը վերաբաշխելով:

**վերջնական սպառման ծախսեր, final consumer expenditures,** конечные потребительские расходы - ձեւավորվում են տնային տնտեսությունների, տնային տնտեսություններին սպասարկող ոչ առեւտրային կազմակերպությունների, ինչպես նաեւ կոլեկտիվ եւ անհատական ծառայությունների ու ապրանքների համար կատարված պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերից:

**վերադարձ, return,** возвращение **-** հարկ վճարողի բանկային հաշվին (ֆիզիկական անձի անձնագրային տվյալներով՝ հարկ վճարողի առաջարկած առեւտրային բանկ) պետական բյուջեից գումարի փոխանցում:

**վերադարձման ներկայաց-**

**ված գումար, sum returnable, сумма подлежащая возврату** - սոցիալական վճարի գումար, որի վերադարձման պահանջ (դիմում) է ներկայացրել վճարողը:

**վերադիր ծախսեր, overhead expenses, накладные расходы** - արտադրության անուղղակի ծախսեր, որոնք ուղղակիորեն կապված չեն վաճառված որեւէ կոնկրետ արտադրանքի միավորի կամ ծառայության հետ եւ հետեւաբար չեն կարող հաշվարկվել արտադրանքի միավորի համար: Օրինակ, արտադրական բանվորներին վճարված աշխատավարձը եւ արտադրական նյութերի արժեքը ուղղակի ծախսումներ են, իսկ էլեկտրականության, ապահովագրության վճարները եւ աշխատողների պարգեւավճարները՝ վերադիր ծախսեր:

**Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկ (ՎԶՄԲ), International Bank for Reconstruction and Development (IBRD), Международный банк реконструкции и развития (МБРР)** - միջազգային ֆինանսական կազմակերպություն, որը հիմնադրվել է Արժույթի Միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ միաժամանակ, 1944թ.-ին Բրետոն-Վուդսում կայացած ՄԱԿ-ի միջազգային արժութային-ֆինանսական կոնֆերանսի որոշման համաձայն: Բանկը սկսել է գործել 1946թ.-ից, գտնվում է Վաշինգտոնում: Չնայած բանկը ձեւականորեն ՄԱԿ-ի ֆինանսական հաստատություն է, սակայն այն լիովին անկախ է իր գործողություններում: Բանկի պաշտոնական նպատակը մասնակից երկրների տնտեսական զարգացման խթանումն է, միջազգային առեւտրի զարգացման օժանդակումը եւ վճարային հաշվեկշիռների պահպանումը: Հիմնական գործունեությունը բավականին բարձր տոկոսով երկարաժամկետ փոխառությունների տրամադրումն է: Փոխառությունները տրամադրվում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ձեռնարկություններին՝ նրանց կառավարությունների երաշխիքների առկայության դեպքում: Բանկի անդամ կարող են դառնալ միայն ԱՄՀ-ի անդամ երկրները:

**վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ, renewable energy sources возобновляемые источники энергии** - հողմային, արեգակնային, ջրային, երկրաջերմային եւ կենսազանգվածի էներգիայի աղբյուրներից ստացվող էներգակիրների համախումբ, որոնք կարող են օգտագործվել սպառման նպատակով:

**վերականգնվող էներգետիկա renewable energy, возобновляемая энергия** - վերականգն-

վող էներգետիկ ռեսուրսներից էներգակիրների եւ մեխանիկական էներգիայի ստացման ոլորտ:

**Վիեննայի համաձայնագիր, Vienna Convention, Венская конвенция** - ՄԱԿ-ի հովանավորությամբ միջազգային տնտեսական համաձայնություն ապրանքների գնման եւ վաճառքի միջազգային պայմանագրերի մասին: Ընդունվել է 1980թ.-ին եւ ուժի մեջ է մտել 1988թ.-ին, գործում է 19 երկրներում: Համաձայնագիրն ապահովում է ազգային օրենսդրությունների լայն ունիֆիկացում, որը կիրառվում է գնման-վաճառքի պայմանագրի ժամանակ, երբ պայմանագիրը կնքող կողմերի ձեռնարկությունները գտնվում են տարբեր երկրներում:

**վճարման հաշվեկշիռ, balance of payment, платежный баланс** - վիճակագրական հաշվետվություն է, որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում այլ երկրների եւ միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ արտաքին տնտեսական բնույթի գործառնությունների մասին: Վճարային հաշվեկշիռը կազմված է երկու հիմնական հաշիվներից, 1) ընթացիկ, 2) կապիտալի եւ ֆինանսական: Ընթացիկ հաշվում գրանցվում են ապրանքների, ծառայությունների, եկամուտների եւ ընթացիկ անհատույց փոխատվությունների հետ կատարված գործառնությունները, իսկ կապիտալի եւ ֆինանսական հաշվում՝ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների շարժը, ինչպես նաեւ անհատույց փոխատվությունների գծով կապիտալը:

**վճարային համակարգ, payment system, платежная система** - վճարումների կազմակերպման համակարգ, հաղորդակցման համակարգ վճարումների իրականացման համար:

**վնաս, loss, ущерб, убыток** - ընկերության սեփական կապիտալի նվազում պատահական, ձեռնարկության սովորական տնտեսական գործունեության համար ոչ բնութագրելի գործարքների հետեւանքով: Վնասները կարող են լինել պայմանադիրների կողմից պայմանագրի պայմանները խախտելու կամ անհաղթահարելի ուժի հանգամանքների (տարերային աղետ, վթար) հետեւանք:

## Տ

**տանտեմ, bonus, тантьема** - բաժնետիրական ընկերությունների, բանկերի, ապահովագրական ընկերությունների տնօրեններին եւ բարձրագույն ծառայողներին տոկոսի տեսքով շահույ-

թից վճարվող վարձատրություն: Տանտեմի չափը սահմանվում է բաժնետերերի ժողովում՝ զուտ շահույթի որոշակի բաժնի տեսքով: Ըստ էության, տանտեմը ձեռնարկատիրական եկամտի ձեւերից մեկն է, այսինքն՝ շահույթի մի մասը, որը ձեռնարկատիրոջն է մնում փոխատվական կապիտալի տոկոսը հանելուց հետո:

**տարանցիկ, transit, транзит** - մարդկանց, ուղեբեռների, ապրանքների կամ տրանսպորտային միջոցների շարժը մեկ կամ մի քանի պետությունների տարածքով, երբ բեռների վերաբեռնմամբ, պահեստավորմամբ, խմբերի բաժանմամբ կամ տրանսպորտի տեսակի փոխարինմամբ անցումը այդպիսի տարածքով հանդիսանում է լրիվ ճանապարհի սոսկ մի մասը: Տարանցիկ փոխադրումը ոչ մի հարկման ենթակա չէ, բացառություն են կազմում այդպիսի շարժման հետ կապված ծառայություններից գանձվող վճարները, օրինակ ճանապարհային վճարում: Գոյություն ունեն մի շարք բեռների տարանցիկ փոխադրման որոշ սահմանափակումներ, օրինակ, զենքի, թմրադեղերի եւ այլնի համար:

**տարանցիկ փոխադրում, transit through, перевозка** - երկրի տարածքով մաքսային հսկողության ներքո ապրանքների եւ այլ առարկաների տեղափոխումն է պետական սահմանի երկու կետերի միջեւ՝ առանց բեռնագիրը փոխելու:

**տարբերանիշ, stamp, mark, марка, пломба** - դրոշմ, որը ցույց է տալիս թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը հարգորոշողին եւ (կամ) հարգադրոշմողին.

**տեղափոխում ՀՀ սահմանով, transportation through RA border, перевозка через границу РА** - ապրանքների եւ այլ առարկաների ներմուծումն է ՀՀ մաքսային տարածք, արտահանումը այդ տարածքից կամ տարանցիկ փոխադրումը ՀՀ տարածքով՝ ցանկացած տեսակի փոխադրամիջոցով, ներառյալ խողովակաշար փոխադրամիջոցները եւ էլեկտրահաղորդման գծերը:

**տեղական տուրք, local duty, местная пошлина** - տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դիմաց օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Համապատասխան օրենքով սահմանված առանձին դեպքերում տեղական տուրքը կարող է գանձվել պարբերաբար:

**տեղական վճար, local payment, местный платеж** - տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրեն-

քով սահմանված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողությունների համար օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր վճար է:

**տեղական տուրքերի տեսակները, local taxes, местные сборы** - Հայաստանի Հանրապետության համայնքներում կարող են սահմանվել տեղական տուրքերի հետեւյալ տեսակները՝

ա) համայնքի տարածքում շինարարության, շենքերի, շինությունները եւ քաղաքաշինական այլ (ներառյալ՝ ժամանակավոր) օբյեկտները ամրացնելու, վերականգնելու, արդիականացնելու (բացառությամբ ներքին ընթացիկ վերանորոգման եւ հարդարման) եւ արտաքին տեսքը փոփոխող այլ աշխատանքներ սկսելու թույլտվության համար.

բ) համայնքի տարածքում շենքեր, շինություններ եւ քաղաքաշինական այլ օբյեկտներ քանդելու աշխատանքները սկսելու թույլտվության համար.

գ) համայնքի տարածքում առեւտրի համայնքային կանոններին (իսկ Երեւանում՝ համաքաղաքային կանոններին) համապատասխան ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար.

դ) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու (բացառությամբ շուկաներում, տոնավաճառներում, հիմնական եւ ոչ հիմնական շինություններում վաճառքի) թույլտվության համար.

ե) համայնքի տարածքում հասարակական սննդի եւ սպասարկման գործունեության համայնքային կանոններին (իսկ Երեւանում՝ համաքաղաքային կանոններին) համապատասխան խաղատներին, բաղնիքներին (սաունաներին), հանրային սննդի, զվարճանքի, շահումներով խաղեր կազմակերպող օբյեկտներին՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.

զ) համաքաղաքային կանոններին համապատասխան Երեւան քաղաքի եւ քաղաքային համայնքների տարածքում, ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար.

է) համայնքային կանոններին (իսկ Երեւանում՝ համաքաղաքային կանոններին) համապատասխան՝ համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար.

ը) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ եւ կրկնօրինակներ տրամադրելու համար.

թ) համայնքի տարածքում (բացառությամբ՝ քաղային համայնքների) մարդատար տաքսիների (բացառությամբ՝ երթուղային

տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար:

**տեղական վճարների տեսակները, local payments, местные платежи -** Հայաստանի Հանրապետության համայնքներում կարող են սահմանվել տեղական վճարների հետեւյալ տեսակները՝

ա) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու եւ հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

բ) տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության եւ օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու եւ վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական եւ այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

գ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ եւ աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար:

**տեխնոլոգիա, technology, технология** - գիտելիքների ամբողջություն, որը կարելի է օգտագործել տնտեսական ռեսուրսներից ապրանքներ եւ ծառայություններ արտադրելու համար:

**տեխնոպարկ**, **technopark, технопарк** - իրավաբանական անձ կամ համատեղ գործունեության վերաբերյալ պայմանագրային հիմունքներով կազմակերպված իրավաբանական անձանց (մասնակիցների) միություն, որի գլխավոր խնդիրն է ինովացիոն միջավայրի ձեւավորման՝ համապատասխան նյութատեխնիկական, ֆինանսական բազայի ստեղծման միջոցով ներդրումային եւ ինովացիոն ծրագրերի իրականացումը, գիտատար մշակումների, բարձր տեխնոլոգիաների ներդրմանն ու համաշխարհային շուկայում մրցունակ ապրանքի արտադրությանն ուղղված գործունեությունը: Առաջին տեխնոպարկերը ԱՄՆ-ում եւ Ճապոնիայում ի հայտ եկան 1960-ականներին՝ կապված նոր տեխնոլոգիայի բնագավառում մշակումների համար նոր կազմակերպական եւ ֆինանսատնտեսական ձեւերի ստեղծման անհրաժեշտության հետ:

**Տիր կարնետ, TIR (transport international routier), тир**

карнет - բեռները ավտոտրանսպորտով սահմանն անցկացնելու մաքսային թույլտվություն՝ նվազագույն մաքսային արարողությունների պայմաններով:

**տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսեր, final consumer expenditures of household, конечные потребительские расходы домо-хозяйств** - ներառում են տնային տնտեսությունների այն ծախսերը, որոնք ուղղված են բոլոր առեւտրային ձեռնարկություններում, քաղաքային շուկաներում եւ ոչ կազմակերպված՝ փողոցային, առեւտրի վայրերում, կենցաղային եւ բնակարանային-կոմունալ սպասարկման, ուղեւորատար տրանսպորտի, կապի, հյուրանոցների, մշակույթի, առողջապահության եւ կրթության վճարովի հիմնարկների սպառողական ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերմանը, ինչպես նաեւ տնային տնտեսությունների կողմից սեփական սպառման համար արտադրված եւ որպես աշխատանքի վարձատրություն ստացած ապրանքների ու ծառայությունների բնեղեն տեսքով սպառմանը:

**տնտեսական ընկերակցություններ, economic companies, экономические компании** - տնտեսական ընկերակցություններ եւ ընկերութուններ են համարվում իրենց հիմնադիրների (մասնակիցների) բաժնեմասերի բաժանված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ունեցող առեւտրային կազմակերպությունները: Տնտեսական ընկերակցությունները կարող են լինել լիակատար ընկերություն, Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերակցություն, Բաժնետիրական ընկերություն, Բաց բաժնետիրական ընկերություն, Փակ բաժնետիրական ընկերություն:

**տնտեսական ընկերակցություն, economic company, экономическая компания** - կոլեկտիվ կամ խառը սեփականության կամ սեփականատերերի աշխատանքային մասնակցության վրա հիմնված, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն է: Տնտեսական ընկերակցության հիմնադիր փաստաթուղթը հիմնադիր պայմանագիրն է, որտեղ նշված են ընկերակցության անդամները, գրանցվում են նրանց աշխատանքային եւ գույքային ավանդները, որոնց հիման վրա որոշվում են նրանց մասնակցության բաժնեմասերը: Տնտեսական ընկերակցության անդամներ կարող են լինել իրավաբանական անձինք (բացի պետական մարմիններից) կամ քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք:

**տնտեսական կայուն աճի գործակից, economic stable growth index, индекс стабильного экономического роста** - ցույց է տալիս բաժնետիրական ընկերության հնարավորությունները՝ հաջորդ տարում ավելացնելու իր ակտիվները ներքին ֆինանսավորման հաշվին, այն պայմանով, որպեսզի պահպանվի ինչպես սեփական կապիտալի եւ պարտավորությունների համամասնությունը, այնպես էլ՝ նույն չափով շահութաբաժինների վճարման բաժինը հաշվետու տարում: Այս գործակիցը, որն ավելի ճիշտ կլինի անվանել ներքին ֆինանսավորման աղբյուրների հաշվին կայուն աճի տեմպի ապահովման գործակից, որոշվում է շահութաբաժինների վճարումից հետո զուտ շահույթի մի մասի եւ սեփական (բաժնետիրական) կապիտալի միջին մեծության հարաբերակցությամբ:

**տնտեսական հաշվառում, economic accounting, экономический учет** - թվային ցուցանիշների ստացման եւ հաշվարկման մի ամբողջական համակարգ է, որով իրականացվում է տնտեսական գործընթացների քանակական արտացոլումն ու որակական բնութագրումը եւ միաժամանակ հետապնդում է այդ գործընթացները վերահաշվելու եւ ղեկավարելու նպատակ: Տնտեսական հաշվառման տեսակներն են՝ օպերատիվ հաշվառումը եւ հաշվապահական հաշվառումը:

**տնտեսապես ակտիվ բնակչություն, economically active population, экономически активное население** - աշխատունակ բնակչությունը եւ գործազուրկի կարգավիճակ ունեցող գործազուրկները:

**տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն, economically inactive population, экономически неактивное население** - աշխատունակ տարիքի սովորողները, արտադրությունից կտրված սովորող անձինք, տնային տնտեսությամբ զբաղվողները, երեխաներին, հիվանդ հարազատներին խնամողները, ինչպես նաեւ այն անձինք, ովքեր չունեն աշխատելու անհրաժեշտություն՝ անկախ իրենց եկամտի աղբյուրներից, եւ միաժամանակ այլ կատեգորիայի քաղաքացիները:

**տնտեսական աճ, economic growth, экономический рост** - 1) արտադրանքի իրական ծավալի (ՀՆԱ) կամ մեկ շնչի հաշվով արտադրանքի իրական ծավալի աճ: 2) արտադրողական կարողությունների աճի արտացոլումը գրաֆիկի՝ կորի, վրա աճ, որ տեղի է ունեցել արտադրության գործոնների ավելացման կամ տեխնիկայի եւ տեխնոլոգիայի կատարելագործման հետեւանքով:

**տնտեսական անկում, economic recession, эконо-**

**мический спад** - գործարար պարբերաշրջանի սեղմման փուլ, որը տեւում է վեց եւ ավելի ամիս:

**տնտեսական շահույթ, economic profit, экономическая прибыль** - արտադրության բոլոր գործոնների ծախսերի փոխհատուցումից հետո ձեռնարկատերերի տրամադրության տակ մնացող շահույթը:

**տնտեսավարող սուբյեկտ, economic entity, хозяйственный субъект** - անհատ ձեռնարկատեր, առեւտրային կազմակերպություն, ինչպես նաեւ անձանց խումբ:

**տնտեսական օգնություն, economic assistance, экономическая помощь** - Համաշխարհային բանկի, առանձին երկրների, մասնավոր կազմակերպությունների օգնությունը թույլ զարգացած երկրներին՝ փոխառություններ, շնորհներ, արտադրահեղանակներ եւ մասնագետներ տրամադրելու միջոցով: Փոխառությունները ենթակա են մարման եւ վճարման, սակայն դրանք շատ հաճախ տրամադրվում են ցածր տոկոսադրույքներով:

**տնօրինվող եկամուտ, disposable income, располагаемый доход** - այն եկամուտն է, որը վերջնական սպառման կամ խնայողության նպատակով տնօրինում է կառուցվածքային միավորը: Այն հավասար է համախառն ազգային եկամտից հանած որպես ընթացիկ անհատույց փոխատվություններ համարվող փոխանցվող եկամուտները, գումարած՝ ստացած ընթացիկ անհատույց փոխատվությունները: Բոլոր կառուցվածքային ռեզիդենտ միավորների տնօրինվող եկամուտների գումարը հավասար է համախառն ազգային տնօրինվող եկամտին: Օգտագործման փուլում համախառն ներքին արդյունքը հաշվարկվում է որպես ապրանքների եւ ծառայությունների վերջնական սպառման, համախառն կուտակման եւ զուտ արտահանման (առանց ներմուծման) հանրագումար:

**տնօրինվող եկամտի օգտագործման հաշիվ, calculation of disposable income use, расчет потребления располагаемого дохода** - ցույց է տալիս, թե տնային տնտեսությունները, պետական հիմնարկները եւ տնային տնտեսություններին սպասարկող ոչ առեւտրային կազմակերպություններն ինչպես են իրենց տնօրինվող եկամուտը բաշխում վերջնական սպառման ծախսերի եւ խնայողության միջեւ:

**տոկոս, interest, процент** - կազմակերպության, վարկառուի կողմից դրամական միջոցների կամ հասանելիք գումարների օգտագործման դիմաց վճար է, որը հանդես է գալիս ստացվելիք տոկոսային եկամտի (տրամադրված

վարկի, ներդրված ավանդի կամ դեպոզիտի) եւ վճարվելիք տոկոսային ծախսի (ստացված վարկի, ավանդի կամ դեպոզիտի) տեսքով:

**տոկոսադրույք, interest rate, ставка процента** - գումար, որը փոխառուն պարբերաբար, սովորաբար յուրաքանչյուր տարի, վճարում է փոխատուին փոխ առնված որոշակի գումարի դիմաց եւ որը հաշվարկվում է որպես այդ գումարի որոշակի տոկոս: Տոկոսադրույքը կախված է փոխառության նպատակից եւ ժամկետից, փոխ առնված գումարի մեծությունից առաջարկված ապահովումից, եւ վարկատուի վարկունակությունից:

**տոկոսային ռիսկ, interest risk, процентный риск** - այն դրսեւորվում է, երբ փոխվում է եկամուտների եւ գործառնական ծախսերի տարբերության գումարը: Օրինակ, տոկոսադրույքի բարձրացումը կարող է հանգեցնել շահույթի բանկային մարժայի իջեցմանը, մանավանդ, եթե ակտիվների ու պասիվների կառուցվածքն այնպիսին է, որ միջոցների ներգրավման տոկոսային ծախսերն աճում են ավելի արագ, քան վարկերի ու այլ ակտիվների տոկոսային եկամուտները: Բանկային շահույթի մարժայի վրա տոկոսադրույքների փոփոխության ազդեցությունը կոչվում է տոկոսային ռիսկ:

**տոնավաճառ (վերնիսաժ), fair, ярмарка, вернисаж** - հաստկացված վայրում շաբաթ, կիրակի եւ օրենքով սահմանված տոնական օրերին կազմակերպվող շուկայական միջոցառում, որտեղ առուվաճառքն իրականացնում են իրավաբանական եւ ֆիզիկական անձինք:

**տրոյական ունցիա, troy ounce, тро́йская унция** - թանկարժեք մետաղների զանգվածի չափման միավոր, որը հավասար է 31,1034807 գրամի.

**տրաստ, trust, траст -** իրավաբանական փաստաթուղթ է կամ իրավաբանական գործողություն, ըստ որի բնորոշվում է սեփականության վստահ՝ հավատ ներշնչող կառավարման գործընթացը:

**տրաստային ընկերություններ**, **trust company, трастовая компания** - որոնք կառավարում են կազմակերպությունների կամ մասնավոր անձանց սեփականությունը:

**տուգանք, fine, штраф** - գումար, որը պետք է վճարվի օրենք խախտելու կամ պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Տուգանքներ են հաճախ նշանակվում փոխառությունը վաղաժամ մարելու, պայմանագրով նախատեսված վաճառքը չիրականացնելու կամ վարձավճարի պայմանագիրը չեղյալ հայտարարելու համար:

**տուժանք (տուգանք, տույժ)**, **penalty, fine, штраф -** օրենքով կամ պայմանագրով որոշված դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում:

**տուրք, duty, tax, пошлина** - դրամական գանձույթ, որը գանձվում է պետական մարմինների կողմից՝ որոշակի գործողությունների կատարման ժամանակ՝ տվյալ երկրի օրենսդրությամբ նախատեսված գումարներով: Առավել տարածված են գրանցման եւ դրոշմային գանձումները, փոստային, դատական ժառանգման տուրքերը: Ի տարբերություն հարկերի, տուրքը գանձվում է ոչ բոլոր քաղաքացիներից, այլ միայն նրանցից, ովքեր միմյանց կամ պետական մարմինների հետ մտնում են տնտեսական-իրավական որոշակի հարաբերությունների մեջ:

## Ց

**ցպահանջ ավանդներ, demand deposits, вклады до востребования** - հաճախորդների բանկերի պահպանմանը հանձնված եւ որեւէ գործարք իրականացնելիս բանկից պահիդրությամբ՝ առանց ժամկետը նշելու, հանվող միջոցներն են: Նմանատիպ ավանդները բանկի կողմից ներգրավվում են սովորականից ավելի ցածր տոկոսադրույքով:

## ՈՒ

**ուղղակի ծախսեր, direct expenses, прямые расходы -** իրենց բնույթով անմիջականորեն կապված են արտադրված արդյունքի տվյալ տեսակի հետ եւ վերագրվում են դրան: Այդ ծախսերից են՝ արտադրական ինքնարժեքում ներառվող հիմնական բանվորների աշխատավարձը սոցիալական ապահովագրության հատկացումներով, հումքի եւ նյութերի, տեխնոլոգիական վառելանյութի ծախսերը եւ այլն:

**ուղղակի հարկ, direct tax, прямой налог -** այն հարկատեսակներն են, որոնց մեծությունը ուղղակիորեն կախված է իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության արդյունքներից: Ուղղակի հարկերի օրինակներն են՝ շահութահարկը, եկամտահարկը:

**ուռճացում, inflating, раздувание** - իրական ՀՆԱ-ի հաշվարկումը այն ՀՆԱ-ի դրամական արժեքի ավելացման ճանապարհով, որն արտադրվել է այն տարում, երբ գներն ավելի ցածր են եղել, քան բազային տարում:

**ուսումնասիրություն, investigation, study, исследование -** իրականացվում է հարկային

մարմնի ղեկավարի, ղեկավարի տեղակալների, համապատասխան գործառույթներ իրականացնելու իրավասություն ունեցող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի, հարկային (տարածքային) տեսչության պետի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից յուրաքանչյուր ուսումնասիրության համար տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են ուսումնասիրություն կատարելու հիմքերը, նպատակը, տնտեսավարող սուբյեկտի տվյալները (տնտեսավարող սուբյեկտի հաշվառման համարը, անվանումը, գտնվելու վայրը), ուսումնասիրության իրականացման վայրը, ժամկետը, հարկային մարմնի անվանումն ու ուսումնասիրություն իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը)՝ վավերացված ուսումնասիրություն իրականացնող հարկային մարմնի կնիքով: Ուսումնասիրության իրականացման հանձնարարագիրը նախքան ուսումնասիրությունը սկսելը ծանոթացման նպատակով ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Ուսումնասիրություն իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձն ուսումնասիրության արդյունքում կազմում է արձանագրություն՝ երկու օրինակից:

## Փ

**փայաբաժին, share, пай** - բաժնետոմսեր, բաժնեմասեր, փայավճարներ, ավանդներ:

**փոխառություն, loan, заем -** փոխառության պայմանագրով մեկ կողմը՝ փոխատուն մյուս կողմի՝ փոխառուի սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի եւ նույն տեսակի եւ որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից: Պետական փոխառության պայմանագրով՝ որպես փոխառու հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը, իսկ փոխատու՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը: Պետական փոխառությունները կամավոր են:

**փոխանակություն, exchange, обмен -** որեւէ ապրանքի փոխարեն կողմերից մեկը մյուսին որպես սեփականություն փոխանցում է այլ գույք:

**փոխատվություն, loan, ссуда** - որոշակի ժամկետում, որպես պարտք, դրամական միջոցների կամ նյութական արժեքների տրամադրումն է մեկ անձից՝ փոխատուից, մյուսին՝ փոխառուին՝ հետ վերադարձնելու պայմանով, փոխատուին օգտագործված միջոցների դիմաց վճարելով փոխատվական տոկոս: Փոխատվությունը տրվում է փոխհամաձայնեցված պայմանագրի հիման վրա:

**փոխարժեք, exchange rate, валютный курс** - երկու տարբեր արժույթների փոխանակման **հարաբերակցությունը**:

**փոխադարձ փոխարինելի ապրանքներ, substitutes, взаи мозаменяемые товары -** ապրանքներ, որոնք կարող են համեմատվել ըստ իրենց գործածության նշանակության, կիրառման, որակական եւ տեխնիկական բնութագրերով եւ այլ հատկանիշներով այնպես, որ գնորդի համար մեկը մյուսով փոխարինելն էական նշանակություն **չունեն**:

**փոխկապակցված (աֆիլացված) անձինք, interrelated persons, взаимосвязанные лица** - ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, որոնք կարող են ազդեցություն ունենալ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց ձեռնարկատիրական գործունեության վրա:

Իրավաբանական անձի փոխկապակցված անձինք են՝

- կառավարման մարմնի անդամը, ինչպես նաեւ միանձնյա գործադիր մարմնի իրավասությունները իրականացնող անձը,
- անձը, որը պատկանում է անձանց խմբին, որին պատկանում է տվյալ իրավաբանական անձը,
- անձինք, որոնք իրավունք ունեն տնօրինել տվյալ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի կամ քվեարկող փայաբաժնի 20 տոկոսից ավելին,
- իրավաբանական անձը, որի մեջ տվյալ իրավաբանական անձն իրավունք ունի տնօրինել նրա կանոնադրական կապիտալի կամ քվեարկող փայաբաժնի 20 տոկոսից ավելին:

Անհատ ձեռնարկատիրոջ փոխկապակցված անձինք են՝

- անձը, որն ընդգրկված է անձանց խմբի մեջ, որին պատկանում է տվյալ անհատ ձեռնարկատերը,
- իրավաբանական անձը, որի մեջ անհատ ձեռնարկատերն իրավունք ունի տնօրինել տվյալ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի կամ քվեարկող փայաբաժնի 20 տոկոսից ավելին:

Անձանց խումբը դիտվում է որպես մեկ տնտեսավարող սուբյեկտ, եթե դրա մասնակիցների միջեւ գոյություն ունի վերահս-

կողություն՝ օրենքով սահման-ված կարգով: Եթե մի քանի տն-տեսավարող սուբյեկտների հա-մատեղ գործունեությունը հան-գեցնում է մեկ այլ տնտեսավա-րող սուբյեկտի նկատմամբ վե-րահսկողության հաստատման, ապա դրանցից յուրաքանչյուրը համարվում է վերահսկող:

**փող, money, деньги** - հա-մընդհանուր վճարման միջոց, որը կարող է փոխանակվել ապ-րանքներով եւ ծառայություննե-րով եւ օգտագործվել պարտքե-րի վճարման համար:

**փողի բազա, monetary base, денежная база -** ներառում է ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը, ԿԲ-ում առեւտրային բանկերի պահուստները, եւ ԿԲ-ում ոչ բանկային կազմակերպություն-ների ավանդները (բացառու-թյամբ կառավարության ավանդների): Փողի բազան հա-վասար է նաեւ ԿԲ զուտ արտա-քին եւ զուտ ներքին ակտիվներ հանրագումարին:

**փողի զանգված, money stock, money supply, денеж-ная масса** - կամ դրամական զանգվածը ներառում է շրջանա-ռությունում կանխիկ դրամը եւ ռեզիդենտ տնտեսության (բնակչության, ձեռնարկություն-ների եւ հասարակական կազ-մակերպությունների) դրամով եւ արտարժույթով բոլոր ավանդ-ները բանկային համակարգում:

**փողերի լվացում, money-laundering, отмывание денег** - անօրինական եղանակով (գո-ղությամբ, թմրանյութերի առեւտրով եւ այլ) կուտակված փողի հետ կապված գործառնու-թյուններ, որոնց նպատակն է թաքցնել դրամագումարի առա-ջացման կամ նշանակվածու-թյան աղբյուրը, դրան տալ օրի-նական բնույթ: Ամենտարածված եղանակներից մեկը դրամը ար-տասահմանյան բանկերի միջո-ցով փոխանցելն է, այդ ճանա-պարհով նրա նպատակը թաքց-նելու համար:

**փողի շուկա, money market, денежный рынок** - շուկա, որ-տեղ փողի առաջարկով ու պա-հանջարկով որոշվում է տոկո-սադրույքը՝ տոկոսադրույքների մակարդակը:

**փոփոխուն ծախսեր, vari-able expenses, переменные расходы,** - ծախսեր են, որոնք փոփոխվում են արտադրության ծավալներին համամասնորեն: Օրինակ, եթե արտադրության ծավալներն աճում են երկու ան-գամ, ապա այս ծախսերը նույն-պես ավելանում են նույնքան անգամ: Փոփոխուն ծախսերից են՝ հիմնական բանվորների աշ-խատավարձը սոցիալական ապահովագրության հատկա-ցումներով, հումքի, նյութերի, տեխնոլոգիական վառելանյու-թի ծախսերը եւ այլն:

## Ք

**քաղաքական ռիսկ, political risk, политический риск -** հավանականությունն է այն բանի, թե օրենսդրական կամ կարգավորող ակտերի փոփոխությունը երկրի ներսում կամ նրա սահմաններից դուրս ինչպիսի բացասական ազդեցություն կունենա շահույթի, կատարվող գործարքների եւ հեռանկարի վրա:

**քլիրինգ, clearing, клиринг** - ապրանքների, կատարվող աշխատանքների, արժեթղթերի գծով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց միջեւ առաջացած փոխադարձ պահանջների ու պարտավորությունների հաշվանցումն է անկանխիկ հաշվարկների միջոցով:

**քվոտավորում, quotation, цитирование, котировка** - պետական եւ միջազգային մարմինների կողմից մտցված արտաքին տնտեսական գործունեության կարգավորման միջոցառումների տարատեսակ: Նման սահմանափակումների համար հիմք կարող են ծառայել միջազգային համաձայնագրերով սահմանված երկրի պարտավորությունները, ինչպես նաեւ ազգային շահերը պաշտպանելու անհրաժեշտությունը: Սահմանված քվոտաների շրջանակներում ապրանքների արտահանումը եւ ներմուծումը իրագործվում են լիցենզիաներով, որոնք տրվում են լիազորված պետական կազմակերպությունների կողմից:

## Օ

**օգտակար հանածո, mineral, полезные ископаемые -** օգտագործման համար պիտանի՝ ընդերքի պինդ, հեղուկ, գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա քաղցրահամ, հանքային, թերմալ ջրեր, երկրաջերմային էներգիա, ջրավազանների եւ ջրհոսքերի հատակային նստվածքներ, ինչպես նաեւ ընդերքօգտագործման հետեւանքով առաջացած պահեստավորված թափոններ:

**օգտակար հանածոյի երեւակում, mineral exploration, разведка полезных ископаемых** - ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը եւ արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն:

**օգտակար հանածոների պաշարների հաշվեկշիռ, balance of mineral resources reserves, баланс запасов полезных ископаемых** - ընդերքում հայտնաբերված օգտակար հանածոների պաշարների պետական հաշվառման ձեւ՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ, որը պարունակում է

տվյալներ հետախուզված հանքավայրերի պաշարների քանակի, որակի եւ ուսումնասիրվածության աստիճանի, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանում դրանց փոփոխության մասին:

**օգտակար հանածոների հանքավայրերի եւ երեւակումների կադաստր, cadastre of minerals mines and explorations, кадастр рудников и разведок полезных ископаемых** - օգտակար հանածոների հանքավայրերի, երեւակումների եւ հանքայնացման կետերի մասին համակարգված ամփոփ տեղեկատվություն, որն ընդգրկում է բոլոր հայտնաբերված օբյեկտները, անկախ դրանց տիպից, չափերից, ուսումնասիրվածության աստիճանից ու արդյունաբերական նշանակությունից:

Օգտակար հանածոյի հանքավայրի շահագործում՝ ընդերքում պարփակված օգտակար հանածոյի արդյունահանում.

**օգտակար հանածոյի կորզվող արժեք, extorted price of mineral, вымогаемая цена полезных ископаемых** - արդյունահանված եւ վերամշակման ենթարկված օգտակար հանածոյի միավորի արժեք՝ հաշվարկված արտադրանքի շուկայական գներով եւ կիրառվող տեխնոլոգիաների նորմատիվային ցուցանիշներով:

**օպերատիվ լիզինգ, operating lease, оперативный лизинг, операционная аренда** - ի տարբերություն ֆինանսական լիզինգի, օպերատիվ լիզինգի ժամանակ լիզինգատուն հիմնական միջոցը՝ մեքենաներ, սարքավորումներ եւ այլն, ձեռք է բերում նախօրոք, նախքան լիզինգառուի հետ պայմանագիր կնքելը: Օպերատիվ լիզինգի պայմաններում վարձակալության ժամկետը ավելի փոքր է, քան տվյալ հիմնական միջոցի բարոյական մաշվածության ժամկետը: Օպերատիվ լիզինգի ժամանակ լիզինգավճարների չափը սովորաբար ավելի բարձր է, քան ֆինանսական լիզինգի ժամանակ:

**ՕՊԵԿ (նավթ արդյունահանող երկրների կազմակերպություն, OPEC (Organization of the Petroleum Exporting Countries), ОПЕК (Организация Стран-Экспортеров Нефти)**

**օպցիոն, option, опцион** - ֆինանսական գործիք, որը տիրոջն իրավունք է տալիս գնելու հասարակ բաժնետոմսեր:

**օպցիոն պայմանագիր, option agreement, option contract, опционное соглашение, опционный договор** - արժեթուղթ է, որով մի կողմը՝ որոշակի գրավի դիմաց, մյուս կողմին իրավունք է տալիս սահմանված ժամկետով եւ իր անունից ձեռք բերել կամ վաճառել որոշակի

քանակի ապրանք, արժույթ եւ արժեթուղթ, այդ թվում՝ ֆյուչերսային կամ ֆորվարդային պայմանագիր:

**օվերդրաֆտ, overdraft, овердрафт** - բանկի կողմից հաճախորդին կարճաժամկետ վարկի տրամադրման հատուկ ձեւ է, երբ գումարի մեծությունը գերազանցում է հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցների մնացորդին: Տվյալ դեպքում բանկը վարկային միջոցներ է դուրս գրում հաճախորդի հաշվից ամբողջությամբ, այսինքն՝ նրան տրամադրում է կարճաժամկետ վարկի գումար եւ արդյունքում ձեւավորվում է դեբետային մնացորդ (քանի որ օվերդրաֆտը ակտիվային հաշիվ է): Արդյունքում հաճախորդը այդ գումարի չափով պարտք է մնում բանկին, որը հետագայում՝ պայմանավորված ժամկետներում մարվում:

**օվերնայթ, overnight, овернайт** - բանկի կողմից վարկի տրամադրման տարատեսակ է, որի գործարքը կատարվում է նրա օգտագործման պահից (սովորաբար ուրբաթ օրվանից մինչեւ հաջորդ երկուշաբթի ընկած ժամանակահատվածում): Այն համարվում է բանկի համար տոկոսային եկամուտ ապահովող կարեւորագույն գործարք:

**օտարերկրյա ներդրող, foreign investor, зарубежный инвестор** - օտարերկրյա պետություն, ցանկացած օտարերկրյա իրավաբանական անձ, քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, ՀՀ տարածքից դուրս մշտական բնակվող ՀՀ քաղաքացի, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություն, որն իր գտնվելու վայրի օրենսդրությանը համապատասխան ներդրում է կատարում ՀՀ-ում:

**օտարերկրյա ներդրում, foreign investment, иностранные, зарубежные инвестиции** - գույքի ցանկացած տեսակ է, այդ թվում՝ նաեւ ֆինանսական միջոցներ եւ մտավոր արժեքներ, որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ օգտակար այլ արդյունքի հասնելու նպատակով:

**օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություն, enterprise with foreign investments, предприятие с иностранными инвестициями** - Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստեղծված ցանկացած կազմակերպական-իրավական տեսակի ձեռնարկություն, որի հիմնադիրը կամ մասնակիցն օտարերկրյա ներդրողն է:

**օտարերկրյա ներդրումների տեսակները, types of foreign**

**investments, виды иностранных инвестиций** - օտարերկրյա ներդրողները կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումներ իրականացնել՝

ա) արժութային այլ արժեքներով, Հայաստանի Հանրապետության ազգային դրամով.

բ) շարժական ու անշարժ գույքով (շինություններ, շենքեր, սարքավորումներ եւ նյութական այլ արժեքներ) եւ դրա հետ կապված գույքային ցանկացած իրավունքով.

գ) բաժնետոմսերով, պարտատոմսերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթերով.

դ) դրամական պահանջների ձեւով եւ պայմանագրային արժեք ունեցող պարտավորությունների կատարմամբ պահանջի իրավունքով .

ե) արժեք ունեցող մտավոր սեփականության ցանկացած իրավունքով.

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված տնտեսական գործունեության իրականացման իրավունքով, այդ թվում նաեւ բնական ռեսուրսների հետախուզման, արդյունահանման, մշակման կամ շահագործման իրավունքով.

է) վճարովի ծառայություններով.

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ներդրումների ցանկացած տեսակներով:

Սահմանված տեսակների օտարերկրյա ներդրումների իրականացման արգելումը կամ սահմանափակումը կարող է կատարվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ), foreign direct investments (FDI), прямые иностранные инвестиции** - ՕՈՒՆ կապիտալի միջազգային շարժն է, որն առնչվում է ձեռնարկության կառավարման համակարգում ներգրավվածության և արդյունավետ վերահսկման հետ ներդրումներից եկամուտ ստանալու շարժառիթի հետ մեկտեղ էական դեր է խաղում նաև վերահսկման շարժառիթը:

Եթե արտասահմանյան ներդրումների իրականացման ժամանակ ներդրողը չի հետապնդում անմիջական շահ՝ ձեռնարկության կառավարումը վերահսկելու կամ վերջինիս գործունեության վրա ուղղակի ազդեցություն գործելու պարագայում, ապա այս դեպքում, խոսքը օտարերկրյա պորտֆելային ներդրումների մասին է: Այս դեպքում ներդրման հիմնական շարժառիթը եկամտայինն է, իսկ մյուս շարժառիթները կամ ընդհանրապես

բացակայում են, կամ խաղում են երկրորդային, ոչ էական դեր: ՕՈՒՆ-ները պորտֆելայինից տարանջատելու հիմնական չափանիշ է հանդիսանում ձեռնարկության կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողի մասնակցության չափը՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (փայամասնակցության) տեսքով: Այս չափանիշի ընտրման հիմքում ընկած է «կառավարման արդյունավետ վերահսկման» միտումը: Մասնակցության սահմանային չափը, որով իրականացվում է ուղղակի և պորտֆելային ներդրումների տարանջատումը, սահմանվում է ներդրումային օրենսդրությամբ և շոշափելիորեն տարբերվում է երկրից երկիր: Այն տատանվում է 10%-ից մինչև 50% և տարբեր է օտարերկրյա ներդրումների նկատմամբ ազատական և խիստ ռեժիմ ունեցող երկրներում: Կան երկրեր, որտեղ շեմը ավելի բարձր է, մասնավորապես Գերմանիայում այն կազմում է 20% (մեզանում՝ 10%):

ՕՈՒՆ-ները, ըստ ներդրումների իրականացման ձևերի, բաժանվում են նոր ձեռնարկությունների հիմնման կամ ստեղծման - **(Greenfield, предусматривающий новое строительство проект; осуществляемый с нуля)** և արդեն իսկ առկա հզորությունների, ակտիվների ձեռք բերման **(Mergers and Acquisitions (M&A), слияния и поглощения)** նպատակով, որը հիմնականում իրականացվում է բաժնետիրական կապիտալի ձեռքբերման կամ փոխանակման միջոցով: Վերջինիս դեպքում տեղի է ունենում միայն սեփականության իրավունքի սուբյեկտների փոփոխություն՝ սեփականության իրավունքի փոխանցում վաճառողից գնորդին: Այս պարագայում ներդրումներն ընդունող երկրի տեսակետից ավելի քան շահեկան է առաջին տարբերակը, քանի որ վերջինիս իրականացման դեպքում տեղի է ունենում նոր հզորությունների, ակտիվների ստեղծում՝ ի տարբերություն երկրորդ տարբերակի, որի դեպքում գրանցվում է ընդամենը ստեղծված ակտիվների սեփականատերերի փոփոխություն: Համատեղ ձեռնարկությունների հիմնումը երկրորդ տարբերակի մասնավոր դեպքն է, երբ ստեղծվում է նոր ձեռնարկություն տեղական և օտարերկրյա գործընկերների հետ համատեղ: Ներդրման այս ձևը հատկապես տարածված է այն երկրներում, որտեղ կան սահմանափակումներ երկիր մուտք գործելիս: Որպես կանոն, համատեղ ձեռնարկությունում ներդրումն ընդունող ձեռնարկությունը մասնակցում է արտադրական հզորությունների, տարածքի կամ արտադրական կառույցների

տրամադրման միջոցով, իսկ օտարերկրյա գործընկերները տրամադրում են արտադրության միջոցներ, տեխնոլոգիաներ, սարքավորումներ, ինչպես նաև ոչ նյութական ակտիվներ՝ ապրանքային նշան: Հատկանշական է նաև այն, որ համատեղ ձեռնարկության կառավարումն իրականացվում է համատեղ ուժերով:

**օֆեր (գործարք), offer, оферта** - առևտրական պրակտիկայում կիրառվող տերմին, որը նշանակում է վաճառողի կողմից հնարավոր գնորդին ուղարկված գրավոր առաջարկ՝ որոշակի պայմաններով ապրանքի խմբաքանակի վաճառքի մասին: Ֆիրման կամ անձը, որը ուղարկել է նման առաջարկ կոչվում է օֆերենտ: Օֆերում նշվում են ապրանքի անվանումը, քանակը, որակը, գինը, վճարման եւ առաքման բազային պայմանները:

**օֆերտա, offer, quotation, оферта (официальное предложение)** - մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը: Ընդ որում, պայմանագիրը կարող է համարվել կնքված, եթե այդ առաջարկն ընդունվել է հասցեատիրոջ կողմից: Օֆերտան պետք է ներառի պայմանագրի էական կամ կարեւոր պայմանները:

**օֆշորային, offshore, офшорный** - արտոնյալ կամ չհարկվող կարգավիճակով գոտիներում ստեղծված ընկերություն:

**օֆշորային կենտրոններ, offshore centers, офшорные центры** - փոքր պետություններ, գոտիներ, ուր վարվում է արտասահմանյան փոխատվական կապիտալը ներգրավելու քաղաքականություն, հարկային եւ այլ արտոնություններ են տրամադրվում միայն արտասահմանյան գործակալների հետ արտարժույթով ֆինանսական գործառնությունների համար: Առավել հայտնի օֆշորային կենտրոններ են՝ Ջիբլարթարը, Ջերսի եւ Ներնսի, Տերքս եւ Կաիկոս կղզիները (Բրիտանական ընկերակցություն), Բրիտանական եւ Վիրջինյան կղզիները, Պանաման, Լիբերիան, Կիպրոսը, Մալթան: Օֆշորային ընկերությունների կողմից գրանցված երկրներում առեւտրական գործունեությունը, որպես կանոն, արգելվում է:

## Ֆ

**ֆակտորինգ, factoring, факторинг** - կամ ֆինանսավորում դրամական պահանջի զիջման դիմաց: Միջազգային պրակտիկայում ֆակտորինգ ասելով հասկանում են բանկի (ֆակտորի) ստանձնած պարտավորությունը՝

ստանալ իր հաճախորդի դեբիտորական պարտքը, կամ այլ կերպ դա տնտեսավարող սուբյեկտների միջեւ ապրանքների եւ ծառայությունների իրացման ժամանակ առեւտրային վարկի պայմաններով առաջացած պարտավորությունների՝ վճարային փաստաթղթերի, պահանջատիրոջ իրավունքների ստանձնումն է բանկի՝ ֆակտորի, կողմից, որը զուգակցվում է նաեւ հաշվապահական, տեղեկատվական, ապահովագրական եւ այլ ծառայությունների մատուցմամբ:

**ֆակտորինգային ընկերություններ, factoring company, факторинговая компания** - ընկերություններ, որոնք գնում են ընթացիկ ակտիվներ՝ ժամանակավոր ֆինանսավորումով:

**ֆերմեր, farmer, фермер** - գյուղատնտեսական ձեռնարկության՝ ֆերմայի տեր:

**ֆերմերային տնտեսություն, farm, ферма** - մասնավոր ապրանքային գյուղատնտեսական ձեռնարկություն, որը ֆերմերը վարում է սեփական կամ վարձակալած հողի վրա: ֆերմերային տնտեսությունների համակարգը շատ զարգացած է աշխարհում եւ բազմաթիվ երկրներում արտադրում է գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր ծավալի ավելի քան 50 տոկոսը:

**ֆինանսներ, finances, финансы -** փողի, մասնավորապես հանրային փողի կառավարում, բ) դրամամիջոցներ որեւէ ծրագրի կամ նպատակի համար հատկացվող կամ փոխառվող փողի միջոցներ:

**ֆինանսական գործիքներ, financial instruments, финансовые инструменты** - շուկայում առեւտրի օբյեկտ հանդիսացող ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ (արժույթ, արժեթղթեր, ավանդներ):

**ֆինանսական գործունեություն, financial activity, финансовая деятельность -** գործունեություն, որի հետեւանքով տեղի են ունենում կազմակերպության սեփական կապիտալի եւ փոխառու միջոցների ծավալի ու կառուցվածքի փոփոխություններ: Ներառում է դրամի բաշխումը, ստացումը, հոսքերը եւ տնօրինումը՝ սահմանված համաձայն համընդհանուր նպատակի, քաղաքականության կամ խնդիրների:

**ֆինանսական ընկերություններ, finance company, финансовая компания** - ընկերություններ, որոնք տնտեսավարող սուբյեկտներին տրամադրում են կարճաժամկետ եւ երկարաժամկետ կապիտալ:

**ֆինանսական լիզինգ, financial leasing, финансовый лизинг** - համաձայնագիր, որը նախատեսում է իր գործողության ընթացքում լիզինգավճարների

հատուցում, որով ծածկվում են հիմնական միջոցի՝ մեքենայի, սարքավորման եւ այլնի, լրիվ ամորտիզացիայի արժեքը, լրացուցիչ ծախսերը եւ լիզինգատուի շահույթը: Այս լիզինգը բնութագրվում է հետեւյալ հիմնական առանձնահատկություններով, 1) երրորդ կողմի՝ հիմնական միջոց արտադրողի կամ մատակարարի մանակցությունը, 2) լիզինգի պայմանագրի համեմատաբար երկարատեւությունը (այն մոտավորապես հավասար է հիմնական միջոցի ծառայության ժամկետին), 3) լիզինգի առարկաները հիմնականում թանկարժեք սարքավորումներ են:

**ֆինանսական կայունություն, financial stability, финансовая стабильность** - տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեության ընթացքում ապահովում են եկամուտների կայուն աճ կատարվող ծախսերի նկատմամբ, դրամական միջոցների նպատակային օգտագործում, արտադրության գործընթացի անընդհատություն եւ արտադրված արտադրանքի ժամանակին իրացում: Այդ իսկ պատճառով էլ ֆինանսական կայունությունը ձեւավորվում է արտադրատնտեսական գործընթացի բոլոր փուլերում եւ համարվում է տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր կայունության ամենահիմնական ցուցանիշը:

**ֆինանսական համակարգ, financial system, финансовая система** - ֆինանսական հաստատությունների եւ շուկաների ցանց, որոնք տարբեր ֆինանսական գործիքների միջոցով զբաղվում են փող տեղաշարժելով, ինչպես նաեւ փոխատվությամբ եւ վարկ տրամադրելով:

**ֆինանսական հաշվառում, financial accounting, финансовый учет** - հաշվապահական հաշվառման բաղկացուցիչ մասն է, ըստ որի հաշվառվում են ֆինանսական ռեսուրսների եւ դրամական միջոցների առկան եւ շարժը:

**ֆինանսական հսկողություն, financial control, финансовый контроль** - վերահսկողության ձեւ է, որն իրականացվում է դրամական միջոցների կազմավորման, բաշխման ու օգտագործման գործընթացում՝ կապված ֆինանսական փաստաթղթերի ճիշտ ձեւակերպումների հետ, օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան:

**ֆինանսական հաշվետվություն, financial report, финансовый отчет -** ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը ներառում է. ա) հաշվապահական հաշվեկշիռը, բ) ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվու-

թյունը, դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը:

**ֆինանսական ճեղքվածք, financial gap, финансовый разрыв** - վճարումների հաշվեկշռի պակասուրդ, ներմուծման եւ արտաքին պարտքի վճարման համար անհրաժեշտ արտարժույթի եւ արտահանումից ստացված արտարժույթի տարբերությունը:

**ֆինանսական միջնորդ, financial mediator, broker financial intermediary, финансовый посредник, брокер -** հաստատություն, որը դրամամիջոցներ է ստանում խնայողներից եւ փոխ տալիս փոխառուներին: Ներառում է ավանդապահ եւ ոչ ավանդապահ հաստատությունները:

**ֆինանսական ռեսուրսներ, financial resources, финансовые средства, ресурсы** - դրամական միջոցների կենտրոնացված (պետական բյուջեն, արտաբյուջետային, կենսաթոշակային ու զբաղվածության հիմնադրամները եւ այլն) եւ ապակենտրոնացված (հարկումից հետո զուտ շահույթը, ամորտիզացիոն հիմնադրամը եւ այլն) հիմնադրամներ են, որոնց ձեւավորման եւ օգտագործման գումարները նախօրոք հաշվարկվում են:

**ֆինանսական ռիսկ, financial risk, финансовый риск -** դրսեւորվում է տնտեսավարող սուբյեկտների, բանկերի ու ֆինանսական այլ բնույթի կազմակերպությունների միջեւ տեղի ունեցող փոխհարաբերությունների ոլորտում: Ֆինանսական ռիսկը կապված է բյուջեի մշակման, եկամուտների եւ ծախսերի կազմման, ֆինանսական միջոցների բաշխման ու օգտագործման, երկարատեւ ֆինանսական ներդրումների պլանավորման, ինչպես նաեւ չնախատեսված ծախսումների կատարման հետ: Ֆինանսական ռիսկի պատճառներն են՝ փոխառու եւ սեփական կապիտալի հարաբերակցության մեծացումը, կրեդիտորներից՝ վարկատուներից, փոխառուներից, կախվածությունը, կապիտալի պասիվ օգտագործումը եւ այլն:

**ֆինանսական վարձակալության պայմանագիր, financial lease agreement, финансовый лизинговый договор** - ըստ որի, վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված մատակարարից՝ վաճառողից եւ վճարի դիմաց այդ գույքը հանձնել վարձակալին՝ նրա ժամանակավոր տիրապետմանը: Այդ դեպքում վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության համար որոշված առարկայի եւ վաճառողի ընտրության համար:

**ֆինանսական տարի, finan-**

**cial year, финансовый год -** ցանկացած ֆինանսական հաշվետվության ժամանակաշրջան, բ) ժամանակաշրջան, որն օգտագործվում է ընկերությունների շահութահարկը հաշվարկելու համար:

**ֆիրմա, firm, фирма** - ձեռնարկության անվանում, որով հանդես են գալիս կոլեկտիվ կամ անհատ ձեռնարկատերերը: Ֆիրման ունի որոշակի սկզբունքներ. իսկություն, բացառիկություն, հրապարակայնություն, անփոխանցելիություն: Ֆիրմայի անունը կարող է ընդգրկել տիրոջ անունները եւ ազգանունները, ունենալ գործունեության առարկան բնութագրող անվանում կամ կամային անվանում:

**ֆյուչերսային պայմանագիր, futures contract, фьючерсный контракт** - արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորվում է՝ որոշակի գրավի դիմաց, սահմանված քանակով, հաստատագրված գներով եւ ժամկետներում մյուս կողմից ձեռք բերել կամ նրան վաճառել որեւէ ապրանք, այդ թվում՝ արտարժույթ կամ արժույթ:

**ֆորս-մաժոր, force majure, форс-мажор** - արտակարգ եւ անկասելի հանգամանքներ, որոնց հետեւանքով պայմանագրի պայմանները չեն կատարվում: Ֆորս-մաժորի հետեւանքով պայմանադիր կողմերից մեկն ակամա դառնում է մյուս կողմին վնաս պատճառող: Ընդհանուր ձեւով ֆորս-մաժորը կարելի է բաժանել. անհաղթահարելի ուժի եւ իրավաբանական ֆորս-մաժորի: Անհաղթահարելի ուժի շարքն են դասվում բնական աղետները՝ երկրաշարժ, ջրհեղեղ, կամ այլ հանգամանքներ, որոնք անհնար է կանխատեսել կամ հաղթահարել մարդկային գիտելիքների եւ հնարավորությունների ժամանակակից մակարդակի պայմաններում: Բոլոր քաղաքացիա-իրավական համակարգերում անհաղթահարելի ուժը համարվում է այնպիսի հանգամանք, որի դեպքում ֆորս-մաժորին վերագրվում են բարձրագույն մարմինների որոշումները (ներուծման կամ արտահանման արգելքը, արժութային սահմանափակումները եւ այլն), գործադուլները, պատերազմները, հեղափոխությունները եւ այլն:

**ֆորվարդային գործառնություններ, forward transactions, форвардные операции** - սփոթ գործառնությունների կնքումից որոշ ժամանակ անց հաշվարկների իրականացում նախատեսող գործարքներ են, որոնց կատարման օրը որոշվում է ֆորվարդային պայմանագրի ժամկետին ավելացնելով եւս երկու օր: Այսինքն, ֆորվարդային օրերի քանակին ավելացվում է

սքոփ գործառնություններով հաշվարկայինի համար նախատեսված երկու օրը:

**Ֆորվարդային պայմանագիր, forward contract, форвардный контракт** - արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորվում է` որոշակի գրավի դիմաց, սահմանված ժամկետներում մյուս կողմից գործարքի կնքման պահին շուկայում ձեւավորված գնով ձեռք բերել կամ նրան վաճառել որեւէ ապրանք, այդ թվում արժեթուղթ կամ արժույթ:

**Ֆրախտի (չարտերի) պայմանագիր, charter contract, фрахтовый контракт** - ըստ որի, մի կողմը` ֆրախտ տրամադրողը, պարտավորվում է մյուս կողմից` ֆրախտ ստացողին, բեռների, ուղեւորների եւ ուղեբեռների փոխադրման համար վճարի դիմաց տրամադրել տրանսպորտային միջոցի ամբողջ տարողունակությունը կամ դրա մի մասը` մեկ կամ մի քանի չվերթի համար: Ֆրախտի պայմանագրի կնքման կարգը սահմանվում է օրենքով եւ այլ իրավական ակտերով:

**Ֆրանչայզինգ, franchising, франчайзинг** - համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվություն է, ըստ որի պայմանագրով մեկ կողմը` իրավատերը, պարտավորվում է վարձատրությամբ, ժամկետի նշումով կամ առանց դրա, մյուս կողմին` օգտագործողին իրավունք տրամադրել իր ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը, ներառյալ` իրավատիրոջ ֆիրմային անվանման, օրենքով պահպանվող առեւտրային տեղեկատվության, ինչպես նաեւ պայմանագրով նախատեսված բացառիկ իրավունքների այլ օբյեկտների` ապրանքային նշանի, սպասարկման նշանի եւ այլնի նկատմամբ իրավունքները: Համալիր թույլտվության պայմանագրով կողմեր կարող են լինել առեւտրային կազմակերպությունները եւ անհատ ձեռնարկատեր քաղաքացիները:

**ՖՕԲ, free on board, франко, борт, фоб -** արտաքին առեւտրի ժամանակ առքուվաճառքի պայմանագրի ձեւ է, որը կապված է ջրային ճանապարհով ապրանքի փոխադրման հետ: ՖՕԲ պայմանագրի պայմաններով առքուվաճառքը նախատեսում է, որ վաճառողը պարտավոր է ոչ միայն ապրանքը հասցնել մինչեւ նավահանգիստ, այլ նաեւ բեռնել այն նավի վրա: Նավի վարձակալության եւ նավի վրա ապրանքը տեղադրելու ծախսերը կատարում է գնորդը: Ապրանքի կորստի կամ փչացման ռիսկը կրում է վաճառողը`

մինչեւ առաքման նավահանգստում ապրանքի բեռնումը նավի վրա, իսկ այդ պահից հետո՝ գնորդը:

**ֆոնդային բորսա, stock exchangem, фондовая биржа** - տես՝ բորսա

## Ա

**ագրարային քաղաքականություն,** agricultural policy, аграрная политика, 4

**ազատ լողացող արժութային կուրսեր,** freely floating exchange rates, свободно плавающие валютные курсы, 4

**ազատ շուկայական տնտեսություն,** free market economy, свободная рыночная экономика 4

**ազատ տնտեսական գոտիներ,** free economic zone, свободная экономическая зона, 4

**ազգային արդյունք,** national product, национальный продукт, 4

**ազգային եկամուտ,** national income, национальный доход 4

**ազդագիր,** announcement, проспект эмисии, объявление о продаже акций, 5

**ածանցյալ արժեթուղթ,** derivative instruments, производные инструменты, 5

**ակտիվներ,** assets, активы 5

**ակտիվ - պասիվային հաշիվ,** nominal account, активно-пассивный счет, 5

**ակցեպտ (հոժարագիր),** acceptance, акцепт 5

**ակցիզային հարկ,** excise tax, акцизный налог, 5

**ակրեդիտիվ,** etter of credit, bill of credit, аккредитив, 6

**աճուրդ (դասական, հոլանդական, լոտային),** auction (classical, Dutch, lot) аукцион (классический, голландский, лот) դասական classical, классический, հոլանդականի Dutch, голландский, 6

**ամորտիզացիա,** depreciation, amortization, амортизация 6

**ամորտիզացիոն հատկացումներ,** depreciation charges, амортизационные отчисления, 6

**ամրակցված գույք,** settled estate, закрепленное имущество, 6

**անալիտիկ հաշիվ,** analytical account, аналитический счет, 7

**անապրանք գործարք,** non-commodity transaction, нетоварная операция, 7

**անասնաբուծության համախառն արտադրանք,** gross output of animal husbandry, валовая продукция животноводства, 7

**անբարեխիղճ մրցակցություն,** unfair competition, недобросо-вестная конкуренция, 7

**անուղղակի հարկում,** indirect taxation, косвенное налого-

обложение, 7

**անուղղակի հարկեր,** indirect taxes, косвенные налоги, 7

**անհատ ձեռնարկատեր,** private entrepreneur, частный пред-приниматель, 8

**անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ,** natural person not private entrepreneur, физическое лицо не являющееся частным предпринимателем, 8

**անձնական խնայողություններ,** personal savings, личные сбережения, 8

**անհուսալի պարտք,** bad debt, безнадежный долг, 8

**անվճարունակություն,** insolvency, неплатежеспособность, 8

**անհատույց փոխատվություն,** transfer, трансферт, 9

**անշարժ գույք,** real estate, real property, недвижимое имущество, недвижимость, 9

**անվանական արժեք,** nominal value, face value, нарицательная цена, номинальная стоимость, 9

**աշխատանք,** labor, труд, 9

**աշխատանքի արտադրողականություն,** labor productivity, производительность труда, 9

**աշխատուժ,** labor force, рабочая сила, 9

**աշխատանքի կենսաթոշակ,** pension, пенсия, 9

**աշխատավարձ,** wage, salary, заработная плата, 9

**ապահովագրություն,** insurance, страхование, 10

**ապահովադրի սոցիալական վճարների գծով պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման ենթակա գումար՝ գերավճար,** overpayment, переплата, 10

**ապառք,** arrears, недоимка, 10

**ապրանքի ծագման երկիր,** country of origin, страна происхождения товара, 10

**ապրանքային բորսա,** commodity exchange, товарная биржа, 10

**ապրանքային նշան,** trademark, торговая марка, 10

**ապառիկ,** on credit, в кредит, 11

**ապահովադիր,** contributor to social insurance fund, лицо, делающее взнос в фонд социального обеспечения, 11

**ապրանքի կամ տնտեսության ճյուղի «տեխնոլոգիատարություն»,** expenditures, трата, расходование, 11

**ապրանք,** goods, товар, 11

**ապրանքային շուկա,** commodity market, товарный рынок,11

**առաջարկ,** supply, offer, предложение, 12

**առևտրային գաղտնիք,** commercial secret, trade secret, коммерческая тайна, 12

**առևտուր մանրածախ,** retail

trade, розничная торговля, 12
**առեւտուր մեծածախ,** wholesale trade, оптовая торговля, 12
**առեւտրային բանկ,** commercial banks, коммерческие банки, 12
**առեւտրային ռիսկ,** commercial risk, коммерческий риск, 12
**առեւտրի հաշվեկշիռ,** trade balance, торговый баланс (сальдо)
**առքուվաճառք,** purchase and sale, купля-продажа, 13
**առեւտրահաշվեկշռային հաշիվներ,** trade-balance account, торгово-балансовый счет, 13
**առեւտրի իրականացման վայրի կազմակերպիչ,** trade organizer, организатор торговли, 13
**առեւտրի կենտրոն**, trade center, shopping center, торговый центр, 13
**ավանդ,** deposit, депозит, 14
**ավանդների ապահովագրություն,** deposit insurance, страхование депозитов, 14
**ավել վճարված գումար,** overpaid sum, переплаченная сумма, 14
**ավալ,** aval (guarantee, security), аваль (вексельное поручительство), 15
**ավելացված արժեք,** value added, добавленная стоимость, 15
**ավելացված արժեքի հարկ,** value added tax (VAT), налог на добавленную стоимость (НДС), 15
**արդյունաբերական արտադրանքի ծավալ,** volume of industrial production, объем промышленного производства, 15
**արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքս,** volume index of industrial production, индекс физического объема промышленного произ-водства, 15
**արդյունաբերական արտադրանքի արտադրությունը բնեղեն արտահայտությամբ,** output of industrial products in physical, производство промышленной продукции в натуральном выражении, 16
**արժեզրկում,** devaluation, Дщвальвация, 16
արժեթուղթ, security, ценная бумага, 16
**արժեթղթերի առաջնային շուկա,** first market, principal market of securities, ведущий рынок ценных бумаг, 16
**արժեթղթերի արտաբորսայական շուկա,** over-the-counter market, внебиржевой рынок ценных бумаг, 16
**արժեթղթերի թողարկում (էմիսիա),** securities issue, эмиссия ценных бумаг, 17
**արժեթղթերի շրջանառություն,** securities turnover, оборот ценных бумаг, 17

**արժեթղթերի տեղաբաշխում,** distribution of securities, размещение ценных бумаг, 17

**արժեթղթերի փոխանցում,** securities transfer, перевод ценных бумаг, 17

**արժեթղթերի շուկայի ածանցյալ գործիք,** derivative of securities market, производный инструмент рынка ценных бумаг, 17

**արժեթղթերի առաջարկ,** securities offering, предложение ценных бумаг, 17

**արժեթղթերի հրապարակային առաջարկ,** public offering of securities, публичное предложение ценных бумаг, 17

**արժույթ,** currency, валюта, 18

**արժույթի արժեզրկում,** currency depreciation, обесценение валюты, 18

**արժույթի գնանշում,** quotation of currency, котировка валюты, 18

**արժույթի փոխարկելիություն,** currency convertibility, конвер-тируемость валюты, 18

**Արժույթի միջազգային հիմնադրամ,** International Monetery Fund (IMF), МВФ (Международный Валютный Фонд), 18

**արտադրանք,** product, продукция, 19

**արտադրողականություն,** productivity, производительность, 19

**արտադրության եւ սպառման թափոններ,** production and consumption waste, отходы производства и потребления, 19

**արտադրական կոոպերատիվներ,** production cooperatives, производственные кооперативы, 19

**արտադրական հզորություն,** productive capacity, производственная мощность, 20

**արտադրական գործոններ,** production factors, производственный факторы, 20

**արտադրանքի իրացված ծավալ,** volume of products sold, объем реализованной продукции, 20

**արտահանում,** export, экспорт, 20

**արտահանման ծավալներ,** export volume, объем экспорта, 20

**արտահոսք**, leakages, утечки, 20

**արտարժույթ,** foreign currency, иностранная валюта, 20

**արտարժույթով թողարկված պարտատոմս,** foreign currency bond, облигация в иностранной валюте, 21

**արտարժութային գործառնություններ,** foreign currency operations, операции в иностранной волюте, 21

**արտարժութային դիրք,** for-

eign currency position, позиция иностранной валюты, 21

**արտարժութային պահուստներ,** foreign currency reserves, запасы иностранной валюты, 21

**արտարժութային ռիսկ,** foreign currency risk, риск иностранной валюты, 21

**արտարժույթի գնանշում,** quotation of foreign currency, котировка иностранной валюты, 22

**արտարժույթի շուկա,** foreign currency market, рынок иностранной валюты, 22

**արտարժույթի պաշտոնական (հաշվարկային) փոխարժեք,** official foreign exchange rate, официальный курс иностранной валюты, 22

**արտարժույթի փոխարժեք,** foreign exchange rate, курс иностранной валюты, 22

**արտաքին պետական պարտք,** foreign debts, внешний долг, 22

**արտաքին առևտրաշրջանառության ծավալը,** foreign trade turnover volume, объем внешнеторгового оборота, 23

**արտաքին փոխառություն,** foreign loan, иностранный заем, 23

**արտոնագիր,** patent, патент, 23

**արտոնյալ բաժնետիրական կապիտալ,** preference share capital, привилегированный акцио-нерный капитал, 23

**արտոնյալ բաժնետոմս,** preference share, привилегированная акция, 23

**աուդիտ,** audit, аудит,23

**Առևտրի Համաշխարհային Կազմակերպություն,** WTO (World Trade Organization), ВТО (Всемирная Торговая Организация), 23

## Բ

**բազա հարկային,** tax base, база налоговая, 24

**բազային դրույք,** base rate, базовая ставка, 24

**բազային կապիտալ,** core capital, базовый капитал, 24

**Բազելյան համաձայնագիր,** Basel Agreement, Базельский договор, 24

**բաժնեմաս (բաժնեչափ),** quota, квота, 24

**բաժնետեր,** shareholder, акцио-нер, 24

**բաժնետիրական եկամտաբերություն,** joint-stock profitability, акционерная прибыльность, 25

**բաժնետիրական ընկերության ներկայացուցչություն,** joint-stock company representative, представительство акционерного общества, 25

**բաժնետիրական ընկերություն (ԲԸ),** joint-stock company (JSC), акционерное общество

(AO), 25

**բաժնետոմս,** share, акция, 25

**բաժնետոմսի շահույթի նորմա,** stock profit rate, норма прибыли по акции, 25

**բանկ,** bank, банк, 25

**բանկային ավանդ,** bank deposit, банковский вклад, депозит, 26

**բանկային աուդիտ,** bank audit, банковский аудит, 26

**բանկի անվճարունակություն,** bank insolvency, неплатеже-способность банка, 26

**բանկի անվճարունակության ռիսկ** bank insolvency risk, риск неплатежеспособности банка, 27

**բանկի արժութային դիրք**, bank currency position, валютное положение банка, 27

**բանկային գաղտնիք,** bank secrecy, банковская тайна, 27

**բանկային գործառնություններ,** bank operations, банковские операции, 28

**բանկային գործարքներ,** bank transactions, deals, банковские сделки, 28

**բանկի գործառնական եկամուտներ,** bank operating income/profit, операционная прибыль банка, 29

**բանկի գործառնական ծախսեր,** bank operating expenses, операционные расходы банка, 29

**բանկի գործառնական շահույթի զուտ մարժա,** bank operating income margin, маржа операционной прибыли банка, 29

**բանկի եկամտաբեր ակտիվներ,** bank earning assets, доходные активы, 29

**բանկի եկամուտների և ծախսերի հաշվետվություն,** bank income and expenditure account, отчет о доходах и расходах банка, 29

**բանկային երաշխիք,** bank guarantee, банковская гарантия, 30

**բանկի ընդհանուր ակտիվներ,** bank total assets, суммарные активы банка, 30

**բանկի ընդհանուր ակտիվների շահութաբերություն** (ROA), return on total assets of the bank, рентабельность, доходность активов банка, 30

**բանկի ընդհանուր կապիտալ,** bank total capital, суммарный капитал банка, 30

**բանկի ընդհանուր պասիվներ,** bank total liabilities, суммарные пассивы банка, 30

**բանկի իրացվելիության ռիսկ,** bank liquidity risk, риск ликвидности банка, 30

**բանկոմատներ,** cash machines, ATM (automated teller machine), банкоматы, 31

**բանկնոտներ,** bank notes, банкноты, 31

**բանկ կոնսորցիում,** consortium bank, банк консорциаль-

ный, 31
**բանկային հաշիվ,** bank account, банковский счет, 31
**բանկային համակարգ,** banking system, банковская система, 31
**բանկային հաշիվ,** bank account, банковский счет, 32
**բանկի հաշվեկշիռ,** bank balance, банковское сальдо, 32
**բանկային հոլդինգ,** bank holding, банковский холдинг, 32
**բանկի մասնաճյուղ,** bank branch, филиал банка, 33
**բանկի շահույթի զուտ մարժա,** bank net profit margin (NPM), маржа чистой прибыли банка, 33
**բանկի շահույթի սպրեդ,** bank profit spread, спред прибыли банка, 33
**բանկային ռիսկ,** bank risk, банковский риск, 33
**բանկի սեփական կապիտալ,** bank own capital, собственный капитал банка, 33
**բանկային վարկ,** bank credit, банковский кредит, 34
**բանկի վարկային ռիսկ,** bank credit risk, банковский кредитный риск, 34
**բանկային վկայագիր,** bank certificate, банковский сертификат, 34
**բանկային տոկոսադրույք,** bank interest rate, процентная ставка банка, 34
**բանկի տոկոսային մարժա,** bank interest margin, процентная маржа банка, 34
**բանկային օֆշորային գոտիներ,** offshore banking zones, офшорные банковские зоны, 34
**բարտեր,** barter, бартер, 35
**բաց բաժնետիրական ընկերություն,** open joint-stock company, открытое акционерное об-щество, 35
**բեռնագիր,** waybill, накладная, 35
**բեռնագիր ապրանքային,** consignment note, waybill, транс-портная накладная, 35
**բեռնաշրջանառություն,** freight turnover, грузооборот, 35
**բիզնես,** business, бизнес , 35
**բիզնեսմեն (գործարար),** businessman, бизнесмен, предприниматель, 35
**բիզնես ինկուբատոր,** business incubator, бизнес инкубатор, 35
**բյուջե,** budget, бюдже, 36
**բյուջետային դասակարգում,** budget classification, бюджетная классификация, 37
**բյուջետային եկամուտներ,** budget receipts, бюджетные доходы, 37
**բյուջեի ծախսային մաս,** budget expenditures, бюджетные рас-ходы, 37
**բյուջետային համակարգ,** budget system, бюджетная система
բյուջետային հատկացումներ,

budget subsidies, бюджетные субсидии, 37

**բյուջեի պակասուրդ,** budget deficit, бюджетный дефицит, 37

**բյուջետային տարի,** budget year, бюджетный год, 38

**բնակչության բնական աճ,** natural growth of population, естественный прирост населения, 38

**բնակչության բնական շարժ** natural movement of population, естественное движение населения, 38

**բնակչության դրամական (իրական) եկամուտներ,** population real income, реальные доходы населения, 38

**բնակչության դրամական ծախսեր,** population money expenditures, денежные расходы на-селения, 38

**բնօգտագործման վճար,** nature utilization payment, платеж за природопользование, 38

**բնապահպանական եւ բնօգտագործման վճարներ** nature protection and nature utilization payments, платежи за охрану природы и за природопользование, 39

**բոնիֆիկացիա,** bonification, бонификация, 39

**բոնիտետ,** credit solvency, бонитет, 39

**բոնուս,** bonus, бонус, 39

**բորսա**, exchange, биржа, 40

**բորսայական ինդեքսներ,** exchange indices, пиржевые индексы, 40

**բորսայական փոխարժեք,** exchange rate, биржевой курс, 40

**բորսական շահույթ,** exchange profit, биржевая прибыл, 40

**բրենդ կամ մակնիշ,** brand, бренд, 40

**բրոքեր,** broker, брокер, 41

**բուսաբուծության համախառն արտադրանք,** gross output of plant-growing, валовая продукция растениеводства, 41

## Գ

**գանձապահ**, cashier, кассир, 41

**գանձապետական արժեթղթեր,** treasury securities, казначейские ценные бумаги, 41

**գանձապետարան,** treasury, казначейство, 41

**գերավճար,** overpayment, пере-плата, 42

**գերավճարից տարբերվող գումար,** amount differing from overpayment, сумма отличающейся от переплаты, 42

**գերավճարի (գերավճարից տարբերվող գումարի) մնացորդ,** overpayment balance, сальдо переплаты, 42

**գերիշխող դիրք,** superior position, превосходящее положение, 42

**գին,** price, цена, 43
**գյուղատնտեսական վարկեր,** agricultural credits, сельскохозяйственные кредиты, 43
**գյուղացիական տնտեսություն,** agricultural economy, крестьянское хозяйство, 43
**գնաճ, սղաճ, ինֆլյացիա,** price increase, inflation, **инфляция,** повышение цен, 43
**գնի ինդեքս (համաթիվ)** price index, индекс цен, 44
**գնանկում,** deflation, дефляция
**գնողունակություն,** paying capacity, покупательная способность, 44
**գնահատում,** estimation, evaluation, оценка, 44
**գործազրկության մակարդակ,** unemployment level, уровень безработицы, 44
**գործազրկության նպաստ,** unemployment benefit, пособие по безработице, 45
**գործազուրկ,** unemployed, безработный, 45
**գործատու,** employer, работодатель, 45
**գործակալ,** agent, агент, 45
**գործակալություն,** agency, агентство, 45
**գործարար ակտիվություն,** business activity, деловая активность, 45
**գրանցված գործազրկության մակարդակ**, registered unemployment rate, уровень зарегистри-рованной безработицы, 45
**գրավ,** security, залог, 45
**գրավական,** bail, залог, 46
**գրավառու,** bailee, хранитель залога, 46
**գրավատու,** bailor, залогодатель, 46
**գուդվիլ,** goodwill, гудвилл, 46
**գույք,** property, имущество, 46
**գույքի ապահովագրություն,** property insurance, страхование собственности, 46
**գույքագրում,** inventory, инвентаризация, 46
**գույքի հավատարմագրային կառավարում,** accredited management of property, доверительное управление имуществом, 47
**գույքահարկ,** property tax, налог на имущество, 47

## Դ

**դանդաղ իրացվելի ակտիվներ,** slow assets, illiquid assets, неликвидные активы, 48
**դեբետ,** debit, дебет, 48
**դեբիտորական պարտք,** accounts receivable, дебиторская задолженность, 48
**դեմպինգ** dumping, демпинг, 48
**դեպոզիտ,** deposit, депозит, 48
**դեպոզիտարիա,** depositary, депозитарий, 48
**դեպոզիտար ստացական,** de-

positary receipt, депозитное свидетельство, 49

**դեպո հաշիվ,** depot account, счет-депо, 49

**դեպոնենտ,** depositor, депонент, 49

**դեվալվացիա,** devaluation, depreciation, девальвация, 49

**դեցիլային խմբեր,** decile groups, децильные группы, 49

**դեֆիցիտ (պակասուրդ) և հավելուրդ,** deficit, дефицит & surplus, избыток, 49

**դեֆլյատոր,** deflator, дефлятор, 50

**դեֆլյատոր ՀՆԱ-ի,** GDP deflator, дефлятор ВВП, 50

**դեֆլյացիա,** deflation, дефляция, 50

**դիլեր,** dealer, дилер, 50

**դիսկոնտ,** discount, дисконт, 50

**դիվերսիֆիկացիա,** diversification, диверсификация, 50

**դոտացիա,** dotation, дотация, 50

**դրամ (փող),** money, деньги, 51

**դրամարկղ,** cash office, касса, 51

**դրամական ագրեգատ**, monetary aggregate, денежный агрегат, 51

**դրամական բազա,** monetary base, денежная база, 51

**դրամարկղային գործառնություն,** cash operation, кассовая операция, 51

**դրամարկղային գիրք,** cash book, кассовая книга, 52

**դրամական զանգված,** money supply, денежная масса, 52

**դրամական համակարգ,** monetary system, денежная система, 52

**դրամավարկային համակարգ,** monetary-credit system, денежно - кредитная система, 52

**դրամական միջոցներ,** monetary funds, денежные средства, 53

**դրամական շուկա,** money market, денежный рынок, 53

**դրամական շուկայի գործիքներ,** money market instruments, инструменты денежного рынка, 53

**դրամարկղային չեկ,** cash voucher, кассовый чек, 53

**դրամավարկային քաղաքականություն,** monetary-credit policy, денежно-кредитная политика, 53

**դրամարկղի օրդեր,** cash order, кассовый ордер, 54

**դրույք,** rate, ставка, 55

**դրույք հարկային,** tax rate, налоговая ставка, 55

**դուստր ձեռնարկություն**, branch establishment, daughter enterprise, дочернее предприятие, 55

**դեֆոլտ,** default, дефолт, отказ от уплаты, 55

**դեվոլյուցիա,** devolution, девальвация, 55

## Ե

**եկամուտ,** income, доход, 55
**եկամտաբեր ակտիվներ,** profitable assets, прибыльные активы, 55
**եկամուտ բրուտտո**, gross yield, даход бруттo, 56
**եկամտահարկ,** income tax, подоходный налог, 56
**եկամտաբերության ցուցանիշ,** earnings yield, показатель эффективности, 56
**ենթաաբոնենտ,** sub-subscriber, субабонент, 56
**ենթավարձակալություն,** sublease, субаренда, 57
**Եվրազես,** EurAsES, ЕврАзЕС, 57
**Եվրասիա,** Eurasia, Евразия, 57
**եվրոարժույթ,** euro-currency, евровалюта, 57
**Եվրոպական Միավորում Ազատ Առեւտրի,** European Free Trade Association, Европейская ассоциация свободной торговли, 58
**Եվրոպական համագործակցություն,** European Community (EC), Европейское Сообщество (EC), 58
**երաշխավորություն,** recommendation, рекомендация, 58
**երաշխիք,** guarantee, гарантия, 59
**երաշխավորված եկամուտ,** guaranteed income, гарантированный доход, 59
**երկարատեւ տրենդ,** secular trend, долговременный тренд, 59
**երկարաժամկետ ակտիվներ,** long-term assets, долгосрочные активы, 59
**երկարաժամկետ պասիվներ,** long-term liabilities, долгосрочные обязательства, 59
**երկակի պահեստային վկայագիր,** dual warehouse receipt, двойная складская расписка, 59
**երկրաբանական հատկացում,** geological allocation, геоло-гическое распределение, 60
**երկմակարդակ շուկա,** two-level market, двухуровневый рынок, 60
**երկրի տնտեսական ռիսկ,** country economic risk, экономический риск страны, 60
**երկկողմանի մոնոպոլիա (մենաշնորհ),** bilateral monopoly, двусторoная монополия, 60

## Զ

**Զարգացման Եվրոպական Հիմնադրամ,** European Development Fund, Европейский Фонд Развития, 61
**զարգացող երկրներ,** developing countries, развивающиеся страны, 61
**զբաղվածներ,** employees, служащие, 61

**զբաղվածության մակարդակ,** employment rate, уровень занятости, 61

**զբոսաշրջություն,** tourism, туризм, 61

**զեղչ,** discount, скидка, 61

**զուտ ազգային արդյունք,** net national product, чистый национальный продукт զուտ ակտիվներ, net assets, чистые активы, 62

**զուտ արժեք,** net value, чистая стоимость, 62

**զուտ արտահանում,** net export, чистый экспорт, 62

**զուտ արտահանման պակասուրդ (դեֆիցիտ),** net export deficit, дефицит чистого экспорта, 62

**զուտ արտաքին ակտիվներ,** net foreign assets, чистые иностранные активы, 63

**զուտ արտադրանք,** net product, чистая продукция, 63

**զուտ եկամուտ,** net income, чистый доход, 63

**զուտ հասույթ,** net revenue, чистая выручка:

**զուտ ներդրումներ,** net investments, чистые инвестиции, 63

**զուտ ներքին ակտիվներ**, net domestic assets, чистые внутренние активы, 63

**զուտ շահույթ,** net profit, чистая прибыль, 64

**Է**

**էլեկտրոնային բանկային ծառայություններ,** electronic banking services, электронные банковские услуги, 64

**էլեկտրոնային գնում,** ecommerce, электронная коммерция, 64

**էկոնոմիկա (տնտեսագիտու**թյուն), economics, экономика, 64

**էմբարգո,** embargo, эмбарго, 64

**էմիսիա,** emission, эмиссия, выпуск, 65

**էմիսիոն բանկ,** emission bank, bank of issue, эмиссионный банк, 65

**էմիսիոն շահույթ,** emission proit, эмиссионная прибыль, 65

**էմիտենտ,** issuer, эмитент, 65

**էնգելի կոր,** Engel curve, кривая Энгеля, 65

**էներգակիր,** energy carrier, энергоноситель, 65

**էներգակիրների արդյունավետ օգտագործում,** efficient use of energy carriers, эффективное использование энергоносителей, 66

**էներգետիկ փորձաքննություն,** energetic expertise, энерге-тическая экспертиза, 66

**էքսպիրացիա,** expiration, экспирация, 66

**էքյու,** European Currency Unit (ECU), европейская валютная единица, ЭКЮ, 66

**էլեկտրոնային բանկինգ,** elec-

tronic banking system, электронная банковская система, 66

## Ը

**ընդերք,** bosom, interior, недра, 66

**ընդերքի օգտագործում՝,** interior, bosom utilization, использование недры, 67

**ընդերքի տեղամաս,** bosom site, place, участок, 67

**ընդհանուր տարեկան ժողով,** annual general meeting, ежегодное общее собрание, 67

**ընթացիկ ակտիվներ.** current assets, текущие активы, 67

**ընթացիկ ծախսեր,** current expenses, текущие затраты, расходы, 67

**ընթացիկ հաշիվ,** current account, счет текущий, 67

**ընթացիկ պարտավորություններ,** current liabilities, текущие обязательства, 68

**ընկերություն վենչուրային,** venture company, венчурная компания, 68

**ընկերություն օֆշորային,** offshore company, офшорная компания, 68

**ընտանեկան ձեռնարկություն,** family corporation, семейная корпорация, 69

**ընտանիքի բյուջե,** family budget, семейный бюджет, 69

**ըքաունթինգ,** accounting, ведение учёта, 69

## Թ

**թանկարժեք մետաղներ,** precious metals, драгоценные металлы, 69

**թանկարժեք քարեր,** precious stones, драгоценные камни, 69

**թանկարժեք մետաղների զտարկում (աֆինաժ),** precious metals affinage аффинаж, очистка благородных металлов, 69

**թափոնների պահում,** waste storage, хранение отходов, 70

**թափոնների օգտագործում,** waste utilization, использование отходов, 70

**թափոնների մշակում, վերամշակում,** waste processing, обработка отходов, 70

**թափոնների օգտահանում,** waste utilization использование отходов, 70

**թափոնների հեռացում,** waste removal, удаление обрезков, 70

**թափոնների վնասազերծում,** waste neutralization обезвреживание, 70

**թափոնների տեղադրում,** waste isolation, изоляция отходов, 70

**թափոնների թաղում,** waste disposal, захоронение отходов, 70

**թափոնների գործածության օբյեկտներ,** waste utilization objects, объекты использования от-ходов, 70

**թափոնների տեղաբաշխման տեղեր,** waste distribution points, пункты распределения отходов, 70
**թափոնների փոխադրում,** waste transportation, транспортировка отходов, 71
**թափոնների անդրսահմանային փոխադրում,** waste foreign shipping, заграничная перевозка отходов, 71
**թափոնների պետական դասակարգիչ** waste official classifier, официальный классификатор отходов, 71
**թաքնված զբաղվածներ (գործազուրկներ),** hidden employees, скрытые служащие, 71
**թղթադրամ,** paper monery, пгмажные деньги, 71
**թղթակից բանկ,** correspondent bank, банк-корреспондент, 72
**թողարկում (ապրանքների, ծառայությունների),** emission, эмис-сия, 72
**թողարկման գին,** emission price, цена эмиссии, 72
**թոշակ,** pension, пенсия, 72
**ժամանակավոր ներմուծում ՀՀ մաքսային տարածք եւ ժամանակավոր արտահանում այդ տարածքից,** temporary import to RA customs territory and temporary export, временный ввоз на таможенную территорию РА и временный вывоз, 72
**ժամկետային ավանդ,** time deposit, срочный вклад, депозит, 72
**ժամկետային գործարք**, bargain on term, Futures Contract, срочная сделка, 73
**ժամկետային վարկ,** time credit, срочный кредит, 73
**ժամկետանց պարտք,** overdue debt, просроченный долг, 73

## Ի

**ինդեքս,** index, индекс, 73
**ինդեքս գների,** price index, индекс цен, 73
**ինդեքսավորում,** indexation, индексация, 73
**ինդեքս Դոու-Ջոնսի,** Dow-Jones average, индекс Доу-Джонса, 74
**ինդեքս սպառողական գների,** consumer price index, индекс потребительских цен, 74
**ինդուստրիալ (արդյունաբերական) քաղաքականություն,** industrial policy, индустриальная (промышленная) политика, 74
**ինկասացիա,** collection, инкассация, 74
**ինկասատոր,** collector, инкассатор, 74
**ինովացիա,** innovation, инновация, 75
**ինովացիոն նախագիծ,** innovation project, инновационный проект, 75
**ինովացիոն պետական քաղաքականություն,** state policy

innovation, государственная инновационная политика, 75

**ինտերվենցիա (ներխուժում) արժութային,** currency intervention валютная интервенция, 75

**ինտերվենցիա (ներխուժում) ֆորվարդային,** forward intervention, форвардная интервенция, 75

**ինվեստիցիա,** investment, инвестиция, 75

**ինքնակամ զբաղեցված հողամաս,** unauthorized occupation of land, самовольное занятие земельных участков, 76

**ինքնարժեք,** cost, себестоимость, 76

**ինֆլյացիայի (արժեզրկման) ռիսկ,** inflation risk, инфляционный риск, 76

**ինֆլյացիայի (գնաճի, սղաճի) տեմպեր (նորմ),** inflation rate, темпы ннфляции, 76

**ինֆլյացիա,** inflation, инфляция, 76

**ԻՍՕ,** ISO (International Organization for Standardization), ИСО (Международная Организация по Стандартизации), 76

**իրական աշխատավարձ,** real wage, реальная заработная плата, 77

**իրական աշխատավարձի ինդեքս,** real index, индекс реальной заработной платы, 77

**իրական արժեք,** real value, реальная стоимость, 77

**իրական բյուջետային պակասուրդ,** real budget deficit, actual deficit, реальный бюджетный дефицит, 77

**իրական դրամական եկամուտներ,** real cash income, реальные денежные доходы, 77

**իրական եկամուտ,** real income, реальный доход, 77

**իրական համախառն ազգային արդյունք (ՀԱԱ),** real gross national product (GNP), реальный валовой национальный продукт (ВНП), 78

**իրական տոկոսադրույք,** real interest rate, реальная ставка процента, 78

**իրական փոխարժեք,** real exchange rate, реальный валютный курс, 78

**իրավաբանական անձ,** juridical person, юридическое лицо, 78

**իրավունք սեփականության,** property right, право собственности իրացվելիություն, liquidity, ликвидность, 79

**իսկական արժեք,** current value, present value, настоящая стоимость, 80

**իրեղեն (նյութական) հարստություն,** tangible wealth вещест-венное богатство, 80

## L

**լիբօր, առաջարկի Լոնդոնի միջբանկային դրույք,** LIBOR, London interbank offered rate,

ЛИБОР, Лондонская межбанковская ставка предложения, 80

**լիցենզիա,** license, лицензия, 80

**լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ,** activity subject to licensing, деятельность подлежащая лицензированию, 81

**լիցենզիաների միջազգային առևտուր,** international license trade, международная лицензионная торговля, 81

**լիցենզիոն վճարումներ,** licence payments, лицензионные пла-тежи, 82

**լիզինգ (վարձակալություն),** leasing, лизинг, 82

**լճացում,** depression, депрессия, спад, 83

**լոմբարդային վարկեր,** pawn credits, ломбардные кредиты, 84

**լողացող կուրս,** floating exchange rate, плавающий курс, 84

**լոտ,** lot, лот, 84

**Լորենցի կոր,** Lorenz curve, кривая Лоренца, 85

**Լաֆֆերի կոր,** Laffer curve, кривая Лаффера, 85

**լուծարում,** liquidation, ликвидация, 85

## Խ

**խթանող տնտեսական քաղաքականություն,** stimulating, promotional economic policy, стимулирующая экономическая политика, 86

**խնայողություն,** savings, сбере-жения, 86

**խոշոր ձեռնարկություն, խոշոր ընկերություն,** big business, large-scale enterprise крупное предприятие, крупная компания, 86

**խորհուրդ տնօրենների,** board of directors, совет директоров, 86

## Ծ

**ծագման հավաստագիր,** certificate of origin, сертификат происхождения, 86

**ծախս,** expense, затрата, 87

**ծախք,** cost, expenses, затраты, издержки, 87

**ծախքի նվազեցում,** cost minimization, минимизация затрат, 87

**ծախքահավելում,** cost-plus, издержки плюс фиксированная прибыль, 87

## Կ

**կադաստր,** cadastre, кадастр, 88

**կալանք ավանդի,** blockage of deposit, account, арест вклада, депозита, 88

**կալանք գույքի,** seizure, sequestration, arrest, арест

имущества, 88

**կայուն եկամուտ,** fixed income, постоянный доход, 88

**կայուն շրջանառու կապիտալ,** constant working capital, постоянный оборотный капитал, 88

**կանխավաճառք,** forward contract, форвардный контракт, 89

**կանխավճար,** advance, аванс, 89

**կանխիկ դրամ,** cash, наличные деньги, 89

**կանխիկի հոսք,** cash flow, поток денежных средств, 90

**կանխիկ փող,** ready money, cash, денежный поток, 90

**կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ,** authorized capital, уставный капитал, 90

**կապալառու,** contractor, подрядчик, 90

**կապիտալ,** capital, капитал, 91

**կապիտալիզացիա, կապիտալացում,** capitalization, капитализация, 91

**կապիտալ անվանական,** nominal capital, номинальный капитал, 91

**կապիտալի արտահանում,** capital export, экспорт, вывоз капитала, 91

**կապիտալի արտահոսք,** capital outflow, отток капитала, 91

**կապիտալի զուտ արտահոսք,** net capital outflow, чистый отток капитала, 92

**կապիտալ բաժնետիրական,** joint stock, cguity, share capital, акционерный капитал, 92

**կապիտալ երաշխիքային,** guarantee capital, гарантийный, 92

**կապիտալի հոսքեր,** capital flows, потоки капитала, 92

**կապիտալ ներդրումներ,** capital investment, капитальные вло-жения, 93

**կապիտալ շրջանառու,** circulating capital, working capital, оборотный капитал, 93

**կապիտալիզմ,** capitalism, капитализм, 93

**կապիտալիստական տնտեսություն**, capitalist economy, капиталистическая экономика, 93

**կառավարության պարտք,** government debt, правительственный долг, 94

**կաշառակերություն,** corruption, коррупция, 94

**Կենտրոնական բանկի պարտք,** Central bank debt, долг Центрального банка, 94

**կոմիսիոն վճար,** commission charges, комиссионные, 94

**կոմիտենտ,** consignor, комитент, 94

**կոոպերատիվներ,** cooperatives, кооперативы, 94

**կոռուպցիա,** corruption, корруп-ция, 95

**կրեդիտ,** credit, кредит, 95

**կրեդիտորական պարտքեր,** credit indebtedness, bill payable, кредиторская задолженность, 95

**կրկնակի հարկում,** double taxation, двойное налогообложение, 95

**կոնոսամենտ,** bill of lading, коносамент, 95

**կոմիսիայի պայմանագիր,** commission contract, комиссионный договор, 95

**կոնցեսիոն վճար,** concession payment, концессионный платеж, 95

**կուտակային բաժնետոմսեր,** cumulative shares/stocks, кумулятивные акции, 95

Հ

**հակաինֆլյացիա,** disinflation, дезинфляция, 96

**հակամրցակցային համաձայնություններ,** anticompetitive agreements, антиконкурентные соглашения, 96

**հակամրցակցային պրակտիկա,** anticompetition, антиконкурентная политика, 96

**համադրելի արժեք,** comparable worth сопоставимая стоимость, сопоставимая ценность, 97

**համախառն ավելացված արժեք,** gross value added, валовая добавленная стоимость, 97

**համախառն արտադրանք,** gross product, валовая продукция, 97

**համախառն ազգային արդյունք (ՀԱԱ),** gross national product (GNP), валовой национальный продукт (ВНП), 97

**համախառն արտաքին պարտք՝ Հայաստանի Հանրապետության,** RA gross foreign debt, валовый внешний долг РА, 97

**համախառն շահույթ,** gross profit, валовая прибыль, 98

**համախառն եկամուտ,** gross income, gross revenue, валовой доход, 98

**համախառն ներքին արդյունք (ՀՆԱ),** gross domestic product /GDP, валовой внутренний продукт/ВВП, 98

**ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատոր,** GDP index-deflator, индекс-дефлятор ВВП, 99

**համայնքների բյուջեներ,** budgets of communities, бюджеты общин, 99

**համայնքների բյուջեների ձևավորման սկզբունքները,** principles of communities budget formation, принципы формирования бюджетов общин, 100

**Համաշխարհային բանկ,** WB/world bank, ВБ/всемирный банк, 100

**համաշխարհային գներ,** world prices, мировые цены, 101

**համատեղ գործունեություն,** joint activity, совместная деятельность, 101

**համատեղ ձեռնարկություն,** joint venture, совместное предприятие, 102

**համատեղ ձեռնարկատիրություն,** joint entrepreneurship, совместное предпринимательство, 102

**համաձայնագիր գների,** price agreement, соглашение о ценах, 102

**համաձայնություն գաղտնի,** collusion, сговор, тайное соглашение, 103

**համաշխարհային տնտեսություն,** world economy, мировая экономика, 103

**հայտարարագիր,** declaration, декларация, 103

**հայտարարագիր մաքսային,** customs declaration, таможенная декларация, 103

**հայտարարագիր հարկային,** tax return, налоговая декларация, 104

**հաշվանցվող գումար,** transferred sum, перечисляемая сумма, 104

**հաշվապահական հաշվառում,** bookkeeping, бухгалтерский учет, 104

**հաշվարկային հաշիվ,** account, расчетный счет, 104

**հաշվապահական հաշվեկշիռ,** accounting balance, бухгалтерский баланс, 105

**հաշվանցում,** netting off, вычет, удержание, 105

**հաշվանցման և (կամ) վերադարձման ներկայացված գումար,** sum deductible, сумма, подлежащая вычету, 106

**հաշվեկշիռ,** balance, баланс, 106

**հաշիվ ապրանքագիր (ֆակտուրա),** invoice, счет-фактура, 106

**հաշվեկշիռ առևտրային,** trade balance, торговый баланс, 106

**հաշվեկշռային արժեք (փոխանցվող գումար),** book value, балансовая стоимость, 106

**հետաձգված հարկային պարտավորություններ,** deferred tax liabilities, отсроченные налоговые обязательства, 106

**հաշվարկային արժեք,** accounting price, расчетная цена, 106

**հաստատագրված վճար,** fixed payment, фиксированный пла-теж, 107

**հասարակական կազմակերպություններ,** NGO/non-governmental organizations, неправительственные организации, 107

**հաստատագրված բյուջե,** fixed budget, фиксированный бюд-жет, 107

**հասույթ, դրամամուտք,** revenue, выручка, 107

**հավելավճար,** bonus, бонус, премия, 107

**հավելյալ արժեք,** surplus

value, прибавочная стоимость, 107

**հարգ,** standard, проба, 107

**հարկվող եկամուտներ, հարկ եկամուտներից,** income taxation, налогообложение доходов, 108

**հարկային արտոնություններ (խթաններ),** tax remissions, налоговые льготы, 108

**հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումար** sum deductible, сумма, подлежащая вычету, 108

**հարկի չհաշվանցվող մնացորդ,** nondeductible tax balance, не подлежащее вычету сальдо налога, 108

**հարկի դեբետային մնացորդ,** tax debit balance, дебетовое сальдо налога, 109

**հարկային մարմին, tax** authority, налоговый орган, 109

**հարկ վճարող,** taxpayer, налогоплательщик, 109

**հարկ վճարողի հաշվառում՝,** taxpayer identification, идентификация налогоплательщика, 109

**հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ),** taxpayer identification number (TIN), индивидуальный номер налогоплательщика (ИНН), 109

**հարկ վճարողների վերաբերյալ տվյալների միասնական բանկ,** databank on taxpayers, база данных налогоплательщиков, 109

**հարկ**, tax, налог, 110

**հարկվող շահույթ,** taxable profit, налогооблагаемая прибыль, 110

**հարկային բեռ,** tax burden, налоговое бремя, 110

**հարկային գաղտնիք,** tax secret, налоговая тайна, 110

**հետգնում (հակաինֆլյացիա),** repurchase, обратная покупка, 110

**հիմնադրամ,** fund, фонд, 111

**հիմնական միջոցներ,** fixed assets, основные средства, 111

**հիմնադրամի ստեղծում**, foundation, основание фонда, 111

**հիպոթեկ,** hypothec, mortgage, ипотека, 112

**հոլդինգ,** holding, холдинг, 112

**հողի հարկ,** land tax, земельный налог, 112

**հովանավորչություն,** sponsorship, спонсорство, 112

**հսկիչ գնում,** control purchase, контрольная закупка, 113

**հրաժարագին,** compensation, smart-money, отступное, 113

## Ձ

**ձեռնարկատիրություն,** entrepreneurship, предпринимательство, 113

**ձեռներեց, ձեռնարկատեր,** entrepreneur, предприниматель, 114

Ճ

**ճանապարհային վճար,** road fee, дорожная плата, 114

Մ

**մասնավորեցում,** privatization, приватизация, 114
**մաքսային ձեւակերպում,** customs processing, таможенное оформление, 115
**մաքսատուրք (մաքս),** customs duty, таможенная пошлина, 115
**մաքսային արժեք,** customs valuation, таможенная оценка, 115
**մաքսային կանոնների խախտում,** violation of customs rules, нарушение таможенных правил, 116
**մաքսային հսկողություն,** customs supervision, таможенный контроль, 116
**մաքսային ռեժիմ,** customs regime, таможенный режим, 116
**մաքսային վճարներ,** customs fees, таможенные сборы, 116
**մաքսանենգություն,** contraband, контрабанда, 117
**մարժա,** margin, маржа, 117
**մարժինալ (սահմանային) շահույթ,** marginal revenue, предельный доход, 117
**մակրոտնտեսագիտություն-մակրոէկոնոմիկա,** macroeconomics, макроэкономика, 117
**մարկետինգ,** marketing, марке-тинг, 117
**մենեջմենթ,** management, менеджмент, 118
**մարդկային ռեսուրսներ-մարդկային կապիտալ,** human resources, трудовые ресурсы, людские резервы, 118
**մենաշնորհ,** monopoly, монополия, 118
**ՄԱԳԱՏԵ,** MAGATE (International Atomic Energy Agency), МАГАТЭ (Международное агентство по атомной энергии), 119
**մեծաքանակ գնում,** bulk buying, wholesale purchase, оптовая закупка, 119
**«Մետաքսի ճանապարհ»,** “Silk road”, ‘’Дорога шелка’’, 119
**միջին գին,** average price, средняя цена, 120
**միկրոտնտեսություն-միկրոէկոնոմիկա,** microeconomics, микро-экономика, 120
**միջազգային կորպորացիա,** international corporation, международная корпорация, 121
**միջազգային պահուստ,** international reserves, международные резервы, 121
**միջազգային առեւտուր, i**nternational trade, международная торговля, 121
**միջնորդավճար,** brokerage, брокерское вознаграждение, 121
**միջին ամսական աշխատավարձ,** average monthly wage, среднемесячная зарплата, 121

**մրցակցություն,** competition, конкуренция, 121
**մրցույթ,** contest, конкурс, 122
**մոնետարիզմ,** monetarism, монетаризм, 122
**մուտքի դրամարկղի օրդեր,** income order, приходный ордер, 123
**մուրհակ, bill,** promissory note, вексель, 123

### Ն

**նախահաշիվ,** cost calculation, estimate, смета, 124
**նախավճար,** deposit, задаток, 124
**ներդրում,** investment, инвестиции, 124
**ներդրումների տեխնոլոգիական կառուցվածք,** investments technology, технология инвестиций, 125
**ներմուծում,** import, импорт, 125
**ներքին պետական պարտք,** internal, national debt, внутренний дол, 125г
**նպաստ,** subsidy, субсидия, 125
**նվազող եկամուտներ,** diminishing returns, сокращающиеся доходы, 126
**նվիրատվություն,** donation, дарение, 126
**նվազագույն աշխատավարձ, minimum** wage, минимальная зарплата, 126

### Շ

**շահույթ,** profit, прибыль, 126
**շահութահարկ,** profit tax, налог на прибыль, 126
**շահութաբերություն,** profitability, рентабельность, прибыльность, 127
**շահութաբաժին,** dividend, дивиденд, 127
**շինություն,** building, сооружение, 127
**շուկա,** market, рынок, 128
**շրջանառու կապիտալ,** circulating capital, working capital, оборотный капитал, 128
**շրջանառություն, (turnover)** оборотный капитал, товарооборот, 128
**շուկայական տնտեսություն,** market economy, рыночная экономика, 128

### Ո

**ոչ նյութական ակտիվներ,** intangible assets, нематериальные активы, 128
**ոչ ռեզիդենտ,** non-resident, нерезидент, 129

### Չ

**չեկ,** cheque, check, чек, 129

### Պ

**պակասորդ,** imbalance, дефицит баланса, 129

**պակասուրդ,** deficit, дефицит, 129
**պահանջարկ,** demand, спрос, 130
**պահանջարկի կառավարում,** demand management, управление спросом, 130
**պահանջարկի մեծություն,** quantity demanded, величина спроса, 130
**պահանջագիր լրացուցիչ ապահովագրության մասին,** margin call, требование дополни-тельного обеспечения, 130
**պահանջարկի կոր,** demand curve, кривая спроса, 130
**պահանջագիր վճարային,** payment request, платежное требование, 130
**պահատվություն,** safekeeping, хранение, 130
**պահուստներ,** reserves, резервы, 131
**պահուստներ ընդհանուր,** general provisions, общие резервы, 131
**պայմանագիր,** contract, agreement, контракт, договор, соглашение, 131
**պայմանագրային գներ,** contract, transaction prices, договорные цены, 131
**պաշտոնական փոխարժեք (կուրս),** official exchange rate, официальный валютный курс, 132
**պաշտոնական տրանսֆերտներ,** official transfers, официальные трансферты, 132
**պաշտոնական պահուստներ**, official reserves, государственные резервы, 132
**պասիվներ,** liabilities, пассивы, 132
**պարտապան (դեբիտոր),** debtor, должник, 132
**պարտավորություն,** obligation, обязательство, 132
**պարտատեր (կրեդիտոր),** creditor, кредитор, 133
**պարտատոմս,** bond, облигация, 133
**պարտք,** debt, долг, 133
**պարտքեր անհուսալի,** bad and doubtful debts, безнадежные долги, 133
**պարտք դեբիտորական,** accounts receivable, дебиторская задолженность, 133
**պարտք կրեդիտորական,** accounts payable, bill payable, кредиторская задолженность, 133
**պարտքային պարտավորություն,** promissory note, долговое обязательство, 134
**պարտքի սպասարկում,** debt service, обслуживание долга, 134
**պարտադիր ապահովագրություն,** obligatory insurance, обязательное страхование, 134
**պարտադիր պետական ապահովագրություն**, compul-

sory state insurance, обязательное государственное страхование, 134

**պարտադիր պահուստներ,** required reserves, обязательные резервы, 134

**պարտավորագիր արժութային,** currency contract, валютный контракт, 135

**պարզեցված հարկ,** simplified tax, упрощенный налог, 135

**պաուշալ վճար,** lumpsum payment, flat payment, паушальный платеж, 135

**պետական բանկ,** state bank, государственный банк, 135

**պետական բյուջե,** state budget, государственный бюджет, 135

**պետական բյուջեի դեֆիցիտ,** state budget deficit, дефицит государственного бюджета, 136

**պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներ,** financial resources for state budget deficit, финансовые средства на погашение дефицита государственного бюджета, 136

**պետական բյուջեի ծախսեր,** state budget expenditures, расходы государственного бюджета, 137

**պետական բյուջեի կատարում,** state budget execution, исполне-ние государственного бюджета, 138

**պետական բյուջեի կատարման հսկողություն եւ վերահսկողություն,** supervision and control of state budget execution, надзор и контроль за исполнением государственного бюджета, 138

**պետական բյուջեի նախագիծ,** draft state budget, проект государственного бюджета, 139

**պետական բյուջեի պրոֆիցիտ (հավելուրդ),** state budget overflow, избыток государствен-ного бюджета, 139

**պետական գույք,** state property, государственное имущество, 139

**պետական գներ,** government prices, государственные цены, 139

**պետական եկամուտներ,** state revenues, государственные до-ходы, 140

**պետական եւ համայնքների բյուջեներ,** state and communities budget, государственный бюд-жет и бюджеты общества, 140

**պետական պարտք,** public debt, государственный долг, 140

**պետական (գանձապետական) պարտատոմս,** state short-term and long-term bonds, государственные краткосрочные и долгосрочные облигация, 140

**պետական մասնակցությամբ**

**ձեռնարկություններ,** state-owned enterprises, предприятия с долей госсобственности, 141

**պետական վարկ,** state credit, государственный кредит, 141

**պետական ֆինանսներ,** public finances, государственные финансы, 141

**պետական գնումներ,** government purchases, государственные закупки, 142

**պետական խնայողություն,** public savings, государственные сбережения, 142

**պետական ծախսեր,** government purchases, государственные расходы, 142

**պետական հատված,** public sector, государственный сектор, 142

**պետական ներքին պարտք,** national debts, государственный внутренний долг, 142

**պետական նպաստ**, subvention, субвенция, 142

**պլաստիկ քարտեր,** plastic cards, пластиковые карточки, 142

**պոզիտիվ տնտեսական տեսություն,** positive economics, позитивная экономическая теория, 143

**պոլիպոլիա,** polypoly, полиполия, 143

**պրինցիպալ,** principal, принципал, 143

**պրոմեսա,** promise, промесса, 143

**պրոսպերիտի,** prosperity, прос-перити, 143

**պարտադիր սոցիալական ապահովագրության վճար,** compulsory social insurance payments, обязательные страховые взносы, 143

**պետական տուրք,** state duty, государственная пошлина, 143

## Ջ

**ջենտլմենական համաձայնագիր,** gentleman's agreement, джентльменское соглашение, 143

**Ջիֆենի ապրանքներ,** Giffen goods, товары Джиффена, 143

**Ջինի գործակից,** Gini coefficient, коэффициент Джини, 144

**ջոբբեր,** jobber, джоббер, 144

## Ռ

**ռաբաթ,** rebate, рабат, 144

**ռամբուրսավորել,** reimburse, рамбурсировать, возмещать, 144

**ռանտյե,** rentier, рантье, 144

**ռեգիստր,** register, регистр, 144

**ռեգրես (հետպահանջ),** regress, регресс, 145

**ռեկվիզիտներ(վավերապայմաններ),** requisites, реквизиты, 145

**ռեկվիզիցիա,** requisition, реквизиция, 145

**ռեկվիրենտ,** requirent, рекви-

рент, 145
**ռեմարկետինգ,** remarketing, ремаркетинг, 145
**ռեյտինգ** (վարկանիշ), rating, рейтинг, 145
**ռենտա, r**ent, рента, 145
**ռեպո,** repo, repurchase agreement, репо, договор об обратной покупке, 146
**ռեպորտ,** report, репорт, 146
**ռեստրիկցիա,** restriction, limitation, рестрикция, 146
**ռիսկ (վտանգ),** risk, риск, 146
**ռիսկային ակտիվներ** risk assets, рисковые активы, 147
**ռիսկի կառավարում,** risk management, управление риском, 147
**ռոյալթի,** royalty, роялти, 147
**ռիելթոր,** realtor, риелтор, 147
**ռիեստր,** register, реестр, 147

**Ս**

**սակագին մաքսային,** customs tariff, таможенный тариф, 147
**սակարկություն,** bidding, торги, 147
**սահմանափակումներ ոչ սակագնային,** non-tariff restrictions, нетарифные ограничения, 148
**սակագնային քվոտա,** tariff quota, тарифная квота, 148
**սառեցված հաշիվ,** frozen, blocked account, замороженный, блокированный счет, 148
**սառեցված ակտիվներ,** frozen assets, замороженные активы, 148
**սելեկտիվ կարգավորում,** selective controls, селективное регулирование, 149
**սեկվեստր,** sequestration, секвестр, 149
**սերտիֆիկատ,** certificate, сер-тификат, 149
**սերտիֆիկատ որակի,** quality certificate, сертификат качества, 149
**սեփականություն,** property, имущество, собственность, 149
**սեփականություն բաժնետիրական,** stock ownership, акционерная собственность, 149
**սեփականություն կոլեկտիվ,** community property, коллективная собственность, 149
**սեփականություն կոոպերատիվ,** cooperative property, кооперативная собственность, 150
**սեփականություն համատեղ,** joint ownership, совместная собственность, 150
**սեփականություն մասնավոր,** private property, частная собственность, 150
**սեփականություն մտավոր,** intellectual property, интеллектуальная собственность, 150
**սեփական կապիտալ,** own capital, equity, собственный капитал, 150
**«Սեւ կապիտալիզմ»,** “black”

capitalism, «черный» капитализм, 150

**սինդիկատ,** syndicate, синдикат, 150

**ՍԻՖ,** CIF (cost, insurance, freight), СИФ (стоимость, страхование и фрахт), 151

**սովորական գործունեությունից շահույթ (վնաս),** profit (loss) from common activity, прибыль (убыток) от обычной деятель-ности, 151

**սովորական բաժնետիրական կապիտալ,** common share capital, обычный акционерный капитал, 151

**սպառողական ապրանքներ,** consumer goods, потребительские товары, 151

**սպառողական զամբյուղ,** consumer basket, потребительская корзина

**սպառում,** consumption, потребление, 151

**սպառողական վարկ,** consumer credit, потребительский кре-дит, 151

**սպառողական գների ինդեքս,** consumer price index, индекс потребительских цен, 152

**սպառողի պաշտպանություն,** consumer protection, защита потребителя, 152

**սպեկուլյանտ,** speculator, спекулянт, 152

**սպեկուլյացիա,** speculation, спекуляция, 152

**սպեկուլյատիվ արժեթուղթ,** speculative security, спекулятивная ценная бумага, 152

**սպրեդ,** spread, спрэд, 152

**սվոփ (փոխանակում),** swap, своп, 152

**սվոփի պայմանագիր,** swap agreement, своп-соглашение, 153

**սվիֆտ,** SWIFT (Society for Worldwide Interbank Financial Telecommunications), СВИФТ (Международная межбанковская система передачи информации и совершения платежей), 153

**ստագնացիա,** stagnation, стагнация, застой, 153

**ստալիա,** lay time, lay days, стали, 153

**ստացական,** receipt, расписка, квитанция, 153

**ստանդարտ ծախսեր,** standard costs, стандартные издержки, 153

**ստերիլացում,** sterilization, стерилизация, 154

**ստիվիդոր,** stevedore, стивидор, 154

**ստոկ-բրոկեր,** stockbroker, стокброкер, фондовый брокер, 154

**ստոկիստ,** stockist, стокист, 154

**ստվերային տնտեսություն,** shadow economy, теневая экономика, 154

**ստրինգ,** string, стринг, 154

**սուբսիդիա,** financing (subsidizing), субсидирование, 154

**սուբվենցիա,** subvention, субвенция, 154

**սուպերհիպերինֆլյացիա,** superhyperinflation, супергиперинфляция, 154

**սուպերստոր,** superstore, супермаркет, 155

**սուպերվիզոր,** supervisor, супервизор, 155

**սփոթ,** spot, спот (առկա ապրանք, կանխիկ վճարում), 155

Վ

**վատ կամ անհուսալի պարտք,** bad debt, безнадежный долг, 155

**վարկ,** credit, кредит, 155

**վարկային բիզնես,** credit business, кредитный бизнес, 156

**վարկային գիծ,** credit line, кредитная линия, 156

**վարկային ներդրումներ,** credit investments, кредитные инвес-тиции, 156

**վարկային ռիսկ,** credit risk, кредитный риск, 157

**վարկային տոկոսադրույք,** credit interest rate, кредитная ставка процента, 157

**վարկային քաղաքականություն,** credit policy, кредитная политика, 157

**վարկային քարտերով զբաղվող կազմակերպություններ,** credit card companies, компании по работе с кредитными картами, 157

**վարկառու (փոխառու),** borrower, заемщик, 157

**վարկատու,** creditor, кредитор, 157

**վարկավորման սուբյեկտներ,** credit subjects, субъекты кредитования, 158

**վարկավորման օբյեկտներ,** credit objects, объекты кредитования, 158

**վարկ երաշխիքային,** credit guarantee, гарантийный кредит, 158

**վարկի արժեք,** credit cost, стоимость кредита, 158

**վարձակալության պայմանագիր,** lease agreement, договор аренды, лизинговое соглашение, 158

**վարձույթ,** renting, аренда, наем, 159

**վարձակալություն,** lease, аренда, 159

**վաճառքային գին,** spot price, продажная цена, 159

**վաստակ,** earnings, заработок, 159

**վաուչեր,** voucher, ваучер, 159

**վերաապահովագրություն,** reinsurance, перестрахование, 159

**վերջնական սպառման ծախսեր,** final consumer expenditures, конечные потребительские расходы, 159

**վերադարձ,** return, возвращение, 160

**վերադարձման ներկայաց-**

**ված գումար,** sum returnable, сумма подлежащая возврату, 160

**վերադիր ծախսեր,** overhead expenses, накладные расходы, 160

**Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկ (ՎԶՄԲ),** International Bank for Reconstruction and Development (IBRD), Международный банк реконструкции и развития (МБРР), 160

**վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ,** renewable energy sources, возобновляемая энергия, 160

**վերականգնվող էներգետիկա** renewable energy, возобновляемый источник энергии, 161

**Վիեննայի համաձայնագիր,** Vienna Convention, Венская конвенция, 161

**վճարման հաշվեկշիռ,** balance of payment, платежный баланс, 161

**վճարային համակարգ,** payment system, платежная система, 161

**վնաս,** loss, ущерб, убыток, 161

## Տ

**տանտեմ,** bonus, мантьема, 162

**տարանցիկ,** transit, транзит, 162

**տարանցիկ փոխադրում,** transit through, перевозка, 162

**տարբերանիշ,** stamp, mark, марка, пломба, 162

**տեղափոխում ՀՀ սահմանով,** transportation through RA border, перевозка через границу РА, 162

**տեղական տուրք,** local duty, местный налог, 162

**տեղական վճար,** local payment, местная пошлина, 163

**տեղական տուրքերի տեսակները,** local taxes, местные сборы, 163

**տեղական վճարների տեսակները,** local payments, местные платежи, 164

**տեխնոլոգիա,** technology, тех-нология, 164

**տեխնոպարկ,** technopark, тех-нопарк, 164

**Տիր կարնետ,** TIR (transport international routier), тир карнет, 165

**տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսեր,** final consumer expenditures of household, конечные потребительские расходы домохозяйств, 165

**տնտեսական ընկերակցություններ,** economic companies, экономические компании, 165

**տնտեսական ընկերակցություն,** economic company, экономическая компания, 165

**տնտեսական կայուն աճի**

**գործակից,** economic stable growth index, индекс стабильного экономического роста, 166

**տնտեսական հաշվառում,** economic accounting, экономичес-кий учет, 166

**տնտեսապես ակտիվ բնակչություն,** economically active population, экономически активное население, 166

**տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն,** economically inactive population, экономически не-активное население, 166

**տնտեսական աճ,** economic growth, экономический рост, 166

**տնտեսական անկում,** economic recession, экономический спад, 167

**տնտեսական շահույթ,** economic profit, экономическая прибыль, 167

**տնտեսավարող սուբյեկտ,** economic entity, хозяйственный субъект, 167

**տնտեսական օգնություն,** economic assistance, экономическая помощь, 167

**տնօրինվող եկամուտ,** disposable income, располагаемый доход, 167

**տնօրինվող եկամտի օգտագործման հաշիվ,** calculation of disposable income use, расчет потребления располагаемого дохода, 167

**տոկոս,** interest, процент, 168

**տոկոսադրույք,** interest rate, ставка процента, 168

**տոկոսային ռիսկ,** interest risk, процентный риск, 168

**տոնավաճառ (վերնիսաժ),** fair, ярмарка, вернисаж, 168

**տրոյական ունցիա,** troy ounce, тройская унция, 168

**տրաստ,** trust, траст, 168

**տրաստային ընկերություններ,** trust company, трастовая компания, 168

**տուգանք,** fine, штраф, 168

**տուժանք (տուգանք, տույժ),** penalty, fine, штраф, 169

**տուրք,** duty, tax, пошлина, 169

## Ց

**ցպահանջ ավանդներ,** demand deposits, вклады до востребования, 169

## ՈՒ

**ուղղակի ծախսեր,** direct expenses, прямые расходы, 169

**ուղղակի հարկ,** direct tax, прямой налог, 169

**ուռճացում,** inflating, раздувание, 169

**ուսումնասիրություն**, investigation, study, исследование, 170

**ուղղիչ գործակից,** correcting ratio, корректирующий коэффициент, 170

## Փ

**փայաբաժին,** share, паú, 170
**փոխառություն,** loan, заем, 170
**փոխանակություն,** exchange, обмен, 171
**փոխատվություն,** loan, ссуда, 171
**փոխարժեք,** exchange rate, валютный курс, 171
**փոխադարձ փոխարինելի ապրանքներ,** substitutes, взаимозаменяемые товары, 171
**փոխկապակցված (աֆիլացված) անձինք,** interrelated persons, взаимосвязанные лица, 171
**փող, m**oney, деньги, 172
**փողի բազա,** monetary base, денежная база, 172
**փողի զանգված,** money stock, money supply, денежная масса, 172
**փողերի լվացում,** money-laundering, отмывание денег, 172
**փողի շուկա,** money market, денежный рынок, 172
**փոփոխուն ծախսեր,** variable expenses, переменные расходы, 172

## Ք

**քաղաքական ռիսկ,** political risk, политический риск, 173
**քլիրինգ,** clearing, клиринг, 173
**քվոտավորում,** quotation, цитирование, котировка, 173

## Օ

**օգտակար հանածո,** mineral, полезные ископаемые, 173

## ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

**1. Գրիգոր Կիրակոսյան, Համազ Ղուշչյան, Իշխան Տիգրանյան-**Տնտեսագիտական բացատրական բառարան:

**2. Աշոտ Բայադյան -** Ֆինանսական բացատրական բառարան, Երեւան, 2004, 334 էջ:

**2[1] Աշոտ Բայադյան -** Ֆինանսա-վիճակագրական բացատրական բառարան, Երեւան, 2008, 514էջ:

**3. Աշոտ Մարկոսյան -** Տնտեսագիտություն բոլորի համար

**4. Աշոտ Մարկոսյան -** Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները

**5. Հայկ Խաչատրյան, Հայկ Վարդապետյան, Վարսենիկ Հովհաննիսյան -** Հաշվապահական, ֆինանսական եւ գործարարական տերմինների հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն բառարան 2001

**6. Ալեքսանդր Աղաբեկյան -** Անգլերեն-Հայերեն բառարան, Գործարարություն, տնտեսագիտություն, 1998թ.

**7. «Հայաստանի քաղաքացիական օրենսգիրք»**

**8. «Մաքսային օրենսգիրք»**

**9. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք**

**11. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք**

**12. «Ավելացված ա.րժեքի մասին» ՀՀ օրենք**

**13. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք**

**14. «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենք**

**15. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենք**

**16. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենք**

**17. «Հողի մասին» ՀՀ օրենք**

**18. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենք**

**19. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք**

20. Словарь современной экономической теории Макмиллана. - М.: ИНФРА - М, 2003, 608с.